

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ԵՎ
ԱՅՅՈՒԲՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1171-1260)**

ԵՐԵՎԱՆ



ԳՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2017

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Տ 457

**Աշխատությունը հրատարակության է երաշխավորել
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
պարամոնիայի ինստիտուտի գիտական խորհուրդը**

Խմբագիր՝ Ա. Շահնազարյան, պ. գ. թ.
Հրատ. խմբագիր՝ Վ. Ղարախանյան, պ. գ. թ.
Գրախոսներ՝ Վ. Թորոսյան, պ. գ. թ.,
Ձ. Գևորգյան, պ. գ. թ.

Տեր-Ղևոնդյան Վահան

Տ 457 Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան պետությունները (1171-1260)/ Վ. Տեր-Ղևոնդյան.- Եր.: «Տիր» հրատ., 2017.- 266 էջ:

Մենագրությունը նվիրված է Կիլիկյան Հայաստանի բազմազան փոխհարաբերություններին Այյուբյան պետությունների հետ՝ սկսած Սալահ ալ-Դինի կողմից Եգիպտոսում նոր սուլթանության հիմնադրումից (1171 թ.) մինչև Ասորիքի Այյուբյան պետության անկումը (1260 թ.): Քննության է առնված հատկապես Եգիպտոսի, Ասորիքի և Ջազիրայի (Վերին Միջագետք)՝ Այյուբյան պետական միավորների հետ Կիլիկիայի հայկական պետության վարած քաղաքականությունը, որը հաճախ անբաժանելի է հարևան այլ պետությունների հետ առնչություններից: Պարբերացման են ենթարկվել այդ երկրների միջև հարաբերությունները շուրջ 90 տարվա ժամանակահատվածում:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-865-24-9

© ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....6

ԳԼՈՒԽ Ա

«ԻՔՆ ԼԵՎՈՆ» ԱՐՔԱՅԱՏՈՀՄՆ ՈՒ

«ԻՔՆ ԼԵՎՈՆԻ ԵՐԿԻՐ»-Ն ԱՐԱՔ

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....28

ԳԼՈՒԽ Բ

ՍԱԼԱՀ ԱԼ-ԴԻՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԻԼԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ (1171-1183).....50

ա) Այյուբյան տոհմի ծագումն ու վերելքը.....50

բ) Սալահ ալ-Դինի գործունեության առաջին շրջանը (1164-1171).....55

գ) Այյուբյան սուլթանության ձևավորումը (1171-1174).....60

դ) Ռուբինյան իշխանապետության ու Այյուբյանների հարաբերությունները (1174-1183).....61

ԳԼՈՒԽ Գ

ԱՅՅՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԵՎ

ՌՈՒԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1183-1193).....83

ա) Ասորիքի վերջնական նվաճումը.....83

բ) Թուրքմենների արշավանքը և Այյուբյանների՝ Կիլիկիա ներխուժելու երկրորդ փորձը 1187 թ.....91

գ) Կիլիկիան Ֆրիդրիխ Շիկամորուսի և Սալահ ալ-Դինի հակամարտության կիզակետում.....100

դ) Սալահ ալ-Դինի գործունեության վերջին շրջանը. 1193 թ. արշավանքը.....121

ԳԼՈՒԽ Դ

**ԱՆՏԻՈՔԻ ԳԱՀԱԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՅՅՈՒԲՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1194-1216).....127**

- ա) Անտիոքի գահաժառանգության խնդիրը և
Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան
դաշինքի ձևավորման նախաքայլերը.....127
- բ) Կիլիկիայի հայկական թագավորության և Հալեպի
սուլթանության միջև 1203-1206 թթ. պատերազմը.....143
- գ) Լևոն Ա-ի դիվանագիտական ջանքերն ընդդեմ
Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան դաշինքի
(1208-1209): Ալ-Մալիք ալ-Ադիլի միջամտությունը.....154
- դ) Հայկական բանակի կողմից Անտիոքի գրավումը (1216):
Եգիպտոսի սուլթանության գործոնը.....166

ԳԼՈՒԽ Ե

**ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ՀԱԼԵՊԻ
ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
(1216-1230).....175**

- ա) Սիս-Հալեպ զինակցությունն ընդդեմ Իկոնիայի
սուլթանության և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության.....175
- բ) Կիլիկյան Հայաստանի զինուժի մասնակցությունը
Երզնկայի ճակատամարտին.....190

ԳԼՈՒԽ Զ

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱՍՈՐԻՔԻ ԱՅՅՈՒԲՅԱՆ
ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1230-1260).....209**

- ա) Կիլիկիայի հայկական թագավորությունն
ու Այյուբյան պետությունները 1230-1243 թթ.....209
- բ) Կիլիկիայի հայկական թագավորությունն ու Ասորիքի
Այյուբյան սուլթանությունը մոնղոլների դեմ հանդիման.....212

գ) Հալեպի ու Դամասկոսի գրավումը: Ասորիքի Այյուբյան սուլթանության վախճանը.....	224
ՎԵՐՋԱԲԱՆ.....	241
ՀԱՎԵԼՎԱԾ	
ԱՅՅՈՒԲՅԱՆՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ»-ՈՒՄ.....	245
SUMMARY.....	249
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	254

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կիլիկիայի հայկական պետությունն իր գոյության ամբողջ ընթացքում բազմաբնույթ փոխհարաբերությունների մեջ է գտնվել Մերձավոր Արևելքի պետական կազմավորումների հետ: Դրանք ամենատարբեր ամիրություններ, աթաբեկություններ, սուլթանություններ, թագավորություններ ու կոմսություններ էին, որոնց իշխող տոհմերն ունեին արաբաքրդական, սելջուկ-թյուրքական, լատին կամ այլ ծագում: Այդ պետությունների շարքում ուրույն տեղ ունի Այյուբյան սուլթանությունը: Վերջինիս հետ Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները հանգուցային տեղ են գրավում Հայոց թագավորության պատմության մեջ՝ ընդգրկելով XII դ. 70-ական թթ. մինչև XIII դ. 60-ական թթ., այսինքն՝ Այյուբյանների սուլթանության ամբողջ ընթացքը: Այյուբյանների տերության պատմությունը բաժանվում է առնվազն երեք շրջափուլի՝ ա.միասնական պետության (սուլթանության հիմնադիր Սալահ ալ-Դինի օրոք՝ 1171-1193), բ. նույն տոհմին պատկանող մեկից ավելի պետությունների «համադաշնության» (1193-1250) և գ.միայն Ասորիքում ամփոփված առանձին պետության (1250-1260):

Այս տոհմի ներկայացուցիչներն իշխել են ոչ միայն Եգիպտոսում և Հյուսիսային Ասորիքում, այլև Ջազիրայում (Վերին Միջագետք), Կենտրոնական և Հարավային Ասորիքում, Հիջազում, Եմենում, սակայն կիլիկյան իշխանությունները գերազանցապես հարաբերվել են առաջինների հետ՝ դրանց գոյության ամբողջ ընթացքում: Հատկապես ակտիվ էին Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները Հյուսիսային Ասորիքի հետ, քանզի այն սահմանակից էր Հայոց իշխանապետությանը, ապա նաև թագավորությանը: Աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված՝ այդ փոխհարաբերությունները եղել են ինչպես պատերազմական, այնպես էլ դաշնակցային:

XVIII դ. վերջերից, երբ Կիլիկյան Հայաստանի պատմությունը դարձավ ուսումնասիրման առարկա, շուրջ 200 տարի հետազոտողներն այս կամ այն չափով անդրադարձան նաև արաբական երկրների հետ հայկական այդ պետության առնչություններին: Այդուհանդերձ, առավելաբար հայկական, բյուզանդական և լատին աղբյուրների վրա հիմնվելն ուսումնասիրողներին թույլ չտվեց լիովին բացահայտել Կիլիկյան Հայաստանի և Մերձավոր Արևելքի արաբական պետությունների ռազմաքաղաքական ու դիվանագիտական փոխհարաբերությունների մանրամասները, ինչպես նաև խորքային պատճառները՝ երբեմն պարտադրելով շրջանցել բախտորոշ նշանակություն ունեցած շատ իրադարձություններ: Վերջիններիս լիարժեք ուսումնասիրության տեսանկյունից բացառիկ նշանակություն ունեն արաբական (նաև ասորական) աղբյուրները, որոնք հարուստ նյութ են տրամադրում խնդրո առարկա հարաբերությունների մասին: Կիլիկյան Հայաստանի և Այյուբյան սուլթանության (սուլթանությունների) միջև զինաբախումների, պատերազմների, համագործակցության ու դաշինքների վերաբերյալ մուսուլման մատենագիրների տրամադրած տեղեկությունները հաճախ բացառիկ են: Ոչ պակաս եզակի են նրանց հաղորդումները Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր առաջնորդների ու Այյուբյան (Եգիպտոս և Ասորիք) սուլթանների փոխհարաբերությունների մասին:

Վերոգրյալով պայմանավորված՝ Կիլիկյան Հայաստանի և Այյուբյան պետությունների փոխհարաբերություններն իրենց ամբողջ ընդգրկմամբ ո՛չ հայ, ո՛չ օտար պատմագիտության մեջ առանձին ուսումնասիրման ցայսօր չեն ենթարկվել:

Ներկա աշխատության նպատակն է հայկական, արաբական, ասորական, լատին, հինֆրանսիական, բյուզանդական ու պարսկական աղբյուրների և առկա մասնագիտական գրականության համադիր ուսումնասիրմամբ պարզաբանել հետևյալ հիմնախնդիրները՝

- Ժամանակագրական պարբերացման ենթարկել Կիլիկիայի հայկական պետության ու Այյուբյանների սուլթանության (սուլթանությունների) փոխհարաբերությունները:

- Բացահայտել արաբական պատմագրության մեջ՝ հատկապես Այյուբյան շրջանում համատարած կիրառություն ունեցած «Իբն Լևոն» բառակապակցության իմաստը, նշանակությունն ու ծագումը:

- Ներկայացնել Կիլիկյան Հայաստանի հարևան Ասորիք–Ջազիրայում XII դ. 70-ական թթ. երկրորդ կեսին տիրող իրավիճակը և վերհանել 1180 թ. Սալահ ալ-Դինի գլխավորությամբ Այյուբյան զորքի՝ Կիլիկիա կատարած արշավանքի պատճառներն ու հետևանքները:

- Բացահայտել Կիլիկիայի իշխան Ռուբեն Գ-ի և Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի՝ 1185-1186 թթ. Եգիպտոս ուղարկած պատվիրակության նպատակը:

- Պարզել խաչակրաց III արշավանքի ժամանակ՝ 1190 թ. խաչակիրներ-Սալահ ալ-Դին հակամարտության պայմաններում Լևոն Բ-ի և Գրիգոր Դ Տղայի դիվանագիտական պայքարի մանրամասները, ինչպես նաև Այյուբյան սուլթանի՝ 1193 թ. Կիլիկյան Հայաստան արշավելու հավանականությունը:

- Վեր հանել Անտիոք–Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան ռազմական դաշինքի ձևավորման (1201-1203) պատճառները:

- Ներկայացնել Կիլիկիայի հայկական թագավորություն–Հալեպի Այյուբյան սուլթանություն պատերազմի (1203-1206) ընթացքը, փուլերն ու հետևանքները:

- Բացահայտել Եգիպտոսի Այյուբյան սուլթանության դերը՝ 1208/1209 թ. Կիլիկյան Հայաստանը թշնամական օղակից դուրս բերելու հարցում:

- Գնահատել Անտիոքի գահաժառանգման խնդրում Լևոն Ա Մեծագործի բազմաբևեռ արտաքին քաղաքականության արդյունավետությունը:

- Բացահայտել Անտիոքի գրավումից (1216 թ.) հետո Ասորիքի և Եգիպտոսի Այյուբյանների նկատմամբ Լևոն Մեծագործի քաղաքականության հետևանքները:

- Պարզել Հալեպի և Ջազիրայի Այյուբյանների հետ կիլիկյան իշխանությունների՝ 1219 և 1225/1226 թթ. գործակցության դրդապատճառները:

- Պարզել Երզնկայի (Յասի Չիմենի)՝ 1230 թ. ճակատամարտին Կիլիկյան Հայաստանի և Հալեպի Այյուբյանների մասնակցության հավանականությունը:

- Ներկայացնել Չմանկատուկի (1243 թ.) ճակատամարտից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակը և Կիլիկյան Հայաստանում ու Այյուբյան պետություններում զուգահեռ ընթացող գործընթացները:

- Բացահայտել մոնղոլների՝ ասորիքյան առաջին արշավանքին (1259-1260) Կիլիկյան Հայաստանի մասնակցության դրդապատճառները, ընթացքն ու հետևանքները:

- Ճշգրտել 1258-1262 թթ. Հեթում Ա-ի ջանքերի հետևանքով Հայոց թագավորության ընդարձակման հանգամանքներն ու մանրամասները:

- Պարզել «Այյուբյան» պատմաշրջանի հավանական դերը «Սասնա Շռերի» պատմական հենքի ձևավորման մեջ:

Ուսումնասիրվող թեմային վերաբերող սկզբնաղբյուրները բաժանվում են յոթ խմբի՝ ա) հայկական, բ) արաբական, գ) ասորական, դ) լատիներեն և հին ֆրանսերեն, ե) բյուզանդական գ) պարսկագիր, է) վրացական և ը) գերմանական:

Ա) **Հայկական** սկզբնաղբյուրներից ժամանակագրորեն առաջինը XII դ. նշանավոր ժամանակագիր **Սամվել Անեցու և Շարունակողների** աշխատությունն է, որտեղ խնդրո առարկա թեմային վերաբերող տեղեկությունների շարքում խիստ արժե-

քավոր են Սալահ ալ-Դինի և Անտիոքի Բոհեմունդ III իշխանի միջև 1185 թ. կնքված հաշտության, վերջինիս կողմից Ռուբեն Գ-ի ձերբակալության և դրան հաջորդած դեպքերի մասին վկայությունները: «Ժամանակագրությունը» արժեքավոր և երբեմն եզակի տեղեկություններ է պարունակում խնդրո առարկա ողջ ժամանակաշրջանի վերաբերյալ՝ մինչև 1260 թ.¹:

Այս խմբի սկզբնաղբյուրների թվում արժեքավոր և առատ տեղեկություններով շահեկանորեն առանձնանում է **Սմբատ Սպարապետի** «Տարեգիրքը», որի շատ վկայություններ, գրված լինելով ժամանակակցի ու ականատեսի լավատեղյակությամբ, խիստ արժանահավատ են²:

Հայկական սկզբնաղբյուրների շարքում հարուստ տեղեկություններով աչքի է ընկնում XIII դ. պատմիչ **Կիրակոս Գանձակեցու** երկը: Հատկապես բացառիկ են նրա տեղեկությունները Կիլիկյան Հայաստան-Հյուսիսային Ասորիք՝ 1203-1206 թթ. պատերազմի, ինչպես նաև Երզնկայի՝ 1230 թ. ճակատամարտին կիլիկեցիների ու ֆրանկների մասնակցության վերաբերյալ³: Սմբատ Սպարապետի նման Կիրակոս Գանձակեցին ժամանակակից է քննության առարկա իրադարձություններին և քաջաձանոթ Կիլիկյան Հայաստանում ծավալված իրադարձություններին, ուստի նրա հաղորդումները ոչ պակաս արժանահավատ են:

Նույն դարի հայ պատմիչներից թեմայի վերաբերյալ կարևոր տեղեկություններ է հաղորդում Կիրակոս Գանձակեցու

¹ **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014 (այսուհետև՝ **Սամուէլ Անեցի և Շարունակողներ**):

² **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Փարիզ, 1859, **Սմբատայ Սպարապետի** Տարեգիրք, աշխատասիրութեամբ Հ. Սերովբէ Ազըլեանի, ս. Ղազար, Վենետիկ, 1956 (այսուհետև՝ **Սմբատ Սպարապետ**):

³ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961 (այսուհետև՝ **Կիրակոս Գանձակեցի**):

սննդակից **Վարդան վարդապետը**: Պատմիչն իր երկում եզակի տվյալներ է արձանագրել երրորդ խաչակրության նկատմամբ Լևոն Բ իշխանապետի դիրքորոշման մասին: Դրանք արաբական աղբյուրների տեղեկությունների համադրությամբ լույս են սփռում խաչակիրներ-Այյուբյաններ հակամարտությունից Կիլիկյան Հայաստանը զերծ պահելու ուղղությամբ Լևոն Բ-ի դիվանագիտական ձեռնարկումների վերաբերյալ: Նրա տեղեկությունները ևս շարադրված են ժամանակակցի լավատեղյակությամբ և հավաստի են ոչ միայն այդ, այլ նաև հեղինակի՝ որոշ ժամանակ Կիլիկիայում ապրած լինելու ուժով⁴:

Միջնադարյան հայ մատենագիրներից օգտագործել ենք նաև **Վահրամ Բաբունու**⁵ և **Հեթում պատմիչի**⁶ պատմագրական երկերը, ինչպես նաև XIII դ. մանր ժամանակագրություններ⁷ և հայերեն ձեռագրերի հիշատակարանները⁸:

Բ) Արաբական աղբյուրներ. մենագրության սկզբնաղբյուրային հենքի զգալի մասը բաժին է ընկնում արաբալեզու մատենագիրների երկերին: Դրանցից առատ տեղեկություններով աչքի

⁴ Մեծին **Վարդանայ Բարձրբերդցոյ** Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861 (այսուհետև՝ **Վարդան Բարձրբերդցի**), Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի** լուսաբանեալ, ս.Ղազար, Վենետիկ, 1862 (այսուհետև՝ **Վարդան վարդապետ**):

⁵ **Վահրամայ Բաբունույ** Ոստանաւոր պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնագարեանց, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Փարիզ, 1859 (այսուհետև՝ **Վահրամ Բաբունի**):

⁶ Մաթևոսյան Կ., **Հեթում պատմիչ** Կողիկոսցին և նրա «ժամանակագրությունը», Երևան, 2011 (այսուհետև՝ **Հեթում պատմիչ**), **Hayton**, La Flor des estoires de la Terre d'Orient, "Recueil des historiens des Croisades". Documents arméniens, t. 2, Documents latins et francais relatives a l'Arménie, éd. Ch. Kholer, Paris, 1906, p. 147-219 (այսուհետև՝ **Hayton**):

⁷ **Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.**, հ. I, կազմեց Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1951, հ. II, կազմեց Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1956 (այսուհետև՝ **Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.**):

⁸ **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար**, աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1984 (այսուհետև՝ **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար**):

են ընկնում XIII դ. նշանավոր մատենագիր **Իբն ալ-Ասիրի** «Լիակատար պատմություն» (ալ-Քամիլ ֆի Լ-Թարիխ), ինչպես նաև «Մոսուլի աթաբեկների պատմություն» աշխատությունները, որոնցում լայնորեն արծարծված են Ռուբինյան պետության և Այյուբյան սուլթանության փոխհարաբերությունները: Հայոց թագավորության և Անտիոքի իշխանության՝ 1224-1226 թթ. ռազմական բախման և այդ պայքարին Հալեպի ու Իկոնիայի սուլթանությունների մասնակցության վերաբերյալ նրա հաղորդումը եզակի է⁹:

Ներկա ուսումնասիրության համար բացառիկ սկզբնաղբյուր է XIII դ. պատմիչ և դիվանագետ **Իբն Վասիլի** պատմական երկը¹⁰, որտեղ հարուստ տեղեկություններ կան ինչպես Սալահ ալ-Դինի շրջանի, այնպես էլ նրան հաջորդած Այյուբյան տարբեր տիրակալների մասին: Իսկ նրա հաղորդած տեղեկությունները 1208-1209 և հատկապես 1216 թթ. Լևոն Ա - ալ-Մալիք ալ-Ադիլ և Լևոն Ա - ալ-Մալիք ալ-Ջահիր հարաբերությունների մասին բացառիկ են:

Սալահ ալ-Դինի գլխավորությամբ 1180 թ. դեպի Կիլիկիա արշավանքի մասին կարևոր տեղեկություններ կան **Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանիի** «ալ-բարկ ալ-Շամի» («Ասորիքյան կայծակ») երկում, որը մեզ է հասել **ալ-Բունդարիի** համառոտագրությամբ և «Սանա ալ-բարկ ալ-Շամի» («Ասորիքյան կայծակի

⁹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ Բ, **Իբն ալ-Ասիր**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981 (այսուհետև՝ **Իբն ալ-Ասիր**), նաև **Ibn al-Aṭīr, Al-Kāmil fi-l-tārīḫ**, հուն. 10, խմբ. Muḥammad Yūsuf al-Daqqāq, Bayrūt, 2003 (այսուհետև՝ **Ibn al-Aṭīr, Al-Kāmil fi-l-tārīḫ**):

¹⁰ **Ibn Wāṣil**, Mufarrīḡ al-kurūb fi aḥbār banī Ayyūb, v. II, v. III, խմբ. Ġamāl al-Dīn al-Šayyāl, al-Qāhira, 1957 (այսուհետև՝ **Ibn Wāṣil**, Mufarrīḡ al-kurūb):

փայլատակում») վերնագրով¹¹: Այդ նույն արշավանքի մասին արժեքավոր հաղորդում ունի պատմիչ **ալ-Մալիք ալ-Մանսուրը**¹²:

Ոչ պակաս կարևոր աղբյուր է **Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմի** «Հալեպի պատմության սերուցք»-ը: Դրանում հատկապես արժեքավոր են XII դ. վերջին քառորդին և XIII դ. առաջին տասնամյակին վերաբերող նյութերը: Իբն ալ-Ադիմի երկն այն սակավաթիվ աղբյուրներից է, որը մանրամասն հաղորդում է Կիլիկյան Հայաստանի և Հալեպի Այյուբյան սուլթանության միջև 1203-1206 թթ. պատերազմի մասին: Խիստ ուշագրավ են պատմիչի հաղորդումները Հարիմ ամրոցի՝ 1177-1178 թթ. պաշարմանը հայկական բանակի մասնակցության, Այյուբյանների դեպի Կիլիկիա երկրորդ արշավանքի, 1208/1209 թ. Եգիպտոսի ալ-Մալիք ալ-Ադիլ սուլթանին և 1216 թ. ալ-Մալիք ալ-Չահիրին Լևոն Մեծագործի հղած նամակների¹³ և հարակից այլ իրադարձությունների վերաբերյալ: Այս տեղեկությունները զգալիորեն ամբողջացնում են Կիլիկյան Հայաստանի և Այյուբյան սուլթանության ռազմաքաղաքական և դիվանագիտական փոխհարաբերությունների պատկերը XII դ. վերջին և XIII դ. առաջին տասնամյակում:

Արաբական մատենագրության նշանավոր հուշարձաններից է **Յակուտ ալ-Համավիի** (մահ.1229) «Երկրների բառարանը» (կամ Աշխարհագրական բառգիրքը), որից օգտագործել ենք Թալ Բաշիր, Բադրաս, Դայր Բասաք, Սիս, Կալաթ առ-Ռում,

¹¹ **Imād al-Dīn Isfahānī**, al-Barq al-Šāmī, **al-Bundarī**, Sanā al-barq al-Šāmī, bi-taḥqīq Faḥīyya al-Nabrawī, 1979, al-Qāhira (այսուհետև՝ **al-Bundarī**, Sanā al-barq al-Šāmī):

¹² **Al-Malik al-Manṣūr**, Miḍmār al-ḥaqāʿiq wa sirr al-ḥalāʿiq, Ālam al-kutub, al-Qāhira, 1968 (այսուհետև՝ **Al-Malik al-Manṣūr**, Miḍmār al-ḥaqāʿiq):

¹³ **Kamal ad-Din Ibn al-Adim**, Zubdat al-halab fi tarikh Halab, Damas, t. I, Damas, 1951, t. II, Damas, 1954, t. III, 1968 (այսուհետև՝ **Ibn al-Adim**, Zubdat al-Halab).

Մարաշ, ալ-Մասիսա և Կիլիկիային վերաբերող այլ բառահոդվածներ¹⁴:

Օգտագործված արաբալեզու աղբյուրների մեջ առանձին հիշատակության են արժանի **Բահա ալ-Դին իբն Շադդադի** (մահ. 1234), **Աբու Շամայի** (մահ.1267) և **Իբն Խալլիքանի** (1211-1282) կենսագրական բնույթի երկերը:

Բահա ալ-Դին Իբն Շադդադի երկերից ամենանշանավորը «Սալահ ալ-Դինի կենսագրությունն»¹⁵ է: Հեղինակը նշում է, որ մինչև 1188 թ. տեղ գտած իրադարձությունների վերաբերյալ նյութերը քաղել է վստահելի ընկերների վկայություններից, իսկ սուլթանի վերջին հինգ տարիների կյանքը (1188-1193) շարադրել է որպես ականատես:

Իբն Շադդադի հաղորդումներից առանձնակի կարևոր են սուլթան Սալահ ալ-Դինին Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի ուղարկած երկու նամակները, որոնցից առաջինը պատմիչն ամբողջությամբ վերաշարադրել է: Այս նամակների մասին վկայում է նաև մեկ այլ արաբ մատենագիր՝ **Աբու Շաման** իր «Ձույգ պարտեզների գրքում» (Քիթաբ ալ-Ռատուլաթայն): Պատմիչը հաղորդում է նաև Սալահ ալ-Դինի՝ 1180 թ. Կիլիկիա արշավելու մասին¹⁶:

¹⁴ **Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համալի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ** կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965 (այսուհետև՝ **Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին**), նաև **Yāqūt al-Ḥamawī, Mu'ğam al-buldān, v. 2, Bayrūt, 1977** (այսուհետև՝ **Yāqūt al-Ḥamawī, Mu'ğam al-buldān**):

¹⁵ **Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին**, նաև **Ibn Šaddād, Bahā' al-Dīn, Kitāb al-Nawādir al-sultāniyya wa-mahasin al-Yūsufiyya, Dimašq, 1979** (այսուհետև՝ **Ibn Šaddād, Kitāb al-Nawādir**):

¹⁶ **Abu Shama, Abū al-Šāma Tarāğim al-riğāl al-qarnayn al-sādis wa-l-sābi' (Ḍayl 'alā al-rawḍatayn), Bayrūt, 1974,** (այսուհետև՝ **Abu Shama, Kitāb al-Rawḍatayn**), Abū al-Šāma, 'Uyūn al-Rawḍatayn fi aḥbār al-dawlatayn, v. I, Dimašq, 1991, Abū Šāma, Kitāb al-Rawḍatayn fi aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Šalāḥiyya, v. IV, Bayrūt, 2002:

Խնդրո առարկա թեմայի, մասնավորաբար Կիլիկյան Հայաստանի, Սալահ ալ-Դինի տերության և Իկոնիայի սուլթանության փոխհարաբերությունների մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում XIII դ. մեկ այլ հեղինակ՝ **Իբն Խալլիբանն** իր «Կենսագրական բառարան»-ում: Դրանում տեղ են գտել իսլամական աշխարհի հայտնի մարդկանց կենսագրությունները¹⁷:

Եգիպտոսում XIII դ. արաբերենով ստեղծված պատմագրական աշխատություն է ղպտի հեղինակ **Աբու ալ-Մաքարիմի** (սխալմամբ Աբու Սալիհ ալ-Արմանիին վերագրված) երկը, որը տեղեկություններ է պարունակում Ռուբեն Գ-ի իշխանության վերջին տարիների և նրա կողմից Եգիպտոս ուղարկված պատվիրակության վերաբերյալ¹⁸:

Կիլիկյան Հայաստանի ու Այյուբյան սուլթանության փոխհարաբերություններին անդրադարձել են նաև XIV և XV դարերի որոշ արաբագիր պատմիչներ: Նրանցից հիշատակելի են **ալ-Չահաբին, Աբու լ-Տիդան և Իբն ալ-Տուրաթը**: Առաջինն իր «Իսլամի դինաստիաներ» երկում համառոտ, սակայն բավական արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Կիլիկյան Հայաստանի ու Հալեպի Այյուբյան սուլթանության զինաբախումների վերաբերյալ¹⁹: Սալահ ալ-Դինի՝ 1180 թ. Կիլիկիա կատարած ար-

¹⁷ **Ibn Ḥallikān**, Wafāyat al-a'yān wa-anbā' abnā' al-zamān, hun. 7, խմբ. Iḥṣān 'Abbās, Bayrūt, 1972, (այսուհետև՝ **Ibn Ḥallikān**, Wafāyat al-a'yān), նաև **Ibn Khallikan**, Biographical Dictionary, tr. by William MacGuckin de Slane, vol. III, IV, London, 1871:

¹⁸ Աբուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորեից Եգիպտոսի, Վենետիկ, 1895, The Churches and Monasteries and Some Neighbouring Countries attributed to Abū Ṣāliḥ The Armenian, tr. from Arabic by B.T.A Evetts, Oxford, 1895, **Tārīḥ Abū al-Makārim** (Tārīḥ al-kanā'is wa-l-adyura), hun. 2, խմբ. Al-anbā' Ṣamū'il, al-Qāhira, 1984 (այսուհետև՝ **Abū al-Makārim**):

¹⁹ **Al-Dahabī**, Kitāb duwal al-Islām, v. 1-2, Beirut, 1979, 437 էջ, 384 էջ (այսուհետև՝ **Al-Dahabī**, Kitāb duwal al-Islām), նաև՝ **Al-Dahabī**, Tārīḥ al-Islām wa-wafayāt al-

շավանքին, ինչպես նաև Հալեպի և Իկոնիայի սուլթանությունների միջև 1208 թ. հաստատված հակակիրիկյան դաշինքին վերաբերող ուշագրավ տեղեկություններ են արձանագրված **Աբու-Տիդայի** «Մարդկության համառոտ պատմության» մեջ²⁰: Ինչ վերաբերում է **Իբն ալ-Ֆուրաթին**, ապա նրա՝ մեզ հետաքրքրող տեղեկությունները վերաբերում են Գրիգոր Դ Տղայի՝ Սալահ ալ-Դինին ուղղած նամակին, որը գրեթե չի տարբերվում Իբն Շադդադի երկում հանդիպող օրինակից և հավանաբար հենց այնտեղից էլ քաղված է²¹: Նույն այդ նամակի մասին հաղորդում է նաև **Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանին** իր պատմական երկում²²:

Ջալալ ալ-Դին Խորեզմշահի արշավանքներին և նրա դեմ առաջացած դաշինքի մասին հաղորդում է **Մուհամմադ ալ-Նասավին**²³: Հուլադուի՝ ասորիքյան արշավանքի և դրա հետևանքով Կիրիկյան Հայաստանի ընդարձակման վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում **ալ-Ջազարին**²⁴, **Իզզ ալ-**

mašāhīr wa-l-a‘lām, խմբ. ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, hun. 42, 43, Bayrūt, 1997, 676 էջ, 568 էջ (այսուհետև՝ **Al-Dahabī**, Tārīḫ al-Islām):

²⁰ Տե՛ս **Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին**, էջ 211-291:

²¹ **Ibn al-Furāt**, Tarīkh al-Duwal wa l-Mulūk, v. 4.1, խմբ. Ḥasan Muḥammad Šammā‘, Baṣra, 1967 (այսուհետև՝ **Ibn al-Furāt**, Tarīkh al-Duwal wa l-Mulūk):

²² **‘Imād al-Dīn al-İṣfahānī**, Kitāb al-Fatḥ al-Qusṣī fī al-fatḥ al-Qudsī (‘Imād ed-dīn el-kātīb el-iṣfahānī, Conquete de la Syrie et de La Palestine par Ṣalāḥ ed-dīn, publié par le comte Carlo de Landbeerg, E. J. Brill, Leide, 1888), այսուհետև՝ **‘Imād al-Dīn al-İṣfahānī**, Kitāb al-Fatḥ :

²³ Шихаб ад-Дин **Мухаммад ан-Насави**, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, пер.с арабск. З.М. Буниятова, Баку, 1973 (այսուհետև՝ **Мухаммад ан-Насави**):

²⁴ **Al-Ġazarī**, Ḥawādīṭ al-Zamān wa anbā’uḥu wa wafayāt al-akābir wa al-a’yān min abnā’ihī, v. 1, Bayrūt, 1998 (այսուհետև՝ **Al-Ġazarī**, Ḥawādīṭ al-Zamān):

Դին Իբն Շադդադը²⁵, ալ-Այնին²⁶, Մուֆազզալ իբն Աբի-լ-Ֆազաիլը²⁷, Իբն ալ-Ամիրը²⁸, ալ-Նուայրին²⁹, Իբն ալ-Շիհնան³⁰, Իբն Քասիրը³¹ և Իբն Թադրի Բիրրին³²: Մենագրության մեջ օգտագործվել են նաև Իբն Նազիֆ ալ-Համավիի³³, Սիբս իբն ալ-Ջաուզիի³⁴ և ալ-Մակրիզիի³⁵ երկերը:

Ռուբինյան տոհմին արաբ պատմագրության մեջ տրված անվանումներին՝ մասնավորապես հաճախ հանդիպող «Իբն

²⁵ **Izz al-Dīn Ibn Šaddād**, Al-A‘lāq al-Ḥaṭira fi dīkr umarā’ al-Šam wa-l-Ğazira, hun. 1.1, 1.2, 3.1, խմբ. Yaḥyā Zakaryā ‘Abbāra, Dimašq, 1978-1991 (այսուհետև՝ **Izz al-Dīn Ibn Šaddād**, Al-A‘lāq al-Ḥaṭira):

²⁶ **Al-‘Aynī**, ‘Iqd al-ğumān fi tāriḫ ahl al-zamān, v. III, bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Ḥay’a al-mišriyya al-‘āma li-l-kitāb, al-Qāhira (այսուհետև՝ **Al-‘Aynī**)

²⁷ **Mufaḍḍal ibn Abi al-Fadā’il**, al-Naḡḡ as-sadiḍ wa-durr al-farīd fimā ba‘da tāriḫ ibn al-‘Amīd (Moufazzal ibn Abil-Faza’il, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet // Patrologia Orientalis, t. 14, Paris, 1920 (այսուհետև՝ **Mufaḍḍal ibn Abi al-Fadā’il**):

²⁸ **Ibn al-‘Amīd**, Aḥbār al-Ayyūbiyyīn (al-Mağmū’ al-mubārak), Maktabat al-ṭaqāfa al-dīniyya, Būr Sa‘īd (անանց տարեթվի), այսուհետև՝ **Ibn al-‘Amīd**, Aḥbār al-Ayyūbiyyīn:

²⁹ **al-Nuwayrī**, Nihāyat al-arab fi funūn al-adab, ց. 31, bi-taḥqīq Nağib Mušṭafā Fawwāz, Ḥikmat Kišli Fawwāz, Ibrāhīm Šams al-Dīn (և այլոց), Dār al-Kutub al-‘Ilmiyya, Bayrūt, 2004 (այսուհետև՝ **al-Nuwayrī**, Nihāyat al-arab):

³⁰ **Ibn al-Šihna**, Al-Durr al-muntaḥab fi tāriḫ mamlakat Ḥalab, bi-taḥqīq ‘Abd Allāh Muḥammad Darwiš, Dimašq, 1984 (այսուհետև՝ **Ibn al-Šihna**, Al-Durr al-muntaḥab):

³¹ **Ibn Kaṭīr**, al-Bidāya wa-l-nihāya, v. XVII, al-Qāhira, 1998 (այսուհետև՝ **Ibn Kaṭīr**, al-Bidāya wa-l-nihāya):

³² **Ibn Tağrī Birdī**, Al-Manhal al-Šafi wa-l-Mustawfi ba‘da al-Wāfi, v. V., bi-taḥqīq Muḥammad Muḥammad ‘Amīn, al-Ḥay’a al-Mišriyya al-‘Āmma li-l-Kitāb, al-Qāhira (այսուհետև՝ **Ibn Tağrī Birdī**, Al-Manhal al-Šafi)

³³ **Ibn Nazif al-Ḥamawī**, al-Tāriḫ al-Manšūrī, խմբ. Abū al-‘Īd al-Dūdū, 1981 (այսուհետև՝ **Ibn Nazif al-Ḥamawī**, al-Tāriḫ al-Manšūrī):

³⁴ **Sibt ibn al-Gawzī**, Mirāt al-zamān fi tāriḫ al-a‘yān, hun. 8, (ed. with introduction by J. R. Jewett, Chicago, 1907), այսուհետև՝ **Sibt ibn al-Gawzī**, Mirāt al-zamān :

³⁵ **Al-Maqrīzī**, Kitāb al-sulūk li-ma‘rifat duwal al-mulūk, v. 1.2, al-Qāhira, 1957 (այսուհետև՝ **Al-Maqrīzī**, Kitāb al-sulūk):

Լևոն» ու սրանից առաջացած «Իբն Լևոնի երկիր» և մի շարք այլ արտահայտությունների բուն իմաստի բացահայտման համար բացի արդեն նշված հեղինակներից, օգտագործվել են նաև հետևյալ մատենագիրների երկերը՝ **Իբն Աբդ ալ-Չահիրի** «Ալ-Ռաուդ ալ-Չահիր»³⁶, **Իբն ալ-Կալանիսի** «Չայլ Թարիխ Դիմաշկ»³⁷, **Իբն ալ-Իբրիի** (Բար Հերբենու) «Դինաստիաների համառոտ պատմություն»³⁸, **Բայբարս ալ-Մանսուրիի** «Չուբդաթ ալ-Ֆիքրա ֆի թարիխ ալ-հիջրա»³⁹, ինչպես նաև վերջինիս վերագրվող «Մուխթար ալ-Ախբար»⁴⁰, **Իբն ալ-Դավադարիի** «Քանզ ալ-դուրար ուա ջամի ալ-դուրար»⁴¹ և **Իբն Բատտուայի** գործերը⁴²,

Գ) **Ասորական աղբյուրներ**. քննվող թեմայի վերաբերյալ արժանահավատ տեղեկություններով աչքի են ընկնում ասորագիր պատմիչների երկերը, որոնք խիստ ուշագրավ մանրամասներ են հաղորդում Մերձավոր Արևելքի երկրների հետ Կիլիկյան Հայաստանի՝ XII դ. երկրորդ կեսի և XIII դ. առաջին կեսի առնչությունների վերաբերյալ:

³⁶ **Ibn ‘Abd al-Zāhir**, Al-Rawḍ al-zāhir fi sirat al-Mālik al-Zāhir, խմբ. ‘Abd al-‘Aziz al-Ḥuwaytīr, al-Riyāḍ, 1976 (այսուհետև՝ **Ibn ‘Abd al-Zāhir**, Al-Rawḍ al-zāhir):

³⁷ **Ibn al-Qalānisī**, Dail tariḥ Dimašq, խմբ. H. F. Amedroz, 1908, (այսուհետև՝ **Ibn al-Qalānisī**, Dail tariḥ Dimašq):

³⁸ **Ibn al-‘Ibrī**, Tāriḥ muḥtaṣar al-duwal, խմբ. Anṭūn Ṣāliḥānī al-Yasū‘ī, Bayrūt, 1994 (այսուհետև՝ **Ibn al-‘Ibrī**, Tāriḥ muḥtaṣar al-duwal):

³⁹ **Baybars al-Manṣūrī**, Zubdat al-fikra fi tāriḥ al-hiğra, bi-taḥqīq Dunāld Ritšārdz, Bayrūt, 1998 (այսուհետև՝ **Baybars al-Manṣūrī**, Zubdat al-fikra):

⁴⁰ **Baybars al-Manṣūrī** (վերագրված), **Muḥtār al-Aḥbār**, al-Qāhira, 1993 (այսուհետև՝ **Muḥtār al-Aḥbār**):

⁴¹ **Ibn al-Dawādārī**, Kanz al-durar wa-ğāmi‘ al-ğurar, hun. 8, al-Qāhira, 1971 (այսուհետև՝ **Ibn al-Dawādārī**, Kanz al-durar):

⁴² **Իբն Բատտուա**, քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, Երևան, 1940 (այսուհետև՝ **Իբն Բատտուա**):

Այդ հեղինակներից հիշատակելի է XII դ. նշանավոր պատմիչ պատրիարք **Միքայել Ասորին**, որի «Ժամանակագրությունը» միջնադարյան մատենագրության նշանավոր հուշարձաններից է: Ի թիվս այլ վկայությունների, նա տեղեկություններ է հաղորդում XII դ. վերջին Ռուբինյաններ-Այյուբյաններ հարաբերությունների մասին⁴³: Օգտագործել ենք նաև Միքայել Ասորու երկի՝ հայերեն թարգմանությունը (XIII դ.), որտեղ հավելյալ տեղեկություններ կան քննվող թեմայի վերաբերյալ⁴⁴:

Ոչ պակաս կարևոր ու հավաստի են մեկ այլ ասորի մատենագրի՝ **Անանուն Եղեսացու** «Ժամանակագրության» տեղեկությունները Ռուբինյանների արտաքին քաղաքականության՝ մասնավորապես 1208-1209 թթ. Այյուբյան սուլթանության հետ նրանց ունեցած կապերի մասին⁴⁵:

Օգտագործված ասորական աղբյուրների շարքը եզրափակում է XIII դ. պատմիչ **Բար Հեբրեոսի** (արաբ. **Իբն ալ-Իբրի**) «Ժամանակագրությունը»: Բար Հեբրեոսը լայնորեն օգտվել է Միքայել Ասորու երկից, սակայն XII դ. երկրորդ կեսի և XIII դ. իրադարձությունները ներկայացրել է ինքնուրույն՝ որպես ժամանակակից: Նա հաղորդում է Այյուբյանների, ինչպես նաև թուրքմեն ցեղապետ Ռուստոմի՝ Կիլիկիա կատարած արշավանքների, Լևոն Բ-ի կողմից Բաղրասի՝ 1191 թ. գրավման և հարակից այլ դեպքերի մասին: Բար Հեբրեոսը նաև ներկայացնում է Լևոն Մե-

⁴³ **Chronique de Michel le Syrien**, ed. et tr. Par J.-B. Chabot, Bruxelles, t.III, 1963 (այսուհետև՝ **Michel le Syrien**).

⁴⁴ Ժամանակագրություն Տեան Միխայելի Ասորուց պատրիարքի, Յերուսաղէմ, 1871: Օգտագործել ենք նաև 1870 թ. հրատարակությունը, տե՛ս Տեան Միխայելի պատրիարքի ասորուց ժամանակագրություն, Յերուսաղէմ, 1870 (այսուհետև՝ **Միքայել Ասորի, Ժամանակագրություն, 1870, 1871**):

⁴⁵ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, Անանուն Եղեսացի, ժամանակագրություն, թարգմանություն Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982 (այսուհետև՝ **Անանուն Եղեսացի**):

ծագործի մահից հետո Կիլիկիայում ու հարևան երկրներում տիրող իրավիճակը⁴⁶:

Դ) **Լատիններեն և հին ֆրանսերեն աղբյուրներ**. թեմայի վերաբերյալ XII-XIII դդ. լատին հեղինակներից հիշատակելի է **Գիյոմ Տյուրացին (Վիլիելմ Սուրացին)**, որի «Պատմություն անդրծովյան եղելությունների մասին» երկը խաչակրաց արշավանքների գլխավոր սկզբնաղբյուրներից է: Գրքում հարուստ տեղեկություններ կան հայերի ու խաչակիրների փոխհարաբերությունների մասին⁴⁷: Նույն խմբի աղբյուրներից արժեքավոր է **Էռնուլի և գանձապահ Բեռնարի** (XIII դ.) «Ժամանակագրությունը»⁴⁸ և «**Գործք կիպրացվոց**»⁴⁹ հայտնի երկը: Վերջինս անդրադառնում է քրիստոնյաների մասնակցությանը Հալեպի ու Դամասկոսի գրավմանը 1260 թ.: Լատինագիր այլ հեղինակներից ուսումնասիրության մեջ օգտագործել ենք նաև **Բրոկարդուսի**⁵⁰ երկը, **Ամադիի Ժամանակագրությունը**⁵¹, **Մարինո Սանուդի**ի հեղինակած պատմագրական գործը⁵², ինչպես նաև «**Ուխտագնացություն դեպի Երուսաղեմ և Սուրբ Երկիր 1187-1291**» ժողո-

⁴⁶ The Chronography of **Bar Hebraeus**, Gregory Abu-I-Faraj, translated by E. W. Budge, Amsterdam, 1976 (այսուհետև՝ **Bar Hebraeus**).

⁴⁷ A History of Deeds done beyond the Sea, by William Archbishop of Tyre, v. II, translated and annotated by E. A. Babcock & A. C. Krey, New York, 1943 (այսուհետև՝ **William of Tyre**).

⁴⁸ Chronique **d'Ernoul et de Bernard le Trésorier**, par M. L. de Mas Latrie, Paris, 1871 (այսուհետև՝ **Ernoul**).

⁴⁹ **Les gestes des Chiprois**, ed. G. Raynaud (Publications de la Société de l'Orient Latin. Série historique 5), Geneva, 1887:

⁵⁰ Brocardus, Directorium ad Passagium Faciendum, in: Recueil des Historiens des Croisades, Documents latins et francais relatives a l'Arménie, t. II, Paris, 1906 (այսուհետև՝ **Brocardus**).

⁵¹ **Chroniques d'Amadi et de Strambaldi**, publiées par René de Mas Latrie, Première partie, 1891:

⁵² **Marino Sanudo Torsello**, The Book of the Secrets of the Faithful of the Cross (Liber Secretorum Fidelium Crucis), tr. by Peter Lock, Ashgate, 2011:

վածուն⁵³, որոնք անդրադառնալով հայ-լատին առնչություններին՝ նաև լույս են սփռում հայ-արաբական հարաբերությունների վրա:

Բացի նշված պատմական ու աշխարհագրական երկերից, օգտագործվել է նաև XIII դ. լատին հեղինակ **Վիլբրանդ Օլդենբուրգցու** ուղեգրությունը⁵⁴:

Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության ուսումնասիրության առումով կարևոր նշանակություն ունի նաև ժամանակի մուսուլման տիրակալների ու կաթոլիկ եկեղեցու առաջնորդների՝ մասնավորապես Հռոմի **Ինոկենտիոս III** պապի հետ կիլիկյան աշխարհիկ ու հոգևոր վերնախավի նամակագրությունը⁵⁵:

Ե) **Բյուզանդական աղբյուրներ**. Բյուզանդական աղբյուրներից օգտագործվել է «Միքայել Իտալիկոսի ներբողյանը»⁵⁶, որը հրատարակել է Ֆրանկա Ֆուսկոն:

Զ) **Պարսկագիր հեղինակների (Իբն Բիբի⁵⁷, Ջուվայնի⁵⁸, Ռաշիդ ալ-Դին⁵⁹)** տվյալները կարևոր են հատկապես XIII դ. ա-

⁵³ Denys Pringle, **Pilgrimage to Jerusalem and the Holy Land 1187-1291** (Crusader texts in translation), Ashgate, Farnham, 2012:

⁵⁴ **Wilbrandi de Oldenburg**, Peregrinatio, in: Peregrinatores medii aevi quatuor, Lipsiae, 1863 (այսուհետև՝ **Wilbrand de Oldenburg**), նաև **Wilbrand of Oldenburg**, Journey in the Holy Land (1211-1212) in: Denys Pringle, Pilgrimage to Jerusalem and the Holy Land 1187-1291 (Crusader texts in translation), Ashgate, Farnham, 2012:

⁵⁵ **Acta Innocentii PP. III (1198-1216)**, E. registris Vaticanis aliisque Eruit, introductione auxit, notisque illustravit P. Theodosius Haluščynskij hieromonachus ordinis Basiliani S. Iosaphat E pontificia commissione ad redigendum C.I.C.O., Fontes series III, vol. II, Vaticanis, 1944 (այսուհետև՝ **Acta Innocentii PP. III (1198-1216)**):

⁵⁶ **Franca Fusco**, Il Panegirico di Michele Italico per Giovanni Comneno, Athens, 1969-1970.

⁵⁷ Recueil de Textes Relatifs à L'Histoire Des Seldjoucides par M. Th. Houtsma, vol. III, Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjoucāneh d'Ibn-Bibī, Leide, 1902 (այսուհետև՝ **Ibn-Bibī**):

⁵⁸ **Ġuwaynī**, Kitāb Tārīḫ-e Ġahān-Guṣā, taṣḫīḫ-e Muḥammad Qazwīnī, v. II, Barīl, Laydan, 1916 (այսուհետև՝ **Ġuwaynī**).

ռաջին տասնամյակների որոշ իրադարձությունների ճշգրտման տեսանկյունից:

Է) **Վրացական աղբյուրներ.** Կիլիկիա արշաված թուրքմեն ցեղապետ Ռուստամի մասին նյութեր կան նաև վրացական «**Քարթլիս Ցխովրեբա**»-ում⁶⁰:

Ը) **Գերմանական աղբյուրներ.** Խաչակրաց երրորդ արշավանքին Կիլիկյան Հայաստանի մասնակցությանն է վերաբերում XIV դ. գերմանացի մի անանուն հեղինակի էպիկական պոեմը⁶¹:

Կիլիկյան Հայաստանի պատմությունը հայ պատմագիտության ուշադրությանն արժանացավ նրա սկզբնավորման շրջանից: Իր եռահատոր ստվարածավալ աշխատության՝ Գ հատորի մի զգալի մասը **Միքայել Չամչանցը** նվիրել է Կիլիկիայի հայկական թագավորության պատմությանը: XIX դ. կեսերից Կիլիկիայի պատմության հարցերով սկսեցին զբաղվել ֆրանսիացի նշանավոր արևելագետ **Վիկտոր Լանգլուան, Էդուար Դյուլրիեն:**

Հայ ուսումնասիրողներից առաջինը Կիլիկյան Հայաստանին հատուկ աշխատություն նվիրեց **Ղևոնդ Ալիշանը:** Նա «Սիստան»⁶² կոթողային աշխատությունում սկզբնաղբյուրային լայն հենքի վրա մանրամասն ուսումնասիրել է ոչ միայն Լևոն Մեծա-

⁵⁹ **Рашид ад-Дин**, Сборник летописей, т. III, перевод с персидского А. К. Арендса, под редакцией А. А. Ромаскевича, Е. Э. Бертельса, и А. Ю. Якубовского, Москва-Ленинград, 1946, Рашид-ад-Дин, Сборник летописей, том I, книга I, пер. с персидского Л. А. Хетагурова, ред. и примечания А.А. Семенова, Москва-Ленинград, 1952:

⁶⁰ **Картлис Цховреба**. История Грузии, под. ред. Р. Метревели, Тбилиси, 2008:

⁶¹ **Friedrich Heinrich von der Hagen** (Hg.), Des Landgrafen Ludwig's des Frommen Kreuzfahrt: Heldengedicht der Belagerung von Akkon am Ende des zwölften Jahrhunderts, Leipzig, 1854:

⁶² Ալիշան Ղ., Սիստան. Համագրություն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885 (այսուհետև՝ **Ալիշան Ղ., Սիստան**):

գործի (որը հեղինակի գլխավոր նպատակն էր), այլև Կիլիկիայի հայկական պետության պատմությունը՝ հիմնադրումից մինչև 1226 թ. և Կիլիկիայի աշխարհագրությունը:

«Սիսուան»-ից հետո երկար ժամանակ Կիլիկիային նվիրված հատուկ աշխատություն լույս չտեսավ, թեև **Ֆրանսուա Տուրնըբիզի** «Հայաստանի քաղաքական և կրոնական պատմությունը»⁶³ և **Մաղաքիա Օրմանյանի** «Ազգապատում»⁶⁴ աշխատություններում մեծ տեղ էր հատկացված հայկական այդ պետության պատմությանը:

Միայն XX դ. 20-30-ական թվականներին էր, երբ հողվածներով ու գրքերով հանդես եկան **Ֆ. Մակերը, Ժ. Լորանը, Ն. Յորգան, Ա. Ալպոյաճեանը** և ուրիշներ: Խաչակրաց արշավանքների պատմությունն ուսումնասիրող մի շարք նշանավոր արևելագետներ բազմակողմանիորեն, երբեմն նույնիսկ ամբողջ գլուխներ հատկացնելով, անդրադարձել են Կիլիկիայի պատմությանը: Օրինակ՝ նշելի են **Ռընե Գրուսեի** եռահատոր հիմնարար աշխատությունը⁶⁵, **Կլոդ Կաննի** Հյուսիսային Ասորիքի պատմությանը նվիրված երկը⁶⁶, **Սթիվըն Ռանսիմենի** «Խաչակրաց արշավանքների պատմություն»-ը⁶⁷ և այլն:

XX դ. Կիլիկյան Հայաստանին նվիրված կարևոր ուսումնասիրություն հեղինակեց **Գրիգոր Միքայելյանը**: Նրա «Կիլիկիայի հայկական պետության պատմություն»⁶⁸ աշխատությունն

⁶³ **Tournebize F.**, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.

⁶⁴ **Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, ս. Էջմիածին, 2001:

⁶⁵ **Grousset R.**, Histoire des Croisades et du royaume franc de Jerusalem, ed. Perin, Paris, t. I, 1095-1130, L'anarchie musulmane, 1934, t.II, 1131-1187, L'équilibre, 1935, t.III, 1188-1291, L'anarchie franque, 1936:

⁶⁶ **Cahen Cl.**, La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940 (այսուհետև՝ **Cahen C., La Syrie du Nord**).

⁶⁷ **Runciman S.**, A History of the Crusades, vol. II (The Kingdom of Jerusalem), 1951.

⁶⁸ **Микаелян Г.Г.**, История Киликийского армянского государства, Ереван, 1952.

ընդգրկում է ոչ միայն XI-XIV դդ. ամբողջ պատմությունը, այլև նախորդող ու հաջորդող դարերի պատմության համառոտ շարադրանքը մինչև XX դ. 20-ական թթ.: Գ. Միքայելյանն անդրադարձել է Կիլիկիայի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի պատմությանը:

Վերջին կես դարում Կիլիկիայի պատմության տարբեր հարցերի են անդրադարձել թե՛ հայ, թե՛ օտար մի շարք գիտնականներ՝ նրանց թվում **Վ. Ռուդոլֆ-Կոլենբերգը**⁶⁹, **Ե. Քասունին**⁷⁰, **Հ. Բարթիկյանը**⁷¹, **Ա. Բոզյանը**⁷², **Կ. Մութաֆյանը**⁷³, **Լ. ՏերՊետրոսյանը**⁷⁴, **Ա. Հովհաննիսյանը**⁷⁵ և ուրիշներ:

⁶⁹ **Rüdt-Collenberg W.H.**, The Rupenids, Hethumides and Lusignans, The structure of the Armeno-Cilician dynasties, Paris, 1963:

⁷⁰ **Քասունի Ե.**, Ռուբին Գ. իշխանապետ (1175-1187 թթ.) եւ իր կտակը, Պէրյուֆ, 1987:

⁷¹ **Բարթիկյան Հ.**, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծայքերը, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Երևան, 2002, էջ 642-652, Հայ-բյուզանդական նոթեր, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա., Աճեմյան մատենաշար Գ/1, Երևան, 2002, էջ 47-56, Միքայել Իտալիկոսի «Ներքոյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը, Պատմա-բանասիրական հանդես, 1984, թիվ 4, էջ 216-229:

⁷² **Բոզյան Ա.**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, Կիլիկիայի հայկական պետությունը Բյուզանդիայի կայսերական և պատրիարքական վավերագրերում (ընդհանուր ակնարկ), «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, էջ 51-84:

⁷³ **Mutafian C.**, La Cilicie au Carrefour des empires, t. I-II, Paris, 1988, նույնի՝ La diplomatie arménienne au Levant a l'époque des croisades XII-XIV siècle. These de doctorat, Université Paris I, Pantheon-Sorbonne, Juin, 2002, նույնի՝ L'Arménie du Levant (XI-XIV siècle), t.I, Paris, 2012.

⁷⁴ **ՏերՊետրոսյան Լ.**, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, Երեւան, 2007:

⁷⁵ **Հովհաննիսյան Ա.**, Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ., Երևան, 2008:

Թեմային անմիջականորեն առնչվում է սփյուռքահայ պատմաբան **Երվանդ Քասունու** «Ռուբեն Գ իշխանապետ (1175-1187) եւ իր կտակը» մենագրությունը⁷⁶:

XIII դ. առաջին տասնամյակների հայ-խաչակիր հարաբերությունների և Անտիոքի գահաժառանգության համար տարածաշրջանում ծավալված պայքարին առնչվող մի շարք հանգուցային հարցերի է անդրադարձել **Լևոն Տեր-Պետրոսյանն** իր «Խաչակիրները և հայերը»⁷⁷ հիմնարար աշխատության մեջ: Արաբական միջնադարյան պատմական երկերը Կիլիկիային վերաբերող իր հետազոտություններում լայնորեն օգտագործել է **Գագիկ Դանիելյանը**⁷⁸:

Օտար հեղինակներից օգտագործել ենք **Ս. Հեմֆրիզի**՝ Այյուբյան սուլթանության և նրան մաս կազմած տարբեր պետական կազմավորումների պատմությանը նվիրված՝ «Սալադինից մինչև մոնղոլներ. Դամասկոսի Այյուբյանները 1193-1260»⁷⁹ ծավալուն հետազոտությունը, իսկ նորագույն մենագրություններից՝ **Անն-Մարի Էդդեի** «Հալեպի Այյուբյանների իշխանությունը (579/1183 – 658/1260)» հիմնարար աշխատությունը⁸⁰:

⁷⁶ **Քասունի Ե. Հ.**, Ռուբեն Գ. իշխանապետ (1175-1187 թթ.) եւ իր կտակը, Պէրութ, 1987:

⁷⁷ **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ:

⁷⁸ **Դանիելյան Գ.**, Ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկը Կիլիկյան Հայաստանի 1250-1310 թթ. պատմության սկզբնաղբյուր (աղբյուրագիտական քննություն), թեկնածուականատենախոսություն (անտիպ), Երևան, 2015, **Նույնի**, «Թագավոր /թաքֆուր» տիտղոսը միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, էջ 163-198, **Նույնի** Հոռմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները, «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», Երևան, 2016, 200-287 էջեր **Նույնի** Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները, ՎԷՄ համահայկական հանդես, № 1 (49), հունվար-մարտ, 2015, էջ 141-154:

⁷⁹ **Humphreys S.**, From Saladin to the Mongols, The Ayyubids of Damascus, 1193-1260, New York, 1977:

⁸⁰ **Eddé A.-M.**, La Principauté Ayyoubide d'Alep, Stuttgart (579/1183 – 658/1260), Stuttgart, 1999 (այսուհետև՝ **Eddé A.-M., La Principauté Ayyoubide d'Alep**),

Բացի վերոհիշյալ մենագրություններից, ներկա հետազոտության մեջ օգտագործվել են նաև Ասորիքի, Իրաքի, Եգիպտոսի, Պաղեստինի պատմությանը վերաբերող մի շարք կարևոր ուսումնասիրություններ, ինչպիսիք են **Ն. Ելիսեևի**⁸¹, **Ս. Լեյն-Փուլի**⁸², **Կ. Բուսվորտի**⁸³, **Վ. Մինորսկու**⁸⁴, **Գիբբի**⁸⁵ աշխատությունները:

Օգտագործվել են նաև խաչակիր պետություններին, Բյուզանդական կայսրությանը և Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը նվիրված այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են **Մ. Զաբորովի** գրքերը խաչակիրների մասին⁸⁶, **Վ. Գորդլևսկու** «Փոքր Ասիայի սելջուկների պետությունը»⁸⁷ և **Ա. Սավիդիսի**⁸⁸ մենագրությունները: Մոնղոլական դարաշրջանին վերաբերող նորագույն ուսումնասիրություններից օգտագործել ենք **Դ. Բայ-**

նյիսի՝ Saladin, translated by Jane Marie Todd, Cambridge, Massachusetts & London, England, 2014 (այսուհետև՝ **Eddé A.-M., Saladin**):

⁸¹ **Elisseeff N.**, Nūr ad-Dīn, Un grand prince musulman de Syrie au temps des croisades (511-69H./1118-1174), tome II, Institut Français de Damas, 1967 (այսուհետև՝ **Elisseeff N., Nūr ad-Dīn**):

⁸² **Lane-Poole S.**, A History of Egypt in the Middle Ages, London, 1901:

⁸³ **Босворт К. Э.**, Мусульманские династии. Справочник по хронологии и генеалогии. Пер. с англ. П.А.Грязневича. Ответственный редактор И.П. Петрушевский. Москва, 1971:

⁸⁴ **Minorsky V.**, Prehistory of Saladin, “Studies in Caucasian History”, London, 1953, էջ 107-157:

⁸⁵ **Gibb H.**, The Life of Saladin (from the works of Imād ad-Dīn and Bahā’ ad-Dīn), Oxford, 1973:

⁸⁶ **Заборов М.**, Введение в историографию крестовых походов (латинская хронография XI-XIII вв.), Москва, 1966; Историография крестовых походов (литература XV-XIX вв.), Москва, 1971; История крестовых походов в документах и материалах, Москва, 1977; Крестоносцы на Востоке, Москва, 1980.

⁸⁷ **Гордлевский В.А.**, Государство сельджукидов Малой Азии, Москва-Ленинград, 1941.

⁸⁸ **Savvides Alexis G. C.**, Byzantium in the Near East: Its relations with the Seljuk sultanate of Rum in Asia Minor, the Armenians of Cilicia and the Mongols A.D. 1192-1237, Thesalonics, 1981.

սարխանի «Մոնղոլներն ու հայերը (1220-1335)»⁸⁹ և **Ռ. Ամիտայ-Պրայսի** «Մոնղոլներ և մամլուքներ՝ Մամլուք-Իլխանյան պատերազմը 1260-1281»⁹⁰ աշխատությունները:

Այսպիսով՝ վերոբերյալ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համադիր ու մանրագնին քննությամբ փորձ է կատարվել համակողմանի կերպով բացահայտել Կիլիկյան Հայաստանի ու Այյուբյան պետությունների փոխհարաբերությունները և, հնարավորինս, լրացնել թեմայի ուսումնասիրման ոլորտում եղած բացերը:

⁸⁹ **Bayarsaikhan D.**, *The Mongols and the Armenians (1220-1335)*, Leiden- Boston, 2011:

⁹⁰ **Amitai-Preiss R.**, *Mongols and Mamluks: The Mamluk-Īlkhānid war, 1260-1281*, Cambridge University Press, Cambridge, 1995 (այսուհետև՝ **Amitai**, *Mongols*):

ԳԼՈՒԽ Ա

«ԻԲՆ ԼԵՎՈՆ» ԱՐՔԱՅԱՏՈՀՄԸ ԵՎ «ԻԲՆ ԼԵՎՈՆԻ ԵՐԿԻՐ»-Ն ԱՐԱՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հաշվի առնելով աշխատության՝ գերազանցապես արաբական աղբյուրների հիման վրա արված շարադրանքը և փաստը, որ տվյալ գործերում՝ հատկապես խնդրո առարկա դարաշրջանին վերաբերող հատվածներում համատարած օգտագործվող «Իբն Լևոն» և «Իբն Լևոնի երկիր» արտահայտություններն իրենց անորոշությամբ ու երկիմաստությամբ հաճախ շփոթեցնում են ուսումնասիրողներին, նախ քննվել են այդ արտահայտությունները, դրանց ծագումը, իմաստային ու ժամանակատարածքային ընդգրկումները:

XI դ. վերջին քառորդին պետականությունը կորցրած և սելջուկյան ավերիչ ասպատակություններից խույս տվող հայության հոծ զանգվածներ Մեծ Հայքից գաղթեցին դեպի արևմուտք և հարավ-արևմուտք՝ փոխելով Փոքր Ասիայի, Ասորիքի և Վերին Միջագետքի ժողովրդագրական պատկերը: Այդ իսկ պատճառով ստեղծվեց հայկական իշխանությունների մի մեծ ցանց: Հատկապես Եփրատացիքն ու Կիլիկիան մասամբ կամ ամբողջությամբ հայացան՝ ստանալով հայկական դիմագիծ: Այդ երկրամասերում հայերի գերակշիռ ներկայությունը ծնունդ տվեց դրանց նոր անվանումների, որոնք, բնականաբար, կրում էին հայկականության կնիք: Նոր անվանումներ տրվեցին ոչ միայն հայաբնակ դարձած աշխարհագրական տարածքներին, այլև դրանցում հաստատված իշխանություններին, իսկ առավել ստույգ՝ դրանք ներկայացնող տոհմերին:

Հայկական Կիլիկիայի իշխողներին հարևան երկրներում տրված անվանումների հանգամանալից քննությանը նպաստում են դարաշրջանի պատմողական երկերի, մասնավորապես արա-

բալեզու սկզբնաղբյուրների տվյալները: Դրանց նախապատվություն տալը պատճառաբանվում է այն հանգամանքով, որ Հայկական Կիլիկիայի առաջնորդների կամ իշխող տոհմերի վերաբերյալ հայ, բյուզանդացի, ասորի, լատին մատենագիրների գործածած անվանումները միմյանցից շատ չեն տարբերվում: Դրությունն այլ է արաբական պատմագրության դեպքում:

Արաբագիր և մյուս այլալեզու պատմագիրների առաջին ակնառու տարբերությունն այն է, որ առաջինների երկերում հազվադեպ է հանդիպում «Կիլիկիա» տեղանունը⁹¹, մինչդեռ մնացած բոլոր աղբյուրներում, հետևելով հռոմեական կամ բյուզանդական ավանդույթին, «Կիլիկիա»-ն, որպես երկրի անվանում, լայնորեն օգտագործվում է:

Աչքի ընկնող երկրորդ տարբերությունն այն է, որ արաբ պատմիչները երբևէ չեն հիշատակում Կիլիկիայում իշխած երկու հայտնի տոհմերից (Ռուբինյաններ և Հեթումյաններ) և ոչ մեկին⁹²: Փոխարենը հաճախակի կիրառվում է «Իբն Լեւոն» բառակապակցությունը: Վերջինիս հանդիպում ենք Իբն ալ-Կալանիսիի, Իբն Շադդադի, Բար Հեբրեոսի (Իբն ալ-Իբրի), Իբն ալ-Ասիրի, Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմի, Աբու Շամայի, Աբու-լ-Ֆիդայի, ալ-Ջահաբիի, Իբն ալ-Դավադարիի և այլոց երկերում:

Ինդրո առարկա հարցի հետազոտման համար հատուկ նշանակություն ունեն ասորի պատմիչները: Ուստի՝ նախքան արաբական երկերի քննությանն անցնելը դիմենք ասորի պատմագրությանը: Բանն այն է, որ նրանք քաջաճանոթ էին հայ և բյուզանդացի հեղինակների գործերին, սերտորեն առնչվում էին արաբական միջավայրի հետ, իսկ նրանցից որոշների երկերն ու-

⁹¹ Տե՛ս **Ibn 'Abd al-Zāhir**, Al-Rawḍ al-zāhir, էջ 439:

⁹² Այս առումով թերևս բացառություն է Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմի հաղորդումը, որն իր պատմական երկում խոսելով 1137 թ. դեպքերի մասին, Լևոն իշխանին կոչում է «Լաւոն իբն Ռուբայ» (Լևոն իբն Ռուբեն), որը կարող է թարգմանվել նաև որպես «Լևոն Ռուբինյան» (**Ibn al-Adim**, Zubdat al-Halab, v. II, էջ 262):

նեն երկլեզու շարադրանք (ինչպես օրինակ Բար Հեբրեոսը) և հաճախ բառեր ու հասկացություններ փոխանցողների դեր էին կատարում:

XII դ. նշանավոր ասորի պատմիչ Անանուն Եդեսացին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում քննության առարկա բառեզրերի վերաբերյալ. «Կիլիկիայում իշխում էր Ռուբենի որդի Լևոն (Լևոն Ա Ռուբինյան – Վ. Տ.-Ղ.) անունով հայը, որը Ուռհայի իշխան կրտսեր Ժուլինի քեռին էր»⁹³, - գրում է նա: Հետագա շարադրանքում (որտեղ հայտնում է բյուզանդական կայսր Հովհաննես II Կոմնենոսի (1118-1143) հայտնի արշավանքի և Լևոն Ա իշխանի գերեվարման մասին) պատմիչը նրան կոչում է պարզապես Լևոն, իսկ մի տեղ էլ Լևոն հայ: Հայտնի է , որ Լևոն Ա-ը Ռուբենի ոչ թե որդին էր, այլ թոռը (որդի Կոստանդին Ա-ի), բայց պարտադիր չէ, որ ասորի պատմիչը սխալված լինի: Չի բացառվում, որ նա Լևոնին համարել է Ռուբենի տոհմակիցը, այլ ոչ թե որդին⁹⁴: Այս ենթադրությունը հաստատվում է հետագա շարադրանքում. «Անարգաբայում և Կիլիկիայում իշխում էին հայերը՝ Ռուբենի որդիները»⁹⁵, «Այդ ժամանակ Ռուբենի սերնդի հայերը, որոնք իշխում էին Կիլիկիայի գավառներում ու երկրի բերդերում...»⁹⁶, - գրում է արաբ պատմիչը:

Անանուն Եդեսացու՝ Լևոն Մեծագործին վերաբերող 1205 թվակիր վկայության մեջ գրված է. «...Կիլիկիայի իշխան Լևոն հայը դիմեց Խոսրովշահին...»⁹⁷: Այլ տեղերում ասորի պատմիչն օգտագործում է նաև Թորոս հայ: Կիլիկիայի իշխողներին անվա-

⁹³ **Անանուն Եդեսացի**, էջ 79: Լևոն Ա-ի քույր Բեատրիսը ամուսնացել էր Եդեսիայի կոմս Ժուլինի հետ: Այդ ամուսնությունից ծնվել էր կրտսեր Ժուլինը (տե՛ս **Rüdt-Collenberg W.**, *The Rupenids, Hethumids and Lusignans*, map I (Rup.)):

⁹⁴ Հմմտ. «Լաուն իբն Ռուբայ» (տե՛ս **Ibn al-Adim**, *Zubdat al-Halab* v. II, էջ 262):

⁹⁵ Նույն տեղում, էջ 40:

⁹⁶ Նույն տեղում, էջ 74:

⁹⁷ Նույն տեղում, էջ 194:

ներու այս ձևը՝ Թորոս Հայը, Լևոն Հայը կամ Հայազգի Թորոսը, Հայազգի Լևոնը, առկա է նաև արաբ պատմիչների երկերում:

Ասորի մատենագիրները, այդ թվում Անանուն Եղեսացին, հայերի և հույների օրինակով երկիրը կոչել են Կիլիկիա. «...այնտեղից նրանք մտան Կիլիկիո երկիրը»⁹⁸, «Կիլիկիայի իշխանը, որի անունն էր Մլեհ»⁹⁹, - կարդում ենք Անանուն Եղեսացու երկում:

XII դ. ամենահայտնի ասորի պատմիչ Միքայել Ասորին ևս, որը Կիլիկիայի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում, երկիրը կոչում է Կիլիկիա, իսկ նրա իշխողներին՝ Ռուբենի որդիներ, Ռուբենի զարմ, Ռուբինյաններ ընդհանրական անվանումներով: «Կային նաև հայեր, որոնք տիրում էին մի շարք տարածքների Կիլիկիայի շրջանում, նրանք կոչվում էին «Ռուբենի որդիներ» (Bene Ruben) ¹⁰⁰», - գրում է Միքայել Ասորին:

Պատմիչը հայ իշխաններին հիշատակում է իրենց անուններով առանց որևէ տիտղոս ավելացնելու՝ Ռուբեն, Կոստանդին, Թորոս, Լևոն: Լավագույն դեպքում հավելում է Հայ, Հայազգի մակդիրներ. «Կիլիկիայի լեռներում կային երկու եղբայր՝ Ռուբենի որդի Կոստանդինի որդիները»¹⁰¹, «Թորոս Հայի մոտ՝ Կիլիկիա»¹⁰², «Այդ տարին մահացավ Թորոս Հայը՝ Կիլիկիայի կառավարիչը: Նրան հաջորդեց եղբայրը՝ Լևոնը»¹⁰³, իսկ մի այլ տեղ գրված է «Լևոն Հայը»¹⁰⁴:

Նույն կերպ է հիշատակվում նաև Թորոս Բ-ը. «Լևոնի որդիներից մեկը՝ Թորոսը, փախչում է [գերությունից] ու մեկնում

⁹⁸ Անանուն Եղեսացի, էջ 37:

⁹⁹ Նույն տեղում, էջ 135:

¹⁰⁰ **Michel le Syrien**, t.III, էջ 187:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 198:

¹⁰² Նույն տեղում, էջ 223:

¹⁰³ Նույն տեղում, էջ 227:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 230:

այնտեղից»¹⁰⁵, «...Կիլիկիայի վեհանձն (արժանի-Վ. Տ.-Ղ.) կառավարիչ Թորոսը»¹⁰⁶, կամ «...Հայազգի Թորոսը՝ Կիլիկիայի իշխանը»¹⁰⁷: Հաջորդ երեք Ռուբինյանները՝ Մլեհը, Ռուբեն Գ-ը և Լևոն Բ-ը, ևս հիշատակվում են իբրև Կիլիկիայի իշխաններ¹⁰⁸:

Ավելի ուշ շրջանի պատմիչ Բար Հեբրեոսը (XIII դ.) Կիլիկիան մեկ անգամ կոչում է Հայաստան¹⁰⁹: Այդուամենայնիվ, մնացյալ շարադրանքում բազմիցս գործածում է Կիլիկիա եզրը: Օրինակ՝ նա նշում է, որ այսինչ անձը մահացավ ու թաղվեց Կիլիկիայի Տարսոնում¹¹⁰, մի այլ տեղում՝ «Այդ ժամանակ Կիլիկիայում իշխում էին Ռուբենի որդի Կոստանդինի երկու որդիները»¹¹¹, հաջորդիվ արձանագրում է՝ «Հայազգի Թորոսը՝ Կիլիկիայի կառավարիչը»¹¹²: Պատմիչը Լևոնին կոչում է Հայազգի Լևոնը՝ նախապես երկրի համար «Կիլիկիա» բառն օգտագործելով¹¹³:

Կիլիկիան հենց Լևոն Ա իշխանի օրոք տարածաշրջանում դարձավ գործոն, ինչը հիմք ծառայեցնելով՝ արաբ հեղինակները կիրառության մեջ դրեցին Լևոնյաններ կամ Լևոնի որդիներ եզրերը որպես տոհմանուն:

Ի տարբերություն Ռուբենի և Կոստանդինի, Ռուբինյանների հաջորդ իշխաններին՝ Թորոս Ա-ին, Լևոն Ա-ին, Թորոս Բ-ին և Մլեհին Բար Հեբրեոսն ու Միքայել Ասորին¹¹⁴ հիշում են Հայազգի և Կիլիկիայի կառավարիչ վերադիր մակդիրներով:

Այսպիսով՝ ասորի պատմիչները տեղյակ էին, որ տոհմի ու իշխանության հիմնադիրը Ռուբենն էր: «Հայազգի Թորոսը»,

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 281:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 304:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 310:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 337, 376, 387:

¹⁰⁹ **Bar Hebraeus**, էջ 237:

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 238, 244:

¹¹¹ Նույն տեղում, էջ 246:

¹¹² Նույն տեղում, էջ 252:

¹¹³ Նույն տեղում, էջ 255:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 295:

«Հայագգի Լևոնը» ձևերին զուգահեռ ասորի պատմիչները գործածում են Ռուբենի որդիներ բառակապակցությունը: Վերջապես, նրանց հաղորդումներում Կիլիկիայի առաջին երեք իշխանների համեմատ ակնհայտ կարևորություն է տրվում Լևոն Ա-ին: Ինչպես շուտով կհամոզվենք, այս մոտեցումը հատուկ է նաև արաբական պատմագրությանը:

Ինչպես նշվել է, Բար Հեբրեոսն ունի արաբերենով գրված աշխատություն, որն ասորերեն երկի համեմատ ավելի համառոտ է և կոչվում է «Պետությունների համառոտ պատմություն»¹¹⁵: Նույն հեղինակի՝ երկու լեզուներով գրած երկերի համեմատությունը հետաքրքիր փաստեր է արձանագրում:

Ասորերեն աշխատության մեջ բազմիցս հիշատակված Կիլիկիա բառի փոխարեն արաբերեն երկում շրջանառվում են Բիլադ Իբն Լևոն (Իբն Լևոնի երկիր), Բիլադ ալ-Արման (Հայոց երկիր) տեղանունները:

Մյուս ուշագրավ տարբերությունն այն է, որ իր՝ ասորերեն երկում Ռուբենի որդիներ արտահայտությունը քանիցս օգտագործող հեղինակն արաբերենում զարմանալիորեն ընդհանրապես չի հիշատակում Ռուբեն անունը, այլ նախընտրում է արաբ պատմագրության մեջ ընդունված «Իբն Լևոն»-ը¹¹⁶, իսկ Հեթում Ա-ին պարզապես կոչում է «Հայոց թագավոր Հեթումը»¹¹⁷:

Բար Հեբրեոսի՝ ասորերեն և արաբերեն երկերի քննությունից հետևում է, որ Կիլիկիա բառին համապատասխանում են Իբն Լևոնի երկիր, Հայոց երկիր անվանումները, երբեմն էլ պարզապես Դուրուբ (Կիրճեր կամ Լեռնանցքներ) բառը: Այլ խոսքով՝ Բար Հեբրեոսն արաբերեն գրելիս ոչ թե նույնությամբ կիրառության մեջ է դնում իր գործածած անվանումներն ու բառեզրերը, այլ

¹¹⁵ **Ibn al-ʿIbrī**, *Tārīḥ muḥtaṣar al-duwal*, Beirut, 1890:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 459-460, 498-500:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 459-460, 498-500:

հետևում է արաբ պատմագրության մեջ արդեն իսկ արմատացած անուններին ու բառակապակցություններին:

Ասորի պատմագիրների երկերի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու Կիլիկյան Հայաստանի վերաբերյալ արաբ պատմագրության մեջ տեղ գտած մի շարք հասկացություններ:

Ինդրո առարկա հարցի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հաղորդում հետևյալ արաբ մատենագիրները՝ Իբն ալ-Կալանիսին, Ալ-Կադի Բահա ալ-Դին Իբն Շադդադը, Իբն ալ-Ասիրը, Յակուտ ալ-Համավին, Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը, Աբու Շաման, Իբն ալ-Դավադարին, Բայբարս ալ-Մանսուրիին վերագրվող երկի հեղինակը, ալ-Ջահաբին և Իբն Բատուտան:

Նշված հեղինակներից ժամանակագրորեն առաջինն Իբն ալ-Կալանիսին է (XII դ.): Մնացած հեղինակներն իրենց երկերը շարադրել են XIII-XIV դարերում, ուստի կարող էին օգտված լինել այս հեղինակի երկից:

Իբն ալ-Կալանիսին Հիջրայի 531 թվակիր (1136/1137 թ.) հաղորդման մեջ անդրադառնալով Բյուզանդիայի կայսր Հովհաննես II Կոմնենոսի՝ Կիլիկիա և Անտիոք կատարած հայտնի արշավանքին և արձանագրելով բյուզանդացիների կողմից Ադանայի, Մսիսի (Մամեստիա) և Այն Ջարբայի (Անազարբա) գրավումը՝ հավելում է. «...ապա շրջվեց [կայսրն] ու վերադարձավ դեպի Կիրճերը (այսինքն՝ Կիլիկիա) և գրավեց այն բոլոր բերդերն ու շրջակա բնակավայրերը, որ դեռևս մնացել էին Իբն Լևոն Հայի ձեռքում»¹¹⁸:

Այս հաղորդման մեջ Լևոն Ա իշխանը կոչվում է Իբն Լևոն՝ Լևոնի որդի, մինչդեռ հայտնի է, որ նա Կոստանդինի որդին էր: Պարզ է, որ XII դ. (Իբն ալ-Կալանիսին մահացել է 1160 թ.) Իբն Լևոն բառակապակցությունն արդեն իսկ կիրառվում էր:

¹¹⁸ **Ibn al-Qalānisī**, *Dail tariḥ Dimašq*, էջ 258:

Իբն ալ-Կալանիսին, Իբն ալ-Ասիրը, Իբն Շադդադը և այլ արաբագիր հեղինակներ քաջատեղյակ էին Կիլիկյան Հայաստանի պատմությանը: Նրանք Ռուբինյան իշխանապետության ժամանակակիցներն էին, հաճախ ապրել են նրանից ոչ հեռու բնակավայրերում (Հալեպ, Մոսուլ և այլն), ուստի նրանց երկերը հավաստի աղբյուրներ են: Հետևաբար՝ նրանք չէին կարող այդ աստիճան անտեղյակ լինել Կիլիկիայի իշխողներին և բոլորին՝ Կոստանդինին, Թորոս Ա-ին, Լեոն Ա-ին, Թորոս Բ-ին, Ռուբեն Գ-ին, Լեոն Բ-ին կոչել Լևոնի որդի:

Չնայած Կիլիկիայի իշխանների ու թագավորների անունների ճշգրիտ իմացության օրինակներն արաբ պատմագրության մեջ բազմաթիվ են՝ հիշենք դրանցից մեկը: «Մովսթար ալ-Ախբար» երկի հեղինակը Եգիպտոսի Բայբարս սուլթանի՝ 1266 թ. նշանավոր արշավանքի և Հեթում Ա-ի որդի Լևոնի գերեվարման մասին գրում է. «այդ ժամանակ թագավորն էր Բասակի որդի Կոստանտինի որդի Հայթումը, ...որի որդին էր Լևոնը»¹¹⁹: Եթե Հեթումի հայր Կոստանդինը որպես պայլ (խնամակալ) կարող էր հայտնի լինել, ապա նաև այս վերջինի հոր՝ Վասակի հիշատակումը զարմանալի է: Հայոց արքայատոհմի ծագումնաբանության նման իմացություն դժվար է հանդիպել օտար պատմագրության մեջ: Վերոհիշյալը հուշում է, որ Իբն Լևոն, Իբն Լևոնի երկիր հասկացությունները չեն վերաբերում որևէ որոշակի անձի, այլ մատնանշում են Կիլիկյան Հայաստանի՝ XII-XIII դդ. իշխաններին ու թագավորներին:

Մնում է պարզել, թե Լևոններից որ մեկն է դարձել տոհմի անվանադիրն արաբ պատմագրության համար: Լևոն Մեծագործը որդի չունեց, հետևաբար խոսքը նրա որդու մասին չէ: Լևոնի որդի անվանման տակ կարող էին հասկացվել Թորոս Բ-ը կամ

¹¹⁹ Muḥtār al-Aḥbār, էջ 32:

Մլեհը (մանավանդ որ հայտնի են վերջինիս սերտ հարաբերությունները Նուր ալ-Դինի և այլ մուսուլման տիրակալների հետ): Բայց Մլեհը (ինչպես և Լեոն Մեծագործը) անմիջապես հանվում են թեկնածուների ցանկից, երբ նկատի ենք ունենում, որ «Իբն Լևոն»-ն առաջիններից կիրառող Իբն ալ-Կալանիսին մահացել է 1160-ին, ուստի չգիտեր և չէր էլ կարող իմանալ ո՛չ Մլեհին, ո՛չ Լևոն Մեծագործին:

Ինչ վերաբերում է Թորոս Բ-ին, ապա նա իսկապես կարող էր կոչվել Իբն Լևոն (Լևոնի որդի), բայց ստորև կհամոզվենք, որ այս անվանումը չի տրվում որոշակի անձի:

Բահա ալ-Դին Իբն Շադդադը պատասխանատու պաշտոններ է վարել Այյուբյան Սալահ ալ-Դինի արքունիքում, ապրել է Հալեպում և մահացել 1234 թ.: Հետևաբար՝ իր «Այյուբյան Սալահ ալ-Դինի կենսագրությունը» երկում մեզ զբաղեցնող իրադարձությունների ու անձանց վերաբերյալ նրա տեղեկությունները շարադրված են ժամանակակցի լավատեղյակությամբ, ուստի հավաստի են: Այս երկում Իբն Շադդադը բազմիցս գործածում է Բիլադ Իբն Լևոն բառակապակցությունը, որը բառացի թարգմանվում է Լևոնի որդու երկիր. «Սուլթանը Կլըջ Արսլանին օգնելու համար արշավեց դեպի Լևոնի որդու երկիրը...անցնելով գնացին դեպի Նահր Ասուադը, որը Լևոնի որդու երկրի սահմանն է կազմում»¹²⁰ կամ «Սուլթանը...սպասում էր Հալեբի բանակներին, որոնք ուշացան, որովհետև նրանք զբաղված էին ֆրանկների հետ հայոց հողի վրա՝ Լևոնի որդու երկրում»¹²¹ և, վերջապես, վերապատմելով Սալահ ալ-Դինին ուղղված Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի հղած երկու նամակները՝ օգտագործում է

¹²⁰ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 293:

¹²¹ Նույն տեղում, էջ 294:

նույն Իբն Լևոն¹²² բառակապակցությունը՝ նկատի ունենալով Կիլիկիո իշխանապետ Լևոն Բ-ին:

Ուշագրավ է, որ առաջին նամակը վերապատմելուց հետո, Իբն Շադդադը գրում է. «Սա է նամակը կաթողիկոսի, և այս բառը նշանակում է խալիֆա. նրա անունն է Բար Քրիքուր իբն Բասիլ»¹²³: Գրիգոր Տղան Վասիլի որդին էր (տղան էր). պատմիչը երկու անգամ տղա բառը չգործածելու համար հմտորեն օգտվել է ասորերեն Բար (որդի) բառից՝ հիանալի հասկանալով, որ Վասիլը Գրիգորի հոր անունն է, իսկ «Տղա»-ն նրա մականունը: Արաբ մատենագրի՝ Կիլիկիայի վերնախավի անունների ճշգրիտ իմացությունը մեկ անգամ ևս հաստատում է մեր՝ վերոբերյալ ենթադրությունն առ այն, որ Իբն Լևոն հասկացությունը հայկական անունների վատ իմացության կամ անձերին մեկը մյուսի հետ շփոթելու արդյունք չէ:

Կիլիկիայի վերաբերյալ հարուստ տեղեկություններ է հաղորդում XIII դ. նշանավոր պատմիչ Իբն ալ-Ասիրն իր «Լիակատար պատմություն» և «Պատմություն Մոսուլի Աթաբեկների պետության» երկերում: Դրանցում Իբն ալ-Ասիրը, նկատի ունենալով Լևոն Ա իշխանին, Ռուբեն Գ-ին և Լևոն Մեծագործին, բազմիցս գործածում է հայազգի Լևոնի որդու երկիր (Բիլադ իբն Լայուն ալ-Արմանի), Հայոց տեր (Սահիբ ալ-Արման) Լևոնի որդի հասկացությունները¹²⁴:

Արաբական աղբյուրների՝ հայերեն թարգմանողներն ինչպես առանց մեկնաբանության պահպանել են արաբական ձևը, այնպես էլ թարգմանել են որպես Լևոնի որդի կամ Լևոնի որդու երկիր: Իրողությունն այն է, որ արաբերենում որևէ ցեղ կամ արքայատոհմ հիշատակելու համար ընդունված են այլ ձևեր և, առաջին հերթին, Լոն բառի հոգնակին՝ Banu (որդիներ, հմմտ. ա-

¹²² Նույն տեղում, էջ 294-297:

¹²³ Նույն տեղում, էջ 297

¹²⁴ **Իբն ալ-Ասիր**, էջ 229, **Ibn al-Aṣīr, Al-Kāmil fī-I-tārīḥ**, v. VIII, էջ 186:

սորերեն Bene), որը դրվելով որևէ անձնական առջև՝ դրան տալիս է ցեղի կամ տոհմի իմաստ: Օրինակ՝ Banu Bakr նշանակում է Բաքր ցեղ կամ Banu Tamim՝ Թամիմ ցեղ, նույնը՝ հարստության համար՝ Banu l-Abbas՝ Աբբասյաններ, Banu Umayya՝ Օմայաններ, Banu Hamdan՝ Համդանյաններ և այլն: Ակնհայտ է, որ եթե արաբ պատմիչներն օգտագործեին «Banu Levon» ձևը, ապա երկիմաստություն չէր առաջանա:

Բահա ալ-Դին Իբն Շադդադը ևս, որը, ինչպես տեսանք, հիանալի տեղյակ էր Կիլիկիայի անցուդարձից, իր երկում հաճախ օգտագործում է Բիլադ Իբն Լևոն (Իբն Լևոնի երկիր) արտահայտությունը: Պատմիչը Իբն Լևոն է անվանում նաև Լևոն Բ իշխանապետին, որին անդրադառնում է Խաչակրաց երրորդ արշավանքի առիթով:

Այնուամենայնիվ, փորձենք գտնել «Իբն Լևոն»-ի՝ տոհմական առումը հաստատող հավելյալ ապացույցներ: Ի հավելումն Իբն ալ-Ասիրից բերված նախորդ հատվածի, մի մեջբերում էլ կատարենք նրա մյուս՝ «Պատմություն Մոսուլի Աթաբեկների պետության» աշխատությունից, որտեղ, խոսելով Մլեհի հանդեպ Նուր ալ-Դինի քաղաքականության մասին, արաբ պատմիչը գրում է. «Որպես խելամտության մի օրինակ՝ հիշենք նրա վերաբերմունքը Հայոց թագավոր (մալիք ալ-Արման), կիրճերի տեր (սահիբ ալ-դուրուբ) Լևոնի որդի Մլեհի (Մալիի իբն Լայուն) հանդեպ»¹²⁵:

Այս վերջին տեղեկությունը կարևոր է մի քանի առումով: Նախ, սա այն քիչ դեպքերից է, երբ Ռուբինյան որևէ իշխան հիշատակվում է իր անունով: Մլեհի հիշատակությունն այստեղ բացառիկ է: Այդ հանգամանքը, թերևս, կարելի է բացատրել Նուր ալ-Դինի և Ռուբինյան իշխանի հատուկ փոխհարաբերություններով, մուսուլմանական պետության հետ վերջինիս հաստատած,

¹²⁵ Իբն ալ-Ասիր, էջ 362:

իր նախորդներից տարբերվող սերտ դաշինքով, որը, անշուշտ, արաբ պատմագրին կարող էր մղել նրան առավել ուշադրություն հատկացնելու քայլին: Միաժամանակ, քանի որ Մլեհի հոր անունը հենց Լևոն է, կարող է տպավորություն ստեղծվել, թե «Իբն Լևոն»-ն այստեղ հայրանվան իմաստ ունի, և արաբ պատմիչը ճշգրիտ է նշել իշխանապետի անուն-հայրանունը՝ Մալիհ իբն Լայուն (Մլեհ որդի Լևոնի): Սակայն այս տպավորությունը խաբուսիկ է: Փաստն այն է, որ նախորդ էջերում այդ նույն Լևոն Ա-ին՝ Մլեհի հորը, Իբն ալ-Ասիրը կոչում է ոչ թե Լևոն, այլ կրկին Իբն Լևոն. այսինքն՝ վերոհիշյալը պատահական համընկնում է: Հետևաբար՝ Մալիհ Իբն Լայուն բառակապակցության մեջ «Լևոն»-ը ոչ թե հայրանուն է, այլ տոհմանուն և պետք է թարգմանվի որպես Մլեհ Լեոնյան¹²⁶:

Վերոհիշյալը հաստատվում է մեկ այլ մատենագրի՝ աշխարհագետ Յակուտ ալ-Համավիի հաղորդումով, որն իր «Երկրների բառարան»-ում՝ «Ադ-Թադր», («Աս-Սադր») գլխում ևս օգտագործում է Իբն Լևոնի երկիր (Բիլադ իբն-Լավուն)¹²⁷ հասկացությունը: Այդ նույն երկի՝ «Այն Չարբա» գլխում Յակուտը գրում է. «Այդ քաղաքը (Տարսունը) մինչև այսօր գտնվում է նրանց (հայերի) ձեռքում: Այժմ բնակեցված է հայերով և Իբն Լավունի երկրների մասն է կազմում»¹²⁸: Մեջբերենք «Կալաաթ առ-Ռում» գլխից մի այլ հատված. «Մոտավորապես հիջրի 610 թվականին (23 մայիս 1213 – 12 մայիս 1214) Լավունի որդի Լավուն հայոց թագավորը, որ Ասորիքի սահմանագոտու՝ Մսիսի, Տարսունի և Ադանայի վրա է իշխում ...»¹²⁹:

¹²⁶ Իբն ալ-Ասիրի տեղեկության մեջ ուշագրավ է նաև «Հայոց թագավոր» տիտղոսը, որ նա տալիս է Մլեհին:

¹²⁷ **Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին**, էջ 45:

¹²⁸ Նույն տեղում, էջ 94:

¹²⁹ Նույն տեղում, էջ 100:

Թեև մատենագիրը Լևոն Մեծագործի ժամանակակիցն է, բայց երբ հիշատակում է Լևոն հային ու նրա սերնդին, ակնհայտ է, որ խոսքը Լևոն Ա իշխանի մասին է: Հետագայում նա խոսում է նաև Լևոն Մեծագործի մասին, բայց իբրև մի նոր պատմական անձի: Խիստ ուշագրավ է, որ վերջապես տրվում է Լևոնի անձնանունը՝ Լավունի որդի Լավուն հայոց թագավոր, այլ կերպ ասած՝ Լևոն Լևոնյան (ոչ թե Լևոնի որդի Լևոն, մանավանդ որ նրա հոր անունը Ստեփանե էր):

Կիլիկիայի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում նաև XIII դ. պատմիչ Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմն իր «Հալեպի պատմության սերուցքը» աշխատության մեջ: Նա ևս լայնորեն կիրառում է Բիլադ Իբն Լաուն (Իբն Լևոնի երկիր) և Մալիք ուլ-արման Իբն Լաուն (Հայոց թագավոր Իբն Լաուն) բառակապակցությունները: Նա հիշատակելով Հարիմ ամրոցի՝ 1177 թ. պաշարմանը մասնակցող միացյալ ուժերին ու նրանց ղեկավարներին՝ արձանագրում է նաև «Իբն Լևոն»-ին¹³⁰: Պատմիչը, խոսելով 1187 թ. մասին, գրում է «Իբն Լևոնի երկիր»-ը (Բիլադ Իբն Լաուն)¹³¹: Նա 1204 թվակիր վկայության մեջ հաղորդում է. «...հարձակում գործեց Հայոց թագավոր Իբն Լաունը»¹³²:

Մեր առաջ քաշած տեսակետը հաստատվում է նաև մի այլ կարևոր մատենագրի՝ Աբու Շամայի (1203-1268) տեղեկություններով: Նրա երկում Կիլիկիայի թագավորը հիշվում է ոչ թե Իբն Լևոն, այլ հենց Լևոն (Լաֆուն) ձևով¹³³: Կարելի է կարծել, որ հրատարակիչն «ուղղել» է «Իբն Լեունը»՝ դարձնելով Լևոն, բայց աղբյուրի հետագա շարադրանքը բացառում է նման ենթադրությունը: Աբու Շաման հաջորդիվ օգտագործում է Լաֆուն իբն

¹³⁰ **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 36:

¹³¹ Նույն տեղում, էջ 91:

¹³² Նույն տեղում, էջ 155:

¹³³ **Abu Shama**, Kitāb al-Rawdatayn, IV, էջ 77-78:

Իստիֆանա Իբն Լաուն¹³⁴ բառակապակցությունը, այլ կերպ
ասած՝ Ստեփանեի որդի Լևոնը Լևոնյան տոհմից:

Սա մեզ հանդիպած առաջին վկայությունն է, որտեղ
տրված է Հայոց արքայի անունը, հայրանունը և տոհմանվան՝
արաբական տարբերակը: Այստեղ մեզ արդեն ծանոթ բառակա-
պակցության և «Իբն Լևոն»-ի ու այն կողմ անձի իրական հայ-
րանվան առկայությունը կողք-կողքի լիովին բացահայտում է
«Իբն Լևոն»-ի իմաստային նշանակությունը: Հարց է ծագում՝ ին-
չու՞ է արաբ պատմագրությունը մեզ հայտնի տոհմը կոչել Լևոն
Ա-ի և ոչ թե նրա պապի, հոր կամ եղբոր անունով: Կարծում ենք՝
պատճառն այն էր, որ նրանցից միայն Լևոն Ա-ին հաջողվեց տի-
րել Դաշտային Կիլիկիային Տարսոն, Ադանա, Մամեստիա մեծ
քաղաքներով հանդերձ, թեկուզև կարճ ժամանակով (1132-1137):

Վերոգրյալի հաշվառմամբ հարկ է հակիրճ անդրադառնալ
արաբների պատմության մեջ Կիլիկիայի զբաղեցրած տեղին,
որից բխում է արաբ մատենագիրների վերաբերմունքն այդ երկ-
րամասի հանդեպ:

Կիլիկիայի տարածքը VII-X դդ., այս կամ այն չափով, արաբական պետությունների մաս է կազմել: Նախ, այն նվաճվել է Օմար (634-644) և Օսման (644-656) խալիֆաների զորավարների կողմից, ապա մտել է Օմայյան և Աբբասյան խալիֆայությունների, իսկ հետո Համդանյանների պետության մեջ: Այն կարճ ժամանակով նույնիսկ նվաճվել է Եգիպտոսի Թուլունիների կողմից: Վերջապես, X դ. երկրորդ կեսին Բյուզանդական կայսրությունը վերանվաճում է Կիլիկիան:

Խալիֆայության շրջանում Դաշտային Կիլիկիան արաբական «Բիլադ ալ-Շամ» (Ասորիք, կամ «Մեծ Ասորիք») վարչական միավորի մի մասն էր: Լեոնային Կիլիկիան «Բիլադ ալ-Շամ»-ից դուրս էր: Դաշտային Կիլիկիայի գլխավոր քաղաքը՝ Տարսոնը,

¹³⁴ Նույն տեղում, IV, էջ 79:

որը դեռևս հռոմեական ժամանակներից Կիլիկիայի վարչական կենտրոնն էր, նաև կրոնական կարևոր նշանակություն ուներ ոչ միայն քրիստոնյաների (համարվում է Պողոս առաքյալի ծննդավայրը), այլև մուսուլման արաբների համար, քանի որ այնտեղ էր թաղված 833 թ. մահացած Աբբասյան Մամուն խալիֆան (813-833):

Ռազմական առումով Ասորիքի հյուսիսն ու Վերին Միջագետքը միավորվում էին այսպես կոչված ալ-Ավասիմ (Պաշտպանական) գոտու մեջ, որի ստեղծման նպատակը Բյուզանդիայի դեմ պայքարն էր: Այս «Ավասիմ»-ի առաջնագիծը կոչվում էր Սուղուր (Սահմանային ամրությունների գոտի), որը թեև առանձնացված էր Ավասիմից, բայց երբեմն դրանք միավորվում էին մեկ հրամանատարության տակ: X դ. Ավասիմի կենտրոնն Անտիոքն էր: Բյուզանդացիների կողմից այդ բոլոր տարածքների վերանվաճումից հետո Ավասիմը մնաց որպես աշխարհագրական անվանում¹³⁵:

Ինչ վերաբերում է «Սուղուր»-ին (Սաղր բառի հոգնակին), ապա այն արդեն ընդգրկում էր ամբողջ Կիլիկիան՝ թե՛ Դաշտայինը, թե՛ Լեռնայինը: Այդուհանդերձ, արաբ վերաբնակիչները հիմնականում հաստատվել էին Դաշտային մասում, իսկ Լեռնային Կիլիկիան իր բերդերով ու ամրություններով դիտարկվում էր որպես բյուզանդացիների դեմ պայքարում ռազմականացված գոտի և, ի վերջո, այնտեղ արաբ-բյուզանդական՝ գրեթե մշտական հակամարտության պայմաններում գերակշռում էին կայազորները:

Այսպիսով՝ արաբական շրջանում Դաշտային Կիլիկիան մտնում էր մեկ վարչական՝ Շամ, և երկու ռազմական միավորումների՝ Ավասիմի և Սուղուրի մեջ:

¹³⁵ Տե՛ս **Canard M.**, al-Awasim, The Encyclopaedia of Islam, v.I, Leiden & New York, 1986, էջ 761-762:

Լևոն իշխանի ձեռք բերած միջազգային հռչակին վերաբերող մի հավելյալ տեղեկության հանդիպում ենք XII դ. բյուզանդացի հեղինակ Միքայել Իտալիկոսի «Ներբողյանում», որը նվիրված է բյուզանդական կայսր Հովհաննես II Կոմնենոսին: Դրանում կայսրը փառաբանվում է Կիլիկիայում և Ասորիքում 1136-1138 թթ. տարած հաղթանակների համար: Հայտնի է, որ այդ արշավանքի ժամանակ Լևոն Ա իշխանը գերվեց և որոշ ժամանակով Ռուբինյան իշխանությունը վերացվեց:

Ըստ Միքայել Իտալիկոսի՝ Լևոն իշխանն իրեն թագավոր էր հռչակել, թագ (դիադեմա) կապել ու կարմիր կոշիկներ հագել, ինչը հավասարազոր էր Կիլիկիան անկախ պետություն հռչակելուն¹³⁶: Ներբողյանի հեղինակը Լևոնին կոչում է թագավոր, իսկ Կիլիկիա երկիրը՝ թագավորություն: Այս երկի հավաստմամբ՝ կայսեր արշավանքի պատճառը Ռուբինյան իշխանի հանդուգն քայլն էր¹³⁷:

Այսպիսով՝ մեր եզրակացությունը, որն արդեն իսկ բավականաչափ հիմնավորված է հենց արաբ պատմիչների վկայություններով, հավելյալ հաստատվում է բյուզանդացի հեղինակի հաղորդումով:

Հայտնի է, որ հայ պատմագրության մեջ Լևոն Ա-ի թագադրվելու կամ իրեն անկախ հռչակելու մասին որևէ տեղեկություն, նույնիսկ ակնարկ չկա: Նրա վերաբերյալ հայ պատմագրության մեջ կան գնահատանքի ու գովեստի խոսքեր, բայց նա

¹³⁶ Տե՛ս **Բարթիկյան Հ.**, Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը, Պատմաբանասիրական հանդես, 1984, թիվ 4, էջ 216-229: Տե՛ս նաև Franca Fusco, Il Panegirico di Michele Italico per Giovanni Comneno, Athens, 1969-1970. «Ներբողյանի» մեջ չի նշվում Լևոնի ինքն իրեն թագավոր հռչակելու տարին: Կարելի է ենթադրել, որ դա 1132 թ. էր:

¹³⁷ «...չնայած Կիլիկիայի և այդ ժամանակվա բյուզանդական տարածքների կտրվածությանը, Ռուբինյան իշխողները դիտվում էին իբրև կայսեր ստորակներ և կայսրությունը չէր համաձայնում ընդունել այդ երկրամասի անկախությունը» (**Քոզոյան Ա.**, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, էջ 192):

որևէ կերպ չի համարվում ո՛չ տոհմի, ո՛չ հայոց պետության հիմնադիր, մինչդեռ արաբ պատմագրության մեջ Ռուբինյան արքայատոհմը կոչվում է նրա անունով:

Պնդելի է, որ հայոց մեջ ավանդաբար ոչ պակաս, նույնիսկ ավելի բարձր է գնահատվել Լևոնի որդու՝ Թորոս Բ-ի գործունեությունը: Նա փախչելով բյուզանդական գերությունից և վերադառնալով հայրենիք՝ ոչ միայն վերականգնեց Ռուբինյան իշխանությունը (որը հավասարազոր էր նոր իշխանություն հիմնելուն), այլև ջախջախեց Անդրոնիկոս զորավարի՝ բյուզանդական բանակը, ապա հաջող պայքար մղեց սելջուկների ու խաչակիրների դեմ: Վերջապես, Մանուել Կոմնենոս (1143-1180) կայսրի դեպի Կիլիկիա և Անտիոք կատարած արշավանքի ժամանակ դրսևորվեց Թորոս Բ-ի նաև դիվանագիտական ձիրքը:

Փաստ է, որ եթե Լևոն Ա-ի գործունեության հետևանքով իշխանությունը վերացվում է, ապա Թորոս Բ-ի երկարատև դեկավարումը (ապա նաև Մլեհի) երկիրը հասցնում է մի վիճակի, երբ թագավորության հոչակումն ընդամենը ժամանակի խնդիր էր:

Կիրակոս Գանձակեցին Թորոս Բ-ին կոչում է մեծ իշխան¹³⁸ կամ մեծ իշխանաց իշխան Հայոց¹³⁹, իսկ Լևոն Ա-ին ոչ միայն նման տիտղոսներ չի վերագրում (պարզապես անվանում է իշխան), այլև նրա իշխանության տարիներին անդրադառնում է հարևանցի՝ իշխանի անունն արձանագրելով միայն իր որդիներին հիշատակելիս: Փոխարենը, պատմիչը մի մեծ հատված է նվիրում Թորոս Բ-ի օրոք տեղի ունեցած անցքերին¹⁴⁰:

XIII դ. հեղինակ Վահրամ Րաբունին ևս ակնհայտորեն նախապատվությունը տալիս է Թորոս Բ-ին և նույնիսկ երկիրը կոչում է նրա անունով. «Արիաբար՝ իշխանացեալ, Եւ յամենայն՝ ազ-

¹³⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 154:

¹³⁹ Նույն տեղում, էջ 109:

¹⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 109-111:

գաց սիրեալ. Որք զԿիլիկիա՝ անուն թողեալ, Եւ **Թորոսի երկիր՝ կոչեալ**»¹⁴¹, - գրում է նա:

Ուշագրավ է, որ XII-XIII դդ. «Իբն Լևոն»-ը, Լևոնյան իմաստ ստանալով, այնուհետև ժամանակային առումով հետադարձ կիրառություն է գտնում՝ գործածվելով, օրինակ, XI դարավերջի և XII դարասկզբի համար, երբ Լևոն անունով իշխան կամ թագավոր Կիլիկիայում ընդհանրապես չկար: Նման հաղորդումների հանդիպում ենք Իբն ալ-Ասիրի մոտ, ինչպես նաև Բար Հեբրեոսի՝ արաբերեն երկում:

Իբն ալ-Ասիրը, հաղորդելով խաչակրաց առաջին արշավանքի և Անտիոքի գրավման մասին, գրում է. «Երբ ֆրանկները որոշեցին Ասորիքի (Շամ) վրա հարձակվել, գնացին Կ. Պոլիս, որպեսզի նեղուցը անցնելով՝ մտնեն մահմեդականների երկիրը՝ ընթանալով ցամաքի ճանապարհով, որն ավելի դյուրին էր: ...Երբ հասան, Կիլիջ Արսլանն իր զորքով դիմադրեց և արգելք եղավ, սակայն նրանք կովեցին ու հաղթեցին [չորս հարյուր] ինսուն թվականի Ռաջաբ ամսին (4 հունիս – 3 հուլիս): Նրա երկրի միջով անցնելով՝ նրանք մտան հայազգի Լևոնի որդու (Իբն Լայուն ալ-Արմանի) երկիրը, որի միջով անցան և դուրս եկան Անտիոք (Անթաքիա) ու պաշարեցին»¹⁴²:

Իսկ Բար Հեբրեոսը գրում է. «...այդ տարին (1112) մահացավ Բասիլ Հայր՝ Կիրճերի՝ Իբն Լևոնի երկրի տերը, որին կոչում էին Գող Բասիլ»¹⁴³:

Այս վերջին տեղեկությունն էլ ավելի է ընդարձակում Իբն Լևոնի երկիր հասկացության իմաստային սահմանները, քանի որ Ռուբինյան իշխանության կամ Կիլիկիայի սահմաններից դուրս գալով՝ այն ներառում է նաև Գող Վասիլի տիրույթները՝ Եփրատացիք երկրամասը: Այլ կերպ ասած՝ այստեղ խոսքը վե-

¹⁴¹ Վահրամ Բաբունի, էջ 195:

¹⁴² Իբն ալ-Ասիր, էջ 229, *Ibn al-Aṣīr, Al-Kāmil fi-l-tārīḥ*, v. VIII, էջ 186:

¹⁴³ *Ibn al-ʿIbrī, Tārīḥ muḥtaṣar al-duwal*, էջ 346:

րաբերում է ամբողջ Հայաշխարհին: Հատկանշական է, որ Դուրուբ (Կիրճեր, Լեոնանցքներ) արտահայտությունը համապատասխանում է լեոնանցքներով հայտնի Կիլիկիային, բայց այնքան էլ չի պատշաճում Եփրատացիք երկրամասին: Այնուամենայնիվ, XIII դ. պատմիչը հետին թվով XI դարավերջի համար կիրառում է ոչ միայն Իբն Լևոնի երկիր արտահայտությունը, այլև զուտ Կիլիկիային վերաբերող «Կիրճեր»-ը:

Ժամանակային առումով թե՛ «Իբն Լևոն»-ը, թե՛ «Իբն Լևոնի երկիր»-ը կիրառելի են եղել XI դ. վերջերից մինչև XIII դ. 20-ական թթ.:

Հայտնի է, որ 1226 թ. Հեթում Ա-ի (1226-1269) գահակալումը հաճախ չի ընկալվել որպես նոր արքայատոհմի հաստատում, այսինքն՝ չի համարվել, որ Ռուբինյաններին հաջորդում են Հեթումյանները, այլ ընդունվել է որպես միացյալ Ռուբինյան-Հեթումյան տոհմի հաստատում (Զաբելի և Հեթումի ամուսնության մասին) կամ, պարզապես, որպես Ռուբինյանների շարունակություն¹⁴⁴: Մինչդեռ արաբ պատմագրության մեջ նույն «Իբն Լևոն»-ի կիրառությանը հետևելով՝ կարելի է եզրակացնել, որ նրանք հստակ սահմանազատել են նաև Կիլիկյան Հայաստանի իշխող տոհմերին՝ չնայած Հեթումյաններին տրվող առանձին տոհմանուն չեն կիրառել¹⁴⁵: Դրա ապացույցն է այն, որ մեզ հայտնի աղբյուրներում, XIII դդ. 20-ական թթ. սկսած, Իբն Լևոն, Իբն Լևոնի երկիր արտահայտություններն այլևս չեն գործածվում, մինչդեռ համատարած կիրառվում են Հայոց թագավոր, Հայոց երկիր, Սսի երկիր, Սսի երկրի թագավոր, Սսի տեր բառակապակցությունները, որոնք, սակայն, նույնիսկ նախապես գործածվել են «Իբն Լևոն»-ին զուգահեռ:

¹⁴⁴ Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 257-260:

¹⁴⁵ «Իբն Լևոնի» համանմանությամբ դա կարող էր լինել ասե՛ք «Իբն Հեթում» կամ «Իբն Կոստանդին»:

Բազմաթիվ օրինակներից հիշենք մի քանիսը: Այսպես՝ XIV դ. արաբ պատմիչ ալ-Չահաբին Մլեհի կամ Լևոն Մեծագործի մասին խոսելիս կիրառում է «Իբն Լևոն»-ը, իսկ հետագա՝ Հեթումյան շրջանի դեպքերն արձանագրելիս այն այլևս չի գործածում: Օրինակ՝ Հիջրայի 568 (1172/1173) թվակիր վկայության մեջ նա Մլեհին կոչում է Մալիհ իբն Լաուն ալ-Արմանի ալ-Նասրանի, այսինքն՝ «հայ քրիստոնյա Մլեհ Լևոնյանը»¹⁴⁶: Պատմիչը նույն պարբերության մեջ Կիլիկիայի վերաբերյալ օգտագործում է մի դեպքում Բիլադ Սիս (Սսի երկիր), մեկ ուրիշում՝ Մամլաքա Սիս (Սսի թագավորություն)¹⁴⁷ արտահայտությունները:

Նույն աղբյուրի 1203/1204 և 1205/1206 թվակիր հաղորդումներում Լևոն Մեծագործը Սահիբ Սիս (Սսի տերը) և Սահիբ Սիս Իբն Լայուն (Սսի տեր Իբն Լևոն)¹⁴⁸ է կոչվում:

Ինչ վերաբերում է նույն հեղինակի՝ XIII դ. վերջի և XIV դ. առաջին տասնամյակներով թվագրվող վկայություններին, ապա դրանցում Իբն Լևոն տոհմանվան այլևս չենք հանդիպում: Այսպես՝ Հիջրայի 692 (1292/1293) թվականի դեպքերին անդրադառնալիս պատմիչը գրում է, որ Եգիպտոսի սուլթանը Կիլիկիայի թագավորից պահանջեց Բեհեսնին և վերջինս նախընտրեց հանձնել այն: Այստեղ Հայոց թագավորին հիշատակում է որպես Սահիբ Սիս (Սսի տեր)¹⁴⁹:

Ալ-Չահաբին XIII դ. վերջի և XIV դ. առաջին կեսի իրադարձությունների վերաբերյալ իր վկայություններում ևս գործածում է Սսի ամրոցներ և Սսի երկիր բառակապակցությունները¹⁵⁰:

¹⁴⁶ **Al-Dahabī**, էջ 73:

¹⁴⁷ Նույն տեղում:

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 109:

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 217-218:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 225-226: Ինչպես հայտնի է՝ Մարաշը բուն Կիլիկիայից դուրս է և մտնում է Եփրատացիք երկրամասի մեջ: Պարզ է, որ արաբ պատմիչը հայերի նվաճած ցանկացած տարածք անվանում է Սսի երկիր (Սիսուան), անկախ

XIV դ. պատմիչ Իբն Բատտուտան, որը եղել է Կիլիկիայում, այն հիշում է Սսի երկիր¹⁵¹ ձևով: Սսի երկիր արտահայտությունն արաբ պատմագրության մեջ կիրառվում է XII դ. վերջերից, երբ Սիսը 1173 թ. դառնում է Ռուբինյան իշխանապետության մայրաքաղաք: Շուտով Սիսը ոչ միայն վարչաքաղաքական, այլև առևտրատնտեսական կարևոր նշանակություն է ձեռք բերում՝ հավասարվելով ու նույնիսկ գերազանցելով Կիլիկիայի մյուս նշանավոր քաղաքներին (Տարսոն, Ադանա, Մամեստիա, Անագարբա): Վերջապես, XIII դ. վերջին (1292 թ. Հռոմկլայի գրավումից հետո) Սիսը դառնում է նաև կաթողիկոսանիստ քաղաք՝ վերածվելով քաղաքական և հոգևոր կենտրոնի: Հավանաբար սրանով պետք է բացատրել այն, որ արաբ պատմիչները նախընտրում են Սսի երկիր արտահայտությունը, իսկ Հայոց թագավորներին կոչում Սսի երկրի տեր կամ, պարզապես, Սսի տեր, Սսի թագավոր: Ուշ շրջանի պատմիչների երկերում այս անվանումն ավելի հաճախ է կիրառվում, քան Հայաստան, Հայոց երկիր եզրերը, իսկ Իբն Լևոն, Իբն Լևոնի երկիր բառակապակցություններն այլևս չեն գործածվում:

Մեր՝ արդեն իսկ հիմնավորված եզրահանգմանը շատ կարևոր փաստարկ է հավելում XIII դ. պատմիչ Իբն ալ-Դավադարին: Նա իր՝ Հիջրայի 568 (1172/1173) թվակիր վկայության մեջ, անդրադառնալով Մլեհի և Նուր ալ-Դինի դաշինքին, «Իբն Լևոն»-ի փոխարեն գործածում է մեկ այլ հասկացություն՝ Բայթ Լաուն՝ Տունն Լևոնի: Հետաքրքրական է, որ այս բառակապակցությանը հանդիպում ենք Կիլիկիայի մասին պատմող գլխի վերնագրում, որը կարելի է թարգմանել այսպես՝ Հիշենք թե ինչ-

այն բանից դա աշխարհագրականորեն Կիլիկիա է թե ոչ: Անգամ Գող Վասիլի իշխանությունը նա կոչում է Սսի երկիր:

¹⁵¹ **Իբն Բատտուտա**, էջ 9:

պես] Լևոնի տունը (զարմը) դարձավ Սսի տերը (կամ Սսի վրա տիրապետող դարձավ)¹⁵²:

Իբն ալ-Դավադարին իր բազմահատորանոց երկը գրել է XIII դ. վերջին և XIV դ. սկզբին՝ այն ժամանակ, երբ Իբն Լևոն հասկացությունն այլևս գործածական չէր և փոխարենը հաճախ կիրառելի էին Սսի տերը, Սսի երկրի տերը, Սսի թագավորը ձևերը: Այստեղ պատմիչն օգտագործում է «Իբն Լևոն»-ին փոխարինող, միաժամանակ նույն այդ «Իբն Լևոն»-ը վերջնականապես բացատրող մի բառեզր՝ Լևոնի տուն¹⁵³: Փաստորեն՝ XIV դ. ևս արաբ պատմիչն օգտագործում է «Իբն Լևոն»-ը, բայց միայն այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է 1172-1173 թթ. դեպքերին:

Այստեղ պատմիչը մի շատ կարևոր բացատրություն է տալիս: Նույն այդ «Լևոնի տունն» ընթերցողին ներկայացնելու համար նա ավելացնում է «Այդ Լևոնի տունը հենց Թաքֆուրի (թագավորի) տունն է»¹⁵⁴, այլ կերպ ասած՝ բացահայտում է Լևոնյանների (Ռուբինյաններ) արքայատոհմ լինելու հանգամանքը:

Այս դեպքում հարց է ծագում. եթե Իբն Լևոն անվանումը նշանակում է Լևոնյաններ (հավասարազոր Ռուբինյաններին), ապա այն ինչ կերպ պետք է թարգմանել: Կարծում ենք՝ Իբն Լևոն կամ Իբն Լևոնի երկիր արտահայտությունները պետք է ընկալել որպես քարացած ձևեր, որոնք ենթակա չեն թարգմանության: Այսինքն՝ ցանկալի է հայերեն շարադրանքում դրանք նույնությամբ պահպանել՝ օժտելով համապատասխան բացատրություններով ու ծանոթագրություններով:

¹⁵² **Ibn al-Dawādārī**, Kanz al-durar, VIII, էջ 180:

¹⁵³ Նույն տեղում:

¹⁵⁴ Նույն տեղում:

ԳԼՈՒԽ Բ

ՍԱԼԱՀ ԱԼ-ԴԻՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (1171-1183)

ա) Այյուբյան տոհմի ծագումն ու վերելքը

X դ. վերջին և XI դ. սկզբին Հայաստանում հաստատված արաբական (մուսուլմանական) ամիրություններում տեղի ունեցան էթնիկական փոփոխություններ. արաբներին աստիճանաբար փոխարինեցին քրդական ցեղերը: Այդ ժամանակ է, որ Շադդադյանների քրդական տոհմը հաստատվեց Հայաստանի տարբեր մասերում (Գանձակ, Անի ու Դվին)¹⁵⁵:

Շադդադյանները Դվինին տիրանալու առաջին փորձը կատարել էին դեռևս 954 թ., բայց ձախողվել էին: Գագիկ Ա Բագրատունու (990-1020) մահից հետո, օգտվելով Բագրատունյաց թագավորության թուլացումից ու մասնատումից, 1020-ական թթ. Աբու-լ-Ասուար Շադդադյանին հաջողվում է տիրանալ Դվինին՝ դուրս մղելով դեռ VIII դարից այնտեղ հաստատված արաբներին¹⁵⁶: Դրանից հետո այս տոհմն ավելի քան մեկ դար ընդմիջումներով տիրեց Դվինին ու շրջակայքին¹⁵⁷: XI դ. 70-ական թթ. հետո Շադդադյաններն ավելի մերձեցան տեղի հայ բնակչությանը: Վկայված է, որ նրանցից ոմանք կրում էին հայկական անուններ կամ իրենց շրջապատում էին հայ ազնվականներով: Ի վերջո, Դվինն անցավ սելջուկյան տարբեր ամիրների ձեռքը: Զաքարյանների ազատամարտերի առաջին փուլում՝ 1203 թ. քաղաքն ազատագրվեց հայ-վրացական բանակի կողմից ու միաց-

¹⁵⁵ Հետագայում այդ նույն կենտրոններից (նախկին ամիրություններ) քրդերը ևս դուրս մղվեցին՝ իրենց տեղը զիջելով թյուրք տարրին:

¹⁵⁶ Տե՛ս **Minorsky V.**, *New Light on the Shaddadids of Ganja*, *Studies in Caucasian History*, London, 1953, էջ 22:

¹⁵⁷ Այդ նույն Շադդադյանները տիրոջներ ունեին նաև Անիում և Գանձակում:

վեց Վրացական թագավորությանը մաս կազմող Ջաքարյան իշխանությանը¹⁵⁸:

Դվինի պատմությանն այս սեղմ անդրադարձը պայմանավորված է Այյուբյանների հարստության հիմնադիր Սալահ ալ-Դինի տոհմի՝ այդ քաղաքից սերելու հանգամանքով:

Սալահ ալ-Դինի պապը՝ Շադին (Շազի), հայրը՝ Այյուբը և հորեղբայրը՝ Շիրքուհը, ծնվել էին Դվինում¹⁵⁹: Շադին որդիների հետ, նախ, մոտավորապես 1130 թ. տեղափոխվեց Իրաք, ապա Ասորիք: Այդ քայլը պատահական չէր, քանի որ տարածաշրջանում սելջուկների հայտնվելով քրդական ամիրությունների դիրքերը թուլացել էին¹⁶⁰: Մյուս կողմից՝ 1130-ը հենց այն տարին է, երբ Շադիադյանները վերջնականապես կորցրեցին Դվինը¹⁶¹:

Ահա թե Այյուբյանների ծագման մասին ինչ է գրում Սմբատ Սպարապետը. «Ջայսու ժամանակաւ տիրէր Հալպայ և Դամասկոսի և Եգիպտոսի Յուսէփ, որդի Այուպին որ կոչեցան Սալահատին: Սորա բ (2 – Վ. Տ.-Ղ.) եղբարք էին ի գաւառէն Դրւնայ, Քուրդ շինականի որդիք որ կոչէր Այուպ, և որդւոցն միոյն՝ Յուսէփ և միւսոյն Յէտլ, և ճորտացան Նուրլտնին Հալպայ տիրոջն»¹⁶²: Հաջորդիվ պատմիչը հակիրճ ներկայացնում է Սալահ ալ-Դինի՝ վաղ շրջանի գործունեությունը, հատկապես այն, թե նա ինչպես չքավոր վիճակից բարձրանալով՝ որոշ կարողութ-

¹⁵⁸ Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 206-215: Ջաքարյանների ազատամարտերի մասին տե՛ս **Շահնազարյան Ա.**, Ջաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, «Հայոց պատմության հարցեր», № 6, Երևան, 2005, էջ 132-147, **նույնի՛** Ջաքարյանների ազատամարտերի երկրորդ փուլը, ԼՀԳ, № 3, 2005, էջ 32-51:

¹⁵⁹ Տե՛ս **Minorsky**, Prehistory of Saladin, էջ 124-13:

¹⁶⁰ Տե՛ս **Eddé A.-M.**, Saladin, էջ 23:

¹⁶¹ Տե՛ս **Minorsky V.**, Prehistory of Saladin, էջ 85: Դեռ 1105 թ. սելջուկները մեկ անգամ տիրել էին Դվինին՝ տասներեք (1105-1118) տարի պահելով իրենց ձեռքում:

¹⁶² **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 194-195:

յան տեր դարձավ. «և մեծացաւ յոյժ Սալահատինն, և եղև այր գոռոզ և պատերազմող»¹⁶³:

XIII դ. արաբագիր հեղինակ Իբն Խալլիքանը ևս հավաստում է Այյուբյանների՝ Դվինից սերելու մասին: Պատմիչը գրում է. «Դաբիլի (Դվինի) դռների մոտ կա մի գյուղ, որը կոչվում է Աջդանիկան, և դրա բոլոր բնակիչներն ալ-Ռավվադիյյա [ցեղի] քրդեր են: Այնտեղ է ծնվել Սալահ ալ-Դինի հայրը՝ Այյուբը»¹⁶⁴:

Սալահ ալ-Դինը ծնվել էր Հյուսիսային Իրաքի Թիքրիթ (կամ Թաքրիթ) քաղաքում մոտավորապես 1137 թ.: Նրա հայր Այյուբն այդ քաղաքի կառավարիչն էր: Այդ ժամանակ Մեծ սելջուկյան սուլթանությունը բաժանված էր նույն տոհմի երկու ներկայացուցիչների միջև. Արևմտյան Իրանում իշխում էր Սանջարը (1118-1157), իսկ Իրաքում՝ նրա զարմիկ Մասուդը (1134-1152), որի ենթակայության տակ էր գտնվում Թիքրիթը:

Սալահ ալ-Դինի ծնվելուց գրեթե անմիջապես հետո Այյուբն ու Շիրքուհը Բաղդադի կառավարչի կողմից հեռացվեցին Թիքրիթից: Եղբայրները գնացին Մոսուլ և ծառայության մտան Իմադ ալ-Դին Ջանգիի (1127-1146) մոտ: Մոսուլում ևս այս ընտանիքը երկար չմնաց:

¹⁶³ Նույն տեղում, էջ 195: Այդ տոհմի նախորդ սերունդների մասին տվյալներ չկան: Այդ պատճառով փորձեր են եղել կապ տեսնել Այյուբյանների և արաբական նշանավոր տոհմերի միջև, բայց դա որևէ գիտական բացատրություն չունի: Հիմնավոր չէ նաև նրանց հայկական ծագման մասին տեսակետը: Տե՛ս, օրինակ, նույն տեղում՝ ծնթ. 98:

¹⁶⁴ Տե՛ս **Ibn Ḥallikān**, *Wafāyat al-a'yān* v. VII, էջ 139-140, ինչպես նաև՝ **Ibn Khallikan**, *Biographical Dictionary*, էջ 479-480: Ալ-Ռավվադիյյան *ալ-Հազբանիյյա* ցեղախմբին էր պատկանում (տե՛ս **Minorsky V.**, *Prehistory of Saladin*, էջ 122-123, ինչպես նաև՝ **Humphreys R. S.**, *The Emergence of the Mamluk Army*, “*Studia Islamica*”, № 45, 1977, էջ 91: Ըստ Աբու ալ-Շամայի՝ Սալահ ալ-Դինի ցեղն «ամենազնվականն էր քրդական ցեղերից» (տե՛ս **Abū al-Šāma**, *‘Uyūn al-Rawdatayn fi aḥbār al-dawlatayn*, v. I, bi-tahqīq Aḥmad Baysūmī, Dimašq, 1991, էջ 263):

Շուտով Ջանգին գրավեց Բաալբեքը, որի կառավարիչ նշանակվեց Այյուբը: Նա 1139 թ. իր ընտանիքը տեղափոխեց Բաալբեք, որտեղ էլ անցավ Սալահ ալ-Դինի վաղ մանկությունը:

Իմադ ալ-Դինը 1146 թ. սպանվեց, իսկ նրա տիրույթները բաժանվեցին որդիների միջև: Մոսուլն անցավ Սալֆ ալ-Դինին, իսկ Հալեպը՝ Նուր ալ-Դինին (1146-1174): Վերջինս շարունակեց իր հոր սկսած գործը՝ ավարտելով Խաչակրաց երկրորդ արշավանքի ձախողումից հետո Եդեսիայի կոմսությունից մնացած հողերի նվաճումը (1150-1151):

Օգտվելով Ջանգիի սպանությունից (1146)՝ Դամասկոսի ամիրը հարձակվեց Բաալբեքի վրա: Որևէ տեղից օգնություն չստանալով՝ Այյուբը որոշեց հանձնել ամրոցը՝ դրա դիմաց որոշ գյուղեր ստանալով Դամասկոսի մերձակայքում: Այսպիսով՝ ընտանիքը տեղափոխվեց Դամասկոս, որը կարևոր դեր պիտի խաղար Սալահ ալ-Դինի կյանքում:

Այյուբի եղբայր Շիրքուին իրեն դրսևորեց որպես տաղանդավոր զորավար՝ շարունակելով ծառայել Նուր ալ-Դինին: Թե՛ հայրը, թե՛ հորեղբայրը մեծ ազդեցություն ունեցան Սալահ ալ-Դինի՝ որպես գործիչ ձևավորման վրա:

1154 թ. Նուր ալ-Դինը, գրավելով Դամասկոսը, միավորեց Ասորիքի՝ մուսուլմանական մասը: Շիրքուիը նշանակվեց Դամասկոսի և շրջակայքի կառավարիչ:

Դամասկոսից հետո Նուր ալ-Դինի թիրախում հայտնվեց Եգիպտոսը, որի ուղղությամբ Ջանգիները XII դ. 60-ական թթ. երեք արշավանք կատարեցին:

Սալահ ալ-Դինն առաջին անգամ ասպարեզում հայտնվեց 1164 թ.՝ մասնակցելով Ջանգիների առաջին եգիպտական արշա-

վանքին: Հաջորդ տարում նա նշանակվեց Դամասկոսի ոստիկանապետ¹⁶⁵:

Ըստ ուսումնասիրող Ս. Հեմֆրիզի՝ հիմնականում սելջուկյան (այդ թվում Զանգիների) տիրույթներում հասակ առած Սալահ ալ-Դինի քաղաքական մտածողության վրա մեծ ազդեցություն է գործել սելջուկյան սուլթանության վարչական համակարգը: Այն խարսխված էր հետևյալ սկզբունքի վրա՝ պետության ամբողջ տարածքը բաժանվում էր սուլթանական ընտանիքի անդամների միջև, որոնցից ավագը դառնում էր գերագահ: Վերջինիս ընդհանրական իշխանությունը մեծ մասամբ ձևական էր, բացառյալ այն ավագ միապետերի, որոնք զորեղ անհատականություն լինելով՝ կարողանում էին իրենց իշխանության տակ միավորել անջատ տիրույթներն ու տարատեսակ ամիրությունները կամ դրանց մի մասը: Հետագոտողն այս տեսանկյունից է փորձում բացատրել Այյուբյանների տերության պետական կառուցցի յուրահատկությունը Սալահ ալ-Դինի օրոք և, մանավանդ, նրա մահից հետո¹⁶⁶:

¹⁶⁵ Սալահ ալ-Դինի կյանքին և գործունեությանը նվիրված մեծ թվով ուսումնասիրություններ կան: Առավել կարևորները **Gibb H.**, *The Life of Saladin (from the works of Imād ad-Dīn and Bahā' ad-Dīn)*, Clarendon Press, Oxford, 1973, **նույնի** *The Arabic Sources for the Life of Saladin, "Speculum"*, vol. 25, № 1, 1950, էջ 58-72, Մինորսկու ուսումնասիրությունը, որն արդեն մի քանի անգամ հղել ենք վերևում (**Minorsky**, *Prehistory of Saladin*), ինչպես նաև **Richards D. S.**, *A consideration of two sources for the life of Saladin*, JSS, vol. 25, № 1, 1980, էջ 46-65; **Holt P. M.**, *Saladin and His Admirers: A Biographical Reassessment*, BSOAS, vol. 46, № 2, 1983, էջ 235-239:

¹⁶⁶ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 69-71:

բ) Սալահ ալ-Դինի գործունեության առաջին շրջանը (1164-1171)

Ֆաթիմյան խալիֆաների իշխանությունը սկսել էր թուլանալ դեռևս XI դ., իսկ XII դ. տերության ամբողջ իշխանությունը գտնվում էր վեզիրների ձեռքում: Այդ ընթացքում հատկապես կարևոր դեր էին խաղում հայ վեզիրները, որոնք գրեթե մեկ հարյուրամյակ (1074-1162) ոչ միայն իրենց ձեռքում էին պահում Եգիպտոսի տնտեսությունն ու բանակը (հաճախ հենց հայկական զնդերի վրա հենվելով), այլև վճռում այս կամ այն խալիֆայի գահակալության հարցը: Այդ վեզիրների մեջ առանձնանում են Բադր ալ-Գամալին, նրա որդին՝ ալ-Աֆդալ Շահնշահը, Բահրամ ալ-Արմանին (կամ Վահրամ Պահլավունին, որը պահպանել էր իր քրիստոնեական հավատը) և ուրիշներ: Հայ վեզիրների երկար շարքում վերջին երկուսի՝ Թալաի իբն Ռուզգիք ալ-Արմանիի (1154-1161) և նրա որդու՝ Ռուզգիք իբն Թալաիի (1161-1162) կառավարումն ընդհուպ մոտենում է քննության առարկա ժամանակաշրջանին¹⁶⁷:

Ալ-Ֆայիզ խալիֆայի (1154-1160) մահից հետո հայազգի վեզիր Թալաի իբն Ռուզգիք ալ-Արմանին գահին բազմեցրեց նրա իննամյա զարմիկին՝ ալ-Ադիդին (1160-1171), որին վիճակված էր լինել Ֆաթիմյան վերջին տիրակալը: Իբն Ռուզգիքն առավել ամրապնդեց իր դիրքերը՝ աղջկան կնության տալով նո-

¹⁶⁷ Ֆաթիմյան սուլթանության հայազգի վեզիրների գործունեության մասին տե՛ս հատկապես **Dadoyean S. B.**, *The Fatimid Armenians: Cultural and Political Interaction in the Near East*, Brill. Leiden, 1977, ինչպես նաև **Մըսրիեան Գ.**, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ (Արաբական գրաւումէն մինչեւ Ջէրբէզ Մէմլուքներու իշխանութեան միջին շրջանը, 640-1441), Գահիրէ, 1947, էջ 19-98; **Canard M.**, *Un Vizir Chretien a l'Epoque Fatimide*, "Miscellanea Orientalia", London, 1973 և **Samir Khalil Samir**, *The Role of Christians in the Fatimid Government Services of Egypt To the Reign of Al-Hāfiz*, "Medieval Encounters", vol. 2.3, 1996, էջ 177-192:

րահոչակ խալիֆային: Սակայն, ի վերջո, վեզիրի դեմ դավադրություն կազմակերպվեց, և նա 1161 թ. սպանվեց¹⁶⁸:

Թալաի իբն Ռուզբիքին փոխարինեց որդին՝ Ռուզբիք իբն Թալաին: Նա դեռևս հոր վեզիրության ժամանակ վարում էր դատավորի և բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնները: Հարկ է նշել, որ Ռուզբիք իբն Թալաին չուներ հոր համարձակությունն ու կառավարման հմտությունները: Նա անխոհեմաբար պաշտոնից հեռացրեց Կուսի նահանգապետ, ազգությամբ քուրդ Շավարին, որն ազդեցիկ էր և իր տրամադրության տակ մեծաթիվ զինված ուժեր ուներ: Շավարն իր զորքով շարժվեց Կահիրեի վրա՝ ստիպելով վեզիր Ռուզբիքին փախուստի դիմել: Վերջինս շուտով ձերբակալվեց և որոշ ժամանակ անց՝ 1163 թ. Շավարի հրամանով գլխատվեց:

Ֆարթմյանները սկսել էին նաև տարածքային զգալի կորուստներ կրել:

Ռուզբիք իբն Թալաիին ասպարեզից հանելուց հետո Շավարը 1163 թ. վեզիր դարձավ, բայց շուտով մեկ այլ անձի հետ պայքարում կորցնելով պաշտոնը՝ դիմեց Նուր ալ-Դինին: Եգիպտոսը գրավել ցանկացող Նուր ալ-Դինն անմիջապես օգտագործեց ռազմավարական ու առևտրական կարևոր նշանակությամբ այդ երկրին տիրելու պատեհ առիթը: Այդպիսով նա կարող էր չեզոքացնել ֆրանկների՝ Եգիպտոսին տիրելու նկրտումները¹⁶⁹: Փաստորեն՝ Ջանգիներն ու ֆրանկներն իրենց ծավալապաշտական ծրագրերն իրականացնելու նպատակով աջակցում էին տեղական հակամարտ ուժերին:

¹⁶⁸ Թալաի իբն Ռուզբիքը մեծ հետք թողեց Եգիպտոսի մշակութային կյանքում: Նրա նախաձեռնությամբ պալատական գրադարանի գրքերի թիվը հասավ 100 հազարի, իսկ 1005 թ. հիմնված «Գիտելիքների տունը» (Դար ալ-Ուլում) վերածվեց ուսումնական հաստատության: Վեզիրի անմիջական հովանավորությամբ ու աջակցությամբ զարկ տրվեց շինարարության: Իբն Ռուզբիքը նաև աջակցում էր գիտնականներին, բանաստեղծներին ու արվեստի մարդկանց:

¹⁶⁹ Տե՛ս **Eddé A.-M., Saladin**, էջ 27:

Այդ պահից սկսած՝ 1164 թ. գարնանից մինչև 1169-ի սկիզբը Նուր ալ-Դինի բանակը երեք հաջորդական արշավանք կատարեց Եգիպտոս, որտեղ հորեղբորն ուղեկցող երիտասարդ Սալահ ալ-Դինը լիարժեք դրսևորեց իր զինվորական կարողությունները: Ընդ որում, եթե առաջին արշավանքում նրան երկրորդական դեր էր վերապահված, ապա հաջորդ երկուսում (1167, 1168-1169) նա արդեն հիմնական գործող անձանցից էր: Վերջին արշավանքի ժամանակ Շիրքուիը, հակառակորդների դիմադրությունը կոտրելով, 1169 թ. հունվարին հաղթական մտավ Կահիրե: Շավարը, որն այս ընթացքում դավաճանել էր իր իսկ հովանավորներին, ձերբակալվեց Շիրքուիի մարդկանց կողմից ու մահապատժի ենթարկվեց: Ալ-Ադիդ խալիֆան (1160-1171 թթ.) Շիրքուիին նշանակեց վեզիր: Թեև մահապատժի հրամանը տրվեց խալիֆայի կողմից, բայց ակնհայտ էր, որ Այյուբյանների համար բացվում էր դեպի իշխանություն տանող ճանապարհը: Նորանշանակ վեզիր Շիրքուիը շատ բան չհասցրեց անել, քանի որ իր նշանակումից երկու ամիս անց Կահիրեում մահացավ¹⁷⁰:

Նոր վեզիր նշանակողը, անշուշտ, խալիֆան էր, բայց որոշումն ընդունում էին Եգիպտոսում զգալի իշխանություն ունեցող ասորիքյան բանակի զորավարները: Նրանց հիմնական մասը և ալ-Ադիդը հավանություն տվեցին այդ պաշտոնում Սալահ ալ-Դինի թեկնածությանը¹⁷¹: Հորեղբորը հաջորդած Սալահ ալ-Դինի նշանակման առթիվ խալիֆան նույնիսկ հիշեց XI դ. հայազգի նշանավոր վեզիր Բադր ալ-Գամալիի որդուն՝ ալ-Աֆդալին, որը, հորից հետո ստանձնելով վեզիրի պաշտոնը, գերազանցեց նրան¹⁷²: Մի բան հստակ էր՝ ո՛չ Շիրքուիի, ո՛չ էլ Սալահ ալ-Դինի նշանակման հարցում չէին հարցրել Նուր ալ-Դինի կարծիքը:

¹⁷⁰ Այս իրադարձությունների մասին Ա.-Մ. Էդրեի աշխատությունից բացի մանրամասն տե՛ս նաև **Elisseeff N., Nūr ad-Dīn**, tome II:

¹⁷¹ Տե՛ս **Eddé A.-M., Saladin**, էջ 34-36:

¹⁷² Տե՛ս նույն տեղում, էջ 39:

Չնայած այդ ամենին՝ վերջինիս և Սալահ ալ-Դինի միջև չկար բացահայտ թշնամություն: Ավելին, Սալահ ալ-Դինն իրեն համարում էր Ջանզի սուլթանի ստորակա: Այդ հավատարմության առհավատջյա կարող է համարվել թեկուզ այն, որ ուրբաթ օրվա խուտբայում* Ֆաթիմյան խալիֆայից հետո հնչեցվում էր Նուր ալ-Դինի անունը: Բացի այդ, Եգիպտոսում Նուր ալ-Դինի անվամբ դրամներ էին թողարկվում: Համենայնդեպս, մինչև 1171 թ. այս երկու նշանավոր դեմքերի միջև չկար բացահայտ թշնամություն:

Աստիճանաբար Սալահ ալ-Դինի դեմ ընդդիմություն ձևավորվեց, որը հիմնված էր մի կողմից ասորիքցիների ու Եգիպտացիների փոխադարձ անվստահության և նույնիսկ թշնամանքի, իսկ մյուս կողմից՝ թյուրք (և քուրդ) ռազմիկների ու Ֆաթիմյան բանակի (հատկապես սևամորթների և հայկական գնդերի) միջև առկա հակադրության վրա: Սալահ ալ-Դինը դժգոհ տարրերին ասպարեզից հեռացնելու համար վճռական գործողությունների դիմեց: Սևամորթ և հայկական գնդերը ծանր հարված ստացան: Խալիֆան ևս անցավ Սալահ ալ-Դինի կողմը՝ զոհելով իրեն հավատարիմ զորքերին: Այդ իրադարձությունները տեղի ունեցան 1169 թ. օգոստոսին: Այսպիսով՝ Եգիպտոսում Սալահ ալ-Դինը դարձավ դրության տերը: Նա ներկայանում էր որպես սուննի իսլամի դրոշակակիր, որը չէր կարող հանդուրժել միայն մակերեսորեն իսլամ ընդունած սևամորթներին կամ քրիստոնյա՝ «զիմմի» հայերին, որոնք նույնիսկ գլխահարկ չէին վճարում¹⁷³: Նույն թվականի աշնանը Սալահ ալ-Դինը հաջողությամբ հետ մղեց ֆրանկների հարձակումը Եգիպտոսի վրա և նույնիսկ օգնական զորք ստացավ Նուր ալ-Դինից: Այդ զինուժը, մնալով Եգիպտոսում, էլ ավելի ամրապնդեց Սալահ ալ-Դինի դիրքերը: Այյուբը

* Մզկիթներում ուրբաթ օրվա աղոթքի ժամանակ տվյալ պահին իշխող խալիֆայի կամ տիրակալի անվան հիշատակում:

¹⁷³ Տե՛ս նույն տեղում, էջ 42-43:

1170 թ. ապրիլին եկավ Կահիրե և մեծ շուքով ընդունվեց որդու ու խալիֆայի կողմից: Այժմ ընտանիքի անդամներից շատերը Սալահ ալ-Դինի կողքին էին, որոնց Եգիպտոսի տարբեր մասերում շնորհեց կարևոր քաղաքներ ու ընդարձակ տիրույթներ: Նա 1170 թ. վերջերին սկսեց վերացնել խաչակիրների հենակետերը Եգիպտոսի մատույցներում՝ ամրապնդելով երկրի անվտանգությունը: Այսպիսով՝ առավել ապահով դարձավ կապը Եգիպտոսի և Ասորիքի միջև: Վեզիրը ֆրանկներին հեռացրեց նաև Ալյալից՝ անվտանգ դարձնելով Մեքքա և Մադինա տանող ուղին: Դա նրան փառք բերեց որպես Ջիհադի դրոշակակիր:

Սալահ ալ-Դինը 1171 թ. փետրվարին հաղթական վերադարձավ Կահիրե: Այդ կարճ ժամանակահատվածում նա կարողացավ վերացնել իր հակառակորդներին Ֆաթիմյան բանակում, չեզոքացնել խաչակիրներից սպառնացող վտանգը Եգիպտոսից ու Կարմիր ծովից, ապահովել հաղորդակցությունը Կահիրեի և Դամասկոսի միջև: Դատավորների ու տարբեր պաշտոնյաների նշանակմամբ նա ուժեղացրեց սուննիների դիրքերը՝ հիմքեր ստեղծելով շիա ուղղությունը Եգիպտոսից հեռացնելու համար: Նա այլևս Եգիպտոսի ամենազոր վեզիրն էր՝ պատրաստ վերջ դնելու Ֆաթիմյան հարստությանը¹⁷⁴: Սուննի մուսուլմանները և, առաջին հերթին, Նուր ալ-Դինը, Սալահ ալ-Դինից պահանջում էին Կահիրեում ուրբաթօրյա խուտբայի ժամանակ հնչեցնել ոչ թե Ֆաթիմյան, այլ Աբբասյան խալիֆայի անունը: Այդ քայլին Սալահ ալ-Դինը գնաց միայն այն ժամանակ, երբ կրոնական շրջաններում սկսեցին գերակշռել իր համախոհները, իսկ խալիֆան էլ արդեն ծանր հիվանդ էր:

¹⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 45-46:

գ) Այյուբյան սուլթանության ձևավորումը (1171-1174)

1171 թ. սեպտեմբերի 13-ին տակավին քսանմեկ տարեկան հասակում մահացավ (կամ ինքնասպան եղավ) Ֆաթիմյան վերջին խալիֆա ալ-Ադիդը: Սալահ ալ-Դինը Եգիպտոսի տերն էր ոչ միայն de facto, այլև de jure: Ձևական առումով այդ հանգամանքը համարվեց Նուր ալ-Դինի հաղթանակը, որը ոչ միայն կրկին միավորել էր Ասորիքն ու Եգիպտոսը, այլև 200-ամյա ընդմիջումից հետո Եգիպտոսը շիաներից վերադարձրել սուննի ուղղության: Ահա թե ինչու այդ իրողությունը ցնծությամբ ընդունվեց, առաջին հերթին, Բաղդադի Աբբասյանների կողմից: Ամբողջ իշխանությունն իր ձեռքը վերցնելով՝ Սալահ ալ-Դինը վճռեց վերջնականապես չեզոքացնել իր հակառակորդներին: Առաջին տուժողներից էին Եգիպտոսի հայերը, որոնց տներն ու ունեցվածքը ենթարկվեցին կողոպուտի, բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ ամայացան, իսկ հոգևոր առաջնորդը որոշեց ընդհանրապես հեռանալ Եգիպտոսից և հաստատվել Երուսաղեմում: Խալիֆայի ամբողջ ընտանիքը ձերբակալվեց, Ֆաթիմյանների բոլոր պալատները թալանվեցին: Նրանց հավատարիմ ուժերը, հատկապես Վերին Եգիպտոսում, որոշ ժամանակ դիմադրեցին միայն: Այնտեղ սևամորթ և հայ զինվորների մասնակցությամբ 1172 թ. ևս մի ընդվզում եղավ, բայց Սալահ ալ-Դինն ու իր շրջապատն արդեն լիովին դրության տերն էին¹⁷⁵: Մինչև 1177 թ. տարբեր վայրերում ժամանակ առ ժամանակ ապստամբություններ էին բռնկվում, բայց դրանք բոլորն էլ ճնշվում էին:

Թեև Սալահ ալ-Դինը 1171-1174 թթ. համարվում էր Նուր ալ-Դինի զորավարը և ենթադրվում էր, որ իր նվաճած երկրամասերը պետք է միացներ նրա պետությանը, սակայն Եգիպտոսում իշխանության էր եկել իր իսկ նախաձեռնությունների շնոր-

¹⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 57:

հիվ և որևէ կերպ կախված չէր իր գերակայից: Ընդհակառակը, նա արդեն կարող էր սպառնալ ամբողջ Ասորիքին: Համենայն-դեպս, այդ երեք տարիներին (մինչև Նուր ալ-Դինի մահը՝ 1174) Սալահ ալ-Դինը շատ զգուշավոր քաղաքականություն վարեց Զանգիների նկատմամբ:

Պատահական չէ, որ նա այդ ընթացքում Պաղեստին կամ Ասորիք մտնելու փորձ չկատարեց, այլ նախապես ստանալով Նուր ալ-Դինի համաձայնությունը 1174 թ. փետրվարին գրավեց Եմենը՝ այդ քայլը հիմնավորելով այն սուննիներին վերադարձնելու մտահոգությամբ:

Համենայնդեպս, մինչև 1173-1174 թթ. ձմեռը Նուր ալ-Դինը, եթե նույնիսկ կասկածներ ուներ Սալահ ալ-Դինի հավատարմության վերաբերյալ, բացահայտ չէր արտահայտվում այդ մասին: Ի պատասխան Նուր ալ-Դինի Եգիպտոսից հարկեր ուղարկելու պահանջի Սալահ ալ-Դինը հայտնեց, թե շատ ծախսեր կատարելու պատճառով չի կարող դրանք տրամադրել: Սակայն նա թանկարժեք նվերներ ուղարկեց Նուր ալ-Դինին, որոնք վերջինս հանկարծահաս մահվան պատճառով (1174 թ. մայիսի 15) այդպես էլ չստացավ¹⁷⁶:

դ) Ռուբինյան իշխանապետության ու Այյուբյանների հարաբերությունները (1174-1183)

Նուր ալ-Դինն ուներ միայն մեկ արու զավակ՝ ալ-Մալիք ալ-Սալիհ Իսմայիլը, որն ընդամենը տասնմեկ տարեկան էր, երբ ժառանգեց հոր հսկայաձավալ տերությունը: Բնականաբար, նա ուներ խնամակալներ, որոնք փորձում էին դերակատար լինել պետական կառավարման համակարգում: Բացի այդ, օգտվելով

¹⁷⁶ Տե՛ս Elisseeff N., *Nūr ad-Dīn.*, t. II, էջ 693-699:

պատեհ հնարավորությունից՝ աշխուժացան մի շարք կենտրոնախույս ամիրներ:

Նուր ալ-Դինի ամիրների մեջ հզորագույնը, անկասկած, Սալահ ալ-Դինն էր, և նա պատրաստ էր լինել ալ-Մալիք ալ-Սալիհ Իսմաիլի խնամակալը, բայց նրան այդ հնարավորությունը չտրվեց: Սալահ ալ-Դինը, այդուհանդերձ, պատվիրակություն ուղարկեց ալ-Մալիք ալ-Սալիհի մոտ՝ նրան հավաստելով իր հավատարմությունը: Ավելին, Սալահ ալ-Դինի հրահանգով ալ-Մալիք ալ-Սալիհի անունը տրվելու էր ուրբաթ օրվա խուտբայում և նույնիսկ դրոշմվելու Եգիպտոսում հատվող դրամների վրա: Այլ կերպ ասած, Այյուբին իրեն համարում էր Զանգինների պետությանը (որի մեջ նաև Եգիպտոսն էր) հավատարիմ զորավար: Սակայն այս իրավիճակը շատ կարճ տևեց: Իրադրության փոփոխմանը նպաստեց Ասորիքի վերնախավը, որը մանուկ Զանգիին 1174 թ. հուլիսի 25-ին ինքնագլուխ տեղափոխեց Հալեպ:

Դամասկոսի, Հալեպի և այլ քաղաքների վերնախավի հակաայյուբիական դիրքորոշումը Սալահ ալ-Դինին ստիպեց դիմելու վճռական գործողությունների: Նա 1174 թ. հոկտեմբերի 24-ին Դամասկոս մտավ որպես ինքնիշխան տիրակալ: Այստեղ նա ամուսնացավ Նուր ալ-Դինի այրու՝ Իսմաթ ալ-Դինի հետ, որով առավել օրինականացվեց նրա իշխանությունը: Դամասկոսը հանձնելով իր եղբայր Տուղտեգինի հսկողությանը՝ Սալահ ալ-Դինը շարժվեց հյուսիս, որտեղ գտնվում էին նրան ընդդիմադիր հիմնական ուժերը¹⁷⁷:

Անցնելով Հոմսի և Համայի միջով՝ Սալահ ալ-Դինի բանակը հասավ Հալեպ, որտեղ գտնվում էր ալ-Մալիք ալ-Սալիհ Իսմայիլը (1174-1182): Սակայն Սալահ ալ-Դինին չհաջողվեց գրավել քաղաքը:

¹⁷⁷ Տե՛ս **Քասունի Ե.**, նշվ.աշխ., էջ 19-20:

Նա 1175 թ. պարտության մատնեց Հալեպի սուլթանության և Մոսուլի աթաբեկության միացյալ ուժերին և, հետապնդելով թշնամուն, հասավ Հալեպի դարպասներ: Դրանից հետո Սալահ ալ-Դինն արգելեց խուտբայի ժամանակ ալ-Մալիք ալ-Սալիհի հիշատակումն ու դադարեցրեց դրամների վրա նրա անվան դրոշմումը: Աբբասյան խալիֆան ճանաչեց Սալահ ալ-Դինի իշխանությունը Եգիպտոսում, Նուբիայում, Մաղրիբում, Արևմտյան Արաբիայում, Պաղեստինում և Կենտրոնական Ասորիքում: 1176 թ. կնքված հաշտությամբ Հալեպի երիտասարդ սուլթանի իշխանությունը սահմանափակվեց Հալեպ քաղաքով ու շրջակայքով և նա պարտավորվեց ռազմական օգնություն ցույց տալ Սալահ ալ-Դինին¹⁷⁸:

Այսպիսով՝ ընդամենը երկու տարվա (1174-1176) ընթացքում Եգիպտոսի սուլթանն իրեն ենթարկեց գրեթե ամբողջ Ասորիքը:

Սալահ ալ-Դինի հիմնած պետության և Ռուբինյան իշխանապետության առաջին առնչությունները թվագրելի են Ռուբեն Գ-ի (1175-1187) իշխանության ժամանակով: Վերջինիս նախորդ Մլեհի կառավարման տարիներին (1170-1175) արաբական աշխարհի հետ կիլիկեցիների հարաբերություններն առաջին հերթին վերաբերում են Նուր ալ-Դին Ջանգիին ու նրա պետությանը: Միաժամանակ ավելորդ չէ պարզելը, թե Այյուբյան տոհմը հայերի ու հայկական պետական միավորների հետ որտեղ և ինչ առիթով է առնչվել մինչև Կիլիկիայի հետ պետական մակարդակով հարաբերվելը:

Այս առումով կարելի է առանձնացնել առնվազն երեք դրվագ՝ Սալահ ալ-Դինի տոհմի հայաստանյան անցյալը, Եգիպտոսի հայ համայնքի ու հայկական գնդերի, ինչպես նաև Պաղեստինի, Ասորիքի և Ջազիրայի հայության հետ Այյուբյանների

¹⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

առնչությունները: Հասկանալի է, որ ապրելով Դվինի քրդական ամիրության սահմաններում՝ Այրուբյանները շփվել են թե՛ ամիրության տարածքում և թե՛ նրանից դուրս ապրող հայերի հետ, հանգամանք, որը, անշուշտ, իր հետքը պիտի թողներ Այրուբյան տոհմի աշխարհայացքի վրա: Հայերի հանդեպ Սալահ ալ-Դինի վերաբերմունքը թե՛ Եգիպտոսում, թե՛ Մերձավոր Արևելքի երկրներում ընդհանուր առմամբ կանխակալ չէր և գերազանցապես պայմանավորված էր քաղաքական որոշակի շահերով ու նպատակներով:

Ինչպես նշվեց, Եգիպտոսում Սալահ ալ-Դինը մի քանի առիթով ճնշեց Ֆաթիմյաններին հավատարիմ հայկական գնդերի ընդվզումները և նրանց հեռացրեց բանակից: Մյուս կողմից, երբ 1187 թ. Սալահ ալ-Դինը գրավեց Երուսաղեմը և կոտորեց ֆրանկներին, նա չվնասեց Երուսաղեմում բնակվող հայերին (և ասորիներին)՝ տեղի քրիստոնյաներին հստակ տարբերակելով եկվորներից: Շատ հավանական է նաև, որ Շադին, Այրուբը, Շիրքուիը և Սալահ ալ-Դինը Ջազիրայում և Ասորիքում ապրած տարիներին առնչվել են տեղի հայերի հետ, որոնք առանձին կամ վարձու ջոկատներով ծառայում էին տեղական իշխողներին:

Մեծ է հավանականությունը, որ Սալահ ալ-Դինը տեղյակ էր նաև Նուր ալ-Դին- Մլեի դաշինքից: Նուր ալ-Դինը Սալահ ալ-Դինի համար ոչ միայն տիրակալ էր, այլև մի օրինակ, որին հետևեց իր կյանքում՝ ըստ էության շարունակելով նրա գործը: Նուր ալ-Դինի օգնությամբ բյուզանդացիների ու խաչակիրների նկատմամբ տպավորիչ հաղթանակներ արձանագրած Մլեիը, որը մինչև իշխանության գալը հինգ տարի (1165-1170) ապրել էր Ջանգիների պետությունում, չէր կարող անհայտ լինել Այրուբյաններին, մանավանդ որ այդ անսովոր դաշինքի պատմությունը մեծ արձագանք է ունեցել արաբ պատմագրության մեջ:

Մինչև 1180 թ. Բուբինյան իշխանապետությունն անմիջական կապեր չունեի Եգիպտոսի սուլթանության հետ: Սակայն

Բար Հեբրեոսի վկայությամբ՝ 1176-ին Սալահ ալ-Դինը հաշտություն է կնքել ոչ միայն Հալեպի սուլթանության, այլև Մոսուլի արթաթեկության և Կիլիկիայի իշխանապետության հետ¹⁷⁹: Պատմիչի այս տեղեկությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Ռուբեն Գ-ը (1175-1187), շարունակելով իր հորեղբայր Մլեհի քաղաքականությունը և դաշնակցելով Զանգիներին, մասնակցել է Սալահ ալ-Դինի դեմ 1175-1176 թթ. ռազմական գործողություններին ու նաև հաշտության կնքմանը կամ, որ ավելի հավանական է, այս տեղեկությունը վերաբերում է 1180 թ. պայմանագրին:

Առաջին ենթադրությունը քիչ հավանական է թվում նաև այն պատճառով, որ նման դաշինքը 1174-1176 թթ. իրադարձություններից հետո ստեղծված նոր քաղաքական պայմաններում չէր կարող ձեռնադրել Կիլիկիային: Զանգիների պետությունն ապրում էր իր մայրամուտը:

Ալ-Մալիք ալ-Սալիհ Իսմայիլի օրոք Ասորիքի Զանգիները կորցրել էին իրենց տարածքների մեծ մասը՝ պահպանելով միայն Հյուսիսային Ասորիքը Հալեպ կենտրոնով: Ընդ որում, Սալահ ալ-Դինի ճնշումը տարեցտարի ավելի էր ուժեղանում, և Զանգիների պետությունը վերածվել էր նրան ենթակա մի ամիրության, որը մինչև Այյուբյանների այնտեղ հաստատվելը (1183 թ.) շարունակում էր մնալ Զանգիների ձեռքում:

Զանգիների թուլացումից օգտվելով՝ Հյուսիսային Ասորիքում սկսեցին գլուխ բարձրացնել կենտրոնախույս ավատատերերը, ինչպես նաև խաչակիրները, որոնք զգալի տիրույթներ էին կորցրել նախորդ երեսնամյակում (1144-1174):

Խաչակիրները 1174-1176 թթ. հնարավորություն չունեին մեծ արշավանք կազմակերպելու դեպի Ասորիքի մուսուլմանական մաս, քանի որ կաշկանդված էին Սալահ ալ-Դինի ներկա-

¹⁷⁹ Տե՛ս **Bar Hebraeus**, էջ 307:

յությամբ: Իսկ երբ Այյուբյան սուլթանն ալ-Մալիք ալ-Սալիհ Իսմայիլի հետ հաշտության պայմանագիր կնքեց և վերադարձավ Եգիպտոս, խաչակիրները գործողությունների ազատություն ստացան:

Զանգիներին ենթակա հողերի նվաճմամբ ավելի շահագրգռված էին Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ը (1163-1201) և Տրիպոլիսի կոմս Ռայմունդ III-ը (1164-1187): Նրանք օգնություն ստացան Եվրոպայից նոր ժամանած Ֆլանդրիայի կոմս Ֆիլիպից, որը, Երուսաղեմի թագավորից վերցնելով հեծելազոր ու հետևակ, շարժվեց դեպի Տրիպոլիս և միացավ խաչակրաց զորքերին¹⁸⁰:

Իշխանները պայմանավորվեցին, առաջին հերթին, գրավել Անտիոքից արևելք գտնվող Հարիմ ամրոցը, որի տիրակալ Սաադ ալ-Դին Գումուշտեգինը, արաբագիր (Իբն ալ-Ադիմ, Իբն Իսալիքան) և ասորի (Միքայել Ասորի) պատմիչների վկայությամբ, ալ-Մալիք ալ-Սալիհ Իսմայիլի դեմ ապստամբելու պատճառով սուլթանի հրամանով 1175 թ. մահապատժի էր դատապարտվել¹⁸¹:

Խաչակիրները որոշեցին օգտվել Գումուշտեգինի ապստամբությունից և նվաճել Զանգիների պետության այդ մասը: Ըստ Միքայել Ասորու՝ Գումուշտեգինը, կասկած ունենալով, որ Հալեպի տերը մտադիր է իրեն ձերբակալել, իր հնազանդությունն առաջարկեց ֆրանկներին: Բոհեմունդ III-ը (1163-1201) երգվեց, որ չի խլի Հարիմը նրա ձեռքից և կպաշտպանի նրան: Սակայն, ըստ պատմիչի՝ Անտիոքի իշխանապետը դրժեց իր երդումը և դիմեց Ռուբեն իշխանապետի օգնությանը, որն ընդառաջեց նրան: Որպես օգնական վերցնելով Ռուբեն իշխանապետին և Ֆլանդրիայի կոմս Ֆիլիպին՝ Բոհեմունդ III-ը 1177 թ. պաշարեց

¹⁸⁰ Տե՛ս **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 36-38:

¹⁸¹ Տե՛ս **William of Tyre**, vol. II, էջ 425-426:

Հարիմը: Սակայն շուրջ չորս ամիս տևած (1177 դեկտեմբեր – 1178 մարտ) պաշարումն արդյունք չտվեց: Ի վերջո, երբ Բոհեմունդը ձեռնունայն հեռացավ Հարիմից, Գումուշտեգինը նամակ հղեց Հալեպի ամիր ալ-Մալիք ալ-Սալիհին և իր ապահովության դիմաց բերդը նրան հանձնեց: Այս հաղորդումը տեղ է գտել նաև Միքայել Ասորու «Ժամանակագրության»՝ հայկական տարբերակներում: Դրանցից մեկում կարդում ենք. «Եւ վասն այսր յաղթութեան ամիրայն որ կայր ի Հերիմն, դարձաւ ի Թուրքաց և եղև ընդ Անտաքու հնազանդութեամբ, եւ երդուաւ նմա Բրինձն թողուլ զբերդն առ նմա. և յետոյ ստեաց երդմանն, էառ ընդ ինքեան զԴուբեն զիշխանն Կիլիկեցոց, և գնաց առնուլ զՀերիմն. և ոչ մատնեաց զնա Տէր ի ձեռս նոցա, քանզի ստեաց Բրինձն երդմանն: Եւ դարձաւ ի Հալպայ հնազանդութիւնն ամիրայն որ անդ»¹⁸²:

Հարիմի պաշարման մասին տեղեկություններ է պահպանել նաև մեկ այլ ասորի պատմիչ՝ Անանուն Եդեսացին: Նա գրում է. «Այդ ժամանակ ոմն կոմս, որի անունն էր Կոնդֆլանդ»¹⁸³, ծովով օգնության եկավ քրիստոնյաներին: Նա հավաքեց բոլոր ֆրանկներին, որոնք մի հսկայական և մինչ այդ չտեսնված բազմություն դարձան: Դրանց մեջ էին Երուսաղեմի և առափնյա երկրի զորքերը, Տրիպոլիի կոմսը, Անտիոքի պրինցը, Կիլիկիայի իշխան Ռուբեն հայր և ինքը՝ Կոնդֆլանդը, ինչպես նաև բազմաքանակ աշխարհազորայիններ, որոնց թիվը հասնում էր երեսուն հազարի»¹⁸⁴:

Հալեպցի Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը հաստատում է ասորի մատենագիրների տեղեկությունները: Ըստ նրա՝ ամրոցը

¹⁸² Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, 1870, էջ 485: Հմմտ. մյուս խմբագրության հետ. տե՛ս նույնի՝ Ժամանակագրութիւն, 1871, էջ 485:

¹⁸³ Խոսքը Ֆրիլիպի մասին է. comte de Flandre-ի տառադարձումն է:

¹⁸⁴ Անանուն Եդեսացի, էջ 146:

գրոհողների մեջ էր նաև «Իբն Լևոնը»¹⁸⁵: Հասկանալի է, որ խոսքը Ռուբեն Գ-ի մասին է, որը հայկական զորագնդի հետ մասնակցում էր արշավանքին: Այնուամենայնիվ, ըստ արաբ հեղինակի՝ ալ-Մալիք ալ-Սալիհն իրականում սպանել է տվել Գումուշտեգինին, երբ վերջինս հրաժարվել է իրեն հանձնել բերդը: Հարիմցիները սկզբում նախընտրել են հպատակվել խաչակիրներին, քան թե բերդը հանձնել Հալեպի տիրոջը: Խաչակիրները, սակայն, նույնպես որոշել են գրավել բերդը: Նրանք քարանետ մեքենաների և սանդուղքների գործադրմամբ փորձել են ներս խուժել բերդ, բայց անօգուտ: 1178 թ. մարտին ալ-Մալիք ալ-Սալիհը դեսպան ուղարկեց Հարիմը պաշարած խաչակիրներին և առաջարկեց պաշարման վրա ֆրանկների ծախսած միջոցների փոխհատուցման դիմաց թողնել Հարիմն ու հեռանալ: Բոհեմունդը համաձայնեց և Հարիմը ենթարկվեց ալ-Մալիք ալ-Սալիհ Իսմայիլին¹⁸⁶:

Արշավանքի ժամանակն ու տեղը ճիշտ էր ընտրված. Սալահ ալ-Դիհնը վերադարձել էր Եգիպտոս, իսկ որպես Անտիոքի իշխանությանն անմիջականորեն հարևան՝ Հարիմը կարող էր հարմար հենակետ ծառայել Այյուբյանների առաջխաղացման դեմ: Տիրելով Հարիմին՝ խաչակիրները կարող էին վերահսկել ամբողջ Հյուսիսային Ասորիքը:

Խաչակիրների հաջողությանը կարող էր նպաստել նաև այն հանգամանքը որ Սալահ ալ-Դիհնը Մոնգիսարում (Ռամլայի մոտ) 1177 թ. նոյեմբերի 25-ին ծանր պարտություն կրեց Երուսաղեմի թագավոր Բալդուին IV-ից (1174-1185): Ապա, նոր բանակ հավաքելով, վերադարձավ Ասորիք, ինչը Բոհեմունդին ստիպեց ընդունել ալ-Մալիք ալ-Սալիհի առաջարկը:

¹⁸⁵ **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t.III, էջ 36-38:

¹⁸⁶ Հարիմի պաշարման մասին տե՛ս և հմմտ. **William of Tyre**, v. II, էջ 434-435, **Ernouf**, էջ 34; **Ibn al-Aṭīr**, **Al-Kāmil fī-l-tārīḫ**, v. X, էջ 87-88; **Ibn Šaddād**, Kitāb al-Nawādir, էջ 97; **Abu Shama**, Kitāb al-Rawdatayn, v. II, էջ 309:

Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական շահերի տեսանկյունից Հարիմի գրավումը չուներ այն նշանակությունը, ինչ խաչակիրների համար: Ահա թե ինչու են անհասկանալի մնում այն դրոպապատճառները, որոնք Ռուբեն Գ-ին մղեցին մասնակցելու Հարիմի երկարատև ու անպտուղ պաշարմանը:

Վերջապես, կարևոր է նաև այն հանգամանքը, որ դեռ 1164 թ. (Նուր ալ-Դինի դեմ Հարիմի ճակատամարտի ժամանակ) Ռուբինյան իշխանները համոզվեցին խաչակիրների ռազմական ձեռնարկումների անհեռանկարայնության մեջ: Ըստ Երվանդ Քասունու՝ Ռուբեն Գ-ը մասնակցեց Հարիմի պաշարմանը՝ հավաստելու խաչակիրներին իր բարեկամությունը և այն, որ ինքը չի հետևում իր հորեղբայր Մլեհի հակալատին քաղաքականությանը¹⁸⁷:

Այս ենթադրությունը զուրկ չէ հիմքից: Այսպես՝ Ռուբեն Գ-ի իշխանության ժամանակ Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները հարևան պետությունների հետ լիովին հստակեցված չէին: Պատճառները հետևյալն էին. 1) նախկին դաշնակից Զանգինների պետությունը չափազանց թուլացել էր՝ բռնելով անկման ուղին: Այն 1181 թ. նվաճվեց Մոսուլի աթաբեկության, իսկ 1183 թ. Սալահ ալ-Դինի պետության կողմից, 2) Բյուզանդական կայսրությունը, Միրիոկեֆալոնի՝ 1176 թ. ճակատամարտում Իկոնիայի սելջուկներից ծանր պարտություն կրելով, հրաժարվել էր Արևելքի երկրների հանդեպ ունեցած նվաճողական նկրտումներից: Ու թեև Դաշտային Կիլիկիայի որոշ մասը ևս մի քանի տարի մնաց Բյուզանդիայի տիրապետության տակ, սակայն կայսրությունն այլևս վճռական դեր չէր կատարելու Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ, 3) այդ տարիներին դեռևս պարզ չէր, թե ինչպես կավարտվի Սալահ ալ-Դին – խաչակիրներ հակամարտությունը (մինչև 1187 թ. Հիթթինի ճակատամարտը): Հետ-

¹⁸⁷ Տե՛ս Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 32-33:

ևաբար՝ Այյուբյան սուլթանության, Երուսաղեմի թագավորության, Տրիպոլիսի կոմսության և Անտիոքի իշխանապետության հանդեպ Կիլիկյան Հայաստանի բռնած դիրքը դեռևս հստակ չէր, 4) վերոգրյալից զատ, առկա էր նաև Կիլիկիայի հանդեպ մշտապես նվաճողական քաղաքականություն վարող Իկոնիայի սելջուկյան սուլթանության հարձակման սպառնալիքը:

Հենց այսպիսի քաղաքական իրավիճակով էլ պետք է պայմանավորել Ռուբեն Գ-ի մասնակցությունը խաչակիրների՝ 1177-1178 թթ. արշավանքին:

Սալահ ալ-Դինը 1180 թ. ամռանը երկամյա հաշտություն կնքեց Երուսաղեմի թագավորության և Տրիպոլիսի կոմսության հետ, որից հետո արշավեց Իկոնիայի սուլթանության վրա, քանի որ սելջուկները հարձակման էին ենթարկել Այյուբյաններին անցած Ռաբանը: Վերջիններս, պարտություն կրելով, ստիպված խաղաղության դաշն կնքեցին: Այնուհետև Սալահ ալ-Դինը միջամտեց Հիսն Քայֆայի տեր Նուր ալ-Դին Մուհամմադի և Իկոնիայի սուլթան Կըլըչ Արսլանի (1156-1192) միջև ծագած վեճին և կողմերին հաշտեցնելու նպատակով հասավ Բեհեսնի: Անմիջապես դրանից հետո Սալահ ալ-Դինի բանակը հարձակվեց Կիլիկիայի վրա¹⁸⁸:

Արշավանքի համար պատրվակ ծառայեց Կըլըչ Արսլանի դիմումը Եգիպտոսի սուլթանին, որով նա խնդրում էր համաձայնություն կնքել և գանգատվում էր հայերից¹⁸⁹: Կըլըչ Արսլանի՝ հայերից դժգոհելու պատճառը, ըստ արաբ պատմիչների, այն էր, որ Ռուբեն Գ-ը հակառակ իր իսկ տված թույլտվությանը հարձակվել էր Կիլիկիայում իրենց հոտերն արածացնող թուրքմեն ցեղերի վրա, մի մասին կոտորել, իսկ մնացածներին գերել ու

¹⁸⁸ Տե՛ս **Cahen Cl., La Syrie du Nord**, էջ 420:

¹⁸⁹ Տե՛ս **Ibn Khallikan**, Biographical Dictionary, v. III, էջ 342, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 293:

տիրացել նրանց ունեցվածքին¹⁹⁰: Պատմիչների պահպանած հաղորդման սկզբնաղբյուրն ակներևաբար պետք է համարել Սալահ ալ-Դինի արքունական դպիր Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանիի «ալ-բարկ ալ-Շամի» («Ասորիքյան կայծակ») երկը: Հեղինակը, ինչպես երևում է, Սալահ ալ-Դինին ուղեկցել է այս արշավանքի ժամանակ: Հատկանշական է, որ Իմադի երկը մեզ է հասել ալ-Բունդարիի համառոտագրությամբ, որը կրում է «Սանա ալ-բարկ ալ-Շամի» («Ասորիքյան կայծակի փայլատակում») վերնագիրը: Նրանում կարդում ենք. «Հաճախացան մուսուլմանների դժգոհությունները նրա չարագործություններից, և սուլթանը տեսավ, որ հարկ է նրա տիրույթները մտնել: Մեր հաղթական զորքերով շարժվեցինք ու ճամբարեցինք Սև գետի ափին՝ ավերելով նրա տները, փարախները: Ապա ընդհուպ մոտեցանք մի լեռան, որի կատարին վեր խոյացող մի բերդ կար՝ ամբողջությամբ պատված բուսականությամբ և թփերով: Այն անառիկ ու ամրակուռ բերդերից մեկն էր, որը լեռը գաղտնիքի պես պահում էր»¹⁹¹: Բնագրում բերդը կոչված է ալ-Մանույա (al-Mānūya), որը ինչպես ներքևում ենք համոզվելու, գրչական սխալ է: Պատմիչը շարունակում է, որ հայերը բերդը կրակի են տալիս, որպեսզի այն մուսուլմանների ձեռքը չընկնի: Բայց վերջիններս վրա են հասնում և հաջողացնում դատարկել հրդեհվող ամրոցի հացահատիկի ամբարներն ու պահեստները: Ջինվորները վերցնում են իրենց անհրաժեշտ պարենը: «Հայը վախեցավ, և սարսափը նրա սիրտը մտավ: Նա դեսպան ուղարկեց՝ հայտնելով, որ հնազանդությամբ ազատ է արձակում գերիներին», - վկայում է Իմադ ալ-Դինը (ալ-Բունդարին): Նա շարունակում է, որ այս բանից հետո Սալահ ալ-Դինը վճռում է վերադառնալ՝ պատճառաբանելով, որ «ժամա-

¹⁹⁰ Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 301, **Իբն ալ-Ասիր**, էջ 266:

¹⁹¹ **al-Bundarī**, *Sanā al-barq al-Šamī*, էջ 177:

նակը սուղ էր, իսկ պարենը դժվարհասանելի»¹⁹²: Դեպքի մասին իր «Միդմար ալ-հակահիկ» երկում վկայում է նաև Մուհամմադ իբն Թակի ալ-Դին Ումարը (ալ-Մալիք ալ-Մանսուր տիտղոսով), որն այդ ժամանակ Համայի կառավարիչն էր: Իմադի հաղորդման՝ ալ-Բունդարիի երկում պահպանված տարբերակին վերջինիս պատումից կարող ենք ավելացնել, որ բերդի պահեստները դատարկելուց հետո Սալահ ալ-Դինը հրամայել է հիմնահատակ ավերել բերդը, որից հետո Ռուբենը (անվանում է՝ *մութամալլիք ալ-Արման Իբն Լավուն* «հայոց իշխող Իբն Լավուն») հայտնել է իր հպատակությունը: Հեղինակի վկայությամբ հայոց իշխանն ազատ է արձակել իր մոտ եղած թուրքմեն գերիներին, իսկ ևս հինգ հարյուր գերիների ազատության համար վճարել փրկագին: Սրանով հարցը լուծվեց, և հայոց իշխանը *Աման* (անվտանգության երաշխիք) ստացավ Սալահ ալ-Դինից: Ավելացնենք, որ ալ-Մալիք ալ-Մանսուրի երկում հայերից գրավված բերդն անվանված է ալ-Անակիր¹⁹³:

Իմադ ալ-Դինի հաղորդումն իր «Գիրք զույգ պարտեզների» երկում վերաշարադրել է նաև Աբու Շաման՝ զգալիորեն պարզեցնելով Իմադի՝ հաճախ խրթին ու տեղ-տեղ անհասկանալի լեզուն: Վերջինս գրավված բերդի անունը տառադարձում է որպես *ալ-Մանակիր* և գրում է, թե Ռուբենը (անվանում է *մալիք ալ-Արման*՝ «հայոց արքա» տիտղոսով՝ ի տարբերություն ալ-Բունդարիի մոտ եղած *Մութամալլիք ալ-Արման*-ի՝ «հայոց իշխող» տիտղոսի) «չատ դրամ է տվել և ազատել իր մոտ եղած գերիներին: Սուլթանին, սակայն, սա չի բավարարել, և նա ստիպված ավելացրել է գումարի չափը և խոստացել, որ կգնի 500 գերի ֆրանկների երկրներից և ազատ կարձակի: [Միայն այս բանից հետո] սուլթանը համաձայնել է՝ նրանից դրա համար փրկա-

¹⁹² Նույն տեղում:

¹⁹³ Տե՛ս *Al-Malik al-Manşūr*, *Midmār al-ḥaqāʾiq*, էջ 42-43:

գին (կամ գրավ) վերցնելով»¹⁹⁴: Աբու Շաման բերում է արշավանքի ականատես մի բանաստեղծի՝ ալ-Ջամալ ալ-Վասիտի ալ-Մուկրիի ներբողը՝ ուղղված Սալահ ալ-Դիհին՝ որում դրվատվում է «Իբն Լավունի» նկատմամբ սուլթանի տարած հաղթանակը¹⁹⁵: Իմադից բացի, Աբու Շաման մի մեջբերում է կատարում նաև վերջինիս ժամանակակից պատմիչ Իբն Աբի Տայյից, որի երկը նույնպես մեզ չի հասել: Ըստ այդ տեղեկության՝ մուսուլմանները բերդում՝ հողի մեջ թաղված գտել են մի տակառ, որը լի էր պղնձե, արծաթե և ոսկե իրերով¹⁹⁶:

Արշավանքի մասին հաղորդումը տեղ է գտել նաև Իբն ալ-Ասիրի «Լիակատար պատմություն» երկում: Հիմքում, անշուշտ, կրկին Իմադ ալ-Դիհի վկայությունն է, միայն թե հատկանշական է Իբն ալ-Ասիրի այն լրացումը, թե «նրա (իմա՝ Իբն Լավունի) երկիրն ամրակուռ էր՝ ամբողջովին ծածկված անառիկ բերդերով և այնտեղ մտնելը դժվար էր, քանզի [շրջապատված էր] լեռնանցքներով ու անանցանելի լեռներով»¹⁹⁷: Բուն արշավանքի նկարագրությունը մեզ համար կարևոր այլ լրացում չի պարունակում. «Գերիներն արծակվեցին և ունեցվածքը վերադարձվեց, իսկ Սալահ ալ-Դիհին այնտեղից հեռացավ Ջումադա II ամսին (23 հոկտեմբեր – 20 նոյեմբեր)»¹⁹⁸:

Իրադարձությունների ընթացքի մասին որոշ հավելյալ տեղեկություններ ենք գտնում դեպքերի ականատես Իբն Շադդադի «Այյուբյան Սալահ ալ-Դիհի կենսագրությունը» երկում: Ըստ պատմիչի՝ երբ սուլթան Սալահ ալ-Դիհին ալ-Ռամլայում կրած պարտությունից հետո պատրաստվում էր նոր արշավանք կազմակերպել դեպի Ասորիք, սուրհանդակ է հասնում Ռումի Կըլըջ

¹⁹⁴ **Abū Šāma, Kitāb al-Rawḍatayn**, v. III, էջ 37:

¹⁹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 37-38:

¹⁹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 37:

¹⁹⁷ **Իբն ալ-Ասիր**, էջ 266:

¹⁹⁸ Նույն տեղում:

Արսլան սուլթանից: Նա թախանձում էր համաձայնություն կնքել իր հետ և միաժամանակ գանգատվում էր հայերից: «Սուլթանը Կըրըչ Արսլանին օգնելու համար արշավեց դեպի Իբն Լևոնի երկիրը,- գրում է Իբն Շադդադը՝ շարունակելով,- հասավ Կարա-Հիսար և ծառայության առավ Հալեպի բանակները՝ ըստ դաշնագրով եղած համաձայնության: Բանակները միացան Նահր ալ-Ազրակի մոտ՝ Բահասնայի և Հիսն Մանսուրի միջև, և գետից անցնելով գնացին դեպի Նահր ալ-Ասուադը, որը Իբն Լևոնի երկրի սահմանն է կազմում, և գրավեցին մի բերդ, որը քանդեցին և բնակիչներին սրի քաշեցին: Թշնամին վերադարձրեց գերիներին՝ հաշտություն խնդրելով: Երբ հաշտություն կնքվեց, սուլթանն այնտեղից վերադարձավ (նա իրեն փոխանորդ է կարգում Կըրըչ Արսլանին, որպեսզի դաշնագիր կնքի դեսպանների հետ): Այդ տեղի ունեցավ Սաբխա-Սանջա գետի վրա, որը թափվում է Եփրատի մեջ, և այդ տեղի ունեցավ 76 թվականի ջումադա ալ-ուլա ամսի 10-ին (1180 թ. հոկտ. 2): Այնտեղից սուլթանը գնաց Դամասկոսի կողմը»¹⁹⁹: Մեկ այլ արաբ պատմիչ՝ Իբն Վասիլը հաղորդումը մեջբերում է Աբու Շամայի և Իբն Շադդադի երկերից՝ էական ոչինչ չավելացնելով²⁰⁰:

Եթե արշավանքի մասին հաղորդող արաբ հեղինակների պատումներն ամփոփենք, կստանանք հետևյալ պատկերը: Երբ Սալահ ալ-Դինի բանակը հասավ Կարահիսար վայր (Հալեպից հյուսիս), Հալեպի սուլթանության զորքը 1176 թ. դաշնագրի համաձայն միացավ նրան: Ապա Կապույտ գետի (Նահր ալ-Ազրակ) մոտ՝ Բեհեսնիի և Հիսն Մանսուրի միջև, միացյալ բանակին միացան նաև Կըրըչ Արսլանի զինված ուժերը: Այստեղ Սալահ ալ-Դինի միջնորդությամբ հաշտություն կնքվեց Իկոնիայի սուլթան Կըրըչ Արսլանի և Հիսն Քայթայի Արտուխյան ամիր Նուր ալ-Դին

¹⁹⁹ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 293:

²⁰⁰ Տե՛ս **Ibn Wāsil**, Mufarriğ al-kurūb, v. II, էջ 98-100:

իբն Կարա Արսլանի միջև: Իր արտաքին քաղաքականությանը հավատարիմ՝ Սալահ ալ-Դինը հաշտություն հաստատեց Այյուբյանների կողմից դեռևս չնվաճված մուսուլմանական պետությունների միջև, քանզի հնարավորություն էր ստանում դրանց ռազմական ուժերն օգտագործել գլխավոր թշնամիներ խաչակիրների դեմ պայքարում:

Սալահ ալ-Դինի արտաքին քաղաքականության մեջ Կիլիկիայի հայկական պետությունն առանձնահատուկ տեղ էր գրավում: Ընդհանրապես հայերի և ասորիների նկատմամբ դրանում չկար այն բացահայտ թշնամությունը, որ գոյություն ուներ խաչակիրների հանդեպ: Սալահ ալ-Դինի տերության համար (համենայն դեպս XII դ. 70-80-ական թթ.) առաջնահերթ խնդիր չէր հայկական իշխանապետության վերացումը կամ ջախջախիչ հարված հասցնելը: Ալ-Բունդարիի «Հաճախացան մուսուլմանների դժգոհությունները նրա չարագործություններից, և սուլթանը տեսավ, որ հարկ է, որ նրա տիրույթները մտնի» արտահայտությունը կարծես հուշում է, որ սա մի պատժիչ (ոչ նվաճողական) արշավանք էր թերևս 1177-1178 թթ. Հարիմի դեմ արշավանքին Ռուբեն Գ-ի մասնակցության համար: Դա երևաց նաև Սալահ ալ-Դինի հետագա գործողություններից:

Իկոնիայի սելջուկներին ու Արտուխյաններին հաշտեցնելով և օգնական զորք վերցնելով՝ Սալահ ալ-Դինը Կապույտ գետի ափերից արշավեց Սև գետ (Նահր ալ-Ասուադ), որն «Իբն Լևոնի երկրի սահմանն էր կազմում»²⁰¹: Այյուբյան սուլթանը գրավեց Սև գետի շրջանում գտնվող *ալ-Մանակիր (կամ ալ-Անակիր)* ամրոցը, սակայն Ռուբինյան իշխանապետությունում ավելի չխորացավ, քանի որ Ռուբեն Գ-ը հաշտություն խնդրեց՝ շատ ոսկի

²⁰¹ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 301, **Իբն ալ-Ասիր**, էջ 266:

տալով: Ռուբինյան իշխանը վերադարձրեց նաև 500 գերիների և հաշտություն կնքվեց:

Երվանդ Քասունին իրավացի է՝ գտնելով, որ թուրքմեն մի քանի ցեղերի հանդեպ հայ իշխանապետի վերաբերմունքը չէր կարող Սալահ ալ-Դինի՝ Եգիպտոսից Կիլիկիա արշավելու բուն պատճառը լինել: Նա ավելի հավանական է համարում այն, որ Սալահ ալ-Դինի գլխավոր նպատակը եղել է Իկոնիայի սուլթանություն արշավելը: Եվ Այյուբյան սուլթանը միայն Կըլըջ Արսլանի հետ հաշտություն կնքելուց հետո և, հավանաբար, վերջինիս թելադրանքով է արշավել Կիլիկիա²⁰²:

Այս ենթադրությունը տրամաբանական է և հիմնավորված է հետևյալ լրացուցիչ ճշտումով. Սալահ ալ-Դինի նպատակն այս շրջանում գտնվող պետություններին ահաբեկելն էր և ոչ թե դրանց նվաճումը: Այլապես բացատրելի չէ այն փաստը, որ հմուտ և համարձակ զորավար Սալահ ալ-Դինն իր մեծաքանակ զորքին միացնելով նախ Հալեպի, ապա Իկոնիայի սուլթանությունների բանակները, այդպես էլ լուրջ քայլի չդիմեց՝ բավարարվելով ընդամենը մեկ ամրոցի (այն էլ հավանաբար ժամանակավորապես) գրավմամբ: Ամենայն հավանականությամբ, անկախ այն բանից, թե Կըլըջ Արսլանը նրան որևէ բան թելադրել էր, թե ոչ, Սալահ ալ-Դինը հավատարիմ մնաց իր՝ նախապես մշակած ծրագրին:

Այսպիսով՝ արձագանքելով Ռուբեն Գ-ի դիմումին՝ Եգիպտոսի սուլթանը 1180 թ. հապճեպ հաշտություն կնքեց: Սալահ ալ-Դինը երկամյա դաշն ստորագրեց նաև Մոսուլի, Ջազիրայի, Իրբիլի, Հիսն Քայֆայի և Մարդինի Ջանգի և Արտուկյան ամիրների հետ, որոնք իրենց կնիքներով այն հաստատեցին 1180 թ. հոկտեմբեր 2-ին²⁰³: Ըստ Իբն Շադդադի՝ հաշտությունը կնքվեց

²⁰² Տե՛ս Քասունի Ե., նշվ.աշխ., էջ 40:

²⁰³ Տե՛ս Lane-Poole S., History of Egypt in the Middle Ages, էջ 206:

Սաբխա-Սանջա գետի մոտ²⁰⁴, որը, հավանաբար, նույն Կապույտ գետի այլ անվանումն է:

Սալահ ալ-Դինը չշարունակեց առաջխաղացումը դեպի Ռուբինյան իշխապետության ներքին գավառները, որովհետև վճռական հաջողությունների չէր հասել խաչակիրների դեմ պայքարում, իսկ Հյուսիսային Ասորիքը և Վերին Միջագետքը դեռևս վերջնականապես նվաճված չէին:

Հալեպի սուլթանի մահը (1181) և Մոսուլի ամիրների հետ բանակցությունները Սալահ ալ-Դինի նոր նվաճումների ճանապարհ բացեցին: Այյուբյան սուլթանը 1182-ին ներխուժեց Վերին Միջագետք և մի քանի ամսվա ընթացքում իրեն ենթարկեց ամբողջ երկիրը, բացի Մոսուլ քաղաքից, որը, սակայն, կարճ ժամանակ անց Հալեպի հետ ներառվեց Այյուբյանների տերության մեջ: Այդ մասին է վկայում Բար Հեբրեոսը՝ մանրամասն ներկայացնելով Ասորիքի Չանգիների պետության գոյության վերջին երկու տարվա պատմությունը: Ըստ ասորի պատմիչի՝ հիջրայի 577 թ. (1181-1182) Հալեպի երիտասարդ սուլթան ալ-Մալիք ալ-Սալիհը, զգալով իր մոտալուտ մահը, լուր ուղարկեց իր հորեղբորորդուն՝ Մոսուլի տեր Իզզ ալ-Դին Մասուդին (1180-1193)՝ խնդրելով շտապ ժամանել Հալեպ: Ալ-Մալիք ալ-Սալիհը նախընտրում էր քաղաքը հանձնել իր տոհմակցին, քան Այյուբյան սուլթանին: Շուտով նա վախճանվեց (1181-ի վերջին կամ 1182-ի սկզբին), որից հետո Իզզ ալ-Դին Մասուդը Հալեպը միացրեց իր տիրույթներին²⁰⁵:

Իզզ ալ-Դին Մասուդը քաղաքի կառավարումը հանձնեց եղբորը՝ Իմադ ալ-Դինին, որը, խաչակիրների հետ դաշնակցած, հարձակումներ էր գործում Սալահ ալ-Դինին ենթակա հողերի

²⁰⁴ Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 293:

²⁰⁵ Տե՛ս **Bar Hebraeus**, էջ 311:

վրա: Սակայն Չանգիների՝ Մոսուլի ճյուղը Հալեպում իշխեց հազիվ մեկուկես տարի:

Հալեպը 1183 թ. մայիսին պաշարվեց Այյուբյանների կողմից: Զգալով, որ ուժերն անհավասար են, իսկ Սալահ ալ-Դինը վաղ թե ուշ պիտի գրավի այն, քաղաքի կառավարիչը բանակցեց սուլթանի հետ և, Այյուբյան սուլթանի տիրույթներում մի քանի ամրոցներ ստանալով, 1183 թ. հունիսին Հալեպը հանձնեց նրան: Հալեպի նվաճումը զգալի նշանակություն ուներ խաչակիրների դեմ Այյուբյանների մղած պայքարում, ինչը հստակ երևում է լատին պատմիչ Գիյոմ Տյուրացու հետևյալ հաղորդումից. «...կրկնապատիկ սարսափը պատեց մեր մարդկանց (իմա՝ խաչակիրներին), երբ նրանց հասավ այս լուրը, քանի որ տեղի էր ունեցել այն, ինչից նրանք ամենից շատ էին վախենում»²⁰⁶:

Հալեպին տիրելով՝ Սալահ ալ-Դինը սպառնում էր ոչ միայն Անտիոքի իշխանապետությանն ու Տրիպոլիսի կոմսությանը, այլև Ռուբինյան իշխանապետությանը, թեև, ի թիվս այլ պետությունների, նաև վերջինիս հետ սուլթանի՝ 1180 թ. կնքած հաշտությունը Կիլիկիայի հայերին գոնե ժամանակավորապես զերծ էր պահում Այյուբյան բանակի ներխուժումից: Զգալով մոտալուտ վտանգը՝ Անտիոքի իշխանապետ Բոհեմունդ III-ն օգնության խնդրանքով դիմեց Երուսաղեմի թագավոր Բալդուին IV-ին: Ըստ Գիյոմ Տյուրացու՝ վերջինս 300 ասպետ ուղարկեց նրան օգնության, սակայն շուտով պարզվեց, որ Բոհեմունդ III-ը ժամանակավոր զինադադար է կնքել Սալահ ալ-Դինի հետ²⁰⁷: Լատին պատմիչը Սալահ ալ-Դինի հետ Անտիոքի իշխանապետ Բոհեմունդ III-ի կնքած զինադադարը կապում է նրա կողմից Կիլիկիայի Տարսոն քաղաքը Ռուբեն Գ-ին վաճառելու հետ²⁰⁸:

²⁰⁶ William of Tyre, v. II, էջ 490:

²⁰⁷ Տես նույն տեղում, էջ 491:

²⁰⁸ Տես նույն տեղում, էջ 491:

Հարցն այն է, որ Տարսոնի և, ընդհանրապես, Կիլիկիայում բյուզանդացիների ունեցած վերջին տիրույթների՝ Ռուբինյաններին անցնելու հանգամանքները (1183 թ.) կարոտ են մանրամասն ուսումնասիրության: Գրիգոր Միքայելյանը, անդրադառնալով Մլեհ իշխանի կողմից Ադանան, Մամեստիան և Տարսոնը բյուզանդացիներից գրավելուն²⁰⁹, հաջորդիվ՝ Ռուբեն Գ-ի ձեռնարկումները շարադրելիս գրում է. «Մանուել կայսեր մահվանից (1180 թ.) հետո, Բյուզանդիայի նոր թուլացումից օգտվելով, Ռուբեն Գ-ը տիրեց Բյուզանդիային պատկանող Դաշտային Կիլիկիայի վերջին մասին՝ Ադանա և Տարսոն քաղաքներով»²¹⁰:

Դիտելի է, որ Մլեհի մահվանից հետո հայերի կողմից այդ քաղաքները որևէ պետության զիջելու մասին սկզբնաղբյուրային վկայություններ չկան: Այսպիսով՝ ստացվում է հակասություն, երբ քննարկվում է հետևյալը. թեև հայ և օտար աղբյուրները լրում են հիշյալ քաղաքները կորցնելու կամ զիջելու մասին, սակայն երկիցս հաղորդում են դրանց՝ հայերի կողմից (նախ Մլեհի, ապա Ռուբեն Գ-ի օրոք) գրավելու լուրը:

Այս խնդիրը հանգամանորեն ուսումնասիրած Երվանդ Քասունին, այդպես էլ հարցի պատասխանը չգտնելով, ենթադրում է, որ Դաշտային Կիլիկիայի մի մասը 1175-1176 թթ.՝ Մլեհի սպանությունից անմիջապես հետո կրկին անցել է Բյուզանդիային: Այս ենթադրության համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ Մլեհի դեմ նյութված դավադրությանն ու սպանությանը մասնակցել են նաև Ռուբինյան իշխանի երդվյալ թշնամի բյուզանդացիները²¹¹: Երվանդ Քասունին հավանական է համարում, որ Մլեհի սպանությունից հետո Բյուզանդիան վերագրավել է Ադանան, Մամեստիան և Տարսոնը կամ դավադրության մասնակից հայ իշխանները հիշյալ քաղաքները կամավոր հանձնել

²⁰⁹ **Микаелян Г.**, նշվ.աշխ., էջ 128:

²¹⁰ Նույն տեղում, էջ 130:

²¹¹ Տե՛ս **Քասունի Ե.**, նշվ.աշխ., էջ 70:

են կայսրությանը որպես այդ գործում մասնակցության հատուցում²¹²:

Վերջին ենթադրությունը թեև հենվում է ընդամենը մեկ՝ այն էլ անուղղակի տեղեկության վրա, տրամաբանական է, քանի որ աղբյուրներում այլ, սրան հակասող տեղեկություններ չկան:

Այսպիսով՝ պարզվում է, որ Մլեհի կողմից Դաշտային Կիլիկիայի գրավումը ևս վերջնական չէր: Ռուբեն Գ-ը պետք է այդ երկրամասն ամբողջությամբ միացներ հայկական իշխանապետությանը, որով վերջապես կավարտվեր հայ-բյուզանդական՝ ավելի քան մեկդարյա (1080-1183) պայքարը հանուն Կիլիկիայի:

Իսկ թե ինչպես է Տարսունն անցել Անտիոքի իշխանապետությանը, ևս բացահայտված չէ: Ամենայն հավանականությամբ 1180 թ. կամ 1181 թ., երբ Բյուզանդիայում իշխանության գլուխ անցավ Ալեքսիոս Բ-ը (1180-1183), և կայսերական իշխանությունը թուլացավ, Կիլիկիայի բյուզանդական մասի կառավարիչ Իսահակ Կոմնենոսը, հավանաբար զգալով, որ անկարող է քաղաքը երկար պահել իր ձեռքում, այն զիջել (կամ վաճառել) է Անտիոքի իշխան Բոհեմունդին:

Գիյոմ Տյուրացու մի տեղեկությամբ հաստատվում է, որ Տարսունը Բյուզանդիայից էր անցել խաչակիրներին: Պատմիչը գրում է. «Նա (Բոհեմունդը) ժամանակավոր զինադադար կնքեց Սալահ ալ-Դինի հետ և դրանից հետո իրեն ապահովված համարեց: Եվ որպեսզի ավելի պակաս հոգս ունենա և ի վիճակի լինի առավել մեծ ուշադրությամբ հսկել Անտիոքի հողը (երկրին), նա մեծ գումարով վաճառեց Տարսունը՝ Կիլիկիայի մայրաքաղաքը (որը ստացել էր հույներից), մի հզոր հայ սատրապի, որն իշխում էր այդ երկրի մյուս քաղաքներում: Դրանով նա մեծ իմաստություն ցուցաբերեց: Տարսունը շատ հեռու էր գտնվում և մեկուսացած էր Անտիոքից Ռուբենի հողերով. այդ պատճառով իշխանի

²¹² Տե՛ս նույն տեղում, էջ 68:

(Բոհեմունդի) համար շատ դժվար էր և թանկ էր նստում այն պահելը՝ մի բան, որ շատ հեշտ էր Ռուբենի համար»²¹³:

«Որ նա ստացել էր հույներից» արտահայտությունը բացահայտում է Տարսոնի անցումը խաչակիրներին, սակայն այդ իրադարձության ճշգրիտ թվականը և այլ մանրամասներ մնում են անհայտ: Այսպիսով՝ Տարսոնը 1183 թ. վերջնականապես և այս անգամ արդեն խաղաղ ճանապարհով վերադարձվեց Ռուբինյաններին:

Հիշյալ տիրույթների ինչպես կորուստը (1175-1176), այնպես էլ վերադարձը (1183) տեղի ունեցան խաղաղ: Թերևս դա է պատճառը, որ պատմիչների մեծ մասը չգիտեն կամ անուշադրության են մատնել վերոհիշյալ տարածքային փոփոխությունները, որոնք 7-8 տարվա ընթացքում տեղի ունեցան Ռուբինյան ու Անտիոքի իշխանապետությունների և Բյուզանդական կայսրության տիրույթներում:

Այսպիսով՝ Սալահ ալ-Դինն Ասորիքում հայտնվեց XII դ. 70-ական թթ. կեսերին և ընդամենը 2 տարվա ընթացքում իր գերիշխանությունը հաստատեց գրեթե ողջ Ասորիքում: Դեռևս 1176 թ. նա տարածաշրջանի մի շարք պետությունների հետ կնքել էր հաշտություն, ինչը ենթադրում էր, որ այդ՝ առավել փոքր պետական միավորներն օգնական զինուժ պիտի տրամադրեին Այյուբյան տիրակալին: Այդուհանդերձ, մինչև 1180 թ. Ռուբինյանների և Այյուբյանների միջև անմիջական շփումներ չկային: Մինչ այդ՝ 1177 թ. վերջին և 1178 թ. սկզբին, երբ Սալահ ալ-Դինը հեռացել էր Ասորիքից և ծանր պարտություն էր կրել Երուսաղեմի թագավորից, մի պահ խաչակիրների մոտ հույս արթնացավ նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնելու, որի արտահայտությունն էր Հարիմ ամրոցի պաշարումը: Այս գործողությանը միացավ նաև Ռուբեն Գ-ն իր զորքով, սակայն քառամսյա

²¹³ William of Tyre, v. II, էջ 491:

պաշարումն արդյունք չտվեց, իսկ Սալահ ալ-Դինն իր բանակը վերակազմավորելով՝ կրկին շարժվեց Ասորիք: 1180 թ. աշնանը նա հարձակվեց Կիլիկյան Հայաստանի սահմանակից «ալ-Մանակիր» կամ «ալ-Անակիր» անունով ամրոցի վրա, որը գտնվում էր Ամանոսյան լեռներում: Այս հարձակումը ոչ այնքան նվաճողական, որքան պատժիչ և հետախուզական-կողոպտչական նպատակներ ուներ: Ընդ որում, Սալահ ալ-Դինին այդ քայլին դրդողը Իկոնիայի սելջուկյան սուլթանն էր: Չի բացառվում նաև, որ սա պատժիչ գործողություն էր 1177-1178 թթ. խաչակիրների միացյալ բանակին միանալու և Հարիմի պաշարմանը մասնակցելու համար:

Ինչևէ, Ռուբինյան իշխանապետությանը պատկանող անմատչելի ամրոցը գրավելուց ու կողոպտելուց բացի, Սալահ ալ-Դինը, չնայած իր տրամադրության տակ եղած մեծաթիվ զինված ուժերին, այլ գործողություններ չկատարեց: Ռուբեն Գ-ը նրան հանձնեց նաև նախապես գերեվարված մուսուլմաններին, որից հետո Սալահ ալ-Դինը նրան երաշխավորագիր տվեց: Շուտով՝ 1180 թ. հոկտեմբերի 2-ին Սալահ ալ-Դինը տարածաշրջանի պետությունների (այդ թվում և Կիլիկյան Հայաստանի) հետ կնքեց երկամյա հաշտության պայմանագիր: Ռուբինյանների հետ հաշտությունն Այյուբյանները պահպանեցին առնվազն 7 տարի, մինչև 1187 թ.:

ԳԼՈՒԽ Գ

ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՌՈՒԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1183-1193)

ա) Ասորիքի վերջնական նվաճումը

Այյուբյանների կողմից Հալեպի՝ 1183 թ. գրավումը Կիլիկյան Հայաստանի համար բոլորովին նոր իրավիճակ ստեղծեց:

Չնայած Ռուբինյանները Նուր ալ-Դինի մահից (1174 թ.) հետո կորցրել էին մի շատ կարևոր դաշնակից, 1174-1183 թթ. Ասորիքի մասնատվածությունը Կիլիկիան զերծ էր պահել հարձակումներից: Մինչդեռ Հալեպի, հետևաբար նաև Հյուսիսային Ասորիքի նվաճումով Այյուբյան հզոր սուլթանությունը հայտնվեց հայկական իշխանապետության անմիջական հարևանությամբ, ինչը լրջագույն սպառնալիք էր Կիլիկյան Հայաստանի համար: Առաջ անցնելով նշենք, որ Այյուբյաններն առնվազն երեք առիթով՝ 1187, 1190 և 1193 թթ. կարող էին ներխուժել Կիլիկիա:

Այյուբյան սուլթանության կազմում հայտնված Հալեպն ի սկզբանե (1183) ստացավ լայն ինքնուրույնություն ենթադրող հատուկ կարգավիճակ: Սալահ ալ-Դինը քաղաքի կառավարումը հանձնեց իր որդիներից ալ-Մալիք ալ-Ջահիր Ղազիին, որն այդ ժամանակ ընդամենը տասնմեկ տարեկան էր: Սա առաջին դեպքն էր, երբ սուլթանն իր որդիներից մեկին ներգրավում էր պետական կառավարման մեջ: Բնականաբար, մանկահասակ ալ-Մալիք ալ-Ջահիրը դեռևս ի վիճակի չէր կառավարելու, ուստի Սալահ ալ-Դինը Հալեպը գրավելուց կես տարի անց իր եղբայր ալ-Մալիք ալ-Ադիլին նշանակեց քաղաքի ժամանակավոր կառավարիչ: Երեք տարի անց ալ-Մալիք ալ-Ադիլը վերադարձավ Եգիպտոս, և տասնչորսամյա ալ-Մալիք ալ-Ջահիրը վերստանձնեց Հալեպի կառավարումը: Այդ շրջանում քաղաքը ծաղկեց և

մշտապես պահպանեց ինքնավարությունը, իսկ Սալահ ալ-Դինի մահից հետո նաև ձեռք բերեց փաստական անկախություն: Պատահական չէ, որ աղբյուրներում այն ավելի հաճախ կոչվում է Հալեպի սուլթանություն, քանի որ հենց սկզբից Սալահ ալ-Դինն իր որդուն շնորհեց սուլթանի տիտղոս: Ուսումնասիրողները գտնում են, որ Սալահ ալ-Դինը, որդուն սուլթան կարգելով, ոչ թե զիջում էր իր իշխանության մի մասը, այլ Հալեպը հռչակում էր որպես ալ-Մալիք ալ-Չահիրի ժառանգական տիրույթ, որը նա կարող էր փոխանցել իր զավակներին²¹⁴: Ըստ էության, այդ քայլով մի նոր պետության հիմքեր էին դրվում:

Սալահ ալ-Դինի հետ 1180 թ. կնքած պայմանագրից հետո՝ նույն տասնամյակի առաջին կեսին, օգտվելով հաստատված հարաբերական անդորրից, Ռուբեն Գ իշխանը փորձում էր ընդարձակել իր տիրույթները: Տիրելով Տարսուհին և իր դիրքերն ավելի ամրապնդելով՝ նա ձեռնարկում է Հեթումյաններին պատկանող Լամբրոն ամրոցի պաշարումը: Վերջիններս հայտնի էին իրենց բյուզանդամետ դիրքորոշմամբ, ինչը հակասում էր Ռուբինյանների՝ Կիլիկյան իշխանապետությունն ընդարձակելու քաղաքականությանը: Թեպետ Հեթումյանների իշխանությունը Լամբրոն ամրոցից ու նրա շրջակա բնակավայրերից դուրս երբեք չէր ընդարձակվել, սակայն տիրելով այդ անառիկ ամրոցին և վայելելով Բյուզանդիայի հովանավորությունը՝ Հեթումյանները միշտ հաջողությամբ պաշտպանվել էին Ռուբինյանների հարձակումներից: Չնայած շուրջ եռամյա պաշարմանը (1183-1186)՝ Ռուբեն Գ-ին չհաջողվեց Լամբրոնը գրավել: Ավելին, Հեթումյանները կարողացան Ռուբինյանների դեմ դուրս բերել Անտիոքի իշխանապետ Բոհեմունդ III-ին՝ խիստ ծանրացնելով հայոց իշխանապետության վիճակը:

²¹⁴ Տե՛ս **Humphreys R. S.**, նշվ. աշխ., էջ 53-55, **Eddé A.-M., Saladin**, էջ 35-37:

Հեթումյանների դրդամամբ Բոհեմունդը 1185 թ. սկզբին Ռուբեն իշխանապետին խաբեությամբ հրավիրեց Անտիոք, ձերբակալեց և բանակով ներխուժեց Կիլիկիա՝ նպատակ ունենալով վերադարձնել Անտիոքի իշխանությունից գրավված տիրույթները, իսկ հնարավորության դեպքում կործանել Ռուբինյան իշխանապետությունը: Վերջինիս կառավարումն իր ձեռքը վերցրեց Ռուբեն Գ-ի եղբայր Լևոնը²¹⁵:

Ըստ Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն խմբագրություններից մեկի՝ Բոհեմունդն ամառն անցկացրեց Կիլիկիայում²¹⁶ և այդ ընթացքում, հավանաբար, բազմիցս ասպատակեց Ռուբինյան իշխանապետության կենտրոնական շրջանները, բայց Լևոն իշխանի գլխավորած հայկական զորքերի կողմից հանդիպեց ուժեղ դիմադրության:

Խաչակիրների հարձակումները հետ մղելուց հետո հայ իշխանները զբաղվեցին Ռուբեն Գ-ի ազատման գործով: Նրանք ստիպված եղան Դաշտային Կիլիկիայի մի մասը զիջել Անտիոքի իշխանապետությանը և, բացի այդ, մեծ փրկագին վճարել: Այդ գնով միայն նրանց հաջողվեց ազատել հայոց իշխանապետին:

Այս դեպքերին անդրադարձած հայ և ասորի պատմիչների տեղեկությունները հայերի զիջած հողերի և փրկագնի չափի վերաբերյալ հակասական են: Ըստ Սմբատ Սպարապետի՝ Ռուբեն Գ-ն Անտիոքից դիմեց իր քեռի Բակուրան իշխանին, որը Ռուբենի մորաքրոջը որպես պատանդ ուղարկեց Անտիոք: Ապա Ռուբենը, որպես փրկագին, Բոհեմունդին զիջեց Սարվանդիքար, Թիլ Համտուն և Ճկեր ամրությունները, ինչպես նաև վճարեց 1000 դահեկան դրամ, որից հետո Անտիոքի իշխանը նրան ա-

²¹⁵ Աղբյուրների տեղեկությունները համադրելով՝ Լ.Տեր-Պետրոսյանը եզրակացնում է, որ Լևոնը եղբոր կողմից կարգված էր Կիլիկյան Հայաստանի խնամակալ (տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ.աշխ., հ. Բ, էջ 159):

²¹⁶ Տե՛ս **Միքայել Ասորի**, Ժամանակագրություն, 1871, էջ 491-492 և հմմտ. **նույնի**՝ 1870, էջ 492-493:

զատ արձակեց²¹⁷: Սամվել Անեցու շարունակողներից մեկը, որպես հայերի զիջած հողեր, հիշատակում է «զԹիլն և զՄսիս և զքարն Սարուանդի»²¹⁸, իսկ փրկագինը՝ «ՃՌ (100.000 – Վ. Տ.-Ղ.) դահեկան»²¹⁹: Խիստ անորոշ է Վահրամ Բաբունու վկայությունը, ըստ որի՝ «...Ապա երկիր՝ և գանձ տուեալ, եւ զպարոն՝ Ռուբէն թափեալ»²²⁰: Միքայել Ասորին, ի տարբերություն Սմբատ Սպարապետի, նշում է 3000 դինար²²¹, իսկ Բար Հեբրեոսը՝ 30.000 դինար²²² փրկագնի մասին: Միայն հայերի զիջած հողերի հարցում են ասորի երկու պատմիչները համերաշխ²²³: Նրանց կարծիքով հայերն Անտիոքի իշխանապետին են զիջել Ադանան, Մամեստիան և մի շարք այլ վայրեր:

Նկատի ունենալով, որ Բար Հեբրեոսն իր պատմության առաջին մասը շարադրելիս մեծապես օգտվել է Միքայել Ասորու մատյանից, վերջինիս արձանագրած 3000 դինարն ավելի արժանահավատ պետք է համարվի, քան Բար Հեբրեոսի 30.000-ը, որ, ամենայն հավանականությամբ, գրչական վրիպում է:

Ինչ վերաբերում է Սմբատ Սպարապետի և Սամվել Անեցու շարունակողներից մեկի հաղորդած թվերին, ապա դրանց մեջ մեծ տարբերություն կա՝ համապատասխանաբար 1000 և 100.000 դահեկան²²⁴: Վերջինը, կարծես, չափազանցված է, իսկ 1000-ը ու 3000-ն ավելի մոտ են իրականությանը:

²¹⁷ Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 194, ինչպես նաև **նույնի՛** Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 104:

²¹⁸ **Սամուէլ Անեցի և Շարունակողներ**, էջ 226:

²¹⁹ Նույն տեղում:

²²⁰ **Վահրամ Բաբունի**, էջ 212:

²²¹ Տե՛ս **Michel le Syrien**, t. III, էջ 397: Միքայելի ժամանակագրության՝ հայերեն տարբերակներից մեկում թեև փրկագնի չափն արձանագրված չէ («տուփն կամաւ իւրեանց ոսկի»), բայց որպես Անտիոքի իշխանին զիջված են նշված Ադանան և Թիլ Համդունը (տե՛ս **Միքայել Ասորի**, ժամանակագրություն, 1871, էջ 492):

²²² Տե՛ս **Bar Hebraeus**, էջ 321:

²²³ Տե՛ս **Michel le Syrien**, t. III, էջ 397; **Bar Hebraeus**, էջ 321:

²²⁴ Թե՛ դահեկանը և թե՛ դինարն այդ ժամանակաշրջանում օգտագործվող ոսկեդրամի տարբեր անվանումներն են:

Տարածքային զիջումների առնչությամբ պետք է նշել հետևյալը. պատմիչների տվյալների համադրումից կարելի է եզրակացնել, որ Բոհեմունդ III-ին զիջվել են Մամեստիան (հաստատապես), Ադանան (ամենայն հավանականությամբ) և մի շարք առավել փոքր քաղաքներ ու ամրոցներ, ինչպիսիք էին Թիլ Համտունը, Սարվանդիքարը և Ճկերը: Այսպիսով՝ Ռուբեն Գ-ի ազատման դիմաց Անտիոքի իշխանապետությանը հանձնվեց խիստ ընդարձակ մի տարածք, որը, բարեբախտաբար, երկար չմնաց խաչակիրների հսկողության տակ:

Ասորի պատմիչների (Միքայել Ասորի²²⁵, Բար Հեբրեոս)²²⁶ վկայությամբ՝ ազատվելուց հետո Ռուբեն իշխանապետը վերագրավեց իր զիջած բոլոր տիրույթները: Մոտավորապես նույնն է հաղորդում Սամվել Անեցու շարունակողներից մեկը՝ գրելով. «Ի ՈԼԴ (1185) թվին բրինձն Անտաքու Պէմունտն արար սէր ընդ Սալահատինն որ տիրեաց բազում աշխարհաց, եւ ի սադրելոյ իշխողի Լամբրունինն նենգիւ որսաց զՌօբէնն՝ զորդին Ստեֆանէի՝ զտէրն Կիլիկիոյ, զի յղեաց առ նա եւ խաբանօք ի սէր եւ ի ճաշ կոչեաց, եւ իբրեւ եկն ըմբռնեաց եւ ի բանդ եղ յԱնտաք: Եւ Պէմունտն յայն վստահացեալ եկն մինչեւ ի Թիլն Համտոյ կարծեաց թէեւ զԿիլիկիա զբռամբ ածէ, սակայն ոչինչ կարաց առնել, զի Լեւոնն եղբայրն Ռուբենի քաջութեամբ ունէր զիշխանութիւնն, որ եւ տուեալ կամօք զԹիլն, եւ զՄսիս եւ զՔարն Սալուանդի եւ ՃՌ (100.000) դեկան՝ եւ թափեաց զեղբայրն իւր զՌուբէնն, որ եւ յետոյ էառ զՄսիս եւ զայլը»²²⁷:

Ըստ էության, 1185-ին, Ռուբենի գերությունից սկսած, Լևոնը Կիլիկիայում և՛ կառավարիչ էր, և՛ բանակի հրամանատար, թեև ևս 2 տարի (1185-1187) Կիլիկիայի իշխանապետի տիտղոսը շարունակում էր կրել նրա եղբայրը:

²²⁵ Տե՛ս **Michel le Syrien**, t. III, էջ 398:

²²⁶ Տե՛ս **Bar Hebraeus**, էջ 321:

²²⁷ **Սամուէլ Անեցի և Շարունակողներ**, էջ 226:

Ռուբեն Գ-ի իշխանության վերջին երկու տարիների վերաբերյալ աղբյուրների տեղեկություններն աղքատիկ են: Մեզ հետաքրքրող նյութի շուրջ միակ՝ քիչ թե շատ ուշադրության արժանի հաղորդումը վերաբերվում է նրա և Գրիգոր Դ Տղա (1173-1193 թթ.) կաթողիկոսի կողմից Եգիպտոս ուղարկված պատվիրակությանը: Այդ մասին տեղեկացնում է XII-XIII դդ. ղպտի հեղինակ Աբու ալ-Մաքարիմը²²⁸ գրելով. «[Այդ ժամանակ] մի եպիսկոպոս եկավ հայոց երկրից՝ երեք քահանաների ուղեկցությամբ, ովքեր ուղարկված էին հայոց թագավորի և պատրիարքի կողմից: Նա երկու ուղերձ էր բերել նրանցից, ինչպես նաև ևս երկու նամակ, որոնցից մեկը ալ-Մալիք Սալահ ալ-Դինից, մյուսը՝ ալ-Մալիք Սայֆ ալ-Դին Աբու Բաքրից՝ նրա եղբորից՝ ուղղված ալ-Մալիք Թակի ալ-Դինին: [Վերջիններս իրենց նամակներում] հորդորում էին, որ եպիսկոպոսը պետք է պատվի արժանանա, և որ հայկական երկու եկեղեցիները՝ ալ-Զուհրան և ալ-Բուսթանը, պետք նրան հանձնվեն»²²⁹:

²²⁸ Երկը երկար ժամանակ՝ 1895 թ. Բ. Իվեթթսի խմբագրությունից և անգլերեն թարգմանական հրատարակությունից (տե՛ս հաջորդ ծնթ.) ի վեր, վերագրվել է Աբու Սահլ (կամ Աբու Սալիհ Հայ) անունով մի հեղինակի: Սակայն երկի հետագա ուսումնասիրությունները և աշխարհի գրադարաններում նոր գրչագրերի հայտնաբերումն աստիճանաբար ապացուցել են, որ Աբու Սալիհը պարզապես եղել է երկի ձեռագրերից մեկի սեփականատերը: Մյուս ձեռագրերում, որոնք ավելի ամբողջական են, երկի հեղինակ է նշված *Աբու ալ-Մաքարիմ* անունով մի ղպտի: Տե՛ս **Hacken C. T.**, *The description of Antioch in Abū al-Makārim's History of the Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring countries, East and West in the medieval eastern Mediterranean. I. Antioch from the Byzantine reconquest until the end of the crusader principality*, ed. by K. Ciggaar and M. Metcalf, Leuven, 2006, 185-216, էջ 185-190 և հատկապես **Heijer J. D., Pilette P.**, *History of the Churches and the Monasteries of Egypt, Christian-Muslim relations, A Bibliographical History*, vol. 4 (1200-1350), ed. by D. Thomas and A. Malett, E.J., Brill, Leiden-Boston, 2012, էջ 983-988:

²²⁹ Տե՛ս *The Churches and Monasteries and Some Neighbouring Countries attributed to Abū Šālih The Armenian*, էջ 10 (անգլերեն թարգմանությունը) և էջ 7 (արաբերեն բնագիրը): Այս հրատարակությունից հատվածական թարգմանություն է կատարել Ղ. Ալիշանը (տե՛ս **Ալիշան Ղ.**, *Աբուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանօրէից Եգիպտոսի, Վենետիկ, 1933, էջ 30*): 1984 թ. ղպտի եպիսկոպոս

Չի բացառվում, որ սա մի փորձ էր՝ բարելավելու Եգիպտոսի հայ համայնքի վիճակը կամ նրանց համար քիչ թե շատ տանելի պայմաններ ապահովել, քանի որ Ֆաթիմյանների օրոք ակնառու դեր խաղացած Եգիպտահայերը նախորդ մեկուկես տասնամյակում մեկուսացվել էին բանակից ու պետական ապարատից և հայտնվել լուսանցքում: Ուշագրավ է, որ պատվիրակությունն իր հետ տանում էր ոչ միայն Ռուբեն Գ-ի և Գրիգոր Դ Տղայի, այլև Սալահ ալ-Դինի ու նրա եղբոր նամակները՝ ուղղված Եգիպտոսի փոխարքային: Այն հանգամանքը, որ Սալահ ալ-Դինը նման բովանդակությամբ բարեխոսական մի ուղերձ էր գրել, ցույց է տալիս, որ 1180 թ. Կիլիկիայի սահմանամերձ ամրոցի վրա հարձակումից հետո անցած հինգ-վեց տարիների ընթացքում Կիլիկյան Հայաստանի իշխանապետն ու Հայոց կաթողիկոսը կարողացել էին որոշակի կապեր հաստատել Այյուբյանների հետ, իսկ Սալահ ալ-Դինը, այլևս վտանգ չտեսնելով Եգիպտոսի հայերից, որոշել էր մեղմացնել իր վերաբերմունքը նրանց հանդեպ՝ գուցեև հաշվի առնելով նաև Ռուբինյան իշխանապետության գործոնը: Այդուամենայնիվ, պատմիչի տեղեկություններից երևում է, որ «պատվիրակության ղեկավար» Եպիսկոպոսն առանձնապես լավ ընդունելության չի արժանացել և ամիսներ շարունակ Ս. Հովհաննես Մկրտչի եկեղեցում մնալուց հետո հիվանդացել է ու վախճանվել²³⁰: Այսպիսով՝ հայկական պատվիրակության առաքելությունն անկատար է մնացել:

Մինչև 1186-1187 թթ. Սալահ ալ-Դինը վերջնականապես վերացրել էր անկախության հետքերը «մուսուլմանական» Ասորիքում՝ իրեն լիովին ենթարկելով Վերին Միջագետքի, Հալեպի

Սամուիլը պահպանված ձեռագրերի հիման վրա ձեռնարկել է երկի ամբողջական հրատարակությունը (4 հատորով): Մեզ հետաքրքրող հատվածը տե՛ս, **Abū al-Makārim**, v. II, էջ 5:

²³⁰ St' u The Churches and Monasteries and Some Neighbouring Countries attributed to Abū Šālih The Armenian, էջ 10-11 (էջ 7-8), ինչպես նաև **Ալիշան**, Աբուսաի Հայ, էջ 31 և հատկապես՝ **Abū al-Makārim**, էջ 5:

ու Մոսուլի բանակները: Այդ թվականներին արդեն Սալահ ալ-Դիհնը լիովին պատրաստ էր իր գլխավոր խնդրի կատարմանը՝ Երուսաղեմի լատին թագավորության ջախջախմանը:

Հաշվի չառնելով ուժերի իրական հարաբերակցությունը՝ Մերձավոր Արևելքի խաչակիրները հեռավոր արշավանքներ էին ձեռնարկում դեպի Սալահ ալ-Դիհնի տիրույթները: Հատկապես ռազմատենչ էր Երուսաղեմի թագավորության խոշոր ավատատերերից Ռեզինալդ (Ռեյնալդ) Շատիլյոնցին: Նա 1187 թ. հարձակվեց մի խաղաղ քարավանի վրա, որի մեջ էր Սալահ ալ-Դիհնի քույրը, ինչն էլ պատերազմի առիթ ծառայեց: Նույն թվականին Տիբերիական լճի մոտ գտնվող Հիթթին (Հաթթին) վայրում Երուսաղեմի թագավոր Գի (Գուիդոն) Լուսինյանի գլխավորած խաչակրաց բանակը պարտություն կրեց Սալահ ալ-Դիհնի զորքից: Այյուբյան սուլթանության բանակը 1187 թ. հոկտեմբերի 2-ին գրավեց Երուսաղեմը: Սալահ ալ-Դիհնը կարճ ժամանակում նվաճեց գրեթե ամբողջ Պաղեստինը: Խաչակիրները պահպանեցին միայն մի քանի ծովափնյա բերդեր (Տյուրոս, Բեյֆոր և այլն)²³¹:

Հիմնականում Տյուրոսում կենտրոնացած խաչակիրները երկու-երեք տարի կատաղի դիմադրեցին մուսուլմաններին: Հավանաբար այս ամբողջները ևս կնվաճվեին Այյուբյանների կողմից, եթե 1190 թ. Եվրոպայից տարբեր ճանապարհներով Պաղեստին չհասնեին Խաչակրաց երրորդ արշավանքի մասնակիցները, որոնք Երուսաղեմի թագավորությունը փրկեցին անխուսափելի կործանումից:

Այյուբյանների ու խաչակիրների զինաբախումների բուռն շրջանում՝ 1187 թ., Ռուբեն Գ-ի եղբայր Լևոնը դարձավ Կիլիկիա-

²³¹ Այս դեպքերի մասին մանրամասն տե՛ս **Runciman S.**, նշվ. աշխ., 450-473; **Baldwin Marshall W.**, The decline and fall of Jerusalem, A History of the Crusades, gen. ed. M. Setton, vol. 1 (The First Hundred Years), The University of Wisconsin Press, London, 1969, էջ 606-621:

յի իշխանապետ: Նրան վիճակվեց շրջադարձային դերակատարում ունենալ Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ: Նա պիտի դառնար ոչ միայն Կիլիկյան Հայաստանի, այլև հայոց պատմության խոշոր քաղաքական գործիչներից մեկը:

Երուսաղեմի նվաճմամբ Սալահ ալ-Դինը գրեթե իրականություն էր դարձրել իր վաղեմի ծրագիրը՝ խաչակիրների դուրսմղումն Արևելքից: Հատկանշական է, որ Կիլիկյան Հայաստանը կարող էր հայտնվել Այյուբյանների նվաճողական քաղաքականության թիրախում: Ռուբինյան իշխանապետությունն այդ տարիներին աստիճանաբար վերածվում էր Արևելյան Միջերկրականի ամենաուժեղ քրիստոնյա պետության, ինչն անխուսափելի էր դարձնում տարածաշրջանին տիրել ցանկացող Այյուբյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հերթական բախումը:

բ) Թուրքմենների արշավանքը և Այյուբյանների Կիլիկիա ներխուժելու երկրորդ փորձը 1187 թ.

Լևոն Բ-ի իշխանության առաջին տարում Կիլիկիայի վրա կատարվեց երկու արշավանք՝ մեկը թուրքմենական ցեղերի, մյուսը՝ Սալահ ալ-Դինի ասորիքյան մի զորաջոկատի կողմից: Սմբատ Սպարապետն առաջին արշավանքի մասին գրել է. «Ի տյն ամի (ՈԼԶ - 1187) թուրքման ոմն Ըռըստոմ անուն ժողովեաց անթիւ Թուրքման և եմուտ յաշխարհն Կիլիկեցոց և խրոխտայր բառնալ զանուն քրիստոնէից. և գնաց մինչև ի Սիս, և բանակեցաւ առաջի քաղաքին յԲաւինն, և ծածկեաց զերեսս երկրի անհամար բազմութեամբ: Եւ յայնժամ աստուածագօրն Լեւոն Լ (30) մարդով պատերազմեցաւ ընդ նմա և ընկեց յառաջագոյն զգլխատորն նոցա զԸռըստոմն. և դարձան ամենեքեան ի փախուստ,

որոց զհետ մտեալ կոտորեաց զնոսա մինչև ի քարն Սարվանդա-
փ...»²³²:

Վահրամ Րաբունին էլ պահպանել է այս դեպքերի չափա-
ծո նկարագրությունը.

«Աւուրց փոքունց՝ յառաջացեալ,
Իսմայէլի՝ ազգըն շարժեալ.
Եւ ի վերա՝ սորա եկեալ,
Այն որ Ռստոմն՝ էր անուանեալ:
Յորմէ Լէոնն՝ ոչ երկուցեալ,
Ի բազմութեանցն՝ ոչ զարհուրեալ»²³³:

Նույն իրադարձության վերաբերյալ հաղորդում է նաև Սամվել Անեցու շարունակողներից մեկը. «Յայսմ ամի զօրաժո-
ղով լեալ ազգն Իսմայիլի՝ եւ շարժեալ բազմօք զօրօք գայ յեր-
կիրն Կիլիկիոյ, որոյ զօրագլուխն Ռըստոմ կոչիւր. յորմէ Լեւոնն ոչ
զարհուրեալ ի բազմութեան զօրացն՝ գալով նա ի բերդն որսոյ,
այլ յԱստուած ապաւինեալ, եւ ի սուրբ վկայն Գէորգէոս, սակաւ
արամբք ընդդեմ ելեալ՝ եւ զբազմութիւն ի գայն յաղթահարեալ,
քարոզի թէ ի սուրբ Գէորգայ Ռըստոմն այն խոցեալ եղել եւ սա-
տակեալ, եւ ամենայն զօրքն ցրուեցան, զորոց զհետ մտեալ Լե-
ւոն սակաւ զօրօք եւ ի սպառ սպուռ սրով խողխողեաց զնոսա եւ
ջնջեաց, էառ եւ ասար բազում եւ անթիւ, որով յոյժ փարթամա-
ցեալ եղել զօրօք իւրովք»²³⁴: Նույն երկի մի այլ շարունակող
գրում է. «Եմուտ ըՌըստոմն Թուրքման ի Կիլիկէ եւ սպանաւ ի
Լեւոնէ ժՌ (10.000)-աւ»²³⁵:

Հիշյալ արշավանքի և ընդհանրապես Կիլիկյան Հայաս-
տանի ու հարևան պետությունների միջև 1187-1188 թթ. տեղի ու-
նեցած քաղաքական անցուդարձերի վերաբերյալ պատմագի-

²³² Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, 1956, էջ 200:

²³³ Վահրամ Րաբունի, էջ 213:

²³⁴ Սամուել Անեցի եւ Շարունակողներ, էջ 230:

²³⁵ Նույն տեղում:

տության մեջ ընդհանուր կարծիք չկա: Այս հարցին անդրադարձած գրեթե բոլոր ուսումնասիրողների կարծիքները տարամիտվում են, թեև նրանք օգտվել են նույն աղբյուրների տեղեկություններից:

Ինդրո առարկա արշավանքների վերաբերյալ Սմբատ Սպարապետից, Վահրամ Բաբունուց ու Սամվել Անեցու շարունակողներից զատ, տեղեկացնում են նաև Միքայել Ասորին և նրա երկի՝ հայերեն խմբագրություններից մեկի հեղինակը, Անանուն Եղեսացին, ինչպես նաև Բար Հեբրեոսը:

Անդրադառնալով Ռոստոմի վերոհիշյալ արշավանքին՝ Ղևոնդ Ալիշանը ենթադրել է, որ դրա ղեկավարը ինքնագլուխ և բախտախնդիր մեկն էր կամ Իկոնիայի սուլթանի զորապետերից/որդիներից²³⁶:

Գրիգոր Միքայելյանը, հիմք ընդունելով Միքայել Ասորու համապատասխան վկայությունը²³⁷, Ռոստոմի արշավանքը կապում է քրդերի ու թուրքմենների միջև Կիլիկիայի և Ասորիքի սահմանային արոտավայրերի համար տեղի ունեցած ընդհարումների հետ²³⁸:

Ուսումնասիրողներից Ստեփան Պապիկյանի կարծիքով «Բարեբախտաբար Սալահադդին՝ անձամբ չէր կարող արշավել հոն (իմա՝ Կիլիկիա) իր ասորական զորքին անկարգութեանց պատճառով եւ միայն Ռուստամ անուն էմիր մը կը ղրկէր»²³⁹: Այդուհանդերձ, աղբյուրների տեղեկություններով չի հաստատվում այն տեսակետը, թե Ռոստոմը եղել է Սալահ ալ-Դինի ամիրներից: Որպես եզրահանգման հիմք՝ նա նշում է միայն Սմբատի

²³⁶ Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան, էջ 442:

²³⁷ Տե՛ս Michel le Syrien, t. III, էջ 400-401:

²³⁸ Микаелян Г.Г., նշվ. աշխ., էջ 141-142:

²³⁹ Պապիկյան Ս., Հայերը եւ խաչակիրները, «Հանդես ամսօրեայ», 1965, հուլիս-սեպտեմբեր, թիւ 7-9, սյունակ 375:

«Տարեգիրքը», որտեղ, ինչպես արդեն տեսանք, ոչ մի ակնարկ չկա Սալահ ալ-Դինի և Ռոստոմի միջև եղած կապի մասին:

Պատմիչների բնութագրումները՝ «Թուրքման ոմն Ըսրոտոմ»²⁴⁰, «ազգն Իսմայիլի...որոյ զօրագլուխն Ռըստոմ»²⁴¹, «մի թուրքմեն հովիվ Ռոստոմ անունով»²⁴², Ռոստոմին Սալահ ալ-Դինի ամիրներից մեկը համարելու հիմք չեն տալիս, թեև ակներև է, որ հիշյալ թուրքմենները վաչկատուն ցեղերին հատուկ զանգվածային գաղթերի ու տեղափոխումների ժամանակ (որի ընթացքում նրանք տարածվում էին Հայաստանի հարավում, Վերին Միջագետքում, Ասորիքում, Փոքր Ասիայի հարավարևելյան շրջաններում) կանգ էին առնում և այն տարածքներում, որոնք Սալահ ալ-Դինի պետության մաս էին կազմում:

Վերոգրյալի հաշվառմամբ, թերևս, ճիշտ է Գրիգոր Միքայելյանը Ռոստոմի արշավանքը թուրքմենների և քրդերի միջև տեղի ունեցած ընդհարումների հետ կապելիս²⁴³: Միքայել Ասորու հաղորդմամբ՝ թուրքմենները, Մոսուլի և Մծբինի կողմերում երկու անգամ ջախջախելով քրդական ցեղերին, այնուհետև սկսեցին հետապնդել պարտված թշնամուն և ներխուժեցին Կիլիկիայի լեռնային շրջաններ²⁴⁴: Անանուն Եդեսացին էլ գրում է,

²⁴⁰ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 200:

²⁴¹ **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, էջ 230:

²⁴² **Bar Hebraeus**, էջ 328:

²⁴³ Տե՛ս **Микаелян Г.Г.**, նշվ. աշխ., էջ 141-142:

²⁴⁴ Տե՛ս **Michel le Syrien**, t. III, էջ 401: Թուրքմեն-քրդական արյունալի բախումների մասին հարևանցի հիշատակում է նաև Բահա ալ-Դին Իբն Շարդադը: Տե՛ս **Ibn Šaddād**, Kitāb al-Nawādir, էջ 120: Իբն ալ-Ասիրն այս բախումները բացատրում է մի պարզ գրույցով, թե իբր պատճառն այն էր, որ մի թուրքմենական ամուսնական զույգ ճամփորդելիս իջևանել է քրդական Ջավգան բերդում, որի բնակիչները պահանջել են հարսանեկան խնջույք կազմակերպել: Վերջիններս մերժել են. վեճը կոիվ է դարձել, ինչի արդյունքում բերդատերը սպանել է փեսային: Այս բանից հետո թուրքմեն-քրդական բախումներ են սկսվել սկզբում Մոսուլում և Ջազիրայում, ապա համատարած բնույթ են ստացել՝ մեծ արյունահեղության պատճառ դառնալով: Տե՛ս **Ibn al-Aṭir, Al-Kāmil fi-t-tārīḥ**, v. X, էջ 136:

որ. «Թուրքմենները, ավելի ու ավելի հանդուգն դառնալով, սկսեցին կոտորել ոչ միայն իրենց թշնամի քրդերին, այլ նաև ճանապարհին պատահող ցանկացած մարդու»²⁴⁵:

Որ Ռոստոմը որևէ պետություն չէր ներկայացնում և արշավանքն էլ ուղղված չէր հատկապես Կիլիկյան Հայաստանի դեմ, երևում է Բար Հեբրեոսի հետևյալ հաղորդումից, որը մեջբերում ենք ամբողջությամբ. «Այդ տարին մի թուրքմեն հովիվ Ռոստոմ անունով հավաքեց 5000 հեծյալ թուրքմեն և շատ մեծ թվով հետևակ ու դիմեց դեպի Կիլիկիա՝ կողոպտելու և ավարառելու երկիրը: Ապա, երբ Լևոնը՝ Կիլիկիայի կառավարիչը, իմացավ այդ մասին, նա փակեց նրանց առջև բոլոր լեռնանցքները Մարաշի շրջանում և նրանց բոլորին սրի քաշեց: Եվ կրկին 5000 թուրքմեն հետևակ հավաքվեց Հալեպի շրջանում ու նրանք դիմեցին դեպի Անտիոքի երկիր՝ կողոպտելու այն: Եվ Բոհեմունդ իշխանը դուրս եկավ ընդառաջ և նույն ձևով սրի քաշեց սրանց»²⁴⁶:

Ռոստոմի մասին հիշատակություն կա նաև «Թագավորների պատմությունը և ներբողյանը» վրացական աղբյուրում: Ըստ այդ հաղորդման՝ Թամար թագուհու զորքերը մի անգամ Գելաքունիում (Գեղարքունիք) զինված բախում են ունեցել «ստորիքյան արքայազներ Ռոստոմի և Յալգուզ Ալֆեզի» գլխավորած թուրքմենական հրոսակների հետ և փախուստի մատնել նրանց: Ըստ այս աղբյուրի՝ վերոհիշյալ երկու թուրքմեն առաջնորդները ծառայության մեջ էին «աթաբեկ Կիզիլ Արսլանի» մոտ²⁴⁷: Այստեղ, ամենայն հավանականությամբ, նկատի է առնված Ատրպատականի Ելտկուզյան աթաբեկ Կըզըլ Արսլանը (1186-1191):

Ըստ էության, հենց այս Ռոստոմի գլխավորած թուրքմեններին նկատի ունի նաև Կլոդ Կաենը՝ գրելով, որ Դիար Բաքրի (Վերին Միջագետք) հարավային շրջաններում ապրող թուրքմե-

²⁴⁵ Անանուն Եղեսացի, էջ 151:

²⁴⁶ Bar Hebraeus, էջ 328:

²⁴⁷ Картелис Цховреба (История Грузии), էջ 260:

նական ցեղերի՝ 1185-1190 թթ. գաղթը դեպի Փոքր Ասիայի արևելյան ու կենտրոնական շրջաններ գլխավորել է *Ռուսպենը*²⁴⁸:

Դժվար չէ նկատել, որ այս գաղթը թե՛ ժամանակային և թե՛ տարածքային ընդգրկումով լիովին համընկնում է Սմբատ Սպարապետի, Սամվել Անեցու Շարունակողի ու Բար Հեբրեոսի հիշատակած 1187 թ. արշավանքին:

Ռոստոմի և Լևոն Բ-ի զորքի թվաքանակի վերաբերյալ ևս սկզբնաղբյուրների տեղեկությունները տարամիտվում են: Թուրքմենների զորքի քանակը, Բար Հեբրեոսի հաղորդմամբ, եղել է 5000, իսկ ըստ Սամվել Անեցու Շարունակողի՝ 10.000: Վերջինս, առանց որոշակի թիվ նշելու, գրում է, որ Լևոն Բ-ը կռվել է «սակաւ զօրօք», իսկ Սմբատ Սպարապետի տեղեկությամբ՝ 30 զինվորով: Եթե նույնիսկ ուժերի քանակական հարաբերակցությունը չափազանցված է, ակնհայտ է, որ Լևոն Բ-ի հրամանատարությամբ հայերը փոքրաթիվ զինվորներով փայլուն հաղթանակ են տարել իրենց բազմակի գերազանցող ուժերի նկատմամբ:

Առանց սկզբնաղբյուր վկայակոչելու Գրիգոր Միքայելյանը նշում է Սալահ ալ-Դինի զորաջոկատներից մեկի Կիլիկյան Հայաստան ներխուժելու մասին. «1188 թվականին Սալահ ալ-Դինի զորքերից մի մեծ զորաջոկատ ներխուժեց Անտիոքի իշխանության սահմանները, իսկ այնտեղից էլ Ամանոսյան լեռների մի լեռնանցքից մուտք գործեց Կիլիկիա: Այստեղ, ինչպես հաղորդում են հայ և արաբական աղբյուրները, Սալահ ալ-Դինի զորքը ջախ-

²⁴⁸ Տե՛ս **Cahen Cl.**, *La Turquie pré-ottomane*, Istanbul-Paris, 1988, էջ 55-56: Ըստ Կլոդ Կահենի՝ թուրքմեն ասպատակողներին ջախջախելով ու հետապնդելով Լևոն Բ-ը ներխուժել է նաև Իկոնիայի սուլթանության տարածք, յուրատեսակ ձևով պատժելու համար Կըլըջ Արսլանին, որն ըստ երևույթին ինչ-որ դեր էր խաղացել Ռոստոմի տարածաշրջանում հայտնվելու գործում: Տե՛ս **Cahen Cl.**, *La Syrie du Nord*, էջ 426:

ջախվեց հայերի կողմից՝ Լևոնի գլխավորությամբ»²⁴⁹, - գրում է հետազոտողը:

Գրիգոր Միքայելյանը միանգամայն իրավացի է, երբ, ի տարբերություն այլ հետազոտողների, առանձնացնում է Ռոստոմի արշավանքն ու Սալահ ալ-Դինի զորաջոկատի ներխուժումը: Այս արշավանքի իրողությունը շատ հավանական է, քանի որ հենց նույն՝ 1187/1188 թվականին էր, երբ Տրիպոլիսի կոմսությունն ու Անտիոքի իշխանապետությունը ենթարկվեցին Սալահ ալ-Դինին²⁵⁰: Իրողությունն այն է, որ այս երկու արշավանքների միջև ընկած ժամանակահատվածում Մերձավոր Արևելքում կատարվել էին շրջադարձային փոփոխություններ՝ որպիսիք էին Հիթթինի՝ 1187 թ. հուլիսի ճակատամարտը և Երուսաղեմի խաչակրաց թագավորության տիրույթների մեծ մասի նվաճումն Այյուբյանների կողմից:

Սալահ ալ-Դինը 1187-1188 թթ. գրեթե ամբողջությամբ նվաճել էր Անտիոքի իշխանապետությունը, բացի գլխավոր քաղաքից, որը պաշարված վիճակում էր: Ահա այս իրավիճակում Բոհեմունդ III-ը ստիպված էր հաշտություն խնդրել՝ պահպանելով իշխանությունը խիստ կրճատված տարածքով²⁵¹: Ամեն դեպքում, Սալահ ալ-Դինը մշտապես մի հսկիչ զորագունդ էր պահում Անտիոք քաղաքի մատույցներում: Այս վերջին հանգամանքը, անշուշտ, կարող էր նպաստել Անտիոքի տարածքով Այյուբյանների զորաջոկատների ազատ տեղաշարժին: Չի բացառվում, որ Կիլիկիայի վրա հարձակվել է հենց այդ հսկիչ զորագունդը:

²⁴⁹ **Микаелян Г.**, նշվ. աշխ., էջ 141-143:

²⁵⁰ **Lane-Poole S.**, *History of Egypt in the Middle Ages*, էջ 208:

²⁵¹ Ըստ էության՝ Անտիոքի իշխանապետությունն իր գոյությունը մի կերպ պահելով հանդերձ վերածվել էր Սալահ ալ-Դինին ստորակա երկրի: Դրա ապացույցն էր նաև այն, որ 1192 թ., արդեն ընդհանուր հաշտության ստորագրումից հետո, Բոհեմունդ III-ը ներկայացավ Սալահ ալ-Դինին՝ նրան հավաստելով իր հավատարմությունը ու դրա դիմաց իր իսկ նախկին հողերից եկամուտներ ստանալու իրավունք ձեռք բերեց: Տե՛ս **Cahen Cl.**, *La Syrie du Nord*, էջ 432-433:

Թերևս, այս արշավանքի մասին է ակնարկում և Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը՝ գրելով. «Այնուհետև սուլթանը (Սալահ ալ-Դինը) որոշեց ևս մեկ անգամ ուղղվել դեպի Քարաք²⁵² և դուրս եկավ Դամասկոսից 583 թվականի Մուհարրամ ամսի կեսերին (1187 թվականի մարտի վերջ – Վ. Տ.-Ղ.) և ընթացավ Հալեպի վրա, որ զորահավաք կատարի, սակայն այդ զորքը ուշացավ, որովհետև զբաղված էր ֆրանկների²⁵³ դեմ կռվելով՝ Անտիոքի հողում և Իբն Լևոնի երկրում»²⁵⁴: Հիջրայի 584 թ. (1188/1189 թ.) տակ Աբու ալ-Շամա պատմիչը, ամփոփելով Սալահ ալ-Դինի նվաճումները, գրում է. «Գրավեց նաև Անտիոքի ամբողջ տարածքը՝ ֆրանկներին և հայերին պատկանող նրա բերդերը, և նրա սահմանը ձգվում էր Ջաբալայի և ալ-Լազիկիյայի (Լաթաքիա) երկրներից ընդհուպ մինչև Իբն Լավոնի երկիր, և մնաց սոսկ Անտիոքը, իսկ բերդերից ալ-Կուսայրը...»²⁵⁵: Հիշյալ երկու պատմիչների նշած տարբերվերը տարբերվում են, սակայն Այյուբյան զորաջոկատի Անտիոքի իշխանապետության հետ միաժամանակ Կիլիկյան Հայաստան ներխուժելու վերաբերյալ նրանց հաղորդումները համահունչ են:

Մեծ է հավանականությունը, որ հենց այս արշավանքն է ակնարկում Սամվել Անեցու «Ժամանակագրության» շարունակողներից մեկը, որի հաղորդումը, թեև, զերծ չէ չափազանցություններից, բայց մեծ կարևորություն ունի, քանի որ եզակի է հայ պատմագրության մեջ: Անդրադառնալով Սալահ ալ-Դինի նվա-

²⁵² Քաղաքը գտնվում է Հարավային Ասորիքում:

²⁵³ Հավանաբար, քրիստոնյաներ իմաստով:

²⁵⁴ **Ibn al-Adīm, Zubdat**, v. III, էջ 91: Անն-Մարի Էդդեն անդրադառնալով Լևոն Բ-ի իշխանության առաջին տարիներին գրում է «անկասկած ֆրանկ-կիլիկյան միությունը վտանգ էր ներկայացնում Հյուսիսային Ասորիքի տարածքների համար այն աստիճան, որ Սալահ ալ-Դինը դիմեց Համայի ամիր ալ-Մուզաֆ-ֆարին, որպեսզի Հալեպի բանակն առաջնորդի դեպի Հարիմ, որպեսզի հետևի ֆրանկոհայկական ուժերի տեղաշարժերին և ապահովի հյուսիսային սահմանների պաշտպանությունը» (տե՛ս **Eddé A.-M., Saladin**, էջ 428):

²⁵⁵ **Abu Shama**, *Kitāb al-Rawdatayn*, v. 4, էջ 34:

ճումներին՝ աղբյուրը հաղորդում է. «Եւ եկեալ յԱնտիոք եւ պաշարեաց զնա եւ առեալ հարկս միոյ ամաց եւ անդի առաքեաց զամենայն զաւրութիւնս իւր երկիրն Տարսոնացոց, ի վերայ թագաւորին Լեւոնի, եղբար Ռութենի, եղբորորդոյ Թորոսի մեծին իշխանին Հայոց, որդոյ Ստեփանեա, որոյ զոյս եղեալ առ Աստուած եւ ապաւինեալ յաղաթս սրբոց կրանաւորացն, որք էին ընդ իւրով իշխանութեամբ եւ յարուցեալ ի վերայ նոցա, զամենեսեան առաթուր արարեալ յերկիր կործանէր զգաւս նոցա, անթիւ լեալ կորուսեալքն, որպէս թէ ԶՌ (80000)-աց, զի կրանաւորքն ուրախութեամբ մտեալ ի մէջ պատերազմին, որպէս յաւուրս սրբոց Վարդանանցն երանելի քահանայքն»²⁵⁶:

Ամփոփելով վերոբերյալը՝ հարկ է արձանագրել, որ հակառակ Գ. Միքայելյանի կարծիքի՝ 1188 թ. Կիլիկյան Հայաստանի դեմ ուղղված Այյուբյան արշավանքի գոյության փաստը հստակ կերպով հավաստող անմիջական վկայություններ արաբական պատմական աղբյուրներում չկան: Իսկ վերը հիշված սկզբնաղբյուրային տեղեկությունները սոսկ անուղղակիորեն են վկայում, որ Անտիոքը ենթարկեցնելուց անմիջապես հետո Սալահ ալ-Դինի զորաջոկատներից մեկը սուլթանի հրամանով արշավել է Կիլիկյան Հայաստան: Հարկավ, հայերի կողմից Այյուբյանների 80 հազար զինվոր ոչնչացնելու վերաբերյալ Անեցու Շարունակողի տեղեկությունը ակնհայտ չափազանցություն է, սակայն այդ հաղորդումից մեկ բան հստակ է. կիլիկեցիները Լևոն Բ իշխանապետի զլխավորությամբ հակահարված են տվել Այյուբյանների զինված ուժերին և դուրս մղել Կիլիկիայից:

Միաժամանակ, ենթադրելի է, որ 1187 թ. իրադարձություններում դիմակայող ուժերի թվաքանակի մեծ տարբերության, ինչպես նաև զուտ ռազմական հաղթանակի առումով առավել տպավորիչ է եղել Ռուստոմի դեմ Լևոնի հաղթանակը, քան Այ-

²⁵⁶ Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ, էջ 229:

յությանների զորաջոկատի հետ մղումը: Այս փաստը ենթադրել է տալիս, որ ի տարբերություն Ռոստոմի բանակի (5000-10.000-ի միջակայքում), Այյուբյանների զինուժը պետք է ավելի փոքրաթիվ լիներ: Գուցե հենց դրանով պետք է բացատրել այդ ճակատամարտի վերաբերյալ հիշատակությունների սակավությունը: Դիտելի է, որ երբ 1193 թ. Լևոն Բ-ը Սալահ ալ-Դինի սպառնալից նամակին հակադարձեց նույնպիսի սպառնալից պատասխանով²⁵⁷, դրանում հիշատակեց իր՝ 1187-ի հաղթանակը ոչ թե Այյուբյանների զորաջոկատի, այլ նրանց հավատակից Ռոստոմի հանդեպ:

գ) Կիլիկիան Ֆրիդրիխ Շիկամորուսի և Սալահ ալ-Դինի հակամարտության կիզակետում

Երուսաղեմի անկման լուրը ծանր տպավորություն թողեց Եվրոպայում՝ ծառայելով Խաչակրաց երրորդ արշավանքի (1189-1192) առիթ: Արշավանքը ղեկավարում էին եվրոպական երեք միապետեր՝ Հռոմեական սրբազան կայսրության տիրակալ Ֆրիդրիխ I Շիկամորուսը (1155-1190), Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ II Օգոստոսը (1180-1223) և Անգլիայի թագավոր Ռիչարդ I Առյուծասիրտը (1189-1199):

Անգլիայի և Ֆրանսիայի թագավորների հրամանատարության տակ գտնվող բանակները նավերով հասան Պաղեստին և պաշարեցին Ակրան, իսկ Ֆրիդրիխ Շիկամորուսի մեծաթիվ զորքը դեպի նույն նշանակետ շարժվեց ցամաքային ճանապարհով: Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ կայսեր՝ զգալի կորուստներ կրած բանակը հասավ Սելջուկյան սուլթանության մայրաքաղաք Իկոնիա²⁵⁸:

²⁵⁷ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 204:

²⁵⁸ Արշավանքի ընթացքի և արդյունքների մասին մանրամասն տե՛ս **Painter S.**, The Third Crusade: Richard the Lionhearted and Philip Augustus, A History of the

Խաչակրաց արշավանքները պատմագիտության մեջ արժանացել են ամենատարբեր, հաճախ նաև իրարամերժ գնահատականների: Նույնը վերաբերում է խաչակիրներ-մուսուլմաններ մեծ հակամարտությանը: Իր հերթին, այդ ամենն անդրադարձ է ունեցել Կիլիկյան Հայաստանի պատմության որոշ դրվագներին տրված գնահատականներում:

Հատկապես հակասական են Խաչակրաց երրորդ արշավանքին և դրա հանդեպ Կիլիկիայի վերնախավի դիրքորոշմանը վերաբերող տեսակետները:

Այն պահին, երբ Ֆրիդրիխ Շիկամորուսի բանակը մոտեցավ Կիլիկիայի մատույցներին, Ռուբինյան իշխանապետությունը պատրաստ էր հռչակվելու թագավորություն: Այդ իրադարձությունը Ռուբինյաններին հնարավորություն կտար ոչ միայն օրինականացնելու տիրապետությունն արդեն փաստացի իրենց ենթակա տիրոջներում, այլև դուրս գալու Կիլիկիայի սահմաններից, իսկ հետագայում, գուցե նաև, իշխելու Մեծ Հայքում, քանի որ «Թագաւոր Ամենայն Հայոց» (և ոչ թե «Թագաւոր Կիլիկիոյ») տիտղոսը նրանց տալու էր այդ իրավունքը: Ուստի՝ կիլիկյան իշխանություններն ակնկալում էին որևէ մեծ տերության կողմից թագ ստանալ՝ ճանաչվել իբրև անկախ թագավորություն:

Սալահ ալ-Դինի նվաճումների հետևանքով Մերձավոր Արևելքի խաչակրաց պետությունները դադարել էին ռազմաքաղաքական զորեղ գործոն լինելուց, մինչդեռ Այյուբյանների հարվածներից հնարավորինս զերծ մնացած Ռուբինյան իշխանապետությունն ունակ էր ստանձնելու խաչակրության հենակետի՝ խիստ կարևոր դերը: Այս ամենը քաջ գիտակցում էին ինչպես Հռոմի պապական կուրիայում, այնպես էլ Ֆրիդրիխ I Շիկամո-

Crusades, vol II (The Later Crusades, 1189-1311), University of Wisconsin Press, 1969, էջ 45-85 և **Johnson E. N.**, The Crusades of Frederick Barbarossa and Henry VI, in: A History of the Crusades, London, Madison, 2005, էջ 87-122, ինչպես նաև **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 3-75:

րուսի արքունիքում: Վերջիններս 1180-ական թթ. վերջին ակտիվ նամակագրություն հաստատեցին Լևոն Բ-ի և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի հետ՝ ամեն կերպ ձգտելով Կիլիկիայի հայկական իշխանապետությանը մասնակից դարձնել հերթական խաչակրությանը: Դիտելի է, որ հայ-լատին եկեղեցական հարաբերությունները նկատելիորեն ակտիվացել էին դեռևս 1180-ական թվականների կեսերին, ինչի հավաստումը Գրիգոր Դ Տղայի՝ Ղուկիոս III պապին (1181-1185) հասցեագրած 1184 թվակիր նամակն է: Այդ ժամանակ արդեն նշմարելի էր Հայոց եկեղեցու արտաքին նախապատվությունների առանցքի տեղաշարժը Բյուզանդիայի քաղկեդոնիկ եկեղեցուց դեպի Հռոմ²⁵⁹: Նաև վերոբերյալ նամակը հիմք ընդունելով՝ համարվել է, որ եկեղեցական միության շուրջ հայ-բյուզանդական հարաբերությունները 1180-ական թթ. կեսերին արդեն դադարել էին: Չժխտելով վերջիններիս նվազման հանգամանքը՝ իրավացիորեն ցույց է տրվել, որ հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները ոչ միայն չեն դադարել, այլև արձանագրել են ուշագրավ արդյունքներ: Իհարկե, Միրիոկեֆալոնի՝ 1176 թ. ճակատամարտում Իկոնիայի սելջուկյան սուլթանությունից Բյուզանդական կայսրության կրած պարտությունը մեծապես կանխորոշեց հայ-բյուզանդական եկեղեցական ընթացիկ բանակցությունների վերջնարդյունքը, որն արձանագրվեց Հռոմկլայի՝ 1178 թ. եկեղեցական ժողովում: Նաև քաղաքական շահավետության տեսանկյունից Կիլիկիայի հայկական իշխանապետության համար Կայսրության կարևորությունը զգալի նվազել էր, սակայն չէր դադարել²⁶⁰: Ուստի՝ թագավորության հռչակման ձգտող Ռուբինյան իշխանապետության

²⁵⁹ Տե՛ս **Ջեփյան Պ. Լ.**, 14-րդ դարի կրոնական վեճերը: Նախաքայլեր Հայոց եկեղեցու հետագա բաժանումների և եկեղեցաբանական կարգավիճակի, «Էջմիածին», 2000, թիվ Ա, էջ 106:

²⁶⁰ Տե՛ս **Բարթիկյան Հ.**, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Երևան, 2002, էջ 642-652:

համար որպես բյուզանդապատկան նախկին նահանգ պակաս կարևոր չէր կայսեր կողմից ճանաչվելը:

Ամեն պարագայում, հայ-բյուզանդական և հայ-լատին հարաբերություններում վերոհիշյալ փոփոխությունները տեղի ունեցան Գրիգոր Դ Տղայի քսանամյա (1173-1193) գահակալության շրջանում:

Վարդան պատմիչի վկայությամբ՝ «Առաքել և Նոյն պատրիարքն եպիսկոպոս մի Գրիգոր անուն ի Պապն Հռոմայ վասն վտանգին, որ ի Յունաց կրէին Հայք...»²⁶¹: Նոյն տարում հասնում է Պապի պատասխանը: Իսկ արդեն 1189-ին Կղեմես III-ն (1187-1191) էր նախաձեռնողը նամակագրությունը վերականգնելու Հայոց կաթողիկոսի հետ, որի նպատակը, անշուշտ, արդեն սկսված արշավանքի ժամանակ հայերի կողմից խաչակիրներին ցուցաբերվելիք աջակցության ապահովումն էր: Ընդ որում, հայերին Պապը ճանաչում էր որպես «ի հաւատ կաթողիկէ հաստատեալ», թեև հայերն այդ ուղղութեամբ անցած հինգ տարիների ընթացքում որևէ քայլ չէին արել: Նոյն բովանդակությամբ մի նամակ էլ Պապն ուղարկում է Լևոն Բ-ին: Սրանց ի պատասխան կաթողիկոսն ու իշխանապետն ուղարկում են իրենց գրությունները, որոնք, ամենայն հավանականությամբ, դրական բովանդակություն ունեին:

Ահա այս ամբողջ նախապատմությունն արդեն առկա էր, երբ Ֆրիդրիխ Շիկամորուսն իր բանակով հասավ Կիլիկիայի սահմաններին, և հայոց հոգևոր ու աշխարհիկ պետերը պետք է արագ ճշտեին իրենց դիրքորոշումը խաչակիրների նկատմամբ:

Յամաքային ճանապարհով Երուսաղեմ շտապող Ֆրիդրիխ Շիկամորուսը, որը պետք է անցներ Կիլիկիայով, Իկոնիայից նամակներ է ուղարկում Լևոն Բ-ին և Գրիգոր Դ Տղային: Տեսնենք, թե ինչ է ասում Վարդան Արևելցին. «Եւ երիցս անգամ

²⁶¹ Վարդան վարդապետ, էջ 134:

դեսպան յղեաց առ Լեւոն եւ ոչ հասաւ առ նա. և իբրեւ ել ի Կօնն՝ եհաս գիր ի պատրիարքէն Գրիգորոյ, եթէ եկաք մեք մինչև ի Սիս քաղաք, և մնամք քեզ աստ»²⁶²:

Այս հաղորդումը նախ ցույց է տալիս, որ կաթողիկոսը, ըստ երևույթին, Լևոն իշխանապետի հրավերով, Հռոմկալից շտապել է Սիս մայրաքաղաք՝ հետագա քայլերի մասին խորհրդակցելու: Նաև խիստ հատկանշական է, որ կայսեր՝ երիցս ուղարկած դեսպաններն այդպես էլ չեն հասել (կամ չեն կարողացել հանդիպել) Լևոնին: Այդ իրողությունը փաստում է, որ իշխանապետը սկզբում խուսափել է անձնական հանդիպումից: Չի բացառվում նաև, որ Սիս ժամանած կաթողիկոսը հենց Լևոնի առաջարկով է պատասխանել կայսեր նամակին՝ մեղմելու վերջինիս հնարավոր զայրոյթը կամ վրեժխնդրությունը:

Վարդան վարդապետը հաջորդիվ նշում է, որ կաթողիկոսի նամակը մեծ խանդավառությամբ է ընդունվել կայսեր կողմից. «Եւ թագաւորն ժողովեալ զամենայն մեծամեծս իւր՝ ետ կարդալ, և ի խնդութենէն լացին»²⁶³: Պատասխան նամակում կայսրը հայտնում էր, որ կամենում էր Հայոց կաթողիկոսին հանձնել իր մոտ գտնվող արքայական թագը, որով հայրապետը կարող էր օժել իր նախընտրած թեկնածուին. «Ահա ունիմ թագ ու զգեստ, զի օճցես թագաւոր Հայոց զով որ ընտրես»²⁶⁴: Պարզ էր, որ թագը նախատեսված էր Լևոն Բ-ի համար:

Ակնհայտ է նաև, որ նախկինում Եվրոպա ուղարկված նամակներում (Կղեմես III-ին ուղարկված պատասխաններ) կաթողիկոսը կամ իշխանապետը (կամ երկուսն էլ) արձարծել են Կիլիկիայի անկախության ճանաչման ու Լևոնի թագադրման հարցը: Ֆրիդրիխի նամակը տպավորություն է ստեղծում, թե թագն ու զգեստը նա պատրաստ բերում էր իր հետ հատուկ Լևոնի հա-

²⁶² Նույն տեղում, էջ 136:

²⁶³ Նույն տեղում:

²⁶⁴ Նույն տեղում:

մար, մինչդեռ այդ քայլը, ըստ երևույթին, հայերին սիրաշահելու հնարք էր՝ հաշվի առնելով խաչակիրների ոչ նախանձելի վիճակն ու հայ իշխանապետի զգուշավորությունը, որը, անկասկած, արդեն նկատվել էր կայսեր կողմից: Դրա ապացույցն է այն, որ երբ Ֆրիդրիխն անսպասելիորեն խեղդվեց Սելևկիա գետում, ու նրան փոխարինեց որդին, վերջինս խուսափեց Լևոնին թագադրել, ինչը վկայում է, որ Ֆրիդրիխի ակնարկը նամակի մեջ վերջին պահին հղացած մի գաղափար էր, և, թերևս, ոչ մի պատրաստի թագ ու զգեստ էլ չկար: Կայսերորդու՝ Լևոնին թագադրելուց հրաժարվելը Միքայել Չամչյանը փորձում է բացատրել նրա՝ սգավոր լինելով կամ խաչակիրների շտապողականությամբ. «Եւ ի նոյն ատուրս ի լինել խօսակցութեան ընդ կաթողիկոսն և ընդ լատինս՝ թէպէտ և յօժարեցաւ որդի կայսերն խորհրդակցութեամբ իշխանաց և եպիսկոպոսաց իւրոց կատարել զխոստումն հօր իւրոյ՝ թագ կապել Լեւոնի և կարգել զնա հանդիսի արքայ Հայոց, բայց ոչ յաջողեցաւ ի սակս սգոյն՝ զոր ունէին, մանաւանդ զի փութային գնալ ի գործն՝ յոր եկեալ էին»²⁶⁵:

Ի վերջո, Ֆրիդրիխի և նրա որդու տարբեր մոտեցումները կարող էին ունենալ նաև մի շատ պարզ բացատրություն: Առաջինի դեպքում խաչակիրները դեռ Կիլիկիա չէին մտել, չգիտեին՝ ինչ վերաբերմունքի կարժանանան, բանակը հոգնած էր, քաղցած, չկար անասնակեր, զինվորները ստիպված էին մորթել հազարավոր ձիեր ու սնվել դրանց մսով, մինչդեռ կայսեր որդու դեպքում նրանք արդեն անցել էին Իսապրիան ու Կիլիկիայի մեծ մասը, Լևոն Բ-ը նրանց ապաստան էր տվել, ապահովել պարենով ու անասնակերով²⁶⁶: Ահա թե ինչու հայ իշխանապետի թագադրումը խաչակիրների համար կորցրել էր իր հրատապությունը, այլապես Լևոն Բ-ը թագավոր կհռչակվեր հենց 1190 թ.:

²⁶⁵ **Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 158:

²⁶⁶ **Իրն ալ-Ասիր**, էջ 275:

Ինչ վերաբերում է Ֆրիդրիխ կայսեր վախճանին, ապա պատմիչների հաղորդումների միջև մեծ չեն տարբերությունները. մի դեպքում արձանագրվել է, որ նա խեղդամահ է եղել, իսկ մյուսում՝ լողացել է գետի սառնորակ ջրում, հիվանդացել ու մի քանի օր անց մահացել²⁶⁷: Չնայած ոչ մեծ տարբերություններին, էությունը նույնն է՝ Ֆրիդրիխը խեղդվեց կամ մեռավ Սելևկիա գետում կամ նրա ափին: Այս գետը Իսավրիայի և Կիլիկիայի կամ Սելջուկյան սուլթանության և Հայոց Ռուբինյան իշխանապետության սահմանն էր:

Ֆրիդրիխի փոխարեն բանակի գլուխ կանգնեց նրա որդին՝ Ֆրիդրիխ Կրտսերը, որը Մամեստիայի և Տարսոնի վրայով անցավ Անտիոք, որտեղ էլ թաղեցին Շիկամորուսին: Ապա գերմանացի խաչակիրները, շարունակելով իրենց ուղին, միացան Ակրան պաշարածներին, թեև Անտիոքի խաչակիրները դեմ էին, որ նրանք մեկնեն քաղաքից: Ընդ որում, նրանց քանակը խիստ նվազել էր՝ կազմելով ընդամենը մի քանի հազար մարդ²⁶⁸: Ակրայում մեռավ նաև Ֆրիդրիխ Կրտսերը:

Այս բոլոր անցքերի նկարագրության մեջ այլալեզու պատմիչների հաղորդումները հիմնականում նույնն են կամ լրացնում են միմյանց: Հիմնական վիճելի հարցը, որի շուրջ վերջին՝ ավելի քան 200 տարում ուսումնասիրողները տարամիտվում են Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի՝ Սալահ ալ-Դին Այյուբիին հղած 1190 թվակիր նամակն է (կամ նամակները): Այդ մասին հիշատակում են միայն արաբ պատմիչները, որոնց թվում առանձնանում է XII-XIII դդ. նշանավոր դատավոր Բահա ալ-Դին Իբն Շադդադին իր «Սալահ ալ-Դին Այյուբիի կենսագրությունը» գրքի մանրամասն տեղեկություններով²⁶⁹:

²⁶⁷ Վարդան վարդապետ, էջ 179, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 275, Իբն ալ-Ասիր, էջ 275:

²⁶⁸ Eddé A.-M., Saladin, էջ 43:

²⁶⁹ St'ū Ibn Šaddād, Kitāb al-Nawādir, էջ 182-186:

Կաթողիկոսի նամակում, որն առկա է սույն երկում, նկարագրվում է Ֆրիդրիխ Շիկամորուսի բանակի առաջխաղացումը մինչև Կիլիկիա, նրանց բախումները բյուզանդացիների, թուրքմենների և Իկոնիայի սելջուկների հետ: Գրիգոր Տղան ամեն կերպ աշխատում է իրեն ու Լևոն Բ-ին ներկայացնել որպես Սալահ ալ-Դինի բարեկամ և դաշնակից: Կաթողիկոսը գրում է, որ երբ Կիլիկիայում ստանում են Ֆրիդրիխի նամակը, նրա մոտ են ուղարկում ոմն Հաթիմի (երևի Հեթում)²⁷⁰՝ այլ բարձրաստիճան անձանց ուղեկցությամբ: Նրանք իրենց հետ տանում էին հայերի պատասխան նամակը, որով «ալմանների» (գերմանացիների) թագավորին խորհուրդ էր տրվում հետ դառնալ Կըլըչ Արսլանի երկիր²⁷⁰:

Կաթողիկոսն այնուհետև հայտնում է, որ Ֆրիդրիխի մահից հետո նրա որդին է գլխավորել զորքը և մտել Կիլիկիա: Լևոնը սկզբում ամրացել է իր բերդերից մեկում, բայց «Ալմանների թագավորի որդին» սպառնացել է գրավել նրա երկիրը, եթե հակառակվի: Կարծես փորձելով արդարացնել Լևոնին՝ Գրիգոր Տղան ավելացնում է. «Լևոնի որդին²⁷¹ հարկադրվեց տեղի տալ և գնալ դիմավորել թագավորին: Արդարև նա (Ֆրիդրիխ Շիկամորուսը) գտնվում էր մի մեծաթիվ բանակի գլուխ, որը հավաքվել էր արշավանքի համար: Այդ բանակը բաղկացած էր քառասուն հազար հեծյալից և անթիվ հետևակից՝ բաղկացած այլազգի ժողովուրդներից...»²⁷²: Գրիգոր Տղան նամակի վերջում պատրաստակամություն է հայտնում նոր տեղեկություն ստանալու դեպքում հայտնել Սալահ ալ-Դինին:

²⁷⁰ Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 294-297:

²⁷¹ Ինչպես վերը նշվել է արաբ պատմիչները Ռուբինյաններին հաճախ կոչում են «Իբն Լևոն»:

²⁷² Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 294-297:

Արաբագետ Գագիկ Դանիելյանը գտնում է որ վերոբերյալ նամակի մասին արաբ հեղինակներից առաջինը հիշատակում է Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանին, որը Սալահ ալ-Դինի արքունի քարտուղարն էր: Վերջինիս երկում հանդիպում ենք հետևյալ գեղարվեստական ոճով գրված տողերին. «Նամակ հասավ Քայադիքուսից՝ Հռոմկլայի տիրոջից, որում նա գայթակղում ու ահաբեկում էր, որոտում և կայծակնահարում, հավաստում և թվարկում, սայթաքում էր և սպառնում, ցույց էր տալիս, թե [անկեղծ] խորհուրդ է տալիս»²⁷³: Ապա, փոխանցելով Հայոց կաթողիկոսի նամակի բովանդակությունը՝ արքունի դպիրն ավելացնում է. «Երբ այս լուրերը հասան, երկիրը սկսեց անհանգստանալ, ահով լցվեցին սարահարթ ու քարանձավ: Ասում էին՝ այս կողմից այլևս հնարավոր չէ դիմադրել [թշնամուն], և որ կողմ էլ, որ ուղղվեր, նրան խոչընդոտ չէր լինելու: Կասկած չկար, որ նա Ասորիքի խորքն էր շարժվում՝ հատելով իսլամի սահմանները»²⁷⁴:

Իբն Շադդադի երկից օգտվելով՝ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի նամակը ոչ մեծ փոփոխություններով մեջբերում է Իբն Վասիլը²⁷⁵:

Այս նամակը գրեթե նույնությամբ, չնչին փոփոխություններով մեջբերում է XIV դարի եգիպտացի պատմիչ Իբն ալ-Ֆուրաթը իր «Պատմության»²⁷⁶ մեջ, իսկ XIII դարի դամասկոսցի պատմիչ Աբու Շաման իր «Գիրք զույգ պարտեզների»²⁷⁷ երկում համառոտ վերապատմում է կաթողիկոսի նամակը:

²⁷³ «**Imād al-Dīn al-Isfahānī**, Kitāb al-Fath, էջ 262: Տե՛ս **Դանիելյան Գ.**, Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները, «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», Երևան, 2016, էջ 227-232:

²⁷⁴ «**Imād al-Dīn al-Isfahānī**, Kitāb al-Fath, էջ 264: Տե՛ս նաև **Դանիելյան Գ.**, նշվ. աշխ., էջ 227-232:

²⁷⁵ **Ibn Wāsil, Mufarrig**, v.2, էջ 320-322:

²⁷⁶ **Ibn al-Furāt**, Tarikh al-Duwal wa-l-Muluk, IV, էջ 216-219.

²⁷⁷ **Abu Shama**, Kitāb al-Rawdatayn, t. II, էջ 150:

Անկասկած, Իբն Շադդադի հաղորդումը պարունակում է շատ ուշագրավ տեղեկություններ, որոնք որոշակի լույս են սփռում Կիլիկիա-խաչակիրներ և Կիլիկիա-Այյուբյաններ փոխհարաբերությունների վրա, իսկ նամակը կարող է համարվել հայ միջնադարյան դիվանագիտության եզակի նմուշ, որի վերաբերյալ, սակայն, մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են տարամետ տեսակետներ: Ուսումնասիրողների մի մասն այն համարել է կեղծիք, հորինվածք, պատմիչի կողմից իրական հեղինակին կաթողիկոսի հետ շփոթելու հետևանք, իսկ մյուս մասը, ընդունելով հանդերձ նամակի իսկությունը, առաջ է քաշել դրա գրության իրարամերժ դրդապատճառներ ու նպատակներ:

Այս բազմակարծության մեջ կողմնորոշվելու և դրա խորքային պատճառները հասկանալու համար անհրաժեշտ է պարզել արմատները: Երկար ժամանակ Եվրոպայում տիրապետող է եղել հայ-խաչակիր զինակցությունն իդեալականացնելու, որպես հովվերգություն ներկայացնելու մի սովորություն, որը, անկասկած, իր դրոշմն է թողել նաև Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության վրա: Այն առավել տիրապետող է եղել XVIII դ. վերջից մինչև XX դ. սկիզբը: Միքայել Չամչյանցը, Ղևոնդ Ալիշանը, Ֆրանսուա Տուրնըբիզը, մասամբ նաև Ռընե Գրուսեն²⁷⁸ և ուրիշներ, այս կամ այն չափով տուրք են տվել «գովերգումի» այս տեսությանը՝ հաճախ նաև մեկը մյուսին հետևելով: Այդ կարծիքները հիմնված են գլխավորապես հետևյալ տեսակետների վրա.

²⁷⁸ **Grousset R.**, Histoire des Croisades, t. III, էջ 59-60: Խաչակրաց արշավանքների մասին տես նաև **Заборов М.**, Введение в историографию крестовых походов (латинская хронография XI-XIII вв.), Москва, 1966; Историография крестовых походов (литература XV-XIX вв.), Москва, 1971; История крестовых походов в документах и материалах, Москва, 1977; Крестоносцы на Востоке, Москва, 1980:

- Կիլիկիայի հայերն իրենք են բազմիցս դիմել Հռոմի քահանայապետերին ու քաջալերել՝ կազմակերպելու խաչակրաց արշավանքներ,

- առանց վերապահության, ամբողջական ու բոլորանվեր աջակցություն են ցուցաբերել խաչակիրներին,

- գենքով ու զորքով (գուցեն հենց Լևոն Բ-ի գլխավորությամբ) մասնակցել են թե՛ Ակրայի (Պաղեստին) ազատագրմանը, և թե՛ Կիպրոսի վրա արշավանքին:

Իրականում այս բոլորի միայն չնչին մասն է հաստատվում աղբյուրներով:

Նախ, առաջին և երրորդ խաչակրությունների՝ շուրջ 90-ամյա միջակայքում (1098-1190) խաչակիրների հանդեպ հայերի վերաբերմունքը զգալիորեն փոխվել էր, և առաջին արշավանքի ժամանակ տիրապետող խանդավառությանը փոխարինել էր վերապահ և զգուշավոր դիրքորոշումը: Ինչ վերաբերում է Հռոմի պապերին իշխանապետի ու կաթողիկոսի հղած նամակներին, ապա դրանց նպատակը եղել է թագ ստանալը, բայց ոչ խաչակրության կոչ անելը:

Խաչակրաց երրորդ արշավանքին Կիլիկիայի հայերի մասնակցելու վերաբերյալ աղբյուրները լռում են: Այդուամենայնիվ, որոշ ուսումնասիրողներ, վկայակոչելով միջնադարյան գերմանացի մի բանաստեղծի գրություն, հնարավոր են համարում այդ գինակցությունը: Վերոհիշյալ աղբյուրը Ակրան (Աքքա) գրավող թագավորների շարքում հիշում է նաև Լևոնին. «Լևոն թագավոր Ուբիայի, ինչպես նաև Հայաստանի»²⁷⁹:

²⁷⁹ Խոսքը XIV դարի մի գերմանացի անանուն հեղինակի էպիկական պոեմի մասին է՝ նվիրված Թյուրինգիայի լանդգրաֆ Լյուդվիգ III-ին, որը մասնակցել է Ակրայի պաշարմանը: Այս երկը հրատարակել է Հենրիխ ֆոն Հագենը 1854 թ.: **Friedrich Heinrich von der Hagen** (Hg.), *Des Landgrafen Ludwig's des Frommen Kreuzfahrt: Heldengedicht der Belagerung von Akkon am Ende des zwölften Jahrhunderts*, Leipzig, 1854. S. 21: Տե՛ս նաև **Ալիշան Ղ.**, Սխուման, էջ 449:

Կարծում ենք՝ այս հիշատակությունը հեռուն գնացող ենթադրությունների հիմք չի տալիս: Այն գրված է գեղարվեստական մի երկի մեջ, որտեղ չի բացառվում, որ խաչակիրներին Կիլիկիայում հյուրընկալած իշխանը «վերածվեր» Ակրան գրավող քաջարի քրիստոնյա միապետի: Ամեն դեպքում, ըստ երևույթին, հենց այս հիշատակումն է վերոհիշյալ ուսումնասիրողներին մղել կառուցելու մի ամբողջ տեսություն, ապա նաև մերժելու կամ անտեսելու դրան հակասող բոլոր տեղեկությունները:

Միքայել Չամչյանը զերծ է մնացել նամակի բովանդակային քննությունից՝ փոխարենը գովերգելով Հռոմեական սրբազան կայսրության ինքնակալի ու կիլիկյան իշխանությունների առնչությունները: Թեև նա օգտագործում է Վարդան պատմիչի գործը, բայց անտեսում է Լևոն Բ-ի զգուշավորության մասին վկայող տեղեկությունները:

Նամակի իսկությունը ժխտող Ղևոնդ Ալիշանը գրեթե զայրությամբ է խոսում իր կարծիքով Գրիգոր Դ-ին վերագրվող այս թղթի մասին. «Այլ ընդ այլոց և ստուգեամբ պատմեն աստանօր Արաբացիք, դժկամակս ցուցանել զՀայս ընդ գալուստ Ալամանացն և ընդ անցս յերկիր իւրեանց, և զայս իբրու առ ահի կամ առ մտերմութեան Սալահէտտինայ և մեծագոյն ևս ստայօդ թողթ մի կարկատեալ են յանուն Գրիգորի, որդւոյ Վասլի, որպէս թէ կաթողիկոսին Գր. Տղայոյ, առ Սալահէտտին, լրտեսաբար ծանուցելով նմա զորքանութիւն բանակին Ալամանաց, զարկածս կայսերն և զոր յետ այնր»²⁸⁰: Ալիշանը համոզված է, որ դա այնքան հեռու էր Գրիգոր Դ կաթողիկոսի և Լևոն Բ իշխանի մտքից ու գրչից, որ հնարավոր չէ նույնիսկ պատկերացնել, թե նրանք այդպիսի մի՝ իր խոսքերով «մատնիչ» նամակ կարող էին գրել²⁸¹:

²⁸⁰ Ալիշան Ղ., Սիսուան, էջ 447:

²⁸¹ Հարցը նույնիսկ կրոնական համերաշխության տեսանկյունից մեկնաբանելու դեպքում նման տեսակետը բավարար հիմնավորում չունի, թեկուզ այն պատճառով, որ հենց այդ օրերին Բյուզանդական կայսրությունը, ի դեմս Իսահակ Անգե-

Դժվար է ասել՝ Ալիշանը արաբերեն բնագի՞րն է օգտագործել, թե՞ դրա ոչ այնքան ճշգրիտ թարգմանությունը, բայց նրա երկի՝ վերոբերյալ քաղվածքում առկա է որոշակի շփոթ: Արաբ պատմիչը, Ալիշանի ներկայացմամբ, Գրիգոր Տղային «Գրիգորի որդի Գագիկ» է անվանում²⁸²: Մինչդեռ, Իբն Շադդադը որևէ տեղ Գագիկ (կամ Գայգուս, Քայքուս, Քայկոս) անունը չի գործածում, իսկ թարգմանիչն այդպես է կարդացել նրա նշած «Քաղիկոս», որ նույնն է՝ «Կաթողիկոս» բառը: Վերջինիս իմաստին արաբ պատմիչը քաջատեղյակ է. բացի այդ, նա ճշգրտությամբ նշել է նաև կաթողիկոսի «Տղա» մականունը: Նամակի վերջում Իբն Շադդադը գրում է. «Սա է նամակը կաթողիկոսի, և այս բառը նշանակում է խալիֆա. նրա անունն է Բար Քրիքուր իբն Բասիլ», այսինքն՝ «Գրիգոր Տղա որդի Վասիլի»²⁸³:

Ֆրանսուա Տուրնըբիզը, հետևելով Ղևոնդ Ալիշանին և փորձելով առավել հիմնավորել այս տեսակետը, գրել է. «Սա արդյունքն է Գրիգոր Դ Տղայի և Լևոն Բ-ի դեմ մի ծանր մեղադրանքի: Այն դեպքում, երբ սրանք՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը, քաջալերում էին Կղեմես III և Կելեստինոս III պապերին՝ կազմակերպելու խաչակրաց արշավանք, մինչ Գրիգորը Ներսես Լամբրոնացու և Լևոնի այլ դեսպանների հետ գնում էր դիմավորելու Ֆրիդրիխ Շիկամորուսին, այդ նույն կաթողիկոսը ստրկահաճ մի նա-

լոսի (1185-1195, 1203-1204), շատ սերտ հարաբերությունների մեջ էր սուլթանության հետ, մշտապես նվերներ ու պատվիրակություններ էր փոխանակում Սալահ ալ-Դինի հետ ու փաստորեն Այյուբյանների դաշնակիցն էր: Սալահ ալ-Դինը հույս ուներ, որ բյուզանդացիները թույլ չեն տա խաչակիրներին անցնել Փոքր Ասիայով: Տե՛ս **Cahen Cl.**, *La Syrie du Nord*, էջ 425: Քիչ չեն նաև համագործակցության դեպքերը իսլամական պետությունների և Վենետիկի կամ ծովային առևտրով զբաղվող այլ քրիստոնյա պետությունների միջև:

²⁸² **Ալիշան Ղ.**, Սիսուան, էջ 447:

²⁸³ **Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին**, էջ 297:

մակ էր գրել Սալահ ալ-Դինին՝ հաղորդելով կայսրի վիճակի ու ծրագրերի մասին»²⁸⁴:

Այստեղ, արդեն իսկ եղած միակողմանի մոտեցմանն ավելացված է նաև այն միտքը, որ իբր թե Գրիգոր Դ Տղան ու Լևոն Բ իշխանապետը պապերին քաջալերել են՝ կազմակերպելու խաչակրություն. տեսակետ, որն ամբողջովին հիմնազուրկ է:

Նամակին անդրադարձած հեղինակներից Ռընե Գրուսսեն, հեղինակի և հասցեատիրոջ վերաբերյալ արաբ պատմիչի տեղեկությունները կասկածի չենթարկելով հանդերձ, առաջ է քաշում գրության՝ բոլորովին այլ դրդապատճառներ. «Լևոն Բ Հայոց իշխանն ու նրա կաթողիկոսը արդեն Սալահեդդինի արքունիք էին ուղարկել ճարտարությամբ շարադրված նամակներ, որոնք իրազեկելու պատրվակի տակ, նպատակ էին հետապնդում բարոյական ճնշում գործադրել նրա վրա և հուսալքել նախքան պատերազմը»²⁸⁵: Այս ենթադրությունը համոզիչ չէ, քանզի եթե հավատալու լինենք, որ կաթողիկոսի միակ նպատակը Սալահ ալ-Դինի բանակը պարտված տեսնելն էր, ապա տրամաբանական կլիներ, եթե նա վարվեր ճիշտ հակառակ կերպ, այսինքն՝ ոչինչ չհաղորդեր մուսուլմաններին կամ գրեր, որ խաչակիրները փոքրաթիվ են և թույլ՝ այդ կերպ փորձելով, թերևս, թյուրիմացության մեջ գցել նրանց: Այնինչ, ըստ մեկ այլ արաբ պատմիչի՝ Աբու Շամայի՝ կաթողիկոսի նամակն ահազանգի դեր է կատարել Սալահ ալ-Դինի համար: Աբու Շաման գրում է. «Երբ այս լուրը տեղ հասավ և իմացվեց, որ վիճակը վտանգավոր է, մարդիկ իրար անցան...: Ռումի երկիրը հետախույզներ (քնազրում՝ աչքեր) և լրտեսներ ուղարկեցին և դեսպաններ՝ օգնություն խնդրելով... »²⁸⁶:

²⁸⁴ **Tournebize F.**, նշվ. աշխ., էջ 185:

²⁸⁵ **Grousset R.**, Histoire des Croisades, t. III, էջ 15-16, **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 284:

²⁸⁶ **Abu Shama**, Kitāb al-Rawdatayn, t. II, p. 150.

Վերջապես, կաթողիկոսը խաչակրաց բանակը սարսռագ- դու, իսկ զինվորներին որպես խստապահանջ ու մոլեռանդ ռազ- միկներ ներկայացնելով՝ նպատակ ուներ արդարացնել Լևոնի կեցվածքն այդ հսկա ուժի առջև և թեկուզ դժկամությամբ, բայց և այնպես խաչակիրներին ցույց տրված աջակցությունը: Այս հանգամանքը նկատել է նաև Հ. Քյուրդյանը²⁸⁷:

Մուսուլմաններին հուսալքելու վերաբերյալ նշված ուսում- նասիրողների ենթադրությունը համոզիչ չի թվում, հատկապես, երբ ծանոթանում ենք Իբն Շադդադի հաղորդման շարունակույթ- յանը. «Այն ժամանակ կաթողիկոսի կողմից սուլթանի մոտ հա- սավ մի երկրորդ պատվիրակություն և նա սովեց տեղեկություն- ներ՝ ասելով, որ նրանց թիվը շատ մեծ է, բայց շատ են տկարա- ցած և քիչ ձիեր ու պաշար ունեն և իրենց գույքերի մեծ մասը է- շերի վրա էին փոխադրում: Նա ասաց. «Ես կանգնեցի մի կամր- ջի վրա, որի վրայով նրանք պետք է անցնեին, որպեսզի կարո- ղանամ դիտել նրանց. տեսա, որ քչերը միայն զենք կամ նիզակ ունեին, և երբ նրանց հարցում սովեցի, թե ինչ է դրա պատճառը, պատասխանեցին, թե երկար օրեր վատառողջ վայրում մնացած լինելով, առանց ուտեստի և վառելանյութի շատերը մահացել են ծայր աստիճան թշվառությունից, և իրենք ստիպված են եղել մորթել ձիերը և ուտել, այրել են նիզակները և զենքերի փայտե- ռը. իսկ առաջապահները, որոնք մինչև Անտիոք են հասել՝ մեռել են»»²⁸⁸:

Այս հաղորդումից պարզ է դառնում, որ կաթողիկոսը կրկին պատվիրակություն է ուղարկել Այյուբյան սուլթանի մոտ, սակայն պարզ չէ՝ առաջին դեմքով մեջբերված խոսքերը, արդ- յո՞ք, քաղված են կաթողիկոսի երկրորդ նամակից, թե՞ այն բե-

²⁸⁷ Հմմտ. Քյուրդեան Հ., Գրիգոր Տղա եւ Սալահ էդ-Տին, «Բազմավէպ», 1975, թիւ 1-2, էջ 177:

²⁸⁸ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 299:

րանացի փոխանցել է պատվիրակության անդամներից մեկը՝ անշուշտ, հետևելով Գրիգոր Դ կաթողիկոսի հանձնարարականներին: Ընդ որում, պատմիչը՝ Իբն Շադդադը, վկայում է ականատեսի լավատեղյակությամբ, քանզի անձամբ ներկա է եղել այդ հանդիպմանը (երևի Հալեպում):

XX դ. 20-50-ական թթ. խորհրդային պատմագրության ավանդույթները ևս որոշակի ազդեցություն ունեցան խնդրո առարկա նամակների լուսաբանման համար՝ այս անգամ արդեն ճիշտ հակառակ իմաստով: Խաչակիրները մշտապես համեմատվում էին եվրոպացի գաղութարարների հետ՝ ներկայացվելով միայն բացասական բնութագրումներով, ինչը հանգում էր մեկ այլ ծայրահեղության:

Կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված այդ շրջանի ուսումնասիրությունները սակավաթիվ են: Դրանցից, անկասկած, կարևորագույնը Գրիգոր Միքայելյանի՝ վերոհիշյալ «Կիլիկիայի հայկական պետության պատմություն» կոթողային աշխատությունն է, որտեղ որոշ չափով տուրք է տրված խորհրդային պատմագրության՝ նշված մոտեցմանը: Այդուհանդերձ, հենց այդ դիրքորոշումն է, որ հեղինակին թույլ է տվել ամենայն լրջությամբ քննելու Կաթողիկոսի նամակները: Այս առումով Գրիգոր Միքայելյանն առաջինն է, որ առանց նախապաշարումների է մեկնաբանում Գրիգոր Տղայի նամակը՝ այն գնահատելով որպես հավաստի գրություն:

Կիլիկյան Հայաստանի պատմության և խաչակրաց արշավանքների մասին վերջին կես դարի ընթացքում թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանում հրատարակված աշխատություններում, ընդհանուր առմամբ, հավասարակշռված, անաչառ մոտեցում է ցուցաբերվում խաչակիրներ-մուսուլմաններ հակամարտությանը՝ զերծ վերոհիշյալ երկու հոսանքների (հայ-լատին հարաբերությունները զովերզող և խաչակիրներին որպես գաղութարարներ ընկալող) ազդեցությունից:

Հիշատակելի են Հ. Քյուրոյանի, Կլոդ (Արմեն) Մուֆաֆայանի և Լևոն Տեր-Պետրոսյանի աշխատությունները: Այս հետազոտողներն ամբողջովին անհիմն են համարում Գրիգոր Դ Տղայի նամակների վավերականության վերաբերյալ կասկածները²⁸⁹: Ուրբանոս պապին խաչակիր առաջնորդների հղած հետևյալ խոսքերը. «Մենք հաղթեցինք թուրքերին ու հեթանոսներին, բայց չկարողացանք պարտության մատնել հերետիկոսներին՝ հույներին ու հայերին, ասորիներին ու հակոբիկներին»²⁹⁰ Մերձավոր Արևելքի քրիստոնյաների նկատմամբ խաչակիրների բացասական վերաբերմունքի պերճախոս վկայությունն են:

Այս տեսանկյունից չափազանց դիպուկ է Մաղաքիա Օրմանյանի հետևյալ դիտարկումը. «Իբր թէ քրիստոնէութեան պաշտպանութեան եկողներ էին, բայց քրիստոնէից օգնութեամբ զօրանալէ ետքը, արեւելեան քրիստոնէից դէմ կը դառնային, անոնց երկիրներուն տիրապետելու եւ անոնց հարստութիւնները գրավելու նպատակով»²⁹¹:

Բայցևայնպես, հանուն ճշմարտության պետք է նշել, որ առնվազն Խաչակրաց առաջին արշավանքն անուղղակիորեն նպաստավոր եղավ Կիլիկիայի և շրջակայքի հայկական իշխանությունների համար: Վերջիններիս այդ ժամանակ սպառնում էին փոքրասիական սելջուկները, որոնց խաչակիրները Նիկիայի և Դորիլեոմի ճակատամարտերում ջախջախիչ հարված հասցրին՝ երկար ժամանակով հայկական իշխանություններից հեռացնելով սելջուկյան վտանգը: Այդ իսկ պատճառով վերջիններս ցնծությամբ ընդունեցին և օգնություն ցույց տվեցին խաչա-

²⁸⁹ **Mutafian C.**, La diplomatie armenienne au Levant a l'epoque des croisades XII-XIV siècle, էջ 68; **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 447-449:

²⁹⁰ Հղումը տե՛ս **Prawer J.** The Crusaders' Kingdom: European Colonialism in the Middle Ages, London, 2001, էջ 214:

²⁹¹ **Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, ս. էջ-միածին, 2001, սյունակ 1565:

կիրներին: Բայց երբ նրանք Մերձավոր Արևելքում հիմնեցին իրենց պետական միավորները, սկսեցին սպառնալ հայկական փոքրիկ իշխանություններին: Ոչ միայն գրեթե ամբողջ Դաշտային Կիլիկիան ու Եփրատացիքի՝ հայաբնակ երկրամասերը երկար ժամանակ մնացին Անտիոքի իշխանապետության և Եդեսիայի կոմսության տիրապետության տակ, այլև խաչակիրները կարճ ժամանակում տիրացան հայկական մի քանի փոքր իշխանությունների տիրույթներին: Այդուհանդերձ, խաչակիրների հետ դաշինքը XI դ. վերջին և XII դ. առաջին քառորդում կարևոր նշանակություն ունեցավ հզորացող Ռուբինյան իշխանապետության համար, առավել ևս որ մինչև Մոսուլի աթաբեկ Իմադ ալ-Դին Ջանգիի հանդես գալը մուսուլման ամիրությունները խիստ թույլ ու մասնատված էին: Հատկապես Ջանգիի որդի՝ Նուր ալ-Դինի օրոք իրավիճակը կտրուկ փոխվեց:

1156-1164 թթ. հիմնականում անհաջող խաչակրությունները ցույց տվեցին նրանց հետ դաշինքի անհեռանկարությունը: Հայ իշխաններն այլևս չէին կարող իրենց ապահով զգալ որպես խաչակիրների դաշնակիցներ: Այս ամենը Թորոս Բ-ին (1145-1169) ստիպեց իր իշխանության վերջին տարիներին (1164-1169) չեզոք քաղաքականություն վարել ինչպես Նուր ալ-Դինի, այնպես էլ խաչակիրների նկատմամբ: Համենայնդեպս, մեր դիտարկումներն այդ են ապացուցում²⁹²:

Մլեհ իշխանապետի օրոք (1170-1175) հայ-խաչակրաց դաշինքը վերջնականապես խզվեց: Կիլիկյան Հայաստանը դարձավ Ջանգիների պետության դաշնակիցը: Ընդ որում, Մլեհի օրոք Ռուբինյան իշխանապետությունը կարողացավ միաժամանակ շոշափելի հարված հասցնել Բյուզանդիային, խաչակիրներին և Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը:

²⁹² Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Վ.**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ., էջ 56-59:

Մլեհի հաջորդ Ռուբեն Գ-ի օրոք թեև խաչակիրների հետ հարաբերությունները վերականգնվում են, բայց դրանք արդեն միանգամայն այլ բնույթ էին կրում: Վաղուց արդեն չկար նախկին հիացական վերաբերմունքը հավատակիցների հանդեպ, որին փոխարինել էին սթափ հաշվարկն ու Կիլիկիայի ազգային-պետական շահերի գիտակցումը և այդ տեսակետից հարաբերությունների կառուցումը բոլոր հարևան երկրների հետ, առավել ևս, երբ Ռուբեն Գ-ի և մանավանդ Լևոն Բ-ի օրոք Կիլիկյան Հայաստանը նախկինից ավելի ընդարձակ ու հզոր իշխանապետություն էր, որի հետ դաշինքը կարող էր նաև որոշակի դեր խաղալ խաչակիրներ-մուսուլմաններ մեծ հակամարտության մեջ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ բոլորովին արտառոց չեն Լևոն Բ-ի իմացությամբ Գրիգոր Դ-ի՝ Սալահ ալ-Դինին հղած նամակները, առավել ևս որ կան Ֆրիդրիխ Շիկամորուսի ու նրա բանակի հանդեպ Լևոն Բ-ի վերապահության ու զգուշավորության բազմաթիվ վկայություններ: Ուշագրավ է, որ Լևոն Բ-ը թագավոր հռչակվելուց հետո ոչ միայն բոլորովին չի խուսափում Այյուբյան սուլթանության հետ հարաբերություններից, այլև ընդհակառակը, ինքն է դառնում դրանց հաստատման նախաձեռնողը: Ինչպես ստորև կտեսնենք, Լևոն Ա-ը 1208-1216 թթ. նամակագրություն ու բարեկամական հարաբերություններ է հաստատում Սալահ ալ-Դինի եղբայր և Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի հետ, որի շնորհիվ կարողանում է ռազմաքաղաքական մի շարք կարևոր հարցեր լուծել հարևան երկրների հետ²⁹³:

Պատմիչների հաղորդումները համատեղելով՝ փորձենք առավել ամբողջական պատկեր ստանալ հարցի վերաբերյալ:

²⁹³ **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 159-160:

Կասկած չկա, որ Լևոն Բ-ն ու Գրիգոր Դ-ը²⁹⁴ մշակել էին գործողությունների միասնական ծրագիր, որով առաջնորդվելով ջանացել էին Կիլիկիան նվազագույն կորուստներով դուրս բերել վտանգավոր իրավիճակից:

Խաչակիրներին օգնություն հատկացնելով, բայց նրանց արշավանքին չմասնակցելով հանդերձ՝ կիլիկյան իշխանությունները պահպանեցին բարեկամական կապերը լատինների հետ: Նրանք գերադասեցին չեզոք դիրք գրավել երկու հզոր ուժերի միջև՝ Սալահ ալ-Դինի հետագա հնարավոր հակահարվածը կանխելու համար: Ավելին, ստեղծված իրավիճակում Լևոն Բ-ը ոչ միայն պահպանեց իր իշխանապետության դիրքերը, այլև նոր հողեր գրավեց: Նա, մասնավորապես, 1191 թ. տիրացավ Սալահ ալ-Դինի բանակի կողմից լքված Բաղրաս (Գաստոն) ամրոցին, որը ռազմավարական շատ կարևոր դիրք ուներ²⁹⁵: Իբն ալ-Ասիրի հաղորդմամբ՝ այդ ամրոցը «մեծ վնաս էր մահմեդականներին, քանզի Հայոց տերը (Սահիբ ալ-Արման) Լևոնի որդին (Իբն Լայուն), որը սահմանակից էր, իր երկրից եկավ, նորոգեց ու կատարելագործեց այն և այնտեղ նշանակեց իր զինվորներից մի խումբ, որն այնտեղից ասպատակում էր դրացի երկիրը և սրանից շատ տուժեց Հալեբի շրջակայքի ժողովուրդը: Այն մինչև օրս էլ նրանց (հայերի) ձեռքում է»²⁹⁶: Լևոն իշխանի կողմից Բաղրասի գրավման մասին հաղորդում է նաև Բար Հեբրեոսը: Ըստ նրա՝ Սալահ ալ-Դինը, խաչակրաց բանակների առաջխաղացման մասին լսելով, հրամայում է դատարկել Բաղրասի պահեստ-

²⁹⁴ Հետաքրքիր է, որ Սալահ ալ-Դինին ուղղված երկու նամակների հեղինակ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը հեղինակն էր նաև «Որք վասն առմանն Երուսաղեմի» ծավալուն պոեմի:

²⁹⁵ Տե՛ս **Lawrence**, Castle of Baghras, “The Cilician Kingdom of Armenia”, ed. by T.S.R. Boase, Scottish Academic Press, Edinburgh & London, 1978, էջ 44 և **Edwards R. W.**, Baghras and Armenian Cilicia: A reassessment, “Revue des Etudes Armeniennes”, t. XVII, 1983, էջ 417-418:

²⁹⁶ **Իբն ալ-Ասիր**, էջ 273:

ներն ու դրանք քանդելով նահանջել: Մուսուլմանները հազիվ հասցրել էին ամրոցի մի մասը քանդել, երբ լուր ստացվեց, որ Լևոնը պատրաստվում է գրավել այն, ուստի փութով նահանջեցին: Մուսուլմանների փախուստից առաջինն օգտվում են Անտիոքի ֆրանկները, որոնք դատարկում են բերդում մնացած պարենը: Բայց մի քանի օր անց բերդը գրոհում է Լևոն Բ-ը և այն խլում ֆրանկներից²⁹⁷:

Այսպիսով՝ հայերի և Տաճարականների միջև (սկսած դեռևս Թորոս Բ-ի ժամանակներից) երկար տարիներ վեճի առարկա եղած Բաղրասն անցավ Լևոն Բ-ին: Ամրոցը ռազմավարական կարևոր դիրք ուներ, հսկում էր Բեյլանի կիրճը, որը Ասորիքի մուտքն էր Կիլիկիայի կողմից, իսկ հետագայում կարևոր հենակետ դարձավ Լևոն Բ-ի՝ Հյուսիսային Ասորիքում մղած կռիվների ժամանակ²⁹⁸:

Մինչ Լևոն Բ-ն ընդարձակում էր իր տիրոջներն ու ամրացնում սահմանները²⁹⁹, Խաչակրաց երրորդ արշավանքի մասնակիցները հանուն Պաղեստինի ծովափնյա մասի՝ գլխավորապես Ակրայի, համառ պայքար էին մղում Սալահ ալ-Դինի զորքերի դեմ:

Վերջապես, երկու տարվա պայքարից հետո՝ 1192 թ. սեպտեմբերի 2-ին Ռամլայում Խաչակրաց երրորդ արշավանքի ղե-

²⁹⁷ Տե՛ս **Bar Hebraeus**, էջ 236-237:

²⁹⁸ Ահա թե ինչպես է այն նկարագրում եվրոպացի ուղեգիր Վիլբրանդ Օլդենբուրգցին, որը 1212 թ. այցելել է Կիլիկյան Հայաստան: «Սա (Գաստոնը) շատ ուժեղ ամրոց է՝ երեք շարք չափազանց հզոր և աշտարակավոր պարիսպներով շրջապատված, և գտնվում է Հայաստանի լեռների վրա՝ սահմանագլխին» (**Wilbrand**, էջ 174):

²⁹⁹ Ֆրանսիացի պատմաբան Կլոդ Կանենը գրում է. «Հյուսիսային Սիրիայում Սալահ ալ-Դինի նվաճումներն ամբողջությամբ փոխեցին ուժերի հարաբերակցությունն Անտիոքի և Կիլիկիայի միջև... այժմ արդեն Կիլիկիան էր ամենահզորը, որին վիճակված էր լինել քրիստոնյաների թիկունքը: Լևոնը հաստատապես որոշեց օգտվել այս իրավիճակից՝ ոչ միայն մի կողմ նետել ֆրանկների գերիշխանության վերջին մնացորդները, այլև ինքը դառնալ իշխանության (Անտիոքի) գերական» (**Cahen Cl., La Syrie du Nord**, էջ 582):

կավարների և Սալահ ալ-Դինի միջև հաշտություն կնքվեց, համաձայն որի՝ խաչակիրները վերստացան Ակրայից մինչև Հորբե (Յաֆֆա) ընկած ծովափը, սակայն չկատարեցին իրենց գլխավոր խնդիրը՝ Երուսաղեմն այդպես էլ չվերագրավեց: Հետևաբար՝ ընդհանուր առմամբ, արշավանքն անհաջող³⁰⁰:

դ) Սալահ ալ-Դինի գործունեության վերջին շրջանը.

1193 թ. արշավանքը

1192 թ. հաշտությամբ Մերձավոր Արևելքում դրության տեր դարձավ Սալահ ալ-Դինը, որի տերությունը ձգվում էր Հայկական Տավրոսի լեռներից մինչև Լիբիական անապատը: Նա վերջնականապես թուլացրել էր խաչակիրներին՝ նրանց թողնելով միայն ծովափնյա մի նեղ շերտ: Ընդ որում, Եվրոպայից նոր համալրում խաչակիրները մոտ ժամանակներում չէին սպասում: Երուսաղեմը նվաճած և խաչակրաց պետություններին ջախջախիչ հարված հասցրած Այյուբյան սուլթանությունը լիովին պատրաստ էր հյուսիսում և հյուսիս-արևելքում նոր նվաճումների: Հատկանշական է, որ Կիլիկիայի վիճակը բարդանում էր: Եթե մինչ այդ Սալահ ալ-Դինն աշխատում էր մեղմ քաղաքականություն վարել հայերի և ասորիների նկատմամբ՝ այդ կերպ փորձելով նրանց հեռու պահել խաչակիրներից (այդպես եղավ, օրինակ, 1187 թ. Երուսաղեմի գրավման ժամանակ), ապա հետագայում նա նման կարիք այլևս չէր զգում:

Սալահ ալ-Դինի նվաճողական ծրագրերին քաջատեղյակ էին ալ-Ասիրի հաղորդմամբ՝ սուլթանը, իր մոտ կանչելով որդուն ու եղբորը, հարցնում է «Որ կողմը հարձակվենք: Եղբայրը՝ Ադիլը, խորհուրդ տվեց հարձակվել Խլաթի³⁰¹ վրա, քանզի նա խոս-

³⁰⁰ Տե՛ս **Lane-Poole S.**, *History of Egypt in the Middle Ages*, էջ 211:

³⁰¹ Խլաթի նվաճումից (1207 թ.) 14 տարի առաջ արդեն իսկ Այյուբյաններն ունեին այդ ծրագիրը:

տացել էր նրան պարգևել, եթե նվաճի: Որդին՝ Աֆդալը, խորհուրդ տվեց հարձակվել Ռումի երկիրը, նրա այն մասը, որը Կիլիչ Արսլանի որդիների ձեռքում է գտնվում, ավելացնելով՝ թեև այդ երկիրը ունի շատ քաղաքներ, զորք, ունեցվածք, այսուհանդերձ դյուրին կնվաճվի: Միաժամանակ ցամաքի կողմից ֆրանկների ճանապարհի վրա է և եթե գրավենք, նրանց թույլ չենք տա միջով անցնել³⁰²: Ասաց [Սալահ ալ-Դինը] երկուսդ էլ սխալ եք ու համարձակությունից զուրկ: Ես կզնամ նախ հոռոմների երկիրը, իսկ դու, ասաց եղբորը, կվերցնես իմ որդիներից մի քանիսին և իմ զորքի մի մասը ու կզնաս Իսլաթ և ես երբ վերջացնեմ գործերս հոռոմների երկրում, կգամ քեզ մոտ և կշարժվենք դեպի Ատրպատական ու կմտնենք Պարսից (Աջամ) երկիրը, ուր մեզ դիմադրող չկա: Ապա եղբորը՝ Ադիլին, հրամայեց գնալ Քարաք [ամրոցը], որն իրեն էր պատկանում և ասաց՝ պատրաստվիր ու սպասիր երթի: Սակայն, երբ վերջինս մեկնեց Քարաք, Սալահ ալ-Դինը հիվանդացավ ու մեռավ»³⁰³:

Փաստորեն՝ Այյուբյանները նախատեսում էին գրավել Իկոնիայի սուլթանությունը, Մեծ Հայքի հարավ-արևմուտքը, Ատրպատականը և մինչև իսկ Իրանը: Փոքր Ասիան նվաճելու ճանապարհին, ամենայն հավանականությամբ, պիտի վերացվեր նաև Ռուբինյան իշխանապետությունը:

Ըստ Սմբատ Սպարապետի՝ իր իշխանության վերջին տարում (1193 թ.) Սալահ ալ-Դինը պատվիրակ է ուղարկում Լևոն Բ-ի մոտ՝ պահանջելով հանձնել Կիլիկիան և անձամբ ներկայանալ իրեն: Լևոնը, հաշտության հնարավորություններ չտեսնելով և մի կողմ թողնելով դիվանագիտությունը, հետևյալ պատաս-

³⁰² Սուլթանի որդին ակնարկում է Ֆրիդրիխ Շիկամորոսի 1190 թ. ցամաքային արշավանքը, որի ժամանակ գերմանական բանակը հենց Իկոնիայի սուլթանության տարածքով հասավ Կիլիկիա, ապա մտավ Ատրիք: Աֆդալի առաջարկի նպատակն էր ապագայում կանխել նման վտանգները:

³⁰³ **Իբն ալ-Ասիր**, էջ 278-279:

խանն է տալիս սուլթանի պատվիրակին. «Ասա ցուլտանն թէ երկիր ոչ ունիմ տալ քեզ, բայց եթէ գայցես յերկրիս իմում տաց քեզ յերկսայրից ըմպելիս, որպէս հաւատակցին քո Ըռըստոմի»³⁰⁴: Այսպիսի համարձակ պատասխան ստանալով՝ Սալահ ալ-Դինը, որը, ըստ Սմբատ Սպարապետի, «մոռէր որպէս զառիւծ»³⁰⁵, զորքով հարձակվում է Կիլիկիայի վրա: Նույն աղբյուրի հաղորդմամբ՝ Այյուբյանների բանակը հասնում է մինչև Սև գետ, բայց այստեղ սուլթանը հանկարծակի հիվանդանում է ու մահանում³⁰⁶: Արաբ հեղինակները հստակ նշում են, որ Այյուբյան հզոր տիրակալը մահացել է Դամասկոսում՝ իր մահճում³⁰⁷, ուստի բացառված չէ, որ 1193 թ. Կիլիկիայի վրա արշավել է ոչ թե անձամբ Սալահ ալ-Դինը, այլ նրա զորավարներից մեկը: Նման մի արշավանք, թեկուզ հետախուզական նպատակներով իրականացված, լիովին համապատասխանում էր Այյուբյանների՝ վերոբերյալ նվաճողական ծրագրին: Սմբատ Սպարապետի հիշատակած արշավանքը, ըստ երևույթին, ընդհատվել է, երբ զորքի հրամանատարին հասել է Սալահ ալ-Դինի մահվան լուրը:

Ընդ որում, մեծ հավանականությամբ, Կիլիկիայի վրա արշավող զորքը գալիս էր Հալեպից: Նման ենթադրության անուղղակի նպաստում է նույն Սմբատի հետևյալ միտքը. «Եւ նստաւ յաթոռ նորա որդին իւր որ կոչէր Մելեք Տահր»³⁰⁸: Այսինքն, որպէս Սալահ ալ-Դինի հաջորդ հիշվում է Հալեպի տիրակալ ալ-Մալիք ալ-Զահիրը (որը դեռ 1183-ից կառավարում էր այնտեղ) և ոչ թե Դամասկոսի կամ Կահիրեի Այյուբյանները:

³⁰⁴ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 204:

³⁰⁵ Նույն տեղում:

³⁰⁶ Տե՛ս նույն տեղում:

³⁰⁷ Տե՛ս `Պ**Imād al-Dīn al-Iṣfahānī**, Kitāb al-Fath, էջ 454-455; **Ibn al-Aṭṭir**, **Al-Kāmil fi-l-tārīḥ**, v. X, էջ 224-225; **Ibn al-ʿAdīm**, **Zubdat**, v. III, էջ 124-125; **Ibn Wāṣil**, **Mufarriḡ al-kurūb**, v. 2, էջ 416-420:

³⁰⁸ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 204:

Սալահ ալ-Դինի մահից հետո Այյուբյան հսկա տերությունը բաժանվեց մի քանի մասերի, և Կիլիկիան ազատվեց վտանգավոր թշնամուց: Այյուբյան սուլթանության տրոհումն այն պայմաններից մեկն էր, որը նպաստեց XII դ. վերջին (1198 թ.) Կիլիկիայի հայկական թագավորության հռչակմանը: Այսպիսով՝ Կիլիկիան փրկվեց Այյուբյանների երրորդ արշավանքից: Եթե 1180 թ. Ռուբինյաններին հաջողվեց մի ամրոց զիջելով, գերիներ ու ոսկի հանձնելով կասեցնել Սալահ ալ-Դինի բանակի ներխուժումը, իսկ 1187 թ. հետ մղել ասորիքյան զորաշուկատին, ապա այդ անգամ արդեն Կիլիկիան կանգնած էր նվաճման անմիջական վտանգի առջև:

Սալահ ալ-Դինը, լինելով մեծ զորավար և դիվանագետ ու ստեղծելով հսկայածավալ պետություն, միաժամանակ ոչ այնքան հեռատես գտնվեց իր իսկ հիմնած պետության միասնականությունն ու հարատևությունն ապահովելու տեսակետից: Նախ, նա անփոփոխ էր թողել Զանգիներից ժառանգություն ստացած ավատատիրական մասնատված պետական համակարգը (մի բան, որ հետագայում հիմնովին փոփոխեցին մամլուքները՝ ստեղծելով խիստ կենտրոնաձիգ պետություն): Իսկ ամենակարևորն այն է, որ նա մահվանից առաջ իր տերությունը բաժանեց (հետևելով սելջուկյան ավանդույթին) 4 մասի՝ դրանք հանձնելով իր բազմաթիվ որդիներից 3-ին և եղբորը: Զավակներից ալ-Աֆդալն ստացավ Հարավային Ասորիքը և Պաղեստինը, ալ-Ազիզը՝ Եգիպտոսը, ալ-Մալիք ալ-Զահիրը՝ Հյուսիսային Ասորիքը: Եղբորը՝ ալ-Մալիք ալ-Ադիլին բաժին հասան Ջազիրան ու Դիար Բաքրը (Վերին Միջագետք): Զարմանալի չէ, որ տոհմի անդամների միջև սկսվեց դաժան հակամարտություն, որը շարունակվեց մինչև XII դ. վերջը: Այսպիսով՝ Կիլիկիան գոնե ժամանակավորապես ազատվեց հզոր ու վտանգավոր հարևանից:

Նույն տարիներին Լևոն Բ-ը հաղթանակներ տարավ նաև Իկոնիայի սելջուկների և բյուզանդացիների նկատմամբ՝ իր իշ-

խանապետությանը միացնելով Կիլիկիայում նրանց ձեռքում մնացած վերջին բերդերը: Այդ մասին է գրում Բար Հեբրեոսը. «Լևոնը Կըլըչ Արսլանի մահից հետո (1192) շատ հզորացավ և գրավեց 72 ամրոց՝ մի մասը թուրքերից, իսկ մյուսը՝ հույներից: Եվ իր մղած բոլոր պատերազմներում նա հաղթական էր»³⁰⁹:

Երբ Հալեպը 1183 թ. միացվեց Սալահ ալ-Դինի պետությանը, Կիլիկյան Հայաստանն ու Այյուբյան սուլթանությունը դարձան անմիջական հարևաններ: Նախորդ տարիներին՝ 1174-1183 թթ. Ասորիքը մասնատված էր, ուստի Կիլիկյան Հայաստանի համար վտանգ չէր ներկայացնում: Միաժամանակ, շնորհիվ 1180 թ. կնքված հաշտության, Այյուբյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի միջև զինաբախումներ չեղան մինչև 1187/1188 թ.: Ավելին, այն հանգամանքը, որ 1185-1186 թթ. Կիլիկիայից Եգիպտոս ուղարկված հայ հոգևորականների պատվիրակությունն իր հետ (ի շարս այլ նամակների) տանում էր նաև Սալահ ալ-Դինի բարեխոսական ուղերձը, փաստում է երկու պետությունների միջև այդ պահին եղած բարիդրացիական հարաբերությունները: Չի բացառվում, որ արդեն 1180-ական թթ. Հայոց Գրիգոր Դ Տղա կաթողիկոսն Այյուբյանների հետ որոշակի հարաբերություններ էր մշակել, որոնք առավել զարգացրեց 1190-ին: Մինչ այդ՝ 1187-1188 թթ. Սալահ ալ-Դինը ջախջախում էր Երուսաղեմի խաչակիրներին՝ մանավանդ 1187 հուլիսի 4-ի Հիթթինի վճռական ճակատամարտից հետո: Այդ ընթացքում նա ոչ միայն նվաճեց գրեթե ողջ Պաղեստինը, այլև շատ ծանր վիճակի մեջ դրեց Տրիպոլիսի և Անտիոքի խաչակիրներին: Եվ երբ Անտիոքի իշխանապետության գրեթե բոլոր հողերը, բացառությամբ մայրաքաղաքի, գրավված էին, Այյուբյանների մի հետախուզական զորաջոկատ 1187/1188 թ. փորձում է ներխուժել Կի-

³⁰⁹ Bar Hebraeus, էջ 344:

լիկյան Հայաստան, բայց, հավանաբար, հենց սահմանագլխին հակահարված է ստանում:

Երրորդ խաչակրությունը նոր իրավիճակ է ստեղծում Սալահ ալ-Դինի համար: 1190–1192 թթ. վերջինս կրկին առաջին պլան է մղում պայքարն ուժեղացած խաչակիրների դեմ, իսկ Լևոն Բ-ը և Կիլիկիայի վերնախավը վարում են չեզոք քաղաքականություն՝ փորձելով հեռացնել վտանգը երկրից, հնարավորության դեպքում՝ նաև օգուտ քաղել երկու մեծ ուժերի բախումից, որի ելքը դեռևս անորոշ էր: Այս իրավիճակում էր, որ Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր պետերը դիվանագիտական ակտիվ գործունեություն են ծավալում թե՛ խաչակիրների, թե՛ Այյուբյանների հետ:

Խաչակիրների նոր հոսքի դեմ հաջողությամբ պայքարելով և Երուսաղեմն իր ձեռքում պահելով՝ Սալահ ալ-Դինը 1192 սեպտեմբեր 2-ին Ռամլայում խաչակիրների հետ ստորագրում է հաշտություն, որից հետո կրկին իրեն դրության տեր է զգում: Նա ծրագրում է իրագործել իր նվաճողական ծրագիրը, որի ճանապարհին առաջին արգելքներից մեկը Կիլիկյան Հայաստանն էր: Աղբյուրը վկայում է 1193 թ., հավանաբար, Հալեպից եկող Այյուբյան մի զորաջոկատի՝ Կիլիկիա արշավելու և մինչև Ռուբինյան իշխանապետության սահման-գետին հասնելու մասին: Այդուամենայնիվ, սուլթանի հանկարծահաս մահը Կիլիկիան փրկում է Այյուբյանների հետ նոր բախումից:

ԳԼՈՒԽ Դ

ԱՆՏԻՈՔԻ ԳԱՀԱԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՅՅՈՒԲՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1194-1216)

ա) Անտիոքի գահաժառանգության խնդիրը և Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան դաշինքի ձևավորման նախաքայլերը

Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ի կողմից 1185 թ. խաբեությամբ գերված Ռուբեն Գ-ին ազատելու դիմաց Ռուբինյան իշխանապետությունը՝ ի դեմս իշխանի եղբայր Լևոնի, ընդունեց այդ խաչակրաց պետության գերագահությունը: Ճիշտ է, դա ձևական բնույթ ուներ, բայց ևայնպես Լևոն Բ-ը հարմար առիթի էր սպասում՝ վերացնելու այն: Նշելի է, որ խաչակիրների դեմ Սալահ ալ-Դինի հաղթանակները, այդ թվում Անտիոքի իշխանապետության տարածքի զգալի կրճատումն ու Այյուբյանների փաստացի ստորական դառնալը, անուղղակիորեն նպաստեցին Կիլիկյան Հայաստանի հաջողություններին: Վկայությունը Բաղրաս ամրոցի ու շրջակա հողերի անցումն էր հայկական իշխանապետությանը:

Այյուբյանների սպառնալիքից ազատվելուց հետո Բոհեմունդ III-ը Կիլիկիան Անտիոքին ենթարկելու հերթական փորձը կատարեց: Ձերբակալելու նպատակով 1193 թ. նա Լևոն Բ-ին խաբեությամբ հրավիրեց Անտիոք: Նախօրոք տեղեկանալով այդ մասին՝ Լևոն Բ-ը խուսափեց եղբոր՝ Ռուբենի սխալը կրկնելուց: Նա ոչ միայն չգնաց Անտիոք, այլև ինքը ծուղակի մեջ գցեց Բոհեմունդին: Այդ մասին հաղորդում է Բար Հեբրեոսը, որը մանրամասն նկարագրում է, թե ինչպիսի խորամանկությամբ

Լևոն Բ-ը Բոհեմունդին կանչեց Բաղրաս և ամրոցի հայ կառավարչի միջոցով ձերբակալելով՝ կապանքների մեջ տանջեց³¹⁰:

Անտիոքի իշխանը գերությունից ազատվեց միայն Ակրայի տեր Սիր Հենրի Շամպայնցու միջնորդությամբ և Ռուբինյան իշխանապետությանն արված հետևյալ զիջումների դիմաց: Ըստ Ստում 1194 թ. կնքված այդ հաշտության՝ Բոհեմունդ III-ը վերադարձրեց Ռուբինյաններից զավթած սահմանամերձ երկրամասերը և հրաժարվեց Դաշտային Կիլիկիայի հարավային՝ Բաղրասից մինչև Այաս ընկած հատվածին տիրելու հավակնություններից: Հաշտության այլ կետով Բոհեմունդի որդին՝ Ռայմոնդը, ամուսնացավ Լևոնի եղբայր՝ Ստեփանեի դուստր Ալիսի (Ալիժ) հետ: Նրանցից ծնված Ռայմոնդ-Ռուբենը հետագայում Լևոն Բ-ի կողմից հռչակվեց գահաժառանգ³¹¹:

Գլյոմ Տյուրացու շարունակողներից Էռնուլի հաղորդմամբ՝ Սսի 1194 թ. պայմանագրից հետո թագ ստանալու նպատակով Լևոն Բ-ը դիմել է հաշտության միջնորդ Հենրի Շամպայնցուն՝ նշելով, որ թագավորության հռչակման համար անհրաժեշտ պայմաններն առկա են. «Ես ունեմ բավական հողեր, քաղաքներ ու ամրոցներ և չափազանց մեծ եկամուտներ թագավոր լինելու համար: Անտիոքի դուքսն իմ հպատակն է: Ուստի՝ խնդրում եմ ինձ թագադրել»³¹²:

³¹⁰ Տե՛ս **Bar Hebraeus**, էջ 343-344, ինչպես նաև **Միքայել Ասորի**, Ժամանակագրություն, 1871, էջ 501: Լևոնի կողմից Անտիոքի իշխանի ձերբակալության մասին հետաքրքիր պատումներ են պահպանել նաև Էռնուլը (տե՛ս Chronique d'Ernoul et de Bernard le Tresorier, էջ 318-323), Գլյոմ Տյուրացու մեկ այլ շարահարող Մարինո Սանտոտո Տորսելլոն (**Marino Sanudo Torsello**, The Book of the Secrets of the Faithful of the Cross (Liber Secretorum Fidelium Crucis), tr. by Peter Lock, Ashgate, 2011, էջ 318-319), «Գործք կիպրացվոց» երկը (**Les gestes des Chiprois**, ed. G. Raynaud (Publications de la Société de l'Orient Latin. Série historique 5), Geneva, 1887, էջ 15) և «Ամադիի ժամանակագրությունը» (Chroniques d'Amadi et de Strambaldi, publiées par René de Mas Latrie, Première partie, Imprimerie Nationale, 1891, էջ 88-90):

³¹¹ **Ամբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 204:

³¹² **Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier**, էջ 322:

Սսի՝ 1194 թ. պայմանագրից հետո Լևոն Բ-ը կրկին ձեռնամուխ եղավ թագավորության հռչակման գործին՝ արդեն 1197 թ. ակտիվ բանակցություններ սկսելով Հռոմի պապի և Հռոմեական սրբազան կայսրության ինքնակալի հետ: Ռուբինյան իշխանապետն այդ նպատակով 1196 թ. վերջին կամ հաջորդ տարվա սկզբին պատվիրակություն ուղարկեց Հռոմի պապի և այդ ժամանակ Իտալիայում գտնվող Հենրիխ VI-ի մոտ³¹³: Թագ շնորհելու դիմաց Հռոմի պապը պահանջեց Հայոց եկեղեցու ծիսակարգում կատարել հետևյալ երեք փոփոխությունները «Տօնէլ զտօն տեանն և ամենայն սրբոց, յորում աւուր և հանդիպի. և միշտ յեկեղեցւոջն կատարել զաղօթսն տուրնջեան և գիշերոյ, զոր ի վաղուց հետէ ո՛չ առնէին հայք ի հինահարութեանցն Իսմայէլի, բայց միայն ի ժամ խորհրդածութեան սրբոյ պատարագին. և ո՛չ լուծանել զճրագալոյցսն ծննդեանն և յարութեանն, բայց միայն ձկամբ և ձիթով: Եւ յորժամ զայդ առնիցէք, ասէ, ոչ ինչ փոյթ մի՛ առնիցէք զտրոց և զընծայից կայսերն և պապին վասն թագիդ»³¹⁴: Պապի պահանջից վրդովված հայ հոգևորականներին Լևոնը հավաստիացրեց, որ այդ փոփոխությունները կրելու են ձևական բնույթ և դրանց նպատակը թագ ստանալն է և ոչ ավելին. «Դուք մի՛ ինչ հոգայք վասն այդորիկ, ես հաճեցից զմիտս նոցա առ անգամ մի կեղծաւորութեամբ»³¹⁵: Սմբատ Սպարապետի հաղորդմամբ՝ տակավին 1196 թ. Լևոն Բ-ին թագ էր շնորհել Բյուզանդիայի կայսր Ալեքսիոս III-ը (1195-1203):

³¹³ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 155-156: Բանակցությունների մասին մանրամասն տե՛ս **Halfter P.**, *Das Papsttum und die Armenier im Frühen und Hohen Mittelalter: Von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahr 1198*, Böhlau, Verlag, Köln, Wien, Weimar, 1996, էջ 195-199, **Թորոսյան Վ.**, Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Մեծագործի թագադրման խնդրի շուրջ, «Էջմիածին», 2016, թիվ է, էջ 78-82:

³¹⁴ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 156-157:

³¹⁵ **Նույն տեղում**, էջ 157:

Երկու կայսրերից թագ ստանալով՝ Լևոն Բ-ը Տարսուհի ս. Սուփիա եկեղեցում 1198 թ. հունվարի 6-ին հանդիսավորապես օծվեց «Թագավոր Հայոց»: Թագադրության հանդեսին ներկա էին հունաց մետրոպոլիտը, ասորիների պատրիարքը, 15 հայ եպիսկոպոս և 39 հայ իշխան³¹⁶: Կարծիք կա, որ բացի եվրոպական տիրակալներից ու հոգևոր պետերից, Լևոն Բ-ի թագավորությունը ողջունել է նաև Բաղդադի Աբբասյան խալիֆա ալ-Նասիրը (1180-1225)՝ իր դեսպանների միջոցով թանկարժեք ընծաներ ուղարկելով նորընծա թագավորին³¹⁷: Այս տեսակետը, սակայն, մեզ հայտնի աղբյուրներով չի հաստատվում:

Թագավորության հռչակումն արձանագրելով՝ Սամվել Անեցու շարունակողներից մեկը գրում է. «Եւ ազգն հագարացոցն, որ ի Դամասկոս եւ ի սահմանս նոցա, առաքեն առ նա՛ հարկս տալ նոցա: Եւ իսկոյն դիմեալ ի վերայ նոցա թագաւորն Լեւոն, եհար զնոսա հարուածս մեծամեծս, եւ յայնմիետէ զահի հարկեալ երկնչէին ամենեքեան»³¹⁸: Հաշվի առնելով, որ 1198 թ. կամ նախորդող ու հաջորդող տարիներին Կիլիկյան Հայաստանի և Այյուբյանների միջև որևէ ռազմական բախում վկայված չէ, հակված ենք ենթադրելու, որ այս տեղեկությունը հայ-արաբական մի այլ զինաբախման վերհուշն է:

Սալահ ալ-Դինի եղբայր ալ-Ադիլը, որին բաժին էր հասել հսկա տերության չորս մասերից մեկը (ներառում էր Ջազիրան և Դիար Բաքրը), օգտվելով իր եղբորորդիների միջև ծագած ներդինաստիական պայքարից (1196-1199), մեկ պետության մեջ միավորեց Եգիպտոսը, Հարավային Ասորիքը, Պաղեստինը, Վերին Միջագետքը և սրանց հարակից որոշ շրջաններ: Այն ընդգր-

³¹⁶ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 208:

³¹⁷ Տե՛ս **Տեր-Մովսիսյան Ա.**, Պատմութիւն Հայոց սկիզբէն մինչև մեր օրերը, Վենետիկ, 1924, էջ 483:

³¹⁸ **Սամուէլ Անեցի և Շարունակողներ**, էջ 233:

կում էր Սալահ ալ-Դիհի տերության գրեթե ամբողջ տարածքը³¹⁹: Սուլթանի որդիներից միայն ալ-Մալիք ալ-Չահիրը կարողացավ հորեղբոր գերագահությունն ընդունելու գնով պահպանել իր իշխանությունը Հյուսիսային Ասորիքում Հալեպ կենտրոնով:

Այս փոփոխություններից հետո՝ մոտավորապես 1200-1201 թթ. Մերձավոր Արևելքի քաղաքական իրադրությունը համեմատաբար կայունացավ: Մինչդեռ 1201 թ. սկսած՝ քաղաքական մթնոլորտը սկսեց շիկանալ Ասորիքի հյուսիս-արևմուտքում՝ Անտիոքի շրջանում:

Սակայն Ասորիքի հյուսիս-արևմուտքին տիրելու համար Իկոնիայի Սելջուկյան սուլթանության, Կիլիկիայի հայկական թագավորության, Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Հալեպի Այյուբյան սուլթանության միջև 1200-1201 թթ. սկսած ծավալվեց տևական պայքար: Տասնամյակներ անց այդ հակամարտությանը վերջ դրեցին Իրանի մոնղոլական Իլխանությունն ու Եգիպտոսի Մամլուքյան սուլթանությունը:

Փաստորեն՝ մոտ կես դար Փոքր Ասիայի հարավ-արևելքի ու Հյուսիսային Ասորիքի հիմնական դերակատարները վերոհիշյալ պետություններն էին: Ընդ որում, հաճախ կարելի է նկատել կրկնվող մի երևույթ. երբ այս պետություններից որևէ մեկը հավակնում էր դառնալ տիրապետող կամ ռազմավարական ինչ-որ տարածքներ նվաճել, մյուսները միավորվում էին նրա դեմ: Այս հիմքի վրա ստեղծվում էին ամենատարբեր, հաճախ կարճատև դաշինքներ ու զինակցություններ:

Անտիոքի գահաժառանգ Ռայմոնդը 1200 թ. մահացավ, իսկ հաջորդ տարի՝ նրա հայրը՝ Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ը: Գահի միակ ժառանգ մնաց Բոհեմունդ III-ի թոռ Ռայմոնդ-Ռուբենը: Վերջինիս հորեղբայր, Տրիպոլիսի կոմս Բոհեմունդ IV

³¹⁹ Դեռ ավելին, 1207 թ. ալ-Ադիլի որդին՝ Դիար Բաքրի կառավարիչ ալ-Աուհադը, օգտվելով Շահ Արմենների պետության թուլացումից, տիրեց Խլաթին ու մերձակա շրջաններին:

Միականին 1201 թ. տիրացավ Անտիոքին՝ երկու տարբեր քաղաքական միավորներից ստեղծելով մեկ միասնական՝ Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունը:

Այսպիսով՝ Միջերկրականի արևելյան ափին խաչակիրների հիմնած չորս պետություններից (Երուսաղեմի թագավորություն, Անտիոքի իշխանապետություն, Տրիպոլիսի և Եդեսիայի կոմսություններ) 1201 թ. պահպանվել էին միայն Երուսաղեմի թագավորությունը (Ակրա կենտրոնով) և Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունը (մայրաքաղաքը՝ Անտիոք)³²⁰:

Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումից հետո Լևոն Ա-ը պետության դիվանագիտական ու ռազմական հիմնական ներուժը ծառայեցրեց Անտիոքի գահաժառանգման խնդրի լուծմանը: Թշնամական պետություններով (մուսուլմանական ու քրիստոնյա) շրջապատված Կիլիկյան Հայաստանը, փաստորեն, կարող էր օգնություն ակնկալել միայն Հռոմի պապից, քանզի այլ դաշնակիցներ չուներ: Պապի հետ Կիլիկիայի աշխարհիկ և հոգևոր վերնախավը 1199 թ. սկսած հաստատեց աշխույժ նամակագրություն՝ նպատակ ունենալով Անտիոքի խնդրում ապահովել եվրոպական պետությունների վրա ծանրակշիռ ազդեցություն ունեցող կաթոլիկ եկեղեցու առաջնորդի հայանպաստ դիրքորոշումը:

Այդ նամակները հետաքրքրական են տարբեր տեսանկյուններից: Այդտեղ միահյուսված են կրոնադավանաբանական հարցերը, կողմերի դիվանագիտությունն ու քաղաքական որոշակի շահախնդրությունները: Մեզ առաջին հերթին հետաքրքրում է Կիլիկյան Հայաստանի և հարակից երկրների ու ժողովուրդների քաղաքական փոխհարաբերությունների մասին նամակների հաղորդած նյութը, ինչպես նաև այն, թե կողմերն ինչ դիրքորո-

³²⁰ Այստեղ հաշվի չի առնված Կիպրոսի թագավորությունը, որն ստեղծվեց հաչակրաց երրորդ արշավանքից հետո:

շում էին ցուցաբերում այս կամ այն քաղաքական կնճռոտ հարցի վերաբերյալ:

Անտիոքի նկատմամբ Կիլիկյան Հայաստանի հավակնությունները հակառակ էին ոչ միայն Տրիպոլիսի կոմսության, այլև Իկոնիայի և Հալեպի սուլթանությունների շահերին: Աներկբա է, որ Անտիոքի նվաճմամբ Կիլիկյան Հայաստանը նկատելիորեն կամրապնդեր իր դիրքերը Միջերկրածովյան ավազանում: Դա կարող էր լուրջ սպառնալիք լինել ինչպես Տրիպոլիսի կոմսության, այնպես էլ Իկոնիայի ու Հալեպի սուլթանությունների համար: Վերջիններս խիստ անհանգստացած էին հայկական նորահռչակ թագավորության հզորացմամբ, ինչն էլ կանխելու նպատակով ձևավորեցին Տրիպոլիս-Իկոնիա-Հալեպ հակակիլիկյան դաշինքը:

Պապի հետ Կիլիկիայի աշխարհիկ ու հոգևոր պետերի նամակագրության աննախադեպ առատությամբ հատկապես աչքի է ընկնում 1199 թ.: Քննվող թեմայի տեսանկյունից, սակայն, առավել էական են ոչ այնքան Հռոմի պապի կամ Հռոմեական սրբազան կայսրության ինքնակալին հավատարիմ լինելու վերաբերյալ հայոց վերնախավի շռայլ «հավաստիացումները», որքան Կիլիկիայի հայկական թագավորությունը դրկից մուսուլմանական պետությունների հարձակումներից պաշտպանելու մասին հիշեցումները: Այսպես՝ Ինոկենտիոս III-ին գրած իր առաջին նամակում կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը նշում է. «Եվ մենք ձեզ խնդրում ենք, որ աղոթեք մեզ համար Աստծո մոտ, քանի որ մենք վիշապի երախում ենք և խաչի թշնամիների շրջապատում և նրանց միջև, որոնք բնականաբար մեր թշնամիներն են»³²¹: Վերջիններիս թվում Կիլիկիայի հայկական պետութ-

³²¹ **Acta Innocentii PP. III (1198-1216)**, pp. 554-555:

յանը հիմնականում սպառնում էր Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը³²²:

Որոշակի դիվանագիտական նպատակներ ունի նաև նամակի այն հատվածը, որտեղ կաթողիկոսը Հռոմի պապին տեղեկացնում է, որ հայ եկեղեցականները «բազմաթիվ երկրներում են և մեծաթիվ են Աստծո ողորմածությամբ»³²³: Փաստորեն՝ Հայոց կաթողիկոսը հասկացնում է, որ հովանավորելով Կիլիկիայի հայկական թագավորությունը՝ Հռոմն իր հենարանը կունենա այլ երկրներում (հատկապես՝ Մերձավոր Արևելքի մի շարք պետություններում)՝ ի դեմս տեղի հայկական հոծ համայնքների: Այլ կերպ ասած՝ Հայոց եկեղեցու և թագավորության դեմ ոտնձգությունները, կաթողիկոսի հավաստիացմամբ, հավասարապես սպառնում էին Հռոմեական եկեղեցուն և Մերձավոր Արևելքի լատին իշխանություններին:

Թերևս, երբեք Հայոց եկեղեցին այնքան քաղաքականացված չի եղել, որքան Կիլիկիայի հայկական թագավորության գոյության ընթացքում: Եվ, անկասկած, շատ դեպքերում Կիլիկիայի միապետն ու հայոց հոգևոր գերագույն առաջնորդը հանդես են եկել որպես համատեղ գործող և ամեն մեկն իր անելիքն ու ասելիքն իմացող քաղաքական գործիչներ: Այդպիսի մի օրինակ է Լևոն Բ իշխանապետի ու Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի՝ 1190 թ. վերոնշյալ համագործակցությունը Սալահ ալ-Դին – խաչակիրների բախման ժամանակ: Նույն համագործակցությունը տեսնում ենք արդեն թագավոր Լևոն Ա-ի և Գրիգոր Զ Ապիրատի միջև 1199 թ.:

Մերձավոր Արևելքի մուսուլմանական պետությունների դեմ համատեղ պայքարի անհրաժեշտության մասին բազմիցս շեշտված է նաև Պապին Լևոն Ա-ի հղած նամակներում: Վեր-

³²² Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Վ.**, նշվ.աշխ., էջ 113:

³²³ Նույն տեղում:

ջինս Պապին տեղեկացնում է, որ խնդիրներ են հարուցվել «Սիրիայի թագավորի» (նկատի ունի Հալեպի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրին) հետ և օգնություն խնդրում: Հայոց արքան որոշակի փաստում էր, որ Մերձավոր Արևելքի մուսուլմանական պետությունները սպառնում են ոչ միայն Կիլիկյան Հայաստանին, այլև Հռոմի եկեղեցուն: Լևոնը պապին հասկացնել է տալիս, որ իր թագավորությունը «խաչի թշնամիների» դեմ պայքարող միակ հուսալի ուժն է³²⁴: Նա օգնություն ասելով՝ նկատի է ունեցել ոչ թե Հռոմի պապի հորդորական կամ խրատական թղթերն Արևելքի՝ մուսուլմանների հետ գործակցության պատրաստ խաչակրաց իշխանապետերին, այլ ռազմուժի անհապաղ տրամադրումը. «...չենք կարող դիմանալ առանց ձեր կողմից ռազմական և այլ օգնության հույսի»³²⁵, - գրում է Լևոն Ա-ը:

Կիլիկյան Հայաստանի թագավորը նամակն ավարտում է օգնություն ստանալու խնդրանքով՝ նշելով որ այլապես կարող է ուշ լինել³²⁶: Աղբյուրները Կիլիկիայի և Հալեպի Այյուբյան սուլթանության միջև 1199 թ. տեղի ունեցած որևէ լուրջ առճակատում չեն արձանագրել: Այս պետությունների առաջին զինաբախումը թվագրվում է 1201-ով³²⁷: Հալեպի սուլթանն անհանգստացած էր Անտիոքի նկատմամբ Կիլիկիայի հայոց թագավորի հավակնություններով, քանզի գիտակցում էր, որ հայերի կողմից այդ իշխանության գրավման դեպքում լուրջ վտանգ կստեղծվեր իր համար: Հավանաբար Լևոն Մեծագործը դեռևս 1199 թ. դիտմամբ, օգնություն ձեռք բերելու կամ այն արագացնելու հույսով խտացրել է գույները կամ որպես փորձված և հմուտ քաղաքագետ արդեն նույն տարվա գարնանը կանխազգացել է Հալեպի Այյուբյան

³²⁴ Տե՛ս *Acta Innocentii PP. III (1198-1216)*, էջ 555-556:

³²⁵ Նույն տեղում, էջ 555:

³²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 556:

³²⁷ Այդ թվականին սկսվեց այսպես կոչված «Անտիոքյան պատերազմը», որը շարունակվեց մինչև 1216 թ. (մանրամասն տե՛ս *Cahen Cl., La Syrie du Nord*, էջ 596-623):

սուլթանի հակակիլիկյան տրամադրությունները: Բացառված չէ, որ այդ տրամադրություններն արդեն իսկ ի հայտ էին եկել Անտիոքի գահակալական վեճի հետ կապված: Վերջին եզրահանգումը, ինչպես ստորև կտեսնենք, առավել հիմնավոր է:

Թագավորի հաջորդ նամակը շատ ավելի երկարաշունչ է և գրված է որոշակի քաղաքական նպատակներով: Ինչպես կաթողիկոսը, Լևոն Ա արքան ևս շեշտում է այն հանգամանքը, որ Կիլիկյան Հայաստանը շրջապատված է «խաչի թշնամիներով» և որ հայերը, պաշտպանելով իրենց, կռվում են ամբողջ քրիստոնեության համար: Նրա՝ հետևյալ նախադասությունը կաթողիկոսի մտքի՝ գրեթե բառացի կրկնությունն է. «...իսկ մենք հեռու վայրերում խաչի թշնամիների կողմից շրջապատված լինելով, հանուն սուրբ Հռոմեական եկեղեցու և ամբողջ քրիստոնեության պատվի ընդդեմ բարբարոս ազգերի պայքարելով...»³²⁸: Ապա արքան անցնում է բուն նյութին՝ Անտիոքի գահակալության հարցին, որը նրա համար կենսական նշանակություն ուներ³²⁹:

Քաջ գիտակցելով, որ Պապին զբաղեցնող գլխավոր խնդիրը մուսուլմաններից Երուսաղեմն ազատագրելն է՝ Լևոն Ա-ը նրան հավաստիացում է, որ Անտիոքի գահաժառանգման հարցում առաջացած կնճիռն իր թագավորության դեմ է դուրս բերել ոչ միայն Անտիոք-Տրիպոլիսի կոմսությանը, այլև Կիլիկիայի տարածքում գտնվող ասպետական միաբանություններին՝ նկատելիորեն խոչընդոտելով Երուսաղեմի շուտափույթ ազատագրումը: «Տրիպոլիսի կոմսը, Տաճարականների մագիստրոն ու միաբանները, Հիվանդախնամների մագիստրոն ու միաբանները,

³²⁸ **Acta Innocentii PP. III (1198-1216)**, էջ 556:

³²⁹ Անտիոքի գահաժառանգման խնդրի շուրջ Կիլիկյան Հայաստանի և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության մղած պայքարի մասին մանրամասն քննվել է պատմագիտության մեջ (տե՛ս **Grousset R.**, Histoire des Croisades, t. III, էջ 246-263, **Cahen Cl.**, **La Syrie du Nord**, էջ 596-623, **Mutafian C.**, La diplomatie armenienne au Levant a l'epoque des croisades XII-XIV siècle, էջ 72-78, **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 210-235):

- գրում է նա, - Անտիոք եկան մեզ ու մեր երկիրը նվաճելու և ըստ կարողության կողոպտելու», ինչի պատճառով հայոց զորքը երեք ամիս ստիպված պայքարել է նրանց դեմ, որի հետևանքով էլ, ինչպես Լևոն Ա-ն է նշում, «**Իսրայելի փունը մեզանից հեռացավ**»³³⁰: Նա նաև հավելում էր, որ այդ դաշինքն ամբողջությամբ հակասում է խաչակիրների «քրիստոնեական եղբայրության վեհ» գաղափարին:

Կիլիկիայի արքան հաջորդիվ ներկայացնում է Անտիոքի օրինական իշխան Ռուբենի (Ռայմոնդ-Ռուբեն)՝ Տրիպոլիսի կոմսի (Բոհեմունդ IV Միականի), Տաճարականների և Հիվանդախնամների մագիստրոսների ու իրենց միաբանների կողմից գահընկեց արվելու և հայրենիքից հեռացվելու փաստը: Հետաքրքրական է՝ Լևոն Մեծագործը շեշտում է, որ Բոհեմունդն այս գործը գլուխ է բերել իր՝ Անտիոքի բարեկամների և գումարի (կաշառքի) միջոցով ու նաև ավելացնում, որ քաղաքի բնակիչները մոլորեցված էին³³¹: Ապա նա Հռոմի պապին խնդրում է իր հեղինակությամբ հետամուտ լինել այս գործին և վերականգնել արդարությունն ու օրինականությունը:

Լևոն Ա-ը Պապին գրում է, որ Տաճարականները և Հիվանդախնամները բանականությամբ շարժվելով՝ ի վերջո հաշտություն կնքեցին իր հետ³³²: Այդ քայլը շատ կարևոր հանգամանք էր, որը հետագայում ևս իր վճռական դերը խաղաց (օրինակ՝ 1225-1226 թթ.) Կիլիկյան Հայաստան – Անտիոք-Տրիպոլիսի կոմսություն փոխհարաբերություններում: Հայտնի է, որ Տաճա-

³³⁰ **Acta Innocentii PP. III (1198-1216)**, էջ 557:

³³¹ Տե՛ս նույն տեղում:

³³² Տե՛ս նույն տեղում, էջ 558: Հոգևորասպետական միաբանությունների շատ անդամներ հաճախ հանդես են եկել որպես միջնորդ կամ բանազնաց Հռոմի պապական աթոռի և Կիլիկիայի հայկական պետության փոխհարաբերություններում (տե՛ս **Շևալիե Մ.-Ա.**, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, ֆրանսերենից թարգմանեց Վ. Պողոսյանը, Երևան, 2007, էջ 68):

րական և Հիվանդախնամ ասպետները խաչակիրներից ամենամարտունակն էին և այս կամ այն պետության մեջ, հողատերեր կամ բերդատերեր լինելով հանդերձ, միևնույն ժամանակ ինչ-որ չափով ինքնիշխան էին և ենթարկվում էին միայն Հռոմի պապին:

Գրիգոր Զ Ապիրատին Ինոկենտիոս III-ի հղած առաջին պատասխան նամակից (նամակը գրվել է 1199 թ. նոյեմբերի 23-ին, ուղարկվել դեկտեմբերի 11-ին) տեղեկանում ենք, որ Հայոց կաթողիկոսը Հռոմի պապին ուղարկել է ոչ թե մեկ, այլ մի ամբողջ շարք նամակներ³³³:

Այս նամակում Պապը ոչ այնքան պարզորոշ ձևակերպված նախադասությամբ Հայոց կաթողիկոսին իրավունք է տալիս «օգնել», ինչպես ինքն է գրում, որը տվյալ դեպքում կարելի է հասկանալ «նվաճել» իմաստով, «Երուսաղեմի նահանգին» (երևի նկատի ունի Երուսաղեմի թագավորությունը) և վերադարձնել խաչի բազմաթիվ նշանները: Պապը, հավանաբար, նկատի է ունեցել Այյուբյան սուլթանության կողմից դեռևս Սալահ ալ-Դինի օրոք նվաճված Երուսաղեմ քաղաքից և Պաղեստինի մյուս գրավյալ շրջաններից գերված խաչերն ու քրիստոնեական տարբեր սրբությունները:

Ինոկենտիոսը նամակն ավարտում է դեպի «արևելյան նահանգներ» օգնություն ուղարկելու խոստումով³³⁴: Նամակի բովանդակությունից դժվար չէ մակաբերել, որ Հռոմի պապն այնքան էլ հավատ չի ընծայել Կիլիկյան Հայաստանի ծանր վիճակի և խաչի թշնամիներով շրջապատված լինելու վերաբերյալ Հայոց կաթողիկոսի ու արքայի հավաստիացումներին: Հարկավ, նա տիրապետում էր տեղեկատվության այլ աղբյուրների, որոնց միջոցով դժվար չէր պարզել, որ Կիլիկյան Հայաստանը ռազմա-

³³³ St' u Acta Innocentii PP. III (1198-1216), էջ 199:

³³⁴ St' u նույն տեղում, էջ 201:

քաղաքական առումով Այյուբյաններից ծանր հարված ստացած Մերձավոր Արևելքի խաչակիրներից առավել բարվոք վիճակում էր: Այդ իսկ պատճառով նա բարձրացնում է ոչ թե Կիլիկյան Հայաստանին օգնելու, այլ հայերի միջոցով Երուսաղեմի նահանգի, այսինքն Պաղեստինի և, առաջին հերթին, Երուսաղեմի և այնտեղ գտնվող Տիրոջ գերեզմանի ազատագրության հարցը: Արևելյան միջերկրականի երկրներում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ Պապի տեղեկությունների աղբյուրը, իհարկե, միայն Լևոն Ա-ի նամակները չէին: Հետևաբար՝ վերջինիս հաղորդումները պետք է հնարավորինս ստույգ արտացոլեն իրականությունը:

Այդ ամենին քաջատեղյակ Լևոն Ա-ը 1201 թ. հոկտեմբերի 1 թվակիր նամակով Պապին հայտնում է, որ Իկոնիայի սուլթանի և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության միջև կնքված դաշնագրի վերաբերյալ իր տեղեկությունները խիստ հավաստի են, քանզի ինքն այնտեղ է ուղարկել իր մարդկանց, որոնք պարբերաբար տվյալներ են հաղորդում իրեն. «...ուղարկեցինք մեր լրտեսներին, որոնք մինչև այսօր թաքնված են այնտեղ, և այնտեղից էլ ծագում են վերոհիշյալ լուրերը, որոնք փոխանցվել են երկյուղածությամբ ու պատկառանքով, իրերի բացահայտված ճշմարտությամբ մեզ են հաղորդվել»³³⁵, - կարդում ենք նամակում:

Օգնության տրամադրումը շտապեցնելու նպատակով՝ Լևոնը հայտնում էր, որ պետք է օգտվել մուսուլմանական երկրների միջև այդ ժամանակ ընթացող կռիվներից և վճռել Երուսաղեմի ազատագրության հարցը: Հակառակ դեպքում, ըստ Կիլիկիո արքայի, նրանց պարտության մատնելն անհնար կլիներ. «Բայց մեծ տարածայնություն է առաջացել բարբարոս ազգերի մեջ...: Եվ եթե օգնությունն ուղարկեիր նախքան նրանց միջև համաձայնության վերականգնումը, քրիստոնեությունը շունչ

³³⁵ Նույն տեղում, էջ 560:

կքաշեր, հակառակ դեպքում, նախքան կգա օգնությունը, նրանց միջև կվերականգնվի համաձայնությունը, ոչ ոք չի լինի, որ կարողանա նրանց բռնությանը դիմադրել, քրիստոնեության մնացած մասը հազիվ թե կարողանա կամ երբեք էլ չի կարողանա դիմադրել»³³⁶:

Լևոն Ա-ը, ամենայն հավանականությամբ, նկատի է ունեցել Այյուբյանների միջև XII դ. վերջին ծավալված միջդինաստիական պայքարը, որի արդյունքում Այյուբյանների սուլթանական տոհմում վերջնականապես հաստատվեց ալ-Մալիք ալ-Ադիլի ընտանիքի գերագահ իշխանությունը³³⁷:

Այնպես չէ, որ Լևոն Ա-ը մինչև ակնկալվող օգնության տրամադրումը մուսուլմանների դեմ պայքարի որևէ քայլ չէր ձեռնարկել: Նույն նամակում նա խիստ որոշակի հայտնում է, որ Կիլիկիայում Տաճարականների տիրույթները «բարբարոսների» հարձակումներից պաշտպանելու համար նույնիսկ զորք է տրամադրել նրանց, սակայն չի հապաղում հիշեցնել, որ այդ խաչակիր ասպետներին երկիցս ուղարկված իր դիմումները մնացել են անպատասխան. «Երկրորդ անգամ ուղարկեցինք խնդրելով, որ հանուն Աստծո սիրուն վերադառնան մեր թագավորություն...»³³⁸: Լևոնը Պապին տեղեկացնում է, որ չնայած բազմակի մերժումներին՝ ինքը դարձյալ Տաճարականներին կոչ է արել միասին պայքարել մուսուլմանների դեմ, սակայն արդեն իսկ համոզվել է, որ նրանց «դուր չէր գալիս մեզ հետ ընդդեմ հեթանոսների կռվի դուրս գալ»³³⁹: Այդուհանդերձ, արքան պատրաստակամություն էր հայտնում ասպետական միաբանության անդամ-

³³⁶ Նույն տեղում:

³³⁷ **Steu Burns R.**, *Damascus: A History*, Routledge, London & New York, 2005, էջ 180:

³³⁸ **Acta Innocentii PP. III (1198-1216)**, էջ 561:

³³⁹ Նույն տեղում:

ներին կրկին թույլ տալ վերադառնալու Կիլիկիայի հայկական թագավորություն:

Լևոն Ա-ի հավաստիացումները Կիլիկյան Հայաստանի՝ թշնամիների (ինչպես խաչակիր, այնպես էլ մուսուլման) դեմ միայնակ մնալու վերաբերյալ միանգամայն ստույգ էին: Երբ 1201 թ. Բոհեմունդ III-ի մահից անմիջապես հետո Ռայմոնդ-Ռուբենի գահակալումն ապահովելու համար Անտիոքում հայտնվում է հայկական կայազոր Լևոն Ա-ի գլխավորությամբ, իսկ Բոհեմունդ IV-ը Տրիպոլիսից արշավում է Անտիոք, Հալեպի Այյուբյան սուլթանը հարձակվում է հայոց թագավորության վրա, ինչն ստիպում է Լևոն Ա-ին թողնել Անտիոքն ու շտապել իր թագավորություն³⁴⁰:

Կիլիկյան իշխանությունները քաջ գիտակցում էին, որ առանց Հռոմի կաթոլիկ եկեղեցու առաջադրած փոփոխությունները (հարաբերությունների այս փուլում դրանք գերազանցապես վերաբերում էին ծիսական արարողություններին) հանձն առնելու դժվար է ակնկալել իրական օգնություն: Այդ իսկ պատճառով արդեն 1202 թ. Պապին նամակով դիմում է Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսը՝ հավաստիացնելով, որ ծիսական փոփոխություններն իրագործվում են³⁴¹: Այստեղ խոսքը վերաբերում է Լևոնի թագադրման դիմաց Հռոմի պապի պահանջած ծիսական բնույթի երեք վերոնշյալ փոփոխությանը: Հայոց հայրապետը, սակայն, չի հապաղում հիշեցնել Լևոն Ա-ին օգնելու անհրաժեշտության մասին³⁴²: Գրեթե նույն բովանդակության մի նամակ էլ արքայի հանձնարարությամբ Պապին հասցեագրել է Սսի արքեպիսկոպոս Հովհաննես Սսեցին³⁴³:

³⁴⁰ St' u Cahen Cl., *La Syrie du Nord*, էջ 600-601:

³⁴¹ **Acta Innocentii PP. III (1198-1216)**, էջ 567:

³⁴² Նույն տեղում, էջ 566:

³⁴³ Նույն տեղում, էջ 568-569:

1202 թ. լիովին նշմարվում էր Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Իկոնիայի ու Հալեպի սուլթանությունների միջև ռազմական դաշինքը, ինչը Լևոն Մեծագործին դրդում էր առավել ակտիվացնել իր ջանքերը՝ Հռոմի պապի միջոցով խափանելու այդ հակակիրիկյան գործակցությունը: Սակայն, ինչպես իրադարձությունների ընթացքը ցույց տվեց, Հայոց թագավորը հույսը լուր Պապի օգնության վրա չէր դրել:

բ) Կիլիկիայի հայկական թագավորության և Հալեպի սուլթանության միջև 1203-1206 թթ. պատերազմը

Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Կիլիկիայի թագավորության զորքերի միջև առաջին բախումները սկսվեցին 1201 թ.: Այս մասին տեղեկանում ենք Ինոկենտիոս III-ին Լևոն Ա-ի հղած 1201 թ. հոկտեմբեր 1 թվակիր նամակից: Հայոց արքան Հռոմի քահանայապետին խնդրում էր միջնորդ լինել իր և Բոհեմունդ IV-ի միջև, քանի որ վերջինս դաշինքի մեջ էր Իկոնիայի սուլթան Ռուքն ալ-Դինի (1196-1204) հետ և նրանք փորձում էին երկու կողմից հարձակվել Կիլիկիայի վրա³⁴⁴: Ամենայն հավանականությամբ, նույն թվականին Հալեպի սուլթանությունը ևս օժանդակել է Բոհեմունդին³⁴⁵: Ինչ վերաբերում է արաբական աղբյուրներին, ապա արդեն հիջրայի 599 թ. (1202 թ. սեպտեմբեր-1203 թ. սեպտեմբեր) տակ Իբն Վասիլ պատմիչն արձանագրել է. «Այս տարում Իբն Լավունը՝ Հայոց տերը, արշավեց դեպի Ջիսր ալ-Հադիդ՝ Անտիոքի ժողովրդի հետ պատերազմելու նպատակով»: Հայկական ուժերն ավերել են երկիրը, կտրել Անտիոքի «պարենային կապը» Հալեպի հետ³⁴⁶: Պատերազմական գործո-

³⁴⁴ Նույն տեղում, էջ 559-562:

³⁴⁵ Տե՛ս **Cahen Cl., La Syrie du Nord**, էջ 600-601:

³⁴⁶ Տե՛ս **Ibn Wāsil**, Mufarriğ al-kurūb, v. III, էջ 140 և հմմտ. **al-Dahabī**, Tārīḥ al-Islam, v. 42, էջ 50; **Ibn al-Furāt**, Tarikh al-Duwal wa l-Mulūk, v. 4.1, էջ 247-248

դություններն առավել ակտիվ կերպով շարունակվել են 1203 թ. վերջերից:

Այդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայկական մի զորախումբ գրավում է Անտիոքի մոտակա գյուղերը, ապա պաշարում քաղաքը: Լևոն Ա-ը փորձում է իրեն և Ռայմոնդ-Ռուբենին համախոհ լատին պատրիարքի միջոցով խաղաղ ճանապարհով տիրել քաղաքին, սակայն չի հաջողում: Տաճարական ասպետները և Բոհեմունդի մյուս կողմնակիցները հուժկու կերպով դիմադրում են հայկական զորախմբին և միաժամանակ աղավնափոստով նամակ ուղարկում Հալեպի սուլթանին՝ կանչելով օգնության³⁴⁷:

Այսպես՝ Իբն Վասիլը Հիջրայի 600 թվականի տակ գրում է. «Այս տարվա Ռաբի I ամսի 27-ին (1203 թ. դեկտեմբերի 4) Իբն Լավունը՝ Հայոց արքան, հարձակվեց Անտիոքի վրա, այն պաշարման մեջ առավ և սկսեց ճնշել: Ալ-Մալիք ալ-Ջահիրը դուրս եկավ Հալեպից և ճամբարեց Հարիմում: Այս իմանալով՝ Իբն Լավունը թողեց Անտիոքը, իսկ ալ-Մալիք ալ-Ջահիրը վերադարձավ Հալեպ»³⁴⁸: Ըստ նույն հեղինակի՝ Լևոնն Անտիոքը գրավելու ևս մի փորձ կատարեց մոտ 20 օր անց՝ Ռաբի II ամսի 17-ին (դեկտեմբերի 24): Այս անգամ նա նամակագրություն է հաստատել Անտիոքի բնակչության հետ՝ երաշխավորելով նրանց ունեցվածքի անձեռնմխելիությունը: Հետո, սակայն, անակնկալ կերպով թիրախել է Անտիոքը և «պրինցին» խուճապի մատնել: Վերջինս դիմադրել է մոտ մեկ ժամ, որից հետո ապաստան է գտել միջ-

(քնագրում Ibn Lāwūn-ի փոխարեն գրչական սխալով Ibn Lāwūk է: Այնուամենայնիվ, հավելյալ տեղեկություն կա, թե իբր Լևոնի արշավանքի մասին տեղեկացումը Հալեպ է ուղարկել (599 թ. Սաֆար ամիս/ 1202 թ. հոկտեմբեր-նոյեմբեր) Սահյուն բերդամրոցի տերը):

³⁴⁷ St' u **Cahen Cl.**, La Syrie du Nord, էջ 604; **Eddé A.-M.**, La Principauté Ayyoubide d'Alep, էջ 80:

³⁴⁸ **Ibn Wāsil**, Mufarrig al-kurūb, v. 3, էջ 154, ինչպես նաև **al-Dahabī**, Tārīh al-Islam, v. 42, էջ 52:

նաբերդում և «աղավնու փոստով» օգնության կանչել ալ-Մալիք ալ-Ջահիրին, որը զորք է հավաքել և Հալեպից ճանապարհ ընկել դեպի Անտիոք: Այս լուրն առնելով՝ Լևոնը կրկին թողել է քաղաքի պաշարումը և վերադարձել Կիլիկիա³⁴⁹:

Անտիոքի պաշարման մասին հաղորդումը պահպանել է նաև Իզզ ալ-Դին Իբն Շադդադը (մահ. 1285 թ.)³⁵⁰ իր «Ալ-Ալակ ալ-Խաթիրա» երկում՝ ամենայն հավանականությամբ հենվելով Իբն Վասիլի պատումի վրա: Նա նաև մեջբերում է Իբն ալ-Ադիմի պատումը³⁵¹:

Այս զորաշարժերի մասին Իբն ալ-Ադիմի պատումը զգալիորեն տարբերվում է Իբն Վասիլի հաղորդումից. ավելին, 600 թ. փոխարեն սխալմամբ թվագրված է 601 թվականի Մուհարրամ ամսով (1204 թ. օգոստոսի 29-սեպտեմբերի 27): Ընդ որում, ըստ այս հեղինակի՝ հակառակորդ բանակների միջև զինված բախումներ են եղել, որոնցում, իբր, Լևոնը կորուստներ է կրել և նահանջել: Հետաքրքիր է, որ պատմիչը զուգահեռ է անցկացնում Անտիոքի համար Լևոնի ու ալ-Մալիք ալ-Ջահիրի պայքարի և Հալեպի Համդանյան ամիր Սայֆ ալ-Դաուլայի ու Բյուզանդիայի հայազգի զորապետ Վարդաս Փոկասի միջև մոտ մեկուկես դար առաջ տեղի ունեցած բախումների միջև: «[Հիջրայի] 601 թ. Մուհարրամ ամսին հայոց արքա Իբն Լավունը, որը Բարդաս ալ-Ֆուկկասի զարմից էր, ով Անտիոքի տեր Սայֆ ալ-Դաուլայի ժամանակակիցն էր, հարձակվեց Անտիոքի վրա: Ալ-Մալիք ալ-Ջահիրը Հալեպից զորքեր ուղարկեց նրա տեր *պրինցին* օգնելու նպատակով: Եվ երբ հասան ալ-Ասի (Օրոնտես) գետին, Իբն Լավունը թույլ գտնվեց նրանցից, [ուստի] ելան նրա դեմ և դուրս քշեցին այնտեղից՝ սպանելով մեծ թվով նրա զինակիցներից:

³⁴⁹ **Ibn Wāṣil**, Mufarrig al-kurūb, v. 3, էջ 154-155, ինչպես նաև **al-Dahabī**, Tārīḥ al-Islam, v. 42, էջ 52:

³⁵⁰ Չշփոթել Սալահ ալ-Դինի կենսագիր Բահա ալ-Դին Իբն Շադդադի հետ:

³⁵¹ **Izz al-Din ibn Šaddād**, al-A'īn al-ḥaṭira, v. 1.2, էջ 405-406:

Ապա Հալեպի բանակը հետ դարձավ»³⁵²: Իբն ալ-Ադիմի հաղորդման շարունակությունը, կարծես, վերաբերում է արդեն հենց 1204 թ. իրադարձություններին, ուստի դրան կվերադառնանք ներքևում:

Լևոնի կողմից Անտիոքի պաշարման մասին 1202-1203 թթ. ներքո խոսում է նաև Անանուն Եղեսացին՝ կարծես անտեղյակ այս իրադարձություններում Հալեպի սուլթանի դերին: Նա գրում է. «Նույն տարվա մեջ Կիլիկիայի իշխանը (իմա՝ «արքան») պաշարեց Անտիոքը և, սաստիկ նեղելով նրան, կերավ ու փչացրեց նրա բերքը: Հաջորդ տարի նա ավելի ևս ուժեղացրեց ճնշումը քաղաքի վրա և, հարձակվելով արևմտյան կողմից, ներխուժեց քաղաք ու տիրեց նրան, բայց նա ճողպարեց ու փախավ և կարողացավ դուրս պրծնել: Նրան հետապնդեցին, բայց չհասան: Քաղաքը փրկվեց»³⁵³:

Ահա այսպես 1203 թ. վերջին Կիլիկիայի թագավորության և Հալեպի սուլթանության միջև սկսվում է ռազմական հակամարտություն: Այն թեև «Անտիոքյան պատերազմի» բաղկացուցիչ մասն է, բայց կարող է դիտվել նաև որպես առանձին պատերազմ:

Երկու հակառակորդների դեմ միաժամանակ պայքարելը կարող էր ծանր հետևանքներ ունենալ Կիլիկիայի համար: Թերևս այդ է պատճառը, որ Լևոն Մեծագործը որոշում է ժամանակավորապես դադարեցնել Բոհեմունդ IV-ի դեմ պայքարը և ասպարեզից հեռացնել նրա ամենամոտ դաշնակցին՝ ալ-Մալիք ալ-Զահիրին:

Այս պատերազմի մասին հայ պատմիչները (բացառությամբ Կիրակոս Գանձակեցու) գրեթե ոչինչ չեն հաղորդում: Ուսումնասիրողները և անտեսել կամ խիստ հպանցիկ են անդրա-

³⁵² **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 156:

³⁵³ **Անանուն Եղեսացի**, էջ 166:

դարձել դրան: Փոխարենը, այդ մասին առատ տեղեկություններ են պարունակում արաբ պատմիչների (Իբն ալ-Ադիմ, Իբն Վասիլ, Իբն ալ-Ասիր, Աբու Շամա, Իբն ալ-Ֆուրաթ) երկերը, որոնց հիման վրա հնարավորինս մանրամասն կանդադարառնանք հիշյալ պատերազմի ռազմական գործողություններին, պատճառներին, արդյունքներին ու հետևանքներին:

Մի քանի անգամ հաջողություն չունենալով՝ Լևոնը չի հուսահատվում և շուտով կրկին անցնում է ակտիվ գործողությունների: Ըստ Իբն ալ-Ադիմի՝ հիջրայի 601 թ. (1204/1205 թ.) Լևոն Ա-ը «չեղարկում է զինադադարը և հարձակվում Ամկի շրջանի վրա: Նա քշում-տանում է անասունների հոտերը, ինչպես նաև ձեռնամուխ լինում մի ավերակ լեռնային բերդի վերակառուցմանը, որ գտնվում էր Դարպասակից ոչ հեռու, որպեսզի [այնտեղից] անընդհատ ճնշի նրան»³⁵⁴:

Պետք է նշել, որ այս իրադարձությունների մասին արաբ պատմիչների պատումները որքան էլ հաճախ լրացնում են իրար, նույնքան հաճախ էլ նշանակալի տարբերություններ են պարունակում: Այսպես՝ Իբն ալ-Ադիմի հաղորդածին կարող ենք լրացումներ անել Իբն Վասիլի երկից, որն այս անցքերի մասին պատմում է հիջրայի 602 թ. (1205/1206) ներքո: Պարզվում է, որ Լևոնի տիրացած անասունների հոտերը պատկանում էին թուրքմեններին, որոնք այդ ժամանակ իջևանել էին Նահր ալ-Ասվադի (Սև գետ) մոտ: Նա նրանցից անհաշվելի քանակությամբ անասուններ է խլել: Ապա շարժվել է Դարպասակ և կրակի տվել նրա արվարձանը, որից հետո դարձել է իր երկիր³⁵⁵:

Պատմիչը շարունակում է, որ այս մասին իմանալով՝ ալ-Մալիք ալ-Ջահիրը Սայֆ ալ-Դին իբն Ալամ ալ-Դին իբն Ջանդարին և Ֆարիս ալ-Դին Մայմուն ալ-Կասրիին ուղարկում է Հարիմ,

³⁵⁴ **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 157:

³⁵⁵ **Ibn Wāṣil**, Mufarriḡ al-kurūb, v. 3, էջ 170:

իսկ ինքն էլ իր զորքով շարժվում է Մարջ Դաբիկ՝ իր շուրջը հավաքելով նաև մի խումբ թուրքմենների: Լևոն Ա-ը նամակ է հղում Հալեպի սուլթանին՝ պատրաստակամություն հայտնելով վերադարձնել այն, ինչ խլել է, միայն թե դեսպան է պահանջում, որի հետ կարող էր բանակցություններ վարել: Ալ-Մալիք ալ-Ջահիրը ուղարկում է Սաադ ալ-Դին իբն Ֆախիրին, որի հետ բանակցություններ են վարվում հաշտության շուրջ: Ի վերջո, Հայոց արքան վերադարձնում է թուրքմեններից խլածը, և հաշտությունը կայանում է³⁵⁶: Պատմիչը շարունակում է. «Երբ Իբն Լավունը շահեց ժողովրդի հանգստությունը, ուղղվեց դեպի Հարիմ և վաղ առավոտյան հարվածեց այնտեղ կայանած զորքին, և մի մեծ խմբի սպանեց ու գերության քշեց նրանց, ովքեր [այդ ժամանակ] զորքի շուկայում (սուկ ալ-ասքար) էին հետևակայինների և նրանց հետ, ովքեր չէին կարող կռվել»³⁵⁷: Ապա վերադառնում է իր երկիրը:

Ըստ Իբն Վասիլի՝ երբ Հալեպի սուլթանը Հարիմ է հասնում և Լևոնի գործածի սարսափելի հետևանքները տեսնում, ճամբարում է Ջիսր ալ-Հադիդում և Բոհեմունդից մի զորախումբ պահանջում: Պայմանավորվածություն է կայանում, որ ֆրանկները 10 հազար հետևակայինով Անտիոքի կողմից, իսկ ալ-Մալիք ալ-Ջահիրն իր տրամադրության տակ եղած զորքերով Կուրիսի կողմից միաժամանակ թիրախեն Հայոց թագավորությունը: Այս մասին իմանալով՝ Լևոնն, իբր, տեղի է տվել և հնազանդվել՝ վերադարձնելով իր մոտ եղած գերիներին: Ալ-Մալիք ալ-Ջահիրն ընդունում է Լևոնի հաշտության առաջարկը, և մեզ արդեն հայտնի Սաադ ալ-Դինին ուղարկում է բերելու գերիներին, որոնց թիվը պատկառելի էր: Այսպես Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության հակամարտությունը կրկին հարթվում է³⁵⁸:

³⁵⁶ Տե՛ս նույն տեղում:

³⁵⁷ Նույն տեղում:

³⁵⁸ Նույն տեղում, էջ 170-171:

Այժմ շարունակելով Քամալ ալ-Դին Իբն Ալ-Ադիմի՝ վերելում կիսատ թողած պատումը՝ նշենք, որ ըստ հալեպցի պատմիչի՝ առաջին անգամ սուլթանի հետ զինադադար կնքելուց հետո Հայոց արքան գրոհել է Անտիոքը և ավերել շրջակայքը, ինչի պատճառով մեծ թանկություն է եղել քաղաքում: Ալ-Մալիք ալ-Ջահիրը, որ Հայոց արքայի հետ կնքած զինադադարով պարտավորվել էր չմիջամտել Անտիոքի գահի շուրջ ծավալված պայքարին՝ բավարարվում էր Անտիոքի ժողովրդին պարեն մատակարարելով³⁵⁹:

Ըստ Իբն ալ-Ադիմի՝ հիջրայի 602 թ. Ջումադա առաջին ամսում (1205 թ. դեկտեմբեր-1206 թ. հունվար) Լևոն թագավորն իր բանակով հասնում է Դարպասակ ամրոց և երկար ժամանակ կռվում վերջինիս արվարձաններում ամրացած մուսուլմանների բանակի դեմ: Ապա հայ զինվորները տարածվում են Ամկ լճի շրջակայքում և կողոպտում այնտեղի թուրքմեն ցեղերին³⁶⁰:

Կիլիկյան Հայաստանի զինուժը 1205 թ. ամռանից մինչև 1206 թ. ամառ բազմիցս արշավում է ալ-Մալիք ալ-Ջահիրին ենթակա երկրամասեր՝ հարձակման վտանգի մեջ պահելով տեղական կայազորները³⁶¹: Իբն ալ-Ասիրն այդ մասին գրում է. «Այդ տարում կիրճերի տեր հայազգի Լևոնի որդին (Իբն Լայուն ալ-Արմանի)³⁶² մի քանի անգամ արշավեց Հալեպի նահանգի վրա, կողոպտեց, հրկիզեց, գերեց ու գերեվարեց»³⁶³: Հալեպի շրջակայքի վրա Լևոնի արշավանքների մասին խոսում են նաև Սիբս Իբն ալ-Ջաուզին և Աբու Շաման³⁶⁴:

³⁵⁹ **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 156:

³⁶⁰ Նույն տեղում:

³⁶¹ **al-Dahabī**, Tārīḥ al-Islam, v. 42, էջ 189:

³⁶² Խոսքը Լևոն Ա Մեծագործի մասին է:

³⁶³ **Իբն ալ-Ասիր**, էջ 285:

³⁶⁴ **St' u Sibṭ ibn al-Ġawzī**, Mirāt al-zamān, v. VIII, էջ 342-343; **Abū Šāma**, Kitāb al-Rawḍatayn, v. V, էջ 79-80, ինչպես նաև **նույնի**՝ Tarāğim al-riğāl al-qarnayn al-sādis wa-l-sābi'(Dayl 'alā al-rawḍatayn), Bayrūt, 1974, էջ 53:

Լևոն Ա-ի հաղթանակներն առավել սերտացրեցին Անտիոք-Տրիպոլիսի, Իկոնիայի և Հալեպի սուլթանությունների դաշնակցությունը, որին, ինչպես որոշակի արձանագրված է Պապին Հայոց արքայի հասցեագրած 1205 թվակիր նամակում, միացել էին նաև Տաճարական միաբանության ասպետները: «Նրանք (Տաճարականները - Վ. Տ.-Ղ.), դեռ ավելին, Տրիպոլիսի կոմսի և անտիոքցիների հետ միաբան Հալեպի նենգ սուլթանի հետ դաշնակցեցին»³⁶⁵, - կարդում ենք նամակում: Ըստ Լևոն Ա-ի՝ դա էր պատճառը, որ ինքը Տաճարականներից խլել էր Կիլիկյան Հայաստանում գտնվող նրանց տիրույթները: Կիլիկիո արքան Պապին կրկին հիշեցնում է, որ մուսուլմանների հետ Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Տաճարականների կնքած դաշինքն ամբողջովին հակառակ է խաչակրության գաղափարին, քանզի նրանք ոչ թե թշնամու՝ մուսուլմանների, այլ «քրիստոնյաների արյուն թափեցին՝ արհամարհելով կրոնական միաբանությունը»³⁶⁶:

Որքան էլ կողմերի նամակագրությունը ներծծված է քրիստոնեական եղբայրության գաղափարով, թե՛ մեկ, թե՛ մյուս կողմն ամենևին դրանով չէ, որ առաջնորդվում էին: Ինչպես պարզորոշ երևում է Պապի պատասխան նամակներից, նա անարձագանք է թողել Լևոն Ա-ի հավաստիացումները Մերձավոր Արևելքի խաչակրաց իշխանությունների և տեղի մուսուլմանական պետությունների միջև գոյացած հակակիլիկյան, իսկ ըստ Կիլիկիո արքայի՝ հակաքրիստոնեական դաշինքի վերաբերյալ: Ավելին, Պապն ամեն կերպ ջանացել է Տաճարականների ու կիլիկյան իշխանությունների միջև առկա կնճիռը լուծել հոգուտ առաջինների՝ Հայոց արքային բազմիցս հորդորելով վերադարձնել նրանցից առգրաված տիրույթներն ու ունեցվածքը: Դիտելի

³⁶⁵ **Acta Innocentii PP. III (1198-1216)**, էջ 584:

³⁶⁶ Նույն տեղում:

է, որ ասպետական միաբանությունների հանդեպ Լևոնի վերաբերմունքը թագավորության հռչակումից հետո և հատկապես Անտիոքի գահաժառանգման խնդրի սրացման ժամանակ նկատելիորեն փոխվել էր: Նույնն էր դիրքորոշումը նաև Հռոմի եկեղեցու գերագահությունն ու այդ եկեղեցու դավանանքն ընդունելու վերաբերյալ, քանի որ Լևոնի տված «հավաստիացումները» մնացել էին թղթի վրա: Ասվածը լավագույնս հաստատվում է լատին կրոնավոր Բրոկարդուսի վկայությամբ, որը պահպանվել է նրա գրքի՝ «Ինչու պետք է զգուշանալ հայերից» ենթաբաժնում: Բրոկարդուսը հայտնում է, որ Հռոմի պապի գերագահությունն ու կաթոլիկ դավանանքն ընդունելու վերաբերյալ Կիլիկյան Հայաստանի թագավորի խոստումները թագավորության հռչակումից հետո բոլորովին մոռացության տրվեցին³⁶⁷:

Կրկին դառնանք Իբն Ալ-Ադիմի պատումին: Ըստ նրա՝ Հալեպի սուլթանը ստիպված մեծ զորք է հավաքում և օգնության կանչում «այլ թագավորների»: Իբն ալ-Ադիմը հայտնում է, որ ի թիվս մուսուլման այլ տիրակալների, ալ-Ջահիրին օգնել է Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլը: Ըստ նրա՝ «ստանալով ալ-Մալիք ալ-Ադիլի և այլ մահմեդական տիրակալների օգնությունը...»³⁶⁸՝ ալ-Ջահիրը հարձակվեց Լևոնի վրա:

Դժվար է ասել, թե ինչու էր ալ-Մալիք ալ-Ադիլն օգնում իր երեկվա թշնամուն, որի տիրույթների հանդեպ հավակնություններ ուներ: Թերևս նա նպատակ ուներ խոչընդոտել Կիլիկյան Հայաստանի հետագա հզորացումը, մանավանդ որ 1205-1206 թթ. արշավանքների ընթացքում հայերը բավական խորացել էին Հյուսիսային Ասորիքում՝ տիրելով մինչև անգամ Կիլիկիայի սահմաններից բավական հեռու գտնվող Հարիմ ամրոցին: Ինչպես ստորև կտեսնենք, ալ-Մալիք ալ-Ադիլ սուլթանը, քաղաքական

³⁶⁷ Brocardus, էջ 488-489:

³⁶⁸ Ibn al-Adim, Zubdat al-Halab, t. III, էջ 157:

հանգամանքների փոփոխությամբ պայմանավորված, փոխեց նաև իր վերաբերմունքը Կիլիկյան Հայաստանի ու Հալեպի սուլթանության հանդեպ:

Ինչ վերաբերում է «...և այլ մուսուլմանական տիրակալներին» օգնությանը, ապա դրանք, հավանաբար, Կենտրոնական Ասորիքի (Համա, Հոմա) կամ Վերին Միջագետքի ամիրներն էին (Մոսուլի Ջանգիներ և այլք), որոնք կախված էին Այյուբյան տոհմի սուլթաններից՝ ալ-Ադիլից կամ ալ-Ջահիրից:

Հավատակից երկրների օգնությամբ համալրված՝ Հալեպի սուլթանության բանակը Մայմուն ալ-Կասրիի հրամանատարությամբ պաշարում է Հարիմը, իսկ Հալեպի սուլթանի մի ուրիշ ջուկատ՝ Թիզիմը (Հալեպի շրջակայքի բերդ է)³⁶⁹: Ըստ Իբն ալ-Ադիմի՝ Լևոն Ա-ի բանակը գտնվում էր Բաղրասում, իսկ մուսուլմանների զորքը՝ Դարպասկում³⁷⁰: Լևոն Մեծագործն այնտեղ, թերևս առավել քան որևէ այլ պատերազմում, ցուցաբերեց դրվատելի ռազմավարական հմտություններ: Տեղեկանալով թշնամու տեղաշարժերի ու տեղաբաշխման մասին՝ հայկական զորքը, գիշերով շրջանցեց Ամլ լիճը և առավոտյան անսպասելի հայտնվեց լճի հարավային կողմում և հանկարծակիի բերելով Մայմուն ալ-Կասրիի զինված ուժերին՝ փախուստի մատնեց³⁷¹:

Նույն ճակատամարտը փոքր-ինչ այլ կերպ է նկարագրում Իբն ալ-Ասիրը³⁷²: Ըստ նրա՝ տեղեկանալով, որ Մայմունի բանակի մի մասն անջատվել էր դեպի Դարպասկ առաքվող ռազմաթերթին ուղեկցելու համար, հայկական բանակը Լևոն Ա-ի գլխավորությամբ նախ պարտության է մատնում Մայմուն ալ-Կասրիի

³⁶⁹ **Yāqūt al-Ḥamawī**, *Mu'ğam al-buldān*, v. II, էջ 66:

³⁷⁰ Նույն տեղում:

³⁷¹ Նույն տեղում, էջ 158:

³⁷² Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 286:

գորքին, ապա զինամթերք տանողներին և մեծ ավարով վերադառնում Կիլիկիա³⁷³:

Արաբ պատմիչների տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ թեև ռազմական գործողությունները Հայոց թագավորության համար ընդհանուր առմամբ հաջող էին ընթանում և Լևոն Ա-ը նաև հաղթանակներ էր տանում, սակայն թե՛ Այյուբյան «համադաշնության» մեջ, թե՛ նրանից դուրս հակակիլիկյան համախմբումն այնքան մեծ էր, որ Լևոն Ա-ը ստիպված էր որոշ զիջումներով հաշտություն ստորագրել: Ըստ այդ հաշտության՝ Լևոն Ա-ը պետք է քանդեր Դարպասակի մոտ իր ամրակառուցած բերդը, վերադարձներ մուսուլմաններից խլված ավարը, գերիներին և չհարձակվեր Անտիոքի վրա³⁷⁴: Հաշտությունը կնքվում էր ութ տարի ժամկետով: Լևոն Մեծագործի համար ձեռքբերումը հենց խաղաղությունն էր, որ նա ստանում էր գոնե մի ճակատի վրա:

Կիրակոս Գանձակեցին նշում է, որ ջախջախելով Հալեպի սուլթանի գորքին՝ Լևոն թագավորը հարկ է պահանջում նրանցից³⁷⁵: Այս տեղեկությունն այնքան էլ համոզիչ չէ, քանի որ Կիլիկյան Հայաստանը, ռազմական առումով բավականաչափ հզոր լինելով հանդերձ, չէր կարող միայնակ պատերազմել ֆրանկ-մուսուլմանական դաշինքի դեմ, որոնց համատեղ ուժերը ցանկացած պահի կարող էին ներխուժել Կիլիկիա: Ահա թե ինչու նա համաձայնվում է ալ-Մալիք ալ-Ջահիրի պայմաններին:

Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության միջև 1203-1206 թթ. եռամյա պատերազմը, ամենայն հավանականությամբ, չհանգեցրեց տարածքային փոփոխությունների: Բաղրասը մնաց հայերի, իսկ Դարպասկը՝ Այյուբյանների ձեռքում:

³⁷³ Տե՛ս նույն տեղում:

³⁷⁴ Տե՛ս **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 158: Հմմտ. **Izz al-Din ibn Šaddād**, al-A'lāq al-ḥaṭīra, v. 1.2, էջ 406:

³⁷⁵ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 160-162:

Այս ամրոցների միջով էր անցնում երկու պետությունների սահմանը: Պատերազմի կարևոր արդյունք կարելի է համարել այն, որ Հալեպի սուլթանությունը դադարեցրեց ռազմական գործողություններն ընդդեմ Կիլիկիայի և շուրջ երկու տարի բախումների մեջ չմտավ Հայոց թագավորության հետ՝ չնայած պայմանագիրը կնքված էր ութ տարվա վավերականությամբ:

Նշված իրադարձություններից հետո Լևոն Մեծագործը բարեկամական հարաբերություններ հաստատեց Մերձավոր Արևելքի հզոր տիրակալի՝ Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի հետ, որը գերազահ էր համարվում բոլոր Այյուբյանների մեջ, ինչը նրան օգնեց Անտիոքի գահաժառանգման համար մղվող ծանր պայքարում:

**գ) Լևոն Ա-ի դիվանագիտական ջանքերն ընդդեմ
Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան դաշինքի
(1208-1209): Ալ-Մալիք ալ-Ադիլի միջամտությունը**

Չնայած Հալեպի սուլթանության դեմ 1203-1206 թթ. հայերի արձանագրած հաղթանակներին, Կիլիկյան Հայաստանին շարունակում էին սպառնալ թշնամական պետությունները՝ Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունն ու Հալեպի սուլթանությունը:

Այդուհանդերձ, 1206 թ. ազատվելով վտանգավոր հակառակորդից՝ Լևոն Ա-ը հնարավորություն ստացավ վերսկսելու զինված պայքարն Անտիոքի իշխանապետության օրինական ժառանգ Ռայմոնդ-Ռուբենի իրավունքների պաշտպանության համար՝ ստիպված չլինելով պատերազմել միաժամանակ երեք ճակատով:

Պայքարին մասնակցում էին երկու խմբավորում. մի կողմում Բոհեմունդ IV Միականին էր, որին աջակցում էին Անտիոքի ավագանին, հոյն պատրիարքն ու Տաճարական ասպետները,

իսկ մյուսում՝ Ռայմոնդ-Ռուբենը, քաղաքի լատին պատրիարքը և Հիվանդախնամ ասպետները: Երկրորդ խմբավորումը վայելում էր Լևոն Մեծագործի ու հայկական բանակի լիակատար աջակցությունը: Հռոմի պապ Ինոկենտիոս III-ը ևս պաշտպանում էր Ռայմոնդ-Ռուբենի թեկնածությունը՝ նրան համարելով Անտիոքի օրինական ժառանգ: Փոխարենը, Հայոց թագավորության աճող ու հարևանների համար տարեցտարի վտանգավոր դարձող ռազմական հզորությունը Կիլիկիայի դեմ էր դուրս բերել հարևան բոլոր պետություններին:

Ահա այս իրավիճակում Լևոնը ձեռնարկեց Անտիոքի իշխանական գահին Ռայմոնդ-Ռուբենին կարգելու հերթական փորձը (նախորդները տեղի էին ունեցել 1201 և 1203 թթ.): Անտիոքի լատին պատրիարք Պետրոս Անգուլեմացու նախաձեռնությամբ և Հիվանդախնամ ասպետների աջակցությամբ քաղաքի բնակչությունը 1208 թ. ապստամբեց Բոհեմունդ IV-ի դեմ: Լևոն Ա-ն ու Ռայմոնդ-Ռուբենը, հայոց բանակի գլուխ անցած, մտան Անտիոք, որի Սուրբ Պետրոս մայր տաճարում գահաժառանգը հանդիսավորապես օձվեց որպես Անտիոքի իշխանապետ³⁷⁶, սակայն այս հաղթանակը ևս կարճ տևեց: Լևոնին այդպես էլ չհաջողվեց գրավել միջնաբերդը, որտեղ ամրացած Բոհեմունդ IV-ն ու իր կողմնակիցներն ընդամենը մի քանի օրվա ընթացքում կարողացան քաղաքից դուրս մղել Ռայմոնդ-Ռուբենի կողմնակիցներին³⁷⁷:

Կիլիկիայի հայկական թագավորության ռազմական հաղթանակներն անհանգստացրել էին նաև Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը, մանավանդ, որ դեռևս XII դ. 90-ական թթ. Լևոն Ա-ը նրանից գրավել էր մի շարք լեռնային ամրոցներ: Վերոհիշյալ պատերազմից շատ չանցած՝ հակակիլիկյան դաշինքի

³⁷⁶ Տե՛ս **Acta Innocentii PP. III (1198-1216)**, էջ 589-590:

³⁷⁷ Տե՛ս **Grousset R.**, Histoire des croisades, t. III, էջ 279-280:

անդամ Իկոնիայի սուլթանությունը, օգտվելով այն հանգամանքից, որ հայերն իրենց հիմնական ուժերը փոխադրել էին հարավ՝ դեպի Անտիոք, հարձակումներ գործեց Կիլիկիայի հյուսիսային սահմանամերձ բերդերի վրա:

Հայտնվելով թշնամական օղակի մեջ՝ Կիլիկիայի վերնախավը դիմեց վճռական քայլերի՝ փորձելով պայքարի մեջ ներգրավել այնպիսի ուժերի, որոնք իրենց ռազմաքաղաքական հզորությամբ կամ հեղինակությամբ ի վիճակի էին ազդելու «Անտիոքյան պատերազմ»-ում հակակիլիկյան դիրքորոշում որդեգրած պետությունների վրա:

Ռայմոնդ-Ռուբենի հանդեպ Պապի դրական դիրքորոշումը, անշուշտ, խաղում էր որոշակի դեր (օրինակ՝ Անտիոքի լատին պատրիարքի և Հիվանդախնամ ասպետների աջակցությունն ապահովելով), սակայն արդեն 1208 թ. Լևոն Ա-ի համար ակնհայտ էր, որ կաթոլիկ եկեղեցու առաջնորդի միջամտությունը բավարար չէր իր խնդիրները լուծելու համար, ուստի, նախ և առաջ, անհրաժեշտ էր քայքայել երեք պետությունների հակակիլիկյան դաշինքը: Մինչ այդ Լևոնը փորձել էր առանձին-առանձին պատերազմել թե՛ Տրիպոլիսի կոմսության, թե՛ Իկոնիայի և թե՛ Հալեպի դեմ, բայց նման մոտեցումը խնդրի՝ ժամանակավոր լուծում էր, քանի որ պարտված պետությունը 2-3 տարով հետ քաշվելուց հետո, առաջին իսկ հնարավորության դեպքում, կրկին միանում էր պայքարին:

Իրադրությունը կտրուկ փոխվեց 1208 թ., երբ Լևոն Ա-ին հաջողվեց գրավել Անտիոքն ու այդ իշխանության գահին կարգել Ռայմոնդ-Ռուբենին:

Անտիոքի գրավումից խիստ անհանգստացած ալ-Մալիք ալ-Ջահիրն օգնության խնդրանքով դիմում է Իկոնիայի ու Եգիպտոսի սուլթաններին: Կիլիկյան Հայաստանի հետ թշնամական հարաբերություններ ունեցող Իկոնիայի սուլթանությունն անմիջապես արձագանքում է Հալեպի սուլթանի դիմումին: Արաբա-

կան աղբյուրների հաղորդմամբ՝ սուլթանության զորքերն ինչպես առանձին, այնպես էլ Հալեպի Այյուբյանների զինուժի հետ համատեղ 1208-1209 թթ. արշավանքներ են կատարել Հայոց թագավորության դեմ և տիրացել մի շարք սահմանային ամրությունների: Այսպես՝ Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմի և Իբն Վասիլի վկայությամբ՝ հիջրայի 605 թ. (1208 թ. հուլիս 16 – 1209 թ. հուլիս 6) Իկոնիայի սուլթան Քեյ Խոսրով I-ի (1205-1211) և Հալեպի տիրակալ ալ-Մալիք ալ-Ջահիրի միացյալ ուժերը գրավել են Բերդուս ամրությունը³⁷⁸: Պարսկագիր հեղինակներ Ռավանդիի և Ակսարայիի հաղորդմամբ՝ նույն ժամանակ Իկոնիայի սուլթանության բանակը Կիլիկյան Հայաստանից գրավել է Կարամանիան և սահմանային որոշ ամրություններ³⁷⁹: Դեպքի մասին Հեթում Կողիկոսցին գրում է. «Խոսրովշահ սուլտանն յԻկոնիոյ, որդի Խլիճ Ասլանին, էառ զԲերդուսն ի Հայոց եւ կալաւ զտէր նորա զԳրիգոր, որդի Լեւոնի»³⁸⁰:

Անանուն Եղեսացու հաղորդմամբ՝ Քեյ Խոսրովի՝ 1208 թ. հարձակումը Լևոն Ա-ի կողմից սելջուկների մի զորաբանակի ջախջախման պատասխանն էր: Ըստ ասորի պատմիչի՝ Քեյ Խոսրովի՝ Կիլիկիան ասպատակելու ծրագրին տեղյակ Լևոն Ա-ը, նախապես դարանակալելով ու ծուղակի մեջ զցելով, կոտորեց սելջուկ թուրքերի զորաբանակը՝ տիրելով մեծաքանակ գե-

³⁷⁸ Տե՛ս **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 159 (բերդանունը բնագրում՝ Bur-nūs) և **Ibn Wāsil**, Mufarrig al-kurūb, v. 3, էջ 187 (բերդանունը բնագրում՝ Bağr-qūs): Հմմտ. **al-Dahabī**, Tārīḥ al-Islām, ց. 43, էջ 22:

³⁷⁹ Ռավանդիի վկայությունը տե՛ս **Шукuroв P. A.**, Образ Киликийской Армении в анатолийских мусульманских источниках (XIII в. – начало XIV в.), «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», Երևան, 2016, էջ 93: Դեռևս 1207 թ. Իկոնիան նվաճել էր Կիլիկյան Հայաստանին սահմանակից Ատտալիան (**Гордлевский В.А.**, նշվ. աշխ., էջ 33):

³⁸⁰ Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Հեթում պատմիչ Կողիկոսցին և նրա «ժամանակագրությունը», Երևան, 2011, էջ 49, ինչպես նաև **նույնի՝** Պատմություն խրոնիկոնին, **Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.**, հ. II, էջ 62, **Սամուէլ Անեցի և Շարունակողներ**, ժամանակագրություն, էջ 236, **Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ.**, հ. I, էջ 78:

րիների ու ավարի: Նույն աղբյուրի հաղորդմամբ՝ Քեյ Խոսրովը միայն դրանից հետո է գրավել Բերդուսը³⁸¹: Չի բացառվում, որ այստեղ վրիպում կա. հնարավոր է, որ պատմիչը Ռուքն ալ-Դինի օրոք (1203-1204) տեղի ունեցած իրադարձությունները շփոթել է հինգ տարի անց՝ Քեյ Խոսրովի օրոք կատարվածի հետ:

Հռոմի պապից օգնություն ստանալու հույսը կորսված համարելով՝ Լևոնը 1208/1209 թ. դիմում է Եգիպտոսի Այյուբյան սուլթանի աջակցությանը՝ փորձելով նրա միջոցով կանխել Իկոնիայի և Հալեպի սուլթանությունների համատեղ ռազմարշավներն իր թագավորության դեմ:

Ալ-Մալիք ալ-Ադիլի հետ Լևոն Ա-ի նախաձեռնած նամակագրության և արձանագրված դրական արդյունքների մասին բացառիկ կարևոր տեղեկություններ է հաղորդում Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը, որոնց կարևորությունը նկատի առնելով՝ հղում ենք ընդարձակ քաղվածքով. «Եվ ուրեմն Քեյ Խոսրով իբն Կըլըջ Արսլանը ուղղվեց դեպի «Իբն Լևոնի» երկիրը, միաժամանակ օգնություն խնդրեց սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրից, և սա զորք ուղարկեց Սայֆ ալ-Դին իբն Ալամ ալ-Դինի հրամանատարությամբ, և նրան ընկերակցում էր Այբաք Ֆուտայսը: [Սրանք] հավաքվեցին Մարաշում ու պաշարեցին Բուրնուսը (Բերդուս) 605 թվականին (1208 թ. հուլիս 16 – 1209 հուլիս 6), ապա գրավեցին այն, գրավեցին նաև մի շարք այլ բերդեր «Իբն Լևոնի» երկրից: Լևոնը նամակ ուղարկեց ալ-Մալիք ալ-Ադիլին՝ հովանավորություն փնտրելով նրա մոտ, իսկ ալ-Մալիք ալ-Ադիլին էլ [իր հեղթին] նամակներ ուղարկեց Քեյ Խոսրովին և ալ-Մալիք ալ-Ջահիրին: Իսկ Քեյ Խոսրովն ընդառաջեց և հաշտություն կնքեց «Իբն Լևոնի» հետ այն պայմանով, որ [Լևոնը] Բաղրաս ամրոցը վերադարձնի Տաճարականներին, չմիջամտի Անտիոքի

³⁸¹ Տե՛ս Անանուն Եղեսացի, էջ 171:

գործերին և վերադարձնի Քեյ Խոսրովի եղբոր՝ Ռուքն ալ-Դինի օրոք թողած ունեցվածքը³⁸²:

Եվ նա (Քեյ Խոսրովը)³⁸³ [տարիներ առաջ] վախեցել էր իր եղբորից (Ռուքն ալ-Դինից), [ուստի] ուղղվել էր Հալեպ, որոշ ժամանակ կանգ առնելով ալ-Մալիք ալ-Ջահիրի մոտ: Իսկ ալ-Մալիք ալ-Ջահիրը վախեցել էր նրա եղբորից՝ Ռուքն ալ-Դինից, և զգուշացել, որ այդ պատճառով չփոխվի իր հանդեպ տրամադրությունը: Եվ միգուցե իրենից պահանջեին եղբորը և ինքը նրան չկարողանար հանձնել [եղբորը] ուստի իրենից հեռացրել էր նրան (Քեյ Խոսրովին): Եվ նա (Քեյ Խոսրովը) մտել էր «Իբն Լևոնի» [երկիրը], բայց վախենալով նրանից, փախուստ էր տվել, թողնելով նրա մոտ հսկայական գումար, ապա ստացավ այդ գումարը համաձայն վերոհիշյալ զինադադարի:

Եվ նա (Իբն Լևոնը) վերադարձրեց այն բոլոր մահմեդական գերիներին, որ գտնվում էին իր երկրում և հրաժարվեց ալ-Մալիք ալ-Ջահիրի երկրի հանդեպ [ոտնձգություններից], իսկ Հալեպի օգնական գունդը Հալեպ հասավ (վերադարձավ)³⁸⁴:

Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի միջնորդական առաքելության մասին հաղորդում է նաև Իբն Վասիլը: Իբն ալ-Ադիլի տվյալներին նրա պատմածից կարող ենք լրացնել, որ Բերդուսը Ղիյաս ալ-Դին Քեյ Խոսրովը գրավել է «ապահովության երաշխիքով» («Աման»-ով) և ձեռնամուխ եղել դրա վերակառուցմանը, իսկ գրաված մյուս բոլոր բերդերը քանդել է: Ըստ Իբն Վասիլի՝ սելջուկ սուլթանը տեղացած առատ ձյան պատճառով վերադարձել է իր երկիրը: Մինչ այդ արդեն նա մեծ թվով բերդեր էր գրավել³⁸⁵:

³⁸² Խոսքն այն ունեցվածքի մասին է, որ Քեյ Խոսրովը թողել էր Կիլիկիայում, երբ իր երկրից աքսորված վիճակում էր (նախքան 1204 թ.):

³⁸³ Խոսքը մի քանի տարի առաջ տեղի ունեցած դեպքերի մասին է:

³⁸⁴ **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 159-160:

³⁸⁵ **Ibn Wāṣil**, Mufarriḡ al-kurūb, v. 3, էջ 187:

Եգիպտոսի սուլթանի միջնորդության մասին վկայում է նաև Անանուն Եդեսացին: Խոսելով Լևոն Ա-ի կողմից Իկոնիայի սելջուկների զորաբանակը դարանակալելու և կոտորելու, ապա, ի պատասխան, Իկոնիայի սուլթանի կողմից Բերդուսի գրավման մասին, ասորի պատմիչն ավելացնում է. «Գրավելով Բերդուս կոչվող բերդը, նա ուզեց մտնել երկրի խորքեր, բայց ալ-Մալիք ալ-Ադիլի միջնորդությամբ նրանց միջև հաշտություն կայացավ»³⁸⁶:

Փաստորեն՝ անսալով Կիլիկիայի թագավորի խնդրանքին՝ ալ-Մալիք ալ-Ադիլը նամակներ գրեց Քեյ Խոսրովին և ալ-Մալիք ալ-Ջահիրին՝ համոզելով, որ նրանք հաշտություն կնքեն Կիլիկյան Հայաստանի հետ, ինչն իրականացավ: Ըստ հաշտության՝ Լևոն թագավորը պետք է Բաղրասը հանձներ Տաճարականներին, չմիջամտեր Անտիոքի գործերին և վերադարձներ Քեյ Խոսրովի՝ իր երկրից արտաքսված ժամանակ (եղբոր՝ Ռուքն ալ-Դինի իշխանության (1196-1204) օրոք)³⁸⁷ Կիլիկիայում ի պահ տրված ունեցվածքը³⁸⁸:

Ուշագրավ է, որ Կիլիկյան Հայաստանի և մուսուլմանական պետությունների միջև կնքված պայմանագիրը վերաբերում էր ոչ միայն Հայոց թագավորության ու սուլթանությունների, այլ նաև Հայոց թագավորության, Անտիոք-Տրիպոլիսի կոմսության ու Տաճարականների միջև գոյություն ունեցող խնդիրներին: Այդ իրողությունը մեկ անգամ ևս փաստում է Հալեպի Այյուբյան և Իկոնիայի սուլթանության հետ Կիլիկյան Հայաստանի ռազմական հակամարտության մեջ Անտիոքի գահաժառանգման խնդրի որոշիչ դերը:

³⁸⁶ Անանուն Եդեսացի, էջ 172:

³⁸⁷ Ռուքն ալ-Դինը մահացել է 1204 թ.-ին, հետևաբար հիշատակվող իրադարձությունները տեղի են ունեցել մինչև այդ:

³⁸⁸ Տե՛ս **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 160:

Հասկանալի է, որ Կիլիկյան Հայաստանը որքան էլ ռազմաքաղաքական առումով հզոր լիներ, ի վիճակի չէր միաժամանակ պայքարելու երեք հարևան պետությունների դեմ: Ակնհայտ էր, որ ինչպես այլ դեպքերում (օրինակ՝ 1190 թ.), այդ անգամ նույնպես Հայոց թագավորության վերնախավը պետք է շեղվեր ավանդական դիվանագիտությունից. հանգամանք, որն ուներ նախընթաց: Խոսքը վերաբերում է Սալահ ալ-Դինին Գրիգոր Դ Տղայի հղած՝ վերոբերյալ նամակներին:

Ի տարբերություն վերջինների, Լևոնի՝ վերոհիշյալ նամակի (կամ նամակների) մանրամասները մեզ հայտնի չեն, բայց պարզ է, որ այն նպատակ ուներ Կիլիկիան դուրս բերել թշնամական օղակից:

Իսկ ինչն էր հույս տալիս Լևոնին, որ իր դիմումը կարող է դրական արձագանք ստանալ: Նախ, չի բացառվում, որ դա Լևոն Ա-ի՝ Այյուբյաններին ուղղած առաջին գրությունը չէր³⁸⁹: Ալ-Մալիք ալ-Ադիլը, անշուշտ, չէր կարող նպաստել հայերի կողմից Անտիոքի գրավմանը, բայցև իր պետության շահերին դեմ էր Իկոնիայի սելջուկյան սուլթանության՝ չափից ավելի հզորացումը: Իրողությունն այն է, որ XIII դ. առաջին տասնամյակներին այդ սուլթանությունն այնքան էր հզորացել (և այդ միտումը շարունակվեց մինչև 1243 թ.), որ կարող էր վտանգավոր և անվերահսկելի ուժ դառնալ ոչ միայն Կիլիկիայի, այլև հենց Այյուբյանների համար:

³⁸⁹ Չի բացառվում, որ Լևոն Ա – ալ-Մալիք ալ-Ադիլ նամակագրությունն ու դիվանագիտական կապերը հաստատվել են նախքան 1208 թ.: Միաժամանակ 1207-1208 թվականները կարևոր ժամանակ էին Այյուբյանների տարածաշրջանային քաղաքականության ակտիվացման տեսակետից: Այդ ժամանակ է, որ ընդարձակվեցին ու ամրապնդվեցին Այյուբյանների դիրքերը Վերին Միջագետքում (Ջազիրա), նրանք վերջապես տիրացան Խլաթին ու Վանա լճի ավազանին, միաժամանակ հետ մղելով Վրացական պետության և այլ հակառակորդների հարձակումները: Այդ ամենը համընկավ Լևոն Ա-ի և Ռայմոնդ-Ռուբենի ղեկավարությամբ Անտիոքի ժամանակավոր գրավման հետ:

Ինչ վերաբերում է Հալեպի Այյուբյաններին, ապա սրանց նամակ ուղարկելու շարժառիթը մի փոքր այլ էր: Եգիպտոսի՝ արդեն հզորացող Այյուբյանները ձգտում էին պատեհ առիթի դեպքում զսպել Հալեպի սուլթանության ծավալապաշտական նկրտումները: Այս տոհմի՝ Հալեպի ճյուղը բավականաչափ ինքնուրույն գոյատևում էր շուրջ 14 տարի և նույնիսկ Հարավային Ասորիքին իշխելու հարցում ընդդիմանում Եգիպտոսին: Այդ քայլով ալ-Մալիք ալ-Ադիլն իր եղբորորդուն՝ ալ-Մալիք ալ-Չահիրին նաև հասկացնում էր, որ չմասնակցելու Իկոնիայի սելջուկների արկածախնդիր քայլերին, այլ անհրաժեշտության դեպքում զինական օգնություն ցույց տար համաայյուբյան բնույթի ռազմարշավներին: Այս վերջին հանգամանքն ակնարկում է նաև Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմը:

Ամենայն հավանականությամբ Լևոն Մեծագործը լավ տեղյակ էր ալ-Մալիք ալ-Չահիրի և նրա հորեղբոր՝ ալ-Մալիք ալ-Ադիլի հարաբերություններին: Նա նաև չէր պատրաստվում կատարել հաշտությամբ սահմանված պայմանները: Եվրոպացի հետազոտողը նշում է՝ «ավելորդ է ասելը, որ համաձայնագրում նշված այդ պայմանները այդպես էլ պիտի մնային թղթի վրա»³⁹⁰: Համենայնդեպս, Եգիպտոսի սուլթանի միջնորդության շնորհիվ Կիլիկիան առժամանակ փրկվեց մի քանի ճակատով պատերազմելու ծանր հեռանկարից:

Լևոն Ա-ը կատարեց միայն Իկոնիայի սուլթանության հանդեպ ստանձնած պարտավորությունը:

Այս հաշտությունից (1208 թ.) հետո Տաճարականներից բռնագրավված տիրույթների ու ունեցվածքի, ինչպես նաև Անտիոքի գահաժառանգման հարցերը շարունակեցին խնդրո առարկա մնալ, ինչը հաստատվում է Լևոն Ա-ի և Հռոմի պապի՝ 1209-1213 թթ. նամակագրությամբ: Իհարկե, Պապին իրենց կող-

³⁹⁰ Cahen Cl., La Syrie du Nord, էջ 614:

մը հակելու ջանքեր գործադրում էին ինչպես Տաճարականները, այնպես էլ նրանց դաշնակից Անտիոք-Տրիպոլիսի կոմս Բոհեմունդ IV-ը: Հարկավ, նրանց հավաստիացումներից ոգեշնչված Պապը գրում էր, որ Լևոն Ա-ի և Անտիոք-Տրիպոլիսի կոմսի միջև շարունակվող հակամարտությունը կարող է մուսուլմանների կողմից Անտիոքի գրավման պատճառ դառնալ³⁹¹:

Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան դաշինքի գոյությունը հիմնադրվում էր Պապի մտավախությունը, առավել ևս, որ այս երկու սուլթանությունների գլխավոր նպատակը ոչ թե Անտիոքի նվաճումն էր, այլ Կիլիկյան Հայաստանի թուլացումը: Նամակներից մեկում, փորձելով արդարացնել Անտիոք-Տրիպոլիսի կոմսության հետ Տաճարականների համագործակցությունը, Պապը Լևոնին գրում էր, որ նա, Բաղրաս ամրոցը նրանցից վերցնելով, մեծապես թուլացրել է այդ ասպետական միաբանության ուժը՝ նրան զրկելով մուսուլմանների դեմ պայքարելու հնարավորությունից:

Կիլիկիայի հայկական պետության արտաքին քաղաքականության այս շրջադարձն ինչ-որ չափով ազդեց Պապի դիրքորոշման վրա, որն ակնհայտ է Լևոն Ա-ին հասցեագրած 1209 թ. հուլիսի 6 թվակիր՝ մեղմ ու սիրալիր նամակի ոճից: Անտիոքի նկատմամբ Լևոնի նկրտումները հաճախ քննադատող Ինոկենտիոս III-ը Հայոց արքային հայտնում է, որ նրա պահանջով դատավորներ է ուղարկում խնդրի քննության համար և, հորդորելով առաջնորդվել միայն օրենքով, գրում է. «Սակայն ամենասիրելի որդի, սա հրամայելով չենք ասում, այլ շատերի կարծիքը հայտնելով, որ հասկանաս, թե որքան հոգատարությամբ ենք վերաբերվում քո նկատմամբ, երբ դու մինչ այժմ Անտիոքի վրա հարձակմանը վերջ չես տվել. քո խնդրանքով... երեք դատավոր-

³⁹¹ Տե՛ս *Acta Innocentii PP. III (1198-1216)*, էջ 362-363:

ներին ուղարկում ենք իրականացնելու [քննությունը – Վ. Տ.- Ղ]»³⁹²:

Դատելով հետագա նամակագրությունից՝ Լևոն Ա-ը հրաժարվել է ինչպես Տաճարականներին, այնպես էլ Անտիոք-Տրիպոլիսի կոմսությանը զիջումներ կատարելուց՝ առաջ բերելով Պապի զայրույթը, որն ամբողջությամբ արտահայտվել է նրա՝ 1213 թվակիր նամակում, որտեղ պահպանվել է մի ուշագրավ տեղեկություն, որ Լևոն Ա-ը, Տարսոնից լատին եկեղեցականներին վնդեղելով, այնտեղ բնակեցրել է հույների³⁹³: Այս և ներկայացվելիք իրադարձության միջև խիստ որոշակի կապ չարձանագրելով՝ նկատենք, որ նույն թվականին կամ մինչև հաջորդ տարվա օգոստոսը Լևոնը խնամիական կապ է հաստատում Նիկիայի բյուզանդական կայսր Թեոդորոս I Լասկարիսի (1204-1221) հետ՝ իր եղբոր դստերը նրան կնության տալով³⁹⁴: Ինչևէ, վերոբերյալն ուշագրավ զուգահիսություն է, ինչը վկայում է Կիլիկիայի Հայոց թագավորի բազմաբևեռ արտաքին քաղաքականության մասին, որն ինչպես Հռոմի պապական աթոռի, այնպես էլ Մերձավոր Արևելքի խաչակրաց ու մուսուլմանական պետությունների հետ փոխհարաբերություններում կտրուկ շրջադարձ ապրեց 1216 թ., երբ Լևոնին հաջողվեց կրկին գրավել Անտիոքն ու իշխանական գահին բազմեցնել Ռայմոնդ-Ռուբենին:

XIII դ. առաջին տարիներից հետո Հռոմի պապերի հետ Կիլիկիայի վերնախավի նամակները 1208-1213 թթ. սկսում են ավելի սակավ դառնալ և գրեթե դադարում են: Բացի այդ, Լևոն Ա-ը, իրեն բավականաչափ զորեղ զգալով և այլևս շոշափելի օգ-

³⁹² Նույն տեղում, էջ 366:

³⁹³ Տե՛ս նույն տեղում, էջ 439-441:

³⁹⁴ **Բարթիկյան Հ.**, Հայ-բյուզանդական նոթեր, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա., Երևան, 2002, էջ 51-55, **Բոզոյան Ա.**, Կիլիկիայի հայկական պետությունը Բյուզանդիայի կայսերական և պատրիարքական վավերագրերում (ընդհանուր ակնարկ), «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», Երևան, 2016, էջ 58-66:

նություն չակնկալելով կաթոլիկ եկեղեցուց, առավել հաստատուն կանգնում է ազգային եկեղեցու դիրքերի վրա: Միաժամանակ, ի պատասխան արևմուտքից եկող պահանջների՝ հանուն համաքրիստոնեական նպատակների պայքարելու մուսուլմանների դեմ, նա պատասխանում է, որ քանի դեռ Անտիոքի խնդիրը լուծված չէ, չի կարող պայքարել մուսուլմանների դեմ՝ վտանգելով իր երկիրը³⁹⁵:

Այդ ամբողջ ընթացքում ամենից ավելի անզիջում էր Բաղրասի շուրջ Լևոն Ա-ի և Տաճարական ասպետների միջև պայքարը: Այս թշնամությունն իր գագաթնակետին է հասնում 1210-1211 թթ.: Հետևում է Հայոց թագավորի հանդեպ Պապի բանադրանքը³⁹⁶: Դա իհարկե չէր նշանակում հարաբերությունների վերջնական խզում, բայց ակնհայտ էր, որ XII դ. վերջի և XIII դ. առաջին տարիների աշխույժ նամակագրությունն ու ջերմ հարաբերությունները մնացին անցյալում: Միաժամանակ, Լևոն Մեծագործն ավելի բազմաբևեռ դարձրեց իր արտաքին քաղաքականությունը: Նա գրեթե միաժամանակ ակտիվ համագործակցություն հաստատեց Նիկիայի բյուզանդական կայսրության, Կիպրոսի թագավորության ու Հռոմեական սրբազան կայսրության հետ: Վիլբրանդ Օլդենբուրգցու վկայությամբ՝ Լևոնը Հռոմեական սրբազան կայսրության ինքնակալ Օթոն IV-ից (1198-1218) ստանալով թագ՝ 1211 թ. օգոստոսի 11-ին իր զարմիկ Ռայմոնդ-Ռուբենին հանդիսավորապես թագադրեց³⁹⁷:

Նույն այս բազմաբևեռ քաղաքականության դրսևորումներից էր Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտոսի Այյուբյան սուլթանության միջև գործակցության հաստատումը:

³⁹⁵ Տե՛ս **Cahen Cl.**, *La Syrie du Nord*, էջ 616.

³⁹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 617: Տե՛ս նաև **Lawrence**, նշվ. աշխ., էջ 45:

³⁹⁷ **Wilbrand of Oldenburg**, *Journey in the Holy Land (1211-1212)*, **Denys Pringle**, *Pilgrimage to Jerusalem and the Holy Land 1187-1291 (Crusader texts in translation)*, Ashgate, Farnham, 2012, էջ 74, 79:

**դ) Հայկական բանակի կողմից Անտիոքի գրավումը (1216):
Եգիպտոսի սուլթանության գործոնը:**

Չնայած 1208 թ. պայմանագրին, ինչպես նշվել է, Լևոն Ա-ը շարունակեց միջամտել Անտիոքի գահաժառանգման խնդրին: 1209 թ. նա Ռայմոնդ-Ռուբենին հայտարարեց գահաժառանգ, քանի որ արու զավակ չունեի: Այդպիսով փորձում էր մեկ պետության մեջ միավորել Կիլիկիան և Անտիոքը: 1210 թ. մահացավ Իկոնիայի սուլթան Քեյ Խոսրովը և Լևոն Մեծագործն անմիջապես միջամտեց նրա երկու որդիների միջև ծագած գահակալական պայքարին՝ ժամանակավորապես թուլացնելով իր գլխավոր հակառակորդներից մեկին:

Մինչ այդ Անտիոքում շարունակվում էր ներքին պայքարը: Բոհեմունդ IV-ը փորձում էր ամեն կերպ ազատվել իր հակառակորդներից: 1208 թ. նա բանտարկեց իր գլխավոր հակառակորդներից մեկին՝ Անտիոքի լատին պատրիարքին, ինչի հետևանքով Հռոմի հետ նրա հարաբերությունները սրվեցին: Բայց Բոհեմունդին այդպես էլ չհաջողվեց ազատվել իրեն ընդդիմացող ուժերից, որոնք շարունակում էին աջակցել Ռայմոնդ-Ռուբենին, և Հայոց թագավորը շուտով հաջողության հասավ³⁹⁸:

Լևոն Ա-ի որդեգրած ակտիվ արտաքին քաղաքականության մի արտահայտություն կարելի է համարել 1211-1213 թթ. հարևան Իկոնիայի սելջուկյան սուլթանության ներքին գործերին միջամտությունը: Սուլթան հոջակվաժ Քեյ Քաուս I-ի (1211-1220) եղբայր Ալա ալ-Դինը, փորձելով խլել իշխանությունը, օգնության կանչեց Լևոն Ա-ին՝ խոստանալով նրան հանձնել Կեսարիա քաղաքը: Լևոնն իր զորքով մոտեցավ Կեսարիային, բայց օրինական սուլթանը, ի վերջո, նրան համոզեց հետ քաշել զորքերն ու չմիջամտել գահակալական ներքին պայքարին: Ըստ Ռուստամ

³⁹⁸ Տե՛ս **Moutafian C**, *L'Arménie du Levant*, t. I, էջ 107-108:

Շուքուրովի՝ հայկական զորքերը հետ քաշելու որոշման մեջ իր դերն ունեցավ նաև Զազիրայի տեր Այյուբյան ալ-Մալիք ալ-Աշ-րաֆը, որը ևս միջնորդեց հոգուտ Քեյ Քաուսի³⁹⁹:

1216 թ. փետրվարի 14-ին Լևոն Մեծագործը «արուեստի և իմաստութեամբ»⁴⁰⁰ գրավեց Անտիոքը և այդ անգամ արդեն ավելի երկար ժամանակով գահին բազմեցրեց Ռայմոնդ-Ռուբենին: Ինչպես գրում է Սմբատ Սպարապետը, Լևոն Ա-ն Անտիոքի իշխաններից ոմանց (այդ թվում և սենեշալ Ամորիին) մեծ պարգևներ խոստանալով իր կողմը գրավեց: Վերջիններս գիշերով բացեցին քաղաքի դարպասները և հայոց զորքը մտավ քաղաք: Ֆրանկների մեծ մասն ամրացավ Անտիոքի միջնաբերդում, բայց շուտով ստիպված հանձնվեց: Անտիոքի պատրիարքը, քաղաքի մեծամեծերի ուղեկցությամբ, Լևոն թագավորի գլխավորությամբ Ռայմոնդ-Ռուբենին բազմեցրեց իշխանական գահին⁴⁰¹:

Լևոնը բարեհաճ վերաբերմունքի արժանացրեց քաղաքի բնակչությանը, ինչը նրա հաջողության գրավականներից էր: Այդ առումով հետաքրքրական է Իբն Վասիլի հետևյալ վկայությունը. «Այս տարվա⁴⁰² Շավալ ամսին Հայոց արքան՝ «Իբն Լևոնը», տիրացավ Անտիոքին և լավ վարվեց տեղի բնակչության հետ և արդարություն գործադրեց: Նրա (Անտիոքի) տեր Բրինսը⁴⁰³ բռնակալ մարդ էր և Իբն Լևոնի դիրքը բարձրացավ Անտիոքի ժողովրդի մոտ»⁴⁰⁴:

³⁹⁹ Տե՛ս **Шукуров Р. М.**, Образ Киликийской Армении в Анатолийских мусульманских источниках (XIII – начало XIV в.), էջ 94-95:

⁴⁰⁰ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 219:

⁴⁰¹ Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև **Bar Hebraeus**, էջ 370; **Սամուէլ Անեցի և Շարունակողներ, Ժամանակագրութիւն**, էջ 238; **Մաթևոսյան Կ.**, Հեթում պատմիչ Կողիկոսցին և նրա «Ժամանակագրությունը», էջ 50:

⁴⁰² Հիջրայի 612 թվական (1215 թ. մայիս 2 – 1216 մարտ 22):

⁴⁰³ Նկատի ունի Բոհեմունդ IV Միականուն:

⁴⁰⁴ **Ibn Wasil**, Mufarriğ, v. III, էջ 233:

Անտիոքի գրավումը Լևոն Մեծագործի ռազմաքաղաքական խոշորագույն ձեռքբերումն էր, որը նաև դիվանագիտական խոշոր հաղթանակ էր: Առաջին հերթին, ճիշտ էր ընտրված Անտիոքի նվաճման պահը: Սկսվել էր Խաչակրաց հինգերորդ արշավանքը (1213-1221 թթ.), որն անկախ իր ուժգնությունից ու արդյունավետությունից, Այյուբյաններին ստիպեց իրենց ուժերը կենտրոնացնել այդ ճակատում: Հետևաբար՝ հույս կար, որ Հալեպը չէր կարող ամեն առիթով օգնության հասնել Բոհեմունդ IV-ին: Այնուամենայնիվ, Անտիոքին տիրելուց հետո Լևոն Ա-ն այնտեղ եղած գերի մուսուլմաններին անմիջապես ուղարկեց Հալեպ՝ կանխելով ալ-Մալիք ալ-Ջահիրի հավանական միջամտությունը. «...և նա (Լևոնը) ազատ արձակեց մի խումբ մահմեդական գերիների, որոնք գտնվում էին Անտիոքում և նրանց տեղափոխեց [Հալեպ] և հաշտություն եղավ իր և ալ-Մալիք ալ-Ջահիրի միջև»⁴⁰⁵: Իզզ ալ-Դին Իբն Շադդադը, որը նույնպես փաստում է Անտիոքի գրավումը, այս մասին գրում է. «Երբ Իբն Լավունը տիրեց միջնաբերդին, իսկ Բիմունդը (իմա՝ Բոհեմունդը) վերադարձավ Տրիպոլի, Իբն Լավունը գրեց ալ-Մալիք ալ-Ջահիր Աբու ալ-Ֆաթի Բայբարսին՝ տեղեկացնելով, որ ինքը նրա ծառայության տակ է և [երբեք] չի հակառակվի նրա կարգադրությանը և կարծիքին, և որ ինքը Անտիոքը գրավել է [հենց] նրա անունից ու ազատ արձակել այնտեղ եղած մուսուլման գերիներին և ուղարկել Հալեպ»⁴⁰⁶: Լևոնի այդ քայլը, ինչպես նաև նրա և Եգիպտոսի սուլթանի գործակցությունը զսպեցին Հալեպի սուլթանին՝ կանխելով վերջինիս միջամտությունը:

Անտիոքին տիրելուց հետո Լևոն Մեծագործը վերականգնեց հարաբերությունները նաև լատին եկեղեցու հետ՝ վերահաստատելով Տարսոնի ու Մամեստիայի կաթոլիկ եպիսկոպոսական

⁴⁰⁵ **Ibn Wasil**, v. III , էջ 233, Տե՛ս նաև **Cahen Cl.**, Na Syrie du Nord, էջ 621:

⁴⁰⁶ **'Izz al-Din ibn Šaddād**, al-A'īn al-ḥaṭīra, ց. 1.2, էջ 408-409:

աթոռները և Բաղրասը, այնուամենայնիվ, վերադարձնելով Տաճարականներին⁴⁰⁷: Կատարվածը Կիլիկյան Հայաստանի ճկուն դիվանագիտության բարձրակետն էր:

Անտիոքի գրավմանն ու Բոհեմունդ IV-ի կոչին, ըստ էության, առաջինն արձագանքեց Իկոնիայի սուլթան Քեյ Քաուսը: Ըստ Սամվել Անեցու շարունակողներից մեկի՝ «եկն բազմօք զօրօք ի վերայ թագաւորին Լեւոնի եւ պաշարեաց զբերդն զԿապան, եւ թագաւորն Լեւոն զօրօք իւրովք մարտեաւ ընդ նմա եւ զառաջինն յաղթեաց, բայց յետոյ զօրքն անմտութեամբ պարտեցան ի սուլտանէն»⁴⁰⁸:

Իբն Վասիլի համաձայն՝ Բաղրասը Տաճարականներին վերադարձնելուց և իր քեռորդուն (իրականում՝ եղբոր թոռանը) Անտիոքում նստեցնելուց հետո Լևոնը վերադարձավ հայրենիք, որովհետև վախենում էր Իզզ ալ-Դին Քեյ Քաուսից⁴⁰⁹:

Անտիոքի գրավման լուրը, այդուհանդերձ, խուճապ առաջացրեց Հալեպում: Ալ-Մալիք ալ-Ջահիրը դիմեց Իկոնիայի սուլթան Քեյ Քաուսին⁴¹⁰ և Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլին՝ կոչ անելով ընդդեմ Լևոն Ա-ի թագավորության միացյալ արշավանքի: Այդ անգամ նա այլևս ալ-Մալիք ալ-Ադիլի հետ մեծ հույսեր չէր կարող կապել, քանզի ինչպես գրում է Իբն ալ-Ադիմը. «Եվ նա (ալ-Մալիք ալ-Ջահիրը) ուղղվեց Եգիպտոս: Եվ սուլթանը փոստաձիեր պատրաստեց որպեսզի թարմ լուրեր ստանա, թե

⁴⁰⁷ Տե՛ս **Ibn Wasil**, v. III, էջ 233: Դատելով Վիլբրանդ Օլդենբուրգցու հաղորդումից՝ Բաղրասը մինչև 1212 թ. եղել է Կիլիկյան Հայաստանի իշխանությունների ձեռքում (տես **Wilbrand of Oldenburg**, էջ 73):

⁴⁰⁸ **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, էջ 238:

⁴⁰⁹ Տե՛ս Ibn Wasil, Mufarrıg al-kurūb, v. III, էջ 233:

⁴¹⁰ Ըստ Իբն Վասիլի՝ ընդհակառակը, Քեյ Քաուսն է դիմում ալ-Մալիք ալ-Ջահիրին, որ միասնաբար հարձակվեն ու ազատեն Անտիոքը Լևոն թագավորից: Ի պատասխան այս նախաձեռնության ալ-Մալիք ալ-Ջահիրը առաջարկում է, որ Իկոնիայի սելջուկները Հայոց թագավորության վրա հարձակվեն Մարաշի կողմից, իսկ ինքը՝ Դարպասակի, իսկ պրինցը թիրախի Անտիոքը՝ իր տրամադրության տակ ունենալով Դամասկոսի, Համայի և Հոմսի զորքերը:

ինչ է պատահում իր հորեղբոր (ալ-Մալիք ալ-Ադիլի) հետ, որպեսզի իր անելիքն իմանա, եթե նրա կողմից որևէ կասկածելի քայլ նկատի: Եվ ինքն էլ անձնապես դիմեց Քեյ Քաուսին և այս բոլոր եղածի մեջ իր նպատակն էր բանակը պատրաստ վիճակի մեջ պահել և պատրաստ լինել Քեյ Քաուսին ընդառաջ գնալու և միանալու նրան առաջին հերթին [հարձակվելու] համար «Իբն Լևոնի» երկրի վրա: Եվ «Իբն Լևոնը» տիրել էր Անտիոքին և սուլթանն անելանելի կացության մեջ հայտնվեց իր հարևանի սահմանակից լինելու պատճառով, քանզի գիտեր որ [Լևոնը] իր հորեղբոր (ալ-Ադիլի) հովանու տակ էր»⁴¹¹:

Ուշագրավ է Իբն Վասիլի տեղեկությունը, որը բացահայտում է ինչպես ալ-Ադիլի և ալ-Ջահիրի ներքին հակասությունները, այնպես էլ Եգիպտոսի Այյուբյան սուլթանի խաղացած դերը Հալեպն Իկոնիայի սուլթանությունից հեռու պահելու, հետևաբար Կիլիկիայի վրա հարձակումը զսպելու գործում: Պատմիչը նշում է. «Ալ-Մալիք ալ-Ջահիրը մարդ ուղարկեց ալ-Մալիք ալ-Ադիլի մոտ որպեսզի խորհրդակցի այդ հարցի»⁴¹² մասին, բայց ալ-Ադիլը մերժեց նրա տեսակետը (զաղափարը) և հայտնեց, որ նրան (ալ-Մալիք ալ-Ջահիրին) անգամ չի ցանկանում տեսնել: Եվ տեղյակ պահեց, թե այս հարցի մեջ ինչ չար գործեր (խարդավանքներ) կան»⁴¹³:

1216 թ. վերաբերող հաղորդումները գալիս են հաստատելու նաև նախորդ հիշատակումները Լևոն Ա - ալ-Մալիք ալ-Ադիլ՝ 1208 թ. նամակագրության և հաստատված սերտ հարաբերությունների մասին: Արաբ պատմիչների տեղեկություններից կարելի է մակաբերել, որ Լևոն Ա-ի և ալ-Ադիլի գործակցությունը

⁴¹¹ **Ibn al-Adim**, Zubdat al-Halab, t. III, էջ 168-169:

⁴¹² Խոսքը Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի վրա Իկոնիայի՝ Տրիպոլիսի հետ համաձայնեցված հարձակման մասին է:

⁴¹³ **Ibn Wasil**, v. III , էջ 233:

1208-1216 թթ. ու հավանաբար նաև հետագա տարիներին, եղել է տևական:

Թեև նամակների մանրամասն բովանդակությունը մեզ հայտնի չէ, սակայն ենթադրելի է, որ Լևոն Ա-ը նույնիսկ ձևակա- նորեն ճանաչել է Եգիպտոսի սուլթանի գերազահությունը, ինչը նրան ոչինչ չէր պարտավորեցնում՝ թեկուզ հաշվի առնելով ալ- Մալիք ալ-Ադիլի սուլթանության և Կիլիկիայի՝ սահմանակից չլի- նելը: Լևոն Ա-ը քաջատեղյակ էր Այյուբյան տոհմի՝ տարբեր ներ- կայացուցիչների միջև առկա ներքին հակասություններին և ձգ- տում էր ալ-Ադիլի հետ գործակցությամբ զսպել նրա եղբորոր- դուն՝ այդ իսկ եղանակով չեզոքացնելով հակակիլիկյան եռյակ դաշինքի հանգուցային անդամին:

Այդ անգամ Հալեպի Այյուբյանները խուսափեցին հայկա- կան ուժերի վրա հարձակվելուց, քանզի ոչ միայն չստացան Եգիպտոսի աջակցությունը, այլև կարող էին հարուցել գերազահ սուլթանի զայրույթը՝ նրա մտերիմ միապետի դեմ պատերազմ սկսելով: Հալեպի սուլթանության՝ հնարավոր հարձակումը վերջ- նականապես կանխելու նպատակով Լևոն Ա-ը հանկարծակիի բերեց ալ-Ջահիրին՝ ալ-Ադիլից հետո նամակ ուղարկելով նաև նրան:

Ըստ Իբն Վասիլի՝ Լևոն Ա-ն իր բարեկամությունը և նույ- նիսկ հավատարմությունն է հայտնում Այյուբյաններին: Հայոց արքան խնդրում է դադարեցնել հարձակումները: Հմուտ դիվա- նագիտություն բանեցնելով՝ Լևոնն ալ-Մալիք ալ-Ջահիրին հի- շեցնում է, որ երբ նա երկիցս իր բոլոր զորքերն ուղարկել էր Դա- մասկոսը գրավելու, ինքը կարող էր ազատորեն ներխուժել Հալե- պի սուլթանություն և մեծ վնասներ պատճառել, բայց չի արել՝ գերադասելով ծառայություն մատուցել Այյուբյաններին: Լևոնը հաջորդիվ նշում է, որ իր ծառայություններն ավելին են, քան Բո- հեմունդ IV-ինը, որի հետ ալ-Ջահիրը դաշնակցում է: Կիլիկիո արքան իր պարտքն է համարում ավելացնել, որ Անտիոքում իր

փոխարեն նշանակված Ռայմոնդ-Ռուբենին ևս թելադրել է հավատարիմ մնալ Այյուբյաններին: Ըստ պատմիչի՝ Լևոնը նամակի հետ նաև մի փառահեղ ընծա է մատուցել ալ-Մալիք ալ-Ջահիրին, որով շահել է նրա վստահությունը⁴¹⁴:

Իբն Վասիլի այս հաղորդումն իր բնույթով բացառիկ է և էպպես նպաստում է Կիլիկյան Հայաստանի և Այյուբյանների փոխհարաբերությունների լիարժեք քննությանը:

Իբն ալ-Ադիմի և Իբն Վասիլի՝ վերոհիշյալ հաղորդումներից կարելի է եզրակացնել, որ 1208 թ. հետո Լևոն Մեծագործը շարունակել է բարեկամական հարաբերություններ պահպանել Այյուբյան սուլթանի հետ, քանի որ ութ տարի անց ևս այդ կապը իր դերը խաղաց: Եթե նկատի ունենանք Մերձավոր Արևելքում ալ-Մալիք ալ-Ադիլի քաղաքական կշիռը և այն, որ նա չէր կարող շահագրգռված լինել Կիլիկիա-Անտիոք միացյալ պետության ստեղծմամբ, վերոհիշյալ գործակցության հաստատման մեջ հիմնական դերը պետք է վերագրել Լևոն թագավորին՝ այն համարելով դիվանագիտական լուրջ նվաճում:

Վերոհիշյալ մեկուկես տասնամյակը կարելի է համարել Փոքր Ասիայի հարավ-արևելքի ու Հյուսիսային Ասորիքի համար կեսդարյա հակամարտության մեջ առաջին փուլը, որն արևելագետ Կլոդ Կանենը անվանել է «Անտիոքյան պատերազմ» (1201-1216)⁴¹⁵: Այն հնարավոր է դիտել իբրև Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության հզորության մի շրջան, մինչդեռ խաչակիրները ծանր օրեր էին ապրում:

Կիլիկյան Հայաստանը XIII դարի սկզբին ի վիճակի էր պարտության մատնել Անտիոք-Տրիպոլիսի խաչակիրներին, սակայն Բոհեմունդ IV-ը, արագ կողմնորոշվելով ստեղծված իրավիճակում, անմիջապես ձեռք բերեց ուժեղ և կայուն դաշնակիցներ՝

⁴¹⁴ Տե՛ս **Ibn Wasil**, v. III, էջ 235:

⁴¹⁵ Տե՛ս **Cahen Cl.**, *La Syrie du Nord*, էջ 596-623:

ի դեմս Հալեպի և Իկոնիայի սուլթանությունների: Թե՛ Հալեպի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրը, թե՛ Իկոնիայի սելջուկյան սուլթան Ռուքն ալ-Դինն ու նրա հաջորդները խիստ անհանգստացած էին Կիլիկյան թագավորության հզորացմամբ: Եթե Իկոնիայի սուլթանները ձգտում էին Լևոն Ա-ին թույլ չտալ ընդարձակելու իր թագավորության սահմանները դեպի հյուսիս և հյուսիս-արևելք, իսկ պատեհ առիթով փորձում էին գրավել կիլիկյան կարևոր բերդերը Տավրոսյան լեռներում, ապա Հալեպի սուլթանության համար «Անտիոքյան պատերազմը» կենսական նշանակություն ուներ:

Ինդիրն այն է, որ չնայած ալ-Մալիք ալ-Ջահիրը պահպանել էր իր սուլթանությունը և նույնիսկ որոշ չափով ընդարձակել այն՝ գրավելով Լաթաքիան ու Ջաբալան (դրանով իսկ ճեղքելով խաչակիրների շղթան ու դառնալով ծովային պետություն), սակայն նրա դիրքերը շարունակում էին մնալ անկայուն: Մի կողմից Հալեպի սուլթանության վրա անընդհատ կախված էր Եգիպտոսի ալ-Մալիք ալ-Ադիլի կողմից նվաճվելու վտանգը, իսկ մյուս կողմից երկրի խոշոր ավատատերերի մեջ շատ էին ընդդիմադիրները, որոնք գործակցում էին Եգիպտոսի սուլթանի հետ:

Հալեպի սուլթանության համար պակաս վտանգավոր չէր նաև Լևոն Մեծագործի առաջխաղացումը: Վերջինիս կողմից Անտիոքի գրավումն անմիջական սպառնալիք կստեղծեր Հալեպ քաղաքի համար: Այս ամենը ալ-Մալիք ալ-Ջահիրին ստիպում էր դաշնակիցներ փնտրելու Կիլիկյան Հայաստանի դեմ պայքարում:

Անտիոքը Կիլիկիային միացնելու հեռանկարը Հայոց թագավորությունը խիստ վտանգավոր էր դարձրել տարածաշրջանի երկրների համար: Ուստի՝ ձևավորվել էր Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա՝ հակակիլիկյան դաշինքը, որի դեմ Լևոն Ա-ը եռանդուն պայքարում էր մերթ զմերթ, մերթ դիվանագիտությամբ: Ռազմական արտահայտությունը հայկական զորքերի կողմից Ան-

տիրոջի չորս պաշարումներն էին (1201, 1203, 1208, 1216) ու երկու գրավումները (1208, 1216), Հալեպի Այյուբյան սուլթանության դեմ 1203-1206 թթ. պատերազմը և Իկոնիայի սուլթանության հետ գրեթե անվերջ զինաբախումները: Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Լևոն Ա-ի վարած ակտիվ արտաքին քաղաքականությունը, որն արտահայտվում էր 1199-ից ի վեր Հռոմի պապերի հետ աշխույժ նամակագրությամբ, ապա 1208/1209-ին ի պատասխան Լևոն Մեծագործի դիմումի Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի միջամտությամբ, որի արդյունքում Հալեպի և Իկոնիայի սուլթանները Հայոց թագավորության հետ հաշտություն կնքեցին և վերջապես 1216 թ. Լևոն Ա-ի վարած ակտիվ, բազմաբևեռ դիվանագիտությամբ, որն ընդգրկելով թե՛ Եգիպտոսի ու Ասորիքի Այյուբյաններին, թե՛ Հռոմի պապերին, գերմանական կայսրերին ու տարածաշրջանի այլ պետություններ, տվեց իր դրական արդյունքները:

ԳԼՈՒԽ Ե

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ՀԱԼԵՊԻ ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (1216-1230)

ա) Սիս-Հալեպ գինակցությունն ընդդեմ Իկոնիայի սուլթանության և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության

Լևոն Մեծագործի գահակալության վերջին տարիներին (1216-1219) երկրի միասնությունը մասամբ խախտվեց: Օգտվելով թագավորի հիվանդությունից ու թուլությունից՝ որոշ խոշոր ավատատերեր հրաժարվեցին նրան օգնել Իկոնիայի դեմ պայքարում: Թագավորի մահից հետո (1219 թ. մայիս) այս ավատատերերի կենտրոնախույս նկրտումներն ավելի բացահայտ դարձան:

Այս վիճակից փորձեց օգտվել նաև Ռայմոնդ-Ռուբենը, որը Լևոն Ա-ի գահակալության վերջին տարիներին թշնամացավ Հայոց թագավորի հետ և նույնիսկ նրան ձերբակալելու փորձ կատարեց: Իսկ մինչ այդ Ռայմոնդ-Ռուբենն իր դեմ էր տրամադրել նախկինում իրեն համակիր իշխաններին: Օգնություն չստանալով ոչ Կիլիկյան Հայաստանից և ոչ էլ Անտիոքի բնակչությունից՝ նա պարտվեց Բոհեմունդ IV-ի զորքից և եռամյա (1216-1219) կառավարումից հետո Անտիոքը կրկին զիջեց իր հորեղբորը⁴¹⁶: Ռայմոնդ-Ռուբենը փախավ Եգիպտոսի Դամիետտա նավահանգստային քաղաք, որը կարդինալ Պելաժի գլխավորությամբ պաշարել էին Խաչակրաց հինգերորդ արշավանքի մասնակիցները: Գահագուրկ իշխանը հույս ուներ վերջիններիս օգնությամբ նվաճել Կիլիկիան⁴¹⁷:

⁴¹⁶ Տե՛ս Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, 1870, էջ 520-521:

⁴¹⁷ Ռայմոնդ-Ռուբենի արարքի դրդապատճառների և նրա հետագա ճակատագրի մասին մանրամասն տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 225-229:

Բոհեմունդ IV-ի հաջողությանը նպաստեց Ռայմոնդ-Ռուբենի դեմ ֆրանկ ասպետ Գիյոմ դը Ֆարաբելի կազմակերպած դավադրությունը: Ռայմոնդ-Ռուբենը ոչ մի վճռականություն չցուցաբերեց և, փաստորեն, առանց լուրջ դիմադրության, գիշերով փախավ քաղաքից, իսկ նրան հավատարիմ Հիվանդախնամ ասպետները, տեսնելով իրենց իշխանի բացակայությունը, քաղաքի միջնաբերդը ստիպված հանձնեցին Բոհեմունդին: Այսպիսով՝ Բոհեմունդ IV-ը վերջնականապես գրավեց Անտիոքը և այնտեղ իշխեց մինչև իր մահը (1233 թ.):

Իրադրությունը փոխվեց նաև Հալեպի սուլթանությունում: Սուլթան ալ-Մալիք ալ-Չահիրը 1216 թ. մահացավ, և նրան հաջորդեց որդին՝ ալ-Ազիզը, որը պատմիչի վկայությամբ՝ երկու տարեկան և մի քանի ամսական երեխա էր⁴¹⁸ (այլ վկայությամբ՝ հինգ տարեկան)⁴¹⁹: Երկրի կառավարումը ստանձնեց ալ-Ազիզի խնամակալ (կամ աթաբեկ) Շիհաբ ալ-Դին Տուրդիլը:

Այսպիսով՝ 1216-1219 թվականներն աննպաստ էին Կիլիկիայի հայկական թագավորության և Հալեպի Այյուբյան սուլթանության համար, մինչդեռ մյուս երկու պետությունները՝ Իկոնիայի սելջուկյան սուլթանությունն ու Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունը, հաջողությամբ հաղթահարելով ներքին ու արտաքին մարտահրավերները, դարձան առավել զորեղ: Հաղթահարելով հակառակորդների դիմադրությունը՝ Բոհեմունդ IV-ը, ոչ միայն վերագրավեց Անտիոք-Տրիպոլիսի միասնական պետությունը, այլև սկսեց ոտնձգություններ կատարել Կիլիկիայի հանդեպ: Մյուս կողմից իր ամենազորեղ շրջանը թևակոխած Իկոնիայի սուլթանությունն⁴²⁰ անընդհատ հարձակման տակ էր պահում Լեոնային Կիլիկիան, երբեմն նաև՝ Ջազիրայի ու Ասորիքի Այյուբյան տիրույթները:

⁴¹⁸ **Bar Hebraeus**, էջ 369:

⁴¹⁹ Տե՛ս **Միքայել Ասորի**, Ժամանակագրություն, 1870, էջ 520-521:

⁴²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 506-507:

Վերջապես, այս նույն տարիներին տեղի ունեցավ Խաչակրաց հինգերորդ արշավանքը, որը ծավալվեց Եգիպտոսի Դամիետտա նավահանգստի շուրջ⁴²¹: Այն զբաղեցրեց Այյուբյանների զինված ուժերին՝ գործողությունների ազատություն տալով փոքրասիական սելջուկներին:

1216 թ. հետո Լևոն Ա-ին հաջողվեց զսպել Իկոնիայի սուլթանության անվերջանալի հարձակումներն ու ոստնձգությունները հարևան պետության հանդեպ միայն որոշ զիջումների գնով: Այսպիսով՝ Կիլիկյան Հայաստանի ու Հալեպի սուլթանության համար Իկոնիայի սուլթանությունը դարձավ լուրջ սպառնալիք: Վերջինիս պարտադրանքով երբեմնի թշնամիները՝ Կիլիկյան Հայաստանն ու Հալեպի Այյուբյան սուլթանությունը, դարձան գործակիցներ:

Այս մասին եզակի տեղեկություններ են պահպանվել Միքայել Ասորու երկի՝ հայերեն խմբագրություններից մեկի՝ 1219 թ. վերաբերող հետևյալ վկայության մեջ, որի կարևորությունը հաշվի առնելով՝ հղում ենք ամբողջությամբ. «Եւ ի սոյն իսկ յայսմ ամի արարեալ ժողով Սուլտանն Քեքայուզ զօրաց, առեալ և ի թագաւորէն Հայոց օգնականութիւն. գայ յերկիրն Հալպայ ի յԴապան և առնու զնա և անտի գնացեալ ի Թլպաշար առնու և զԹլպաշար և զԼնթափ: Եւ կամեցաւ գնալ ի վերայ Հալպայ. և երեք ամաւ յառաջ Սուլտանն Հալպայ վախճանեալ էր Մելեք Տահրն (ալ-Մալիք ալ-Չահիրը – Վ.Տ.-Ղ.): Եւ որդի նորա Մելեք Ազիզն մանուկ գոլով ամաց հնգից, ունելով զիշխանութիւնն: Եւ էր նորա աթապակ մի յոյժ իմաստուն. առաքեաց առ թագաւորն Հայոց

⁴²¹ Խաչակրաց հինգերորդ արշավանքի մասին մանրամասն տե՛ս **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 132-170, **Thomas C. Van Cleve**, *The Fifth Crusade, A History of the Crusades*, vol. II, էջ 377-428; *Christian Society and the Crusades 1198-1219* (Sources in Translation including the Capture of Damietta by Oliver of Paderborn), ed. by Edward Peters, University of Pennsylvania Press, Philadelphia, 1971, էջ 48-145; **Powell J. M.**, *Anatomy of a Crusade, 1213-1221*, University of Pennsylvania Press, Philadelphia, 1986:

Լեւոն, և խնդրեաց ի նմանէ օգնական լինել. թերեւս զերծանիցին հնարիք նորա ի հասեալ բարկութենէն. և խոստացան նմա տալ բազում գանձս ոսկոյ: Եւ թագաւորն Հայոց այնուիտեսեւ ի հոգս անկեալ իւրով կորովամիտ իմաստութեամբն. առաքեաց զանխլաբար առ Սուլտանն Հոռոմոց, մինչև ի սահմանս Թլալաշարայ էր, գրեալ առ նա այսպիսի օրինակաւ: «Թագաւոր Հայոց Լեւոն. եղբօր մերոյ Քեքայուզ Սուլտանից ի Տէր խնդալ: Յուշ լիցի քեզ իբրեւ սիրելոց մերում, զի իմացեալ հաստատեցաք. եթէ քառասուն ամիրայ ի զօրաց քոց դաշինս եղեալ են տալ զքեզ ի ձեռն Աշրափուն⁴²²: Եւ դուն այսուիտեսեւ զօգուտ անծին քո խորհեաց. զի մի անկցիս ի ձեռս ատելեաց քոց ողջ լեր»⁴²³:

Ապա պատմիչն ավելացնում է, որ երբ Լևոն թագավորի նամակը կարդացին սելջուկ սուլթանին, վերջինս զարհուրելով զորքին հրամայեց շտապ վերադառնալ: Ինքը նույնպես հետ դարձավ ու հրամայեց պատժել վերոհիշյալ 40 ամիրներին. «զոր իմացեալ Աշրափուն և զհետ մտեալ արար փախստական: Եւ ինքն դարձեալ էառ զԴապան և զԹլալաշար, և դարձոյց ի Հալապ: Եւ այսպիսի օրինակաւ այնքան մեծ Սուլտանն շփոթեալ ի պարտութիւն մատնէր. և հասեալ ի Կեսարիայ զամիրայն զայնուսիկ զքառասուն խաչել հրամայէր»⁴²⁴:

Պարզվում է, որ Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության գործակցությունն սկսվում է Լևոն Մեծագործի կյանքի վերջին ամիսներին: Դատելով այն հանգամանքից, որ Հայոց թագավորն օգնական զինուժ է տրամադրել սելջուկներին՝ (որպես պարտավորություն) կարելի է եզրակացնել, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել Կիլիկիայի հայկական թագավո-

⁴²² Խոսքը Ջագիրայի ու Դիար Բաքրի տեր ու Հալեպի հովանավոր ալ-Մալիք ալ-Աշրափի մասին է:

⁴²³ **Միքայել Ասորի**, Ժամանակագրություն, 1870, էջ 520-522: Ընդ որում, այս հատվածն առկա է միայն 1870 թ. հրատարակության մեջ, իսկ 1871-ի հրատարակության մեջ այն բացակայում է:

⁴²⁴ Նույն տեղում, էջ 522:

րության և Իկոնիայի սուլթանության միջև 1218 թ. կնքված պայմանագրից հետո⁴²⁵: Հայտնի է, որ նշված պայմանագրով Կոստանդին սպարապետին և մյուս գերյալ իշխաններին ազատելու դիմաց Լևոն Ա-ը տարածքային զիջումներ կատարեց և ընդունեց սուլթանի գերակայությունը, որը, ըստ երևույթին, ենթադրում էր նաև զինվորներ տրամադրելու պարտավորություն⁴²⁶:

Եթե հիմք ընդունենք Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» տվյալն⁴²⁷ այն մասին, որ Լևոն Մեծագործը վախճանվեց 1219 թ. մայիսի 1-ին, ապա ստացվում է, որ 1218 թ. և 1219 թ. առաջին չորս ամսվա ընթացքում հաջորդաբար տեղի են ունեցել վերոբերյալ իրադարձությունները՝ 1218 թ. հայ-սելջուկյան պայմանագիրը, սուլթան Քեյ Քաուսի արշավանքը Հալեպի սուլթանության վրա, վերջինիս աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուրքիլի դիմումը Լևոն Ա թագավորին, ու նրա միջամտությունը (կամ ավելի ճիշտ խորամանկությունը), սելջուկյան բանակի հետքաշումը և, վերջապես, Ռաբանի ու Թլբաշարի վերամիացումը Հալեպի Այյուբյան սուլթանությանը:

Մյուս կողմից, սակայն, Միքայել Ասորու՝ հայերեն խմբագրության մեջ պահպանված վկայությունը միանշանակորեն ընդունել չենք կարող, քանի որ այն չի հաստատվում ժամանակի այլ աղբյուրներով: Քեյ Քաուսի՝ 1218 թ. արշավանքի մասին պատմող մյուս պատմիչները՝ Իբն ալ-Ասիրը, Իբն Վասիլը, Իբն ալ-Ադիմը, ինչպես նաև Բար Հեբրեոսն այլ պատճառներ են դնում Ռումի սուլթանի նահանջի հիմքում: Քեյ Քաուսը, Սամոսատի կառավարիչ ալ-Աֆղալի հետ դաշնակցած, ում խոստացել էր հաջողության դեպքում Հալեպում սուլթան հռչակել, իսկապես

⁴²⁵ Պայմանագրի մասին տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության միջև 1218 թ. կնքված հաշտության պայմանագրի հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2010 թ., էջ 71-78:

⁴²⁶ Տե՛ս նույն տեղում:

⁴²⁷ **Սմբատ Սպարապետ**, Տարեգրք, 1956, էջ 223:

615 թ. Ռաբի I ամսում (1218 թ. հունիս) գրավել է Ռաբանը և Թել Բաշիրը: Ռումի սուլթանի առաջխաղացումը կասեցնելու նպատակով Հալեպի աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուղրիլն օգնության խնդրանքով դիմել է Եգիպտոսի սուլթան ալ-Ադիլին: Վերջինս իր որդի ալ-Աշրաֆին ուղարկել է Հալեպին օգնելու: Հուլիս ամսին թշնամական ուժերը հանդիպել են Մանբիջի մոտ, որտեղ Ռումի սուլթանը ծանր պարտություն է կրել Այյուբյաններից և ստիպված նահանջել: Ալ-Աշրաֆը վերագրավել է երկու զիջած բերդերը՝ փախչող թշնամուն հետապնդելով մինչև Բուրջ ալ-Ռասաս, որտեղ ստացել է հոր՝ ալ-Մալիք ալ-Ադիլի մահվան լուրը և հետ դարձել: Իկոնիայի սուլթանությունում Քեյ Քաուսի դեմ ծագած խռովության և այս իրադարձություններում Լևոնի ներգրավվածության մասին արաբական աղբյուրներում և Բար Հեբրեոսի «Ժամանակագրության» մեջ ակնարկներ չկան⁴²⁸: Ըստ Իբն ալ-Ասիրի՝ սելջուկ սուլթանը պարտություն է կրել և նահանջել, որովհետև «տակավին պատանի էր և պատերազմ վարելու գիտելիք չուներ»⁴²⁹: Թվում է՝ հայտնվել ենք անխուսափելի երկբայության առջև՝ հավատ ընծայե՞լ, թե՞ ոչ ասորի պատմիչի երկի՝ հայկական տարբերակներից մեկի՝ վերոհիշյալ վկայությանը: Բայց կա ևս մի հեղինակ, որ մեզ օգնում է դուրս գալ այս փակուղուց: Խոսքը Ռումի սելջուկների պաշտոնական պատմիչ, պարսկագիր հեղինակ Իբն Բիբիի մասին է, որը նույնպես դեպքերի հանգամանալից պատում է պահպանել⁴³⁰: Ըստ նրա՝ հալեպցիները, անկարող լինելով Քեյ Քաուսին լիարժեք ռազմական դիմադրություն ցույց տալ, դիմել են մի խաբուսիկ հնարքի: Նրանք բռնել են Ռումի մի բնակչի, որ հականե-հանվանե գիտեր Իկո-

⁴²⁸ Տե՛ս **Bar Hebraeus**, էջ 372-373; **Ibn al-Adīm**, Zubdat, v.III, էջ 181-182; **Ibn al-Amīd**, Ahbār al-Ayyūbiyyīn, էջ 10, ինչպես նաև **Cahen Cl.**, La Syrie du Nord, էջ 625-628:

⁴²⁹ **Ibn al-Aṣīr**, al-Kāmil, v. IX, էջ 392:

⁴³⁰ Տե՛ս **Ibn Bibī**, al-Muḥtaṣar, էջ 73-82:

նիայի սուլթանության բոլոր ամիրներին և նրանց ունեցած կոչումները (տիտղոսները): Հալեպցիները մեծ գումարներով կաշառել են նրան, նրա օգնությամբ կեղծ գրություններ պատրաստել, որոնք առերևույթ կհավաստեին սելջուկ ամիրների և ալ-Մալիք ալ-Աշրաֆի նամակագրությունը: Վերջիններս իբր իրենց հավատարմությունն էին հայտնել ալ-Մալիք ալ-Աշրաֆին և պատրաստվում էին դավադրություն կազմակերպել Քեյ Քաուսի դեմ: Այնուհետև Ռումի բնակչին ուղարկել էին այնտեղ, որտեղ այդ ժամանակ ճամբարել էր սելջուկ սուլթանը և նրա՝ մի ղուլամի միջոցով հանձնել կեղծ նամակները: Իբն Բիբին շարունակում է, որ երբ սուլթանը կարդացել է հիշյալ գրությունները, կասկածը նրա սիրտն է մտել: Երբ սելջուկյան բանակի մի զորախումբ բախվել է Այյուբյանների զորքի հետ և պարտվել, Քեյ Քաուսը, չնայած իր տրամադրության տակ 14 հազար զորք ունենալուն, վճռել է նահանջել՝ կորցնելով բոլոր նվաճած հողերը: Կասկածները սկսել են ավելի ու ավելի ճնշել նրան: Ճիշտ է, ամիրները փորձել են արդարանալ, բայց Քեյ Քաուսը նրանց չի հավատացել: Նա շղթայել է նրանց և մի փակ սենյակ լցնելով՝ այրել⁴³¹: Իհարկե, հետո սուլթանը, կարծես, զղջացել է իր արածի համար՝ գուցե հասկանալով, որ պատահածը Այյուբյանների հնարամտության արդյունքն էր, և փորձել է շարունակել արշավանքը, բայց այդ անգամ էլ խանգարել է նրան պատուհասած թոքախտը: Այսպիսով՝ հիվանդությունը ստիպում է Քեյ Քաուսին վերջնականապես հրաժարվել արշավանքից: Իսկ որոշ ժամանակ անց նա մահանում է⁴³²: Ճիշտ է, Իբն Բիբին ԼԼոն Ա-ի մասին չի էլ ակնարկում, բայց դժվար չէ նկատել, որ նրա և Միքայել Ասորու ժամանակագրության՝ հայերեն խմբագրության հաղորդումներն ակնհայտ կերպով ընդհանուր գծեր ունեն:

⁴³¹ Նույն տեղում, էջ 76-77, 80-81:

⁴³² Տե՛ս նույն տեղում, 82-83:

Հետևաբար՝ հաստատվում է վերոբերյալ միտքն առ այն, որ 1216-1219 թվականները թե՛ Հալեպի սուլթանության, թե՛ Կիլիկյան Հայաստանի համար շրջադարձային տարիներ էին: Այդ ընթացքում Իկոնիայի սուլթանության կտրուկ հզորացումն ու Անտիոք-Տրիպոլիսի կոմսության նոր աշխուժացումը Կիլիկյան Հայաստանին և Հալեպի Այյուբյան սուլթանությանը դարձրեցին բնական դաշնակիցներ, ինչն արտահայտվեց ինչպես 1219-ին, այնպես էլ հետագայում՝ 1225/1226-ին:

Լևոն Մեծագործի մահից հետո յոթ տարի շարունակ Կիլիկիան ապրում է անկայունության մի շրջան, որն ավարտվում է 1226 թ. Հեթում Ա-ի գահակալմամբ:

Մահվանից առաջ Լևոն Ա-ը, Ռայմոնդ-Ռուբենին զրկելով ժառանգական իրավունքներից, թագավորական իշխանությունը կտակել էր իր մանկահասակ դուստր Զաբելին՝ որպես խնամակալ կարգելով Բաղդասի (Գաստոն) տեր Ադանին (Սիր Ատան): Կիլիկյան Հայաստանի առաջին թագավորը նաև խնդրել էր Հայոց կաթողիկոսին, Լամբրոնի տեր Կոստանդինին և մյուս իշխաններին հոգատարություն և հավատարմություն ցուցաբերել Զաբելի նկատմամբ⁴³³: Նրանք Զաբելին պետք է ամուսնացնեին Հունգարիայի թագավոր Անդրաշ II-ի (1205-1235) որդի Անդրաշ կրտսերի հետ, սակայն այդ ամուսնությունը չկայացավ, քանի որ վերջինս, լսելով Լևոն Մեծագործի մահվան մասին, հրաժարվեց Կիլիկիա գալ⁴³⁴:

⁴³³ Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 222, տե՛ս նաև **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ.աշխ., հ. Բ, էջ 241:

⁴³⁴ Հունգարիայի թագավոր Անդրաշ II-ը Խաչակրաց հինգերորդ արշավանքի ղեկավարներից էր, որը սակայն մինչև Եգիպտոս չէր հասել, այլ հաստատվելով Պաղեստինի ծովափում՝ մասնակցել էր մի շարք ռազմական գործողությունների, ապա որոշել էր վերադառնալ հայրենիք: Ակրայից դեպի Եվրոպա ճանապարհին նա անցել էր Կիլիկիայով՝ ջերմ ընդունելության արժանանալով Լևոն Ա-ի կողմից: Այստեղ համաձայնություն էր կայացել նշանելու Զաբելին և Անդրաշ կրտսերին: Երկու թագավորները նույնիսկ նամակներով դիմել էին Հոնորիոս III պա-

Հավանաբար 1219 թ. Սիր Ադանը սպանվեց և Կոստանդին իշխանը դարձավ Ջաբելի միակ խնամակալը: XIII դ. 20-ական թթ.¹ երկրի համար ծանր տարիներին նա մեծ դեր խաղաց Կիլիկիայի հայկական թագավորության միասնականության և անկախության պահպանման գործում:

Լևոն Ա-ի և Սիր Ադանի մահից հետո Ռայմոնդ-Ռուբենն իր մոր (Ռուբեն Գ-ի դուստր Ալիս (Ալիծ)) և մի խումբ ֆրանկ ապետների հետ Եգիպտոսից նավեց դեպի Կիլիկիա՝ ափ դուրս գալով Կոռիկոսի նավահանգստում: Կոռիկոսի տեր պարոն Վահրամը սկզբում Ռայմոնդ-Ռուբենին ու նրա ուղեկիցներին թույլ չտվեց անցնել իր տիրույթներով, բայց հետո զոջաց ու որոշեց գործակցել նրանց հետ: Ռայմոնդ-Ռուբենն ու պարոն Վահրամը միացյալ ուժերով գրավեցին Տարսոնը, ապա Ադանան ու ճամբար խփեցին Մամեստիայի մոտ: Այնտեղ նրանց դեմ դուրս եկավ Կոստանդին պայլի բանակը՝ ստիպելով նահանջել մինչև Տարսոն, որը շուտով ազատագրվեց խոռվարարներից: Ապստամբության բոլոր ղեկավարները, որոնց թվում նաև Ռայմոնդ-Ռուբենը, ձերբակալվեցին⁴³⁵: Այդ իրադարձությունները տեղի ունեցան 1220-1221 թթ.: Կիլիկիայի գահին տիրելու Ռայմոնդ-Ռուբենի փորձը, ինչպես նաև երկրի վիճակն ու միջազգային իրադրությունը Կիլիկիայի իշխաններին ու հոգևորականությանը ստիպեցին շուտափույթ լուծել Ջաբելի ամուսնության հարցը:

Այդ ժամանակ Կիլիկիայի հայկական թագավորության համար հատկապես մեծ վտանգ էր ներկայացնում հյուսիսային հարևանը: Սկսած 1204 թ., երբ Խաչակրաց չորրորդ արշավանքի մասնակիցները գրավեցին Կոստանդնուպոլիսը, Իկոնիայի սելջուկները Փոքր Ասիայում գործողությունների լիակատար ազատություն ստացան:

պին վավերացնելու համար իրենց զավակների նշանադրությունը (տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ.աշխ., հ. Բ, էջ 236-239):

⁴³⁵ Տե՛ս **Bar Hebraeus**, էջ 379-381:

Սելջուկ տիրակալները Կիլիկիայի հյուսիսային սահմաններ ներխուժելու ամեն պատեհ առիթ օգտագործում էին: Այդպես եղավ 1208 և 1216 թթ.: Այդ վտանգը չէր թուլացել նաև XIII դ. 20-ական թթ.:

Ահա այսպիսի պայմաններում Կոստանդին իշխանը 1222 թ. խորհրդակցություն է հրավիրում՝ Զաբելին փեսացու ընտրելու համար: Կոստանդին պայլը Լամբրոնի իշխանների տոհմից էր, որը երկար տարիներ Ռուբինյանների անհաշտ թշնամին էր: Թեև Լևոն Ա-ի օրոք նրանց տիրույթները միացվել էին հայկական պետությանը, սակայն Կիլիկիայի իշխանների մեջ դեռևս թաքնված թշնամանք կար այդ տոհմի նկատմամբ: Այդ է պատճառը, որ 1222 թ. Կոստանդին իշխանը չհամարձակվեց իր որդիներից որևէ մեկի թեկնածությունն առաջադրել:

Երկար խորհրդակցելուց հետո, ի վերջո, Կիլիկիայի հայ իշխանները և բարձրաստիճան հոգևորականությունը որոշեցին Զաբելին ամուսնացնել Բոհեմունդ IV-ի որդու՝ Ֆիլիպի (Փիլիպոս) հետ⁴³⁶: Հայ իշխանները փորձում էին այս ամուսնությամբ վստահելի դաշնակից ձեռք բերել՝ ի դեմս Անտիոք-Տրիպոլիսի կոմսության: Բացառված չէ, որ նրանք նպատակ ունեին վերջ դնելու երկու պետությունների՝ ավելի քան քսանամյա հակամարտությանը՝ այդպիսով չեզոքացնելով նաև հարևան պետությունների հակակիլիկյան դաշինքները կամ դրանց ձևավորումը: Ի վերջո, Անտիոք-Հալեպ-Իկոնիա զինակցության հիմքում նաև Անտիոք-Կիլիկիա հակադրությունն էր: Զաբելի և Ֆիլիպի ամուսնությամբ կարելի էր խզել այդ դաշինքները:

Այսպիսով՝ Զաբելը 1222 թ. ամուսնացավ 16-ամյա Ֆիլիպի հետ, որը, ըստ պայմանավորվածության, պետք է հետևեր հայկական կենցաղին և կատարեր հայոց եկեղեցու ծեսերը: Առաջ-

⁴³⁶ Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 225:

վա նման երկիրը շարունակում էր կառավարել Լամբրոնի տերը՝ Կոստանդին իշխանը:

Ֆիլիպը մեկ-երկու տարի անց խախտեց հիշյալ պայմանները, արքունիքից հեռացրեց հայ իշխաններին և իրեն շրջապատեց ֆրանկներով. «Եւ Ֆիլիպն յորժամ եղեւ թագաւոր՝ սկսաւ եղջիր ածել իշխանացն Հայոց, եւ արհամարհէր զնոսա»⁴³⁷, - գրում է Սմբատ Սպարապետը:

Ֆիլիպի՝ նշված գործողություններում անպայման իր դերն ուներ նաև նրա հայր Բոհեմունդ IV-ը, որի դրոմամբ նա Անտիոք ուղարկեց Լևոն Մեծագործի թագը, արքայական գահը և այլ գանձեր: Ֆիլիպի այսպիսի գործելակերպից դժգոհ հայ իշխանները Կոստանդին իշխանի գլխավորությամբ ձերբակալեցին նրան ու արգելափակեցին Թիլ Համդուն ամրոցում, որտեղ էլ 1224 կամ 1225 թ. մահացավ (հնարավոր է՝ թունավորեցին):

Իբն Նազիֆ ալ-Համավի պատմիչն այս մասին գրում է. «Այդ թվականին (հիջրայի 619 թ. 1222/1223 թ.) Իբն Լավունի մահից հետո հայերի վրա թագավորեց Պրինցի որդին, որ ընդունեց նրանց դավանությունը: Սակայն կարճ ժամանակ անց նրան մեկուսացրին ֆրանկներին հարելու համար, ձերբակալեցին և նրանից գումար պահանջեցին, արքայի դստերն ամուսնալուծեցին նրանից և ամուսնացրին մեկ ուրիշի հետ»⁴³⁸:

Ըստ ասորի պատմիչ Բար Հերբեսուի՝ Ֆիլիպի գահընկեցության ու ձերբակալման փաստից վրդովված՝ Բոհեմունդ IV-ը պահանջում է իրեն հանձնել որդուն, բայց մերժում ստանալով՝ ներխուժում է Կիլիկիա՝ հասնելով Թիլ Համդուն ամրոց: Նա տեղեկանում է, որ որդին թունավորված է, իսկ մի քանի օր անց Ֆիլիպը մահանում է:

⁴³⁷ Նույն տեղում:

⁴³⁸ **Ibn Nazif al-Hamawī**, al-Tāriḫ al-Mansūri, էջ 96:

Այսպիսով՝ Ֆիլիպի երկամյա գահակալությունը Կիլիկիայի և Անտիոքի միջև ազգակցական կամ խնամհական կապերով ամրապնդված մի դաշինք ստեղծելու երկրորդ փորձն էր: Երկու դեպքում էլ թե՛ Լևոն Ա-ը, թե՛ Բոհեմունդ IV-ը վերջնական նպատակ ունեին՝ հարևան երկիրը միացնել սեփական պետությանը: Այդ փորձերից ոչ մեկը լիարժեք հաջողություն չունեցավ:

Ո՛չ Բար Հերետսը, ո՛չ Սմբատ Սպարապետը որևէ տեղեկություն չեն հաղորդում երկու պետությունների միջև ռազմական գործողությունների մասին: Մինչդեռ այդ մասին բավական մանրամասն շարադրում է Իբն ալ-Ասիրը. «Այդ տարում (հիջրայի 623 թ., 1226 հունվարի 2 – 1226 դեկտեմբեր 2) Անտիոքի տեր ֆրանկ Բրինսը (իշխան) հավաքեց մեծ զորք և շարժվեց հայերի դեմ, որոնք Իբն Լայունի (Լևոնի որդու) երկրի կիրճերում էին [ամրացած] և նրանց միջև սաստիկ պատերազմ տեղի ունեցավ»⁴³⁹: Ապա պատմիչը նկարագրում է, թե ինչպես ծագեց այդ պատերազմը: Նա իր շարադրանքում մեծ տեղ է հատկացնում Հռոմի Հոնորիոս III պապի դիրքորոշմանը Կիլիկիա-Անտիոք հակադրության վերաբերյալ: Ըստ արաբ պատմիչի՝ Բոհեմունդը Կիլիկիայի վրա հարձակվելու թույլտվություն է խնդրել պապից, սակայն մերժում ստանալով՝ դաշինք է կնքել Իկոնիայի սուլթանի հետ՝ որոշելով համատեղ ուժերով հարձակվել Հայոց թագավորության վրա: Ենթարկվելով իրենց անմիջական ղեկավար Հռոմի պապի ցուցումներին՝ Տաճարական և Հիվանդախնամ ասպետները հրաժարվում են ենթարկվել Անտիոքի իշխանին: Վերջինս պատերազմն սկսում է առանց նրանց մասնակցության⁴⁴⁰:

Ըստ Իբն ալ-Ասիրի՝ պայմանավորվածության համաձայն՝ Իկոնիայի սուլթանը հարձակման անցավ 1225 թ. վերջերին:

⁴³⁹ Իբն ալ-Ասիր, էջ 331:

⁴⁴⁰ Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 332:

Հյուսիսից ներխուժած Քեյ Կուբադ սուլթանին սկզբում հաջողվեց գրավել չորս բերդ, սակայն ձմեռը վրա հասավ, և նա ստիպված հետ քաշեց զորքերն ու վերադարձավ իր երկիր: Հատկանշական է, որ այս արշավանքի մասին բավական մանրամասն պատմում է նաև սելջուկների պատմիչ Իբն Բիբին: Դեպքերի՝ նրա նկարագրության մեջ, սակայն, որևէ ակնարկ չկա, որ արշավանքը պայմանավորված է եղել Անտիոք-Տրիպոլիսի Բոհեմունդ IV-ի դիմումով: Նրա վկայությամբ՝ սուլթանն Անտալիայի կառավարիչ Մուբարիզ ալ-Դին Էրթուկուշին և ամիր *Կումնինուս Մաֆրուզումին* (սելջուկահպատակ բյուզանդացի ազնվական) ուղարկել է Կիլիկիայի ծովափյա ֆրանկյան բերդերը գրավելու: Սելջուկյան զորքերը պաշարում են Ջանջին (Ճանճի) բերդը, որի պաշտպանները դիմում են «թաքվար Լիֆունի» օգնությանը (այսպես՝ սխալով է բնագրում. խոսքը, ակնհայտորեն, Կոստանդին Պալլի մասին է): Կիլիկեցիները, սակայն, պարտվում են, և սելջուկները գրավում են մոտ 40 բերդ՝ այդ թվում Մանավղան, Անդուշձան, Անամուրը, Սիկը և այլն⁴⁴¹:

Ինչևէ, ըստ Իբն ալ-Ասիրի հաղորդման շարունակության՝ երբ Բոհեմունդ IV-ն իր բանակով ներխուժեց Կիլիկիա, հայ իշխանները դիմեցին Հալեպի սուլթանությանը և ռազմական օգնություն ստացան այնտեղից: «Բոհեմունդը առաջ խաղաց, պատերազմեց նրանց (հայերի) հետ, սակայն արդյունքի չհասնելով՝ վերադարձավ»⁴⁴², - գրում է Իբն ալ-Ասիրը: Նույն դեպքերի մասին պատմիչը նշում է. «Հայերը լուր ուղարկեցին Հալեպի Շիհաբ ադ-Դինին՝ օգնության կանչելով և զգուշացնելով, որ վատ կլինի, եթե *Բրիհսը* գրավի իրենց երկիրը, քանի որ Հալեպի գավառներին դրացի է»⁴⁴³:

⁴⁴¹ Տե՛ս **Ibn Bībī**, Mukhtasar, էջ 129, տե՛ս նաև **Шукров Р.**, նշվ. աշխ., էջ 102-103:

⁴⁴² Տե՛ս **Իբն ալ-Ասիր**, էջ 333:

⁴⁴³ **Իբն ալ-Ասիր**, էջ 333:

Հալեպից ուղարկված «զենքն ու զորքը»⁴⁴⁴ վճռական նշանակություն ունեցան Բոհեմունդի հարձակմանը դիմագրավելու գործում: Կոստանդին պայլն աջակցություն ստացավ նաև Հիվանդախնամ և Տևոռնական ասպետներից, մինչդեռ Տաճարականները, ինչպես նախկինում, հակառակորդների շարքում էին:

Ըստ Կլոդ Կատնի՝ Հալեպի ուղարկած օժանդակ զորամասը հարձակման ենթարկեց Բաղրասը հենց Տաճարականներին հարվածելու նպատակով: Կիլիկիան վերջապես դուրս եկավ շրջափակումից, որը նրան ստիպում էր երկար ժամանակ միայնակ պայքարել հակառակորդների դեմ⁴⁴⁵:

Իբն ալ-Ասիրը միակ պատմիչն է, որ հաղորդում է Կիլիկիա-Հալեպ՝ վերոհիշյալ համագործակցության մասին: Զարմանալիորեն այս մասին լռում են ոչ միայն հայ (Սմբատ Սպարապետ, Կիրակոս Գանձակեցի և այլք), այլև արաբ պատմիչները, որոնց թվում «Հալեպի պատմության սերուցքը» երկի հեղինակ Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմը, որն այնքան հարուստ տեղեկություններ է հաղորդում նախորդ դեպքերի վերաբերյալ և լավատեղյակ է Հալեպի սուլթանի խնամակալ Շիհաբ ալ-Դին Տուրքիի գործունեությանը: Ինքը՝ Իբն ալ-Ասիրը, վերոհիշյալ դեպքերը նկարագրելուց հետո գրում է, որ այս մասին իրեն պատմել է «քրիստոնյաներից մի խելացի մարդ, որ եղել էր նրանց երկրում և իմացել նրա վիճակի մասին»⁴⁴⁶:

Մյուս պատմիչների լռությունը, սակայն, հիմք չէ՝ կասկածի տակ առնելու Իբն ալ-Ասիրի տեղեկությունները, երբ նա հիշատակում է, որ տեղեկատու անձ է ունեցել: Նա հայտնի է իբրև ճշմարտապատում հեղինակ, որը 1228-1231 թթ. ապրել է Հալե-

⁴⁴⁴ Նույն տեղում:

⁴⁴⁵ Տե՛ս Cahen C., *La Syrie du Nord*, էջ 635:

⁴⁴⁶ *Ibn al-Aṭīr, Al-Kāmil fi-l-tāriḫ*, v. X, էջ 470, տե՛ս նաև Իբն ալ-Ասիր, էջ 333:

պում՝ որպես աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուրքիլի անձնական հյուր⁴⁴⁷:

1225/1226 թ. հայ-արաբական զինակցությունն ամբողջովին համահունչ էր վերոհիշյալ չորս պետությունների մրցակցության տրամաբանությանը, քանի որ ի տարբերություն 1203 կամ 1208 թվականների՝ Կիլիկիայի հայկական թագավորությունն այլևս վտանգավոր չէր ո՛չ Անտիոքի, ո՛չ Հալեպի համար: Ընդհակառակը, տրամաբանական էր, որ Այյուբյանները թույլ չտային կրկին ուժեղացող Անտիոք-Տրիպոլիսի կոմսությանն իրեն միացնել նաև Կիլիկիան, միաժամանակ նաև մի փոքր զսպել օրեցօր հզորացող վտանգավոր հարևանին՝ Իկոնիայի սուլթանությանը:

Վերջապես, սա արդեն երկրորդ (առաջինը 1219 թ.) դեպքն էր Կիլիկյան Հայաստան – Հալեպի Այյուբյան սուլթանություն զինակցության, որը 1216 թ. հետո ստեղծված իրավիճակի արտահայտությունն էր:

Վերոգրյալ քննության հիմքով Սիս-Հալեպ՝ 1194-1230 թթ. հարաբերությունները կարելի է բաժանել երկու շրջափուլի՝ հակադրության (1194-1216) և համագործակցության (1216-1230): Առաջին շրջանին բնորոշ է անզիջում ռազմական պայքարը՝ տարածաշրջանում գերակա դիրք գրավելու համար, իսկ երկրորդին՝ զինակցությունն ընդդեմ օրեցօր հզորացող հարևանների:

Երկրորդ փուլը փոխաջակցության շրջան է ժամանակավոր դժվարություններ հաղթահարող (երկուսում էլ մանկահա-

⁴⁴⁷ Տե՛ս **Rosenthal F.**, Ibn al-Athir, Encyclopaedia of Islam (second edition), vol. III, 1986, էջ 723b: Իր խնամակալության (1216-1233) առաջին 14-15 տարիներին նա, փաստորեն, ինքնուրույն և բավական իմաստուն կերպով կառավարում էր Հալեպի սուլթանությունը և մահվանից ընդամենը մի քանի տարի առաջ՝ հիջրայի 628 թվականին (1230/1231) է, որ պետական գանձարանը, բանակը և ամրոցների ղեկավարումը հանձնում է արդեն չափահաս դարձած երիտասարդ միապետին (Տե՛ս **Ibn al-Adim, Zubdat**, t. III, էջ 213-215):

սակ տիրակալների կողքին երկիրը կառավարում են խնամակալները) պետությունների միջև: Այդ զինակցությունը բախտորոշ նշանակություն ունեցավ ինչպես Հալեպի սուլթանության, այնպես էլ Հայոց թագավորության համար:

բ) Կիլիկյան Հայաստանի զինուժի մասնակցությունը Երզնկայի ճակատամարտին

Սելջուկյան, ապա մոնղոլական արշավանքները շրջադարձային նշանակություն ունեցան Մերձավոր Արևելքի երկրների համար: Դրանք ընթացքում տեղի ունեցան մի քանի վճռական ճակատամարտեր, որոնք, կշեռքի նժարն այս կամ այն կողմ թեքելով, պայմանավորեցին տեղի պետությունների ճակատագիրը հաջորդող մի քանի տասնամյակներում: Խոսքը վերաբերում է Մանազկերտի՝ 1071 թ. և Չմանկատուկի՝ 1243 թ. ճակատամարտերին: Մանազկերտում սելջուկները վճռական առավելություն ստացան բյուզանդացիների հանդեպ, իսկ Չմանկատուկում ջախջախիչ հարված հասցնելով Իկոնիայի սելջուկներին՝ մոնղուները տիրապետող դարձան Մեծ Հայքում, Փոքր Ասիայում ու հարևան երկրներում:

Ոչ պակաս ուշադրության են արժանի այդ դարաշրջանի ևս մի քանի բախտորոշ ճակատամարտեր: Առաջին հերթին նկատի ունենք Երզնկայի⁴⁴⁸ (կամ Յասի Չիմենի)՝ 1230 թ. ճակատամարտը, երբ փոքրասիական սելջուկների ու Այյուբյանների միացյալ զինուժը վերջնականապես ջախջախեց շուրջ վեց տարի ամբողջ տարածաշրջանն ահ ու սարսափի մեջ պահող Ջալալ ալ-Դինի՝ խորեզմյան բանակը: Վերջինիս հաղթանակի դեպքում

⁴⁴⁸ Այս ճակատամարտը առավել հայտնի է Յասի Չիմենի ճակատամարտ անունով, որը Երզնկայի մոտակայքում գտնվող գյուղ է: Մենք հետևել ենք ֆրանսիացի նշանավոր արևելագետ Ռընե Գրուսեին, որն այն կոչել է «Երզնկայի ճակատամարտ», տե՛ս **Grousset René**, Histoire des Croisades, t. III, էջ 382-383:

նախ նվաճման վտանգի առաջ էին կանգնելու Այյուբյանների տիրույթները Ջազիրայում (Վերին Միջագետք)՝ Մոսուլ կենտրոնով և Վանա լճի ավազանում՝ Խլաթ կենտրոնով:

Այդ ժամանակ Այյուբյանների տերությունը տվյալ տոհմի՝ տարբեր ներկայացուցիչների գլխավորած մի քանի պետությունների «համադաշնություն» էր, որը գլխավորում էր Եգիպտոսի սուլթանը, թեև դա նույնպես երբեմն ձևական բնույթ էր կրում: Դամասկոսը, Հալեպը, Համան, Հոմսը, Մոսուլը կամ Խլաթն ուղղակիորեն չէին ենթարկվում Եգիպտոսին, թեպետ այս բոլոր քաղաքներում իշխում էին Այյուբյան տոհմի ներկայացուցիչները, որոնք գրեթե մշտապես պայքարում էին միմյանց դեմ:

Հալեպի սուլթանությունը քննվող ժամանակաշրջանում բավականաչափ անկախ էր ներքին և նույնիսկ, որոշ չափով, արտաքին հարցերում, բայցևայնպես ստորակայական կախման մեջ էր Եգիպտոսի ու Ջազիրայի սուլթաններից: Ի տարբերություն առաջինի, որի գերիշխանությունը զուտ ձևական էր, Ջազիրայի առաջնորդ ալ-Մալիք ալ-Աշրաֆի ազդեցությունն Ալ-Մալիք ալ-Ազիզի մանկահասակության շրջանում ավելի շոշափելի էր: Նա, կարծես, հովանավորի դեր էր ստանձնել Հալեպի հանդեպ:

Ահա այս բարդ «համադաշնության» հետ դիվանագիտական բնույթի նամակագրություն սկսեց Խորեզմաշների թագաժառանգ Ջալալ ալ-Դինը, երբ մոնղոլներից հալածվելով՝ իր բանակով հայտնվեց արևմտյան Իրանում և, նվաճելով Ատրպատականը, վերջ դրեց Ելտկուզյանների (Իլդեգիզյանների) աթաբեկությանը⁴⁴⁹:

Երբ Ջալալ ալ-Դինը 1225 թ. հայտնվեց Այյուբյանների տերության սահմանագլխին՝ այդ տոհմի առաջնորդները, ինչպես

⁴⁴⁹ Այստեղ տեղին է հիշել, որ դեռևս 1218 թ. Ջալալ ալ-Դինի հայրը՝ Խորեզմաշի Մուհամմադ իբն Թեքիշը, նամակով դիմել էր Եգիպտոսի այդ ժամանակվա Այյուբյան սուլթան ալ-Ադիլին՝ օգնություն խնդրելով ընդդեմ մոնղոլների (Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 176):

միշտ, գտնվում էին ներքին հակամարտության մեջ: Ընդ որում, ուժերի հարաբերակցությունն այսպիսին էր՝ Եգիպտոսին տիրում էր ալ-Մալիք ալ-Ադիլի որդին՝ ալ-Մալիք ալ-Քամիլը (1218-1238), Կենտրոնական ու Հարավային Ասորիքին՝ ալ-Մուազզամը (կենտրոնը՝ Դամասկոս), իսկ Ջազիրային (Վերին Միջագետք) և Վանա լճի ավազանին՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆը⁴⁵⁰: Սրանցից հատկապես վերջին երկուսի միջև լուրջ պայքար էր ընթանում:

Ալ-Մուազզամը 1225 թ. երկիցս պատվիրակություն ուղարկեց Ջալալ ալ-Դինի մոտ և նրա հետ դաշինք կնքեց ընդդեմ ալ-Մալիք ալ-Աշրաֆի: Ընդ որում, այդ դաշինքին մասնակցում էր նաև Իրբիլի տեր Արտուխյան Գյոքբորնին: Ըստ նախապես մշակված ծրագրի՝ վերջինս պետք է հարձակվեր Մոսուլի վրա, ալ-Մուազզամը՝ գրավեր Հոմսն ու Համան, իսկ Ջալալ ալ-Դինը՝ հարվածեր Խլաթին ու Վանա լճի ողջ ավազանին⁴⁵¹:

Դաշնակիցներն իրենց նվաճողական ծրագրի իրագործմանն անցան շուրջ մեկուկես տարի անց միայն, քանի որ 1225-1226 թթ. Ջալալ ալ-Դինն ամբողջովին զբաղված էր Վրացական պետության դեմ պատերազմով⁴⁵²:

Ատրպատականից խորեզմցիները ներխուժեցին Հայաստան: Վրաց Ռուսուդան թագուհին (1222-1245 թթ.) զորք ուղարկեց աթաբեկ և ամիրսպասալար Իվանե Ա Ջաքարյանի գլխավորությամբ, որը Ջալալ ալ-Դինի դեմ վճռական ճակատամարտի դուրս եկավ 1225 թ. օգոստոսի վերջին Կոտայքում՝ Գառնի գյուղաքաղաքի մոտ: Ուժերը գրեթե հավասար էին, բայց հայ-վրա-

⁴⁵⁰ Որպես հովանավոր նրա ազդեցությունը տարածվում էր նաև Հալեպի վրա:

⁴⁵¹ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 176-178:

⁴⁵² Տես **Մարգարյան Հ.**, Ջալալ աղ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքի պատմության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1981, № 4, էջ 125-139:

ցական միացյալ բանակը ներքին անհամաձայնության պատճառով պարտվեց⁴⁵³։

Ջալալ ալ-Դինը շուտով վերադարձավ Թավրիզ, սակայն մի քանի ամիս անց՝ 1226 թ. մարտին, կրկին արշավելով Վրացական պետության դեմ, գրավեց մայրաքաղաք Տփղիսը։ Խորեզմցիները ասպատակ սփռեցին ինչպես Վրաստանի, այնպես էլ Զաքարյան Հայաստանի շատ բնակավայրերում⁴⁵⁴։

1226 թ. նոյեմբերին Ջալալ ալ-Դինն անսպասելի հայտնվեց Խլաթի մատույցներում։ Խորեզմցիները, հաղթահարելով պարիսպների արգելքը, ներխուժեցին քաղաք, բայց այնքան էին տարված կողոպուտով, որ բնակչությունն ու կայազորը, օգտվելով հնարավորությունից, ի վերջո նրանց դուրս շարտեցին։ Այդ անգամ արդեն Ջալալ ալ-Դինը կանոնավոր պաշարման ենթարկեց քաղաքը, սակայն սաստիկ ցուրտն ու Ատրպատականից ստացած տազնապալի լուրերը նրան ստիպեցին հեռանալ Խլաթից⁴⁵⁵։

Հեռանալուց հետո շուրջ երկու տարի (1226 թ. վերջից մինչև 1228 թ. երկրորդ կեսը) Ջալալ ալ-Դինը գտնվում էր Իրանում և Իրաքում, ուստի Այյուբյանների տիրոջթները Հայաստանի հարավ-արևմուտքում⁴⁵⁶ (որոնց նրանք տիրացել էին 1207 թ.) մնացին անձեռնմխելի։

Շուտով Դամասկոսի տեր ալ-Մուազզամը հիվանդությունից մահացավ և Ջալալ ալ-Դինը, փաստորեն, կորցրեց իր գլխավոր դաշնակցին։

⁴⁵³ Տե՛ս **Հայոց պատմություն**, հ. II, Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), Գիրք երկրորդ (IV դար – XVII դարի առաջին կես), Երևան, 2014, էջ 267-268։

⁴⁵⁴ Տե՛ս **Մարգարյան Հ.**, Ջալալ ալ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքի պատմության շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1981, թիվ 4, էջ 125-139։

⁴⁵⁵ Տե՛ս նույն տեղում։

⁴⁵⁶ Ժամանակի պատմիչները Վանա լճի ավազանը պարզապես Հայաստան են կոչում։

Խորեզմցիների բանակը 1228 թ. երկրորդ կեսին կրկին անսպասելի հայտնվեց Խլաթում: Ջալալ ալ-Դինը բավական հաջող պատերազմ էր մղել մոնղոլների դեմ Իրանում, որի պսակն Իսֆահանում արձանագրած հաղթանակն էր: Հենց այնտեղից նա արշավեց ուղիղ դեպի Խլաթի գավառ՝ ամայացնելով այն: Այդպիսով նա, կարծես, վրեժ լուծեց իր նախկին անհաջողության համար, ապա կրկին վերադարձավ Ատրպատական:

Ջալալ ալ-Դինի հաջորդ արշավանքը Խլաթ կայացավ 1229 թ. ամռանը, որից հետո նա դարձավ Այյուբյանների գլխավոր մտահոգությունն արտաքին հարաբերություններում: Ռժնե Գրուսեն, վկայակոչելով լատին պատմիչների տեղեկությունները, եզրակացնում է, որ Ջալալ ալ-Դինի հրոսակների ներխուժման վտանգն այնքան մեծ էր, որ երկու Այյուբյանները՝ ալ-Քամիլը և ալ-Աշրաֆը դիմեցին անգամ Ֆրիդրիխ II կայսրի օգնությանը⁴⁵⁷:

Թեև ժամանակակիցներն ու պատմագիրները Ջալալ ալ-Դինին համարում են մի բախտախնդիր⁴⁵⁸, իսկ նրա բոլոր արշավանքները բնորոշում որպես կողոպտչական, սակայն հանուն ճշմարտության պետք է նշել, որ 1225-1230 թթ. գրեթե ամբողջ Իրանն ու Վրացական թագավորությունը (ներառյալ Ջաքարյան Հայաստանը) գտնվում էին Ջալալ ալ-Դինի տիրապետության տակ: Խլաթի երկրորդ պաշարումից հետո (1229 թ.) ակնհայտ էր, որ նույն ճակատագիրն է սպասում Հարավ-արևմտյան Հայաստանին, Ջազիրային, Ատրիքին (Այյուբյան տիրույթներ), Փոքր Ասիային (Իկոնիայի սելջուկյան սուլթանություն), ինչպես նաև Կիլիկիայի հայկական թագավորությանն ու խաչակրաց տիրույթներին:

⁴⁵⁷ Տե՛ս **Grousset R.**, Histoire des Croisades, t. III, էջ 382:

⁴⁵⁸ Առաջին հերթին այն պատճառով, որ նա թեև ուներ շատ մարտունակ բանակ, բայց կորցրել էր իր երկիրն ու պետությունը, հետևաբար ավելի նման էր թափառական ավազակի, քան մի մեծ պետության ղեկավարի, որը նվաճումներով ընդարձակում է իր տիրապետությունը:

Ջալալ ալ-Դինը 1229 թ. օգոստոսի վերջին անսպասելի հայտնվեց Խլաթի պարիսպների տակ՝ իր հետ բերելով պաշարողական մեքենաներ: Քաղաքի գրավումն այդ անգամ ևս շատ դժվար խնդիր դարձավ նրա համար: Խլաթցիները աներևակայելի քաջությամբ ու տոկունությամբ գրեթե 10 ամիս դիմադրեցին, բայց, ի վերջո, 1230 թ. ապրիլի 14-ին հակառակորդը ներխուժեց քաղաք: Սկսվեց կոտորածն ու կողոպուտը: Կայազորի մնացորդներն ամրացան միջնաբերդում, բայց երկար դիմադրել չկարողացան:

Փաստորեն՝ Ջալալ ալ-Դինը 1230 թ. գարնանն արդեն ի վիճակի էր նոր լայնածավալ նվաճումներ կատարելու: Իրավիճակը տարածաշրջանի պետություններին ստիպեց սթափվելու և կտրուկ քայլերի դիմելու՝ մի կողմ դնելով նախկինում եղած հակասությունները: Խլաթի անկումն Այյուբյաններից ոչ պակաս անհանգստացրել էր Իկոնիայի սուլթան Քեյ Կուբադին, որը որոշեց հարթել իր բոլոր հակասություններն Այյուբյանների հետ: Նա անմիջապես բանագնացներ ուղարկեց Եգիպտոսի սուլթան ալ-Ալիի ք ալ-Քամիլի և Ջազիրայի տեր ալ-Մալիք ալ-Աշրաֆի մոտ ու նրանց հետ դաշինք կնքեց: Եգիպտոսի սուլթանն ալ-Աշրաֆին նշանակեց Այյուբյան զորքերի ընդհանուր հրամանատար⁴⁵⁹:

Այյուբյանների՝ 5000-անոց բանակը Եփրատի հովտով գնաց դեպի Սեբաստիա, որտեղ միացավ Քեյ Կուբադի 20000-անոց հեծելազորին:⁴⁶⁰

Երբ Ջալալ ալ-Դինը տեղեկացավ իր դեմ ստեղծված զինակցության մասին, անմիջապես դուրս եկավ Խլաթից՝ փորձելով սելջուկներին հարվածել նախքան ալ-Աշրաֆի հետ նրանց միանալը: Բայց Խարբերդի մոտ նա անսպասելի հիվանդացավ՝

⁴⁵⁹ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 217-218:

⁴⁶⁰ Տե՛ս նույն տեղում:

ստիպված լինելով մի քանի օր դադարեցնել առաջխաղացումը. սելջուկներին առանձին հարվածելու ծրագիրը ձախողվեց: 1230 թ. օգոստոս 7-ին Խարբերդից Երզնկա շարժվող Ջալալ ալ-Դինը դեմ հանդիման դուրս եկավ սելջուկների 6000-անոց⁴⁶¹ մի զորաբանակի: Վերջիններս, հանկարծակիի գալով, այդ օրը ջախջախիչ պարտություն կրեցին: Հատկանշական է, որ նրանց պարտությունը, ընդամենը, նախերգանքն էր:

1230 թ. օգոստոս 9-ին Երզնկայից ոչ հեռու՝ Յասի-Չիմեն գյուղի մոտ Ջալալ ալ-Դինը հանդիպեց դաշնակիցների հիմնական ուժերին: Եթե հավաստի է Բար Հեբրեոսի հիշատակած թիվը, ապա Ջալալ ալ-Դինի զորքն ուներ թվական գերազանցություն՝ 40 հազարն⁴⁶² ընդդեմ 25 հազարի: Նրա առաջապահներն ուժեղ հարձակման ենթարկվեցին սելջուկ-այյուբյան բանակի կազմում կռվող բեդուիկների կողմից: Հաջորդ օրը խորեզմցիները քիչ էր մնում գրավեին այն բլուրը, որի վրա դաշնակիցները տեղավորել էին իրենց ուժերը, բայց հանկարծ քամին մեծ փոշի բարձրացրեց, որի հետևանքով կռվողները միմյանց տեսադաշտից անհետացան: Ըստ երևույթին, Ջալալ ալ-Դինի հիվանդությունը ևս ինչ-որ դեր խաղաց: Ի վերջո, խորեզմցիներն սկսեցին նահանջել: Ապա նահանջը վերածվեց փախուստի և Այյուբյանների ու սելջուկների հեծելազորը նետվեց նրանց հետևից՝ վերջնականապես ջախջախելով հակառակորդին: Ջալալ ալ-Դինը մի կերպ փրկվեց՝ փախչելով Խլաթ, ապա հասավ մինչև Խոյ⁴⁶³:

Երզնկայի ճակատամարտի մասին հիշատակող արաբական⁴⁶⁴ և ասորական⁴⁶⁵ աղբյուրներից ոչ մեկը չի հիշատակում

⁴⁶¹ Ըստ Բար Հեբրեոսի՝ սելջուկների թիվը 4000 էր (տե՛ս **Bar Hebraeus**, էջ 395):

⁴⁶² Տե՛ս նույն տեղում:

⁴⁶³ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 219:

⁴⁶⁴ Տե՛ս **Мухаммад ан-Насави**, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, էջ 256-257; **Ibn al-Athir**, Al-Kamil fi l-Tarikh, t. X, Beirut, 2003, էջ 486-487 տե՛ս նաև **Իբն ալ-Ասիր**, էջ 339-340:

⁴⁶⁵ Տե՛ս **Bar Hebraeus**, էջ 395:

մարտին հայերի և ֆրանկների մասնակցության մասին, բայց այդ մասին ակնարկում են երկու պարսկագիր պատմիչներ՝ Ջուվայնին և Ռաշիդ ալ-Դինը: Մասնավորապես, Ջուվայնին թեև ուղիղ ձևով չի վկայում ճակատամարտում հայերի մասնակցության մասին, բայց խոսելով 1227/1228 թվականի մասին՝ գրում է. «Այնտեղից [հիջրայի] 625 թվականին (1227/1228) [սուլթանը] ճանապարհվեց դեպի Վրաստան: Այդժամ Ռումի, Ասորիքի և Հայաստանի և ամբողջ տարածաշրջանի սուլթանները, երկյուղի մեջ լինելով նրա վայրագությունից և վրեժից, նրա անզուսպ գրոհներից և կատաղի հարձակումներից, դաշինք էին կռել իրար հետ և միավորվել նրան սանձելու նպատակով»⁴⁶⁶:

Նկարագրելով խորեզմցիների կողմից Խլաթի պաշարումն ու գրավումը և հիշատակելով երեք սուլթանների՝ ալ-Քամիլ և ալ-Աշրաֆ Այյուբյանների ու Իկոնիայի Քեյ Կուբադի զինակցությունն ընդդեմ Ջալալ ալ-Դինի, Կիրակոս Գանձակեցին գրում է. «Կոչեցին իրեանց օգնական և ի զօրացն հայոց, որ յաշխարհին Կիլիկեցոց, և ի ֆռանկացն ծովեզերեայց, և եկին տալ պատերազմ ընդ խորազմեցոյն Ջալալադնի»⁴⁶⁷: Ապա նկարագրում է Երզնկայի ճակատամարտը. «Եւ իբրեւ եկին մօտ առ միմեանս, զանգիտեցին երկոքին կողմանքն և ոչ իշխէին խառնիլ ընդ իրեարս: Ապա քրիստոնեայքն, որ ի հայոց և ֆռանկաց, խրախուսեալք յԱստուած, դիմեցին ի վերայ նոցա: Եւ էին թուով սակաւք, պակաս քան զհազար մի, և զօրութեամբն Քրիստոսի հարին զզօրսն և ի փախուստ դարձուցին: Եւ զայն տեսեալ զօրացն տաճկաց՝ յարձակեցան և նոքա. և հարին կոտորեցին զբազումս մինչ ի մուստ արևուն: Ապա հրաման ետուն սուլտանքն ոչ պնդել զհետ փախստէիցն, իբր այն թէ հաւատակիցք նոցա իցեն: Եւ դադարեցին ի պնդելոյ զհետ նոցա: Իսկ սուլտանքն զի արք բա-

⁴⁶⁶ **Ğuwaynī**, Kitāb Tārīḫ-e Ğahān-Guṣā, taṣḫīḫ-e Muḥammad Qazwīnī, v. 2, Barīl, Laydan, 1916, էջ 170:

⁴⁶⁷ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 228-229:

րեպաշտք էին, ոչ ապերախտք լինէին առ զօրն քրիստոնէից, զի գիտացին, թէ ի ձեռն նոցա ետ տէր զյաղթութիւնն»⁴⁶⁸:

Կիրակոս Գանձակեցու տեղեկությանը չի հակասում նաև Սամվել Անեցու Շարունակողի հաղորդումը. «Իսկ Ալադին սուլտանն եւ Աշրաֆն մարտեան ընդ նոսա եւ կոտորեցին զնոսա յոյժ եւ զՍուլջման ամիրայն»⁴⁶⁹, որ առաջնորդ էր Խորազմին՝ կալան եւ սպանին: Էին եւ զաւրք թագաւորին Հայոց Հեթմոյ եւ Փռանգագ ծովեզերեաց՝ ընդ յԱլատին սուլտանին, որ եւ յաղթութիւն արարին իսկ»⁴⁷⁰:

Բացի այս երկու պատմիչներից, Երզնկայի ճակատամարտին հայերի մասնակցության մասին վկայում է նաև դէպքերին ժամանակակից Անանուն Սեբաստացին⁴⁷¹.

«...Իսկ սուլտանն դառնայ ի Թավրեզ: Զկնի տարո մի գայ ի Գագ և ի Տիխիս և զքրիստոնայքն զոր կոտորեաց և զոր ի հաւատոց հանէին: Զնոյն ի Գանձակ և ի Նախչւան առնէին: Եւ ապայ երթայ ի վերայ Ալատին սուլտանին Հոռոմոց աւերէ զբազում գաւառս: Իսկ սուլտանն փախուցանէ զնայ և նայ զնայ ի Մուղան: Ալատինն և Աշրափն և Քէմիլ, եղբայր իւր, կոչեն յաւանութիւն ի զօրուն Հայոց և ի Կիլիկեայ և ի ֆռանկաց. և փախուցանէն զնայ մինչև ի Մուղան. և Թաթարն փախուցանէ զնայ մինչև յԱմիթ և ոմանք ասեն սպանել ի Թաթարէն, և այլք, թէ հետիոտս փաղչէր և ճանաչեալ զնա ոմն եսպան. և խնդրեցաւ վրեժ արէան մանկանց անմեղաց»⁴⁷², - գրում է տարեգիրը:

Չի բացառվում, որ Անանուն Սեբաստացին իր տեղեկությունը քաղել է հենց Կիրակոս Գանձակեցու երկից: Առաջին հա-

⁴⁶⁸ Նույն տեղում, էջ 229-230:

⁴⁶⁹ Ըստ Հ. Մարգարյանի՝ սա Յասի Չիման տեղանվան աղավաղված ձևն է, որ վերագրվել է անձի (տե՛ս **Մարգարյան Հ.**, Ջալալ ադ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ, էջ 134):

⁴⁷⁰ **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, էջ 243-244:

⁴⁷¹ Տե՛ս **Մանր ժամանակագրություններ**, XIII-XVIII դդ., հ. II, էջ 118-172:

⁴⁷² **Նույն տեղում**, էջ 138:

յացքից տպավորություն է ստեղծվում, որ այստեղ հավելյալ տեղեկություն կա, բացի կիլիկեցի հայերից, ևս ինչ-որ «Հայոց զորքի» մասնակցության մասին, սակայն առավել ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ մեծ հավանականությամբ գործ ունենք գրչական սխալի հետ. ավելորդ մի «և» կա (որի դիրքը ևս անտրամաբանական է), որը հանելով ստանում ենք՝ «ի զօրուն Հայոց ի Կիլիկեայ և ի Ֆռանկաց»: Նշվածը խիստ հավանական է, եթե նկատի ունենանք, որ Անանուն Սեբաստացու տեքստը, ընդհանուր առմամբ, անփոփոխ է գրված:

Կիլիկիայի պատմության վաստակաշատ ուսումնասիրող Գրիգոր Միքայելյանը լիովին հավաստի է համարում Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը՝ գրելով. «Բայց 1230 թ. Աշրաֆը, իր եղբայր Քամիլը և Իկոնիայի սուլթան Ալա ադ-Դին Քեյ Կուբադը միավորվելով օգնության կանչեցին նաև ծովեզրյա ֆրանկներին և Կիլիկիայի հայկական զորքը և Խլաթի մոտ տեղի ունեցած եռօրյա ճակատամարտում ջախջախեցին Ջելալ էդ-Դինին»⁴⁷³: Այդուհանդերձ, նա չի փորձել այլ աղբյուրներով հաստատել հայերի ու ֆրանկների մասնակցության հավաստիությունը, ինչպես նաև Ջալալ ալ-Դինի դեմ ստեղծված դաշինքին հայերի ու ֆրանկների հարելու դրդապատճառները, զինվորների թվաքանակը և, վերջապես, ինչ պետք է հասկանանք «ծովեզրյա ֆրանկներ» ասելով: Նշենք նաև, որ ճակատամարտը տեղի ունեցավ ոչ թե Խլաթի, այլ Երզնկայի մոտ:

Երզնկայի ճակատամարտին անդրադարձած հույն պատմաբան Ալեքսիս Սավվիդիսի կարծիքով՝ Քեյ Կուբադ 1-ը դիվանագիտական հաղթանակ տարավ՝ ընդունելով ալ-Քամիլի և ալ-Աշրաֆի օգնության առաջարկը, քանի որ հաղթանակի դեպքում նա կկարողանար իր պայմանները թելադրել Փոքր Ասիայի՝ ա-

⁴⁷³ **Микаэлян Г.Г.**, նշվ.աշխ., էջ 296, **Հայոց պատմություն**, հ. II, Գիրք երկրորդ, էջ 270:

պագա ստատուս քվոյի հարցերում: Կիլիկյան թագավոր Հեթում Ա-ը նույնպես ստիպված էր Կոնիային մատակարարել ֆրանկո-հայկական մի զորամիավորում⁴⁷⁴:

Փորձենք պարզել, թե Երզնկայի ճակատամարտին կիլիկեցիների մասնակցությունը որքանով էր հավանական և, արդյոք, այն թելադրված էր Հայոց թագավորության՝ մինչ այդ վարած արտաքին քաղաքականությամբ:

Ինչպես արդեն վերևում նշվեց, Այյուբյան տոհմի ավագ ներկայացուցիչների և, առաջին հերթին, Զազիրայի տեր ալ-Մալիք ալ-Աշրաֆի հովանավորությունը չէր վերացնում Հալեպի և Հյուսիսային Ասորիքի ինքնիշխանությունը: Ինչպես նշել է արևելագետ Անն-Մարի Էդդեն, այն Հալեպի սուլթանությանը թույլ էր տալիս պահպանելու եթե ոչ լիարժեք անկախությունը, ապա առնվազն ինքնավարությունն ու բարգավաճելու հնարավորությունը⁴⁷⁵: Համենայնդեպս, Հալեպի սուլթանը (կամ աթաբեկը) այնքան ինքնուրույնություն ուներ, որ կարող էր օգնության խնդրանքով դիմել այլ (այն էլ քրիստոնյա) պետության միապետի: Խոսքը 1219-ի դեպքերի մասին է: Հատկանշական է, որ աթաբեկը դիմել էր մի պետության, որի զինվորները (թեկուզև ստիպողաբար) միացել էին իրենց թշնամու՝ Իկոնիայի սուլթանության բանակին: Ավելին, Կիլիկյան Հայաստանի հետ Հալեպը մինչ այդ ունեցել էր թշնամական հարաբերություններ: Մյուս կողմից աչքի է զարնում Լևոն Ա թագավորի արագ և համարձակ արձագանքը, որով նա մեծ ծառայություն է մատուցում երեկվա հակառակորդին: Այս ամենը ցույց է տալիս, թե որքան էր փոխվել տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադրությունը, և որ

⁴⁷⁴ **Savvides, A. G.**, նշվ. աշխ., էջ 181: Սավվիդիսը, նշելով որ «Հեթում Ա-ը նույնպես ստիպված էր Կոնիային մատակարարել ֆրանկոհայկական մի զորամիավորում», հավանաբար հենվում է Կիրակոս Գանձակեցու «զարք թագաւորին Հայոց Հեթոմյ եւ Փռանգաց ծովեզերեաց՝ ընդ յԱլատին սուլտանին» արտահայտության վրա:

⁴⁷⁵ Տե՛ս **Eddé A.-M.**, *La Principauté Ayyoubide d'Alep*, էջ 89:

Կիլիկիայի ու Հալեպի Այյուբյանների զինակցությունը ժամանակի թելադրանքն էր:

Ըստ երևույթին, Իկոնիայի սելջուկներին օգնական զորք տրամադրելու Կիլիկյան Հայաստանի պարտավորությունը, որ կար 1216 թ.-ից (պայմանագրի ստորագրումը 1218 թ.) ուժի մեջ է եղել մինչև 1243 թ.: Վերևում տեսանք, որ այն մեկ անգամ՝ 1219 թ. գործեց, թեև, փաստորեն, ոչ լիարժեք: Հետագա տարիներին այդ պարտավորության գործադրման վերաբերյալ հստակ փաստեր չենք արձանագրում մինչև 1230 թ.⁴⁷⁶: Ուստի՝ չենք կարող այնդել, որ Երզնկայի ճակատամարտին հայերը մասնակցել են Իկոնիայի սելջուկների հանդեպ ունեցած ստորակայական պարտավորությամբ: Խնդիրն այն է, որ Կիրակոս Գանձակեցու հաղորդումը մի փոքր հակասական է: Երբ նա նշում է. «Կոչեցին իրեանց օգնական և ի զորացն հայոց», հավասարապես նկատի ունի ալ-Քամիլ, ալ-Աշրաֆ և Քեյ Կուբադ սուլթաններին, և այդտեղ որևէ ակնարկ չկա պարտավորության կամ սրանցից մեկնումեկի զորաբանակին միանալու մասին: Նույն տրամաբանությանը հանդիպում ենք Սամվել Անեցու Շարունակողի շարադրանքում. «Ալատինն և Աշրափն և Քեմիլ, եղբայր իր, կոչեն յազնութին ի զորուն Հայոց»: Մյուս կողմից, սակայն, Կիրակոս Գանձակեցին ասում է. «զարք թագաւորին Հայոց Հեթմոյ եւ Փռանգաց ծովեզերեաց՝ ընդ յԱլատին սուլտանին»:

Իբն ալ-Ասիրը Երզնկայի ճակատամարտում հաղթանակի գործում կարևոր դեր է վերապահում Այյուբյանների զինուժին, թեև այն քառակի զիջում էր սելջուկներին: Այդ մասին նա գրում է «...իսկ Աշրաֆի հետ կար մոտավորապես հինգ հազար [զինվոր], սակայն ընտիր, քաջ ու պատերազմներում կոփված զոր-

⁴⁷⁶ Թեև կան վկայություններ այն մասին որ օրինակ 1225/1226 թ. սելջուկների արշավանքը դադարեցնելու դիմաց Կոստանդին պայլը խոստացել է ամեն տարի 1000 ձիավոր և 500 աղեղնավոր տրամադրել սուլթանությանը (տե՛ս **Ibn-Bibī**, էջ 129):

քեր էին, լավ զինված ու արաբական կրակոտ նժույգներով: Նրանց հրամանատարն էր Հալեբի զորքերի ամիրներից մեկը, որը կոչվում էր Իզզ ալ-Դին Օմար իբն Ալի, որը Հաքքարի քրդերից էր և վերին աստիճանի քաջարի, ընտիր հատկություններով ու ազնիվ բարքի տեր»⁴⁷⁷:

Այն, որ անկախ իրենց քանակից հենց Այյուբյաններն էին խորեզմիցիների դեմ հիմնական կռվողները, հաստատում է նաև Բար Հեբրեոսը՝ ճակատամարտի նկարագրությունից հետո նշելով՝ և Մալիք Աշրաֆը հաղթական էր⁴⁷⁸ (չի գրում՝ Քեյ Կուբադը հաղթական էր):

Ճակատամարտին մասնակից հայերի ու ֆրանկների թվաքանակի մասին որոշակի տեղեկություն է պահպանել Կիրակոս Գանձակեցին՝ գրելով. «Եւ էին թուով սակաք, պակաս քան զհազար մի»: Ենթադրելի է, որ նրանց թիվը հասել է մոտ 800-900-ի: Հավանական է, որ 25000-անոց բանակի մեջ 800-900-անոց զինաջոկատը կարող էր նկատի չառնվել ժամանակի պատմագիրների կողմից, մանավանդ, եթե որևէ միապետ կամ նշանավոր իշխան նրանց չէր առաջնորդում:

Այսպիսով՝ 1216 թ. հետո Սիս-Հալեպ հարաբերություններում (անուղղակիորեն նաև Սիս-Մոսուլ հարաբերություններում) տիրապետող է դառնում համագործակցությունն ու զինակցությունը: Վերջինիս վկայությունն են պատմիչների հաղորդումները 1219 թ. և 1225/1226 թ. իրադարձությունների մասին, որոնց շարքին կարելի է ավելացնել նաև Երզնկայի՝ 1230 թ. ճակատամարտը:

Ամենայն հավանականությամբ հայերի մասնակցությունը ինքնիշխան որոշում է եղել՝ գերազանցապես թելադրված ընդհանուր թշնամու դեմ միավորվելու և արհավիրքը Կիլիկիայից

⁴⁷⁷ Իբն ալ-Ասիր, էջ 340:

⁴⁷⁸ Bar Hebraeus, էջ 395:

հեռացնելու գիտակցությամբ: Միաժամանակ, հայ-ֆրանկյան ուժերի՝ Այյուբյաններին, թե՞ սելջուկներին հարելու խնդիրը բաց է մնում, քանի որ երկուսի օգտին էլ կան տեղեկություններ:

Եթե ընդունենք, որ կիլիկեցիները միացել են Այյուբյան ուժերին, ապա այդ գործում, ամենայն հավանականությամբ, դեր են խաղացել երկու խնամակալների՝ Հալեպի աթաբեկ Շիհաբ ալ-Դինի և Կիլիկիայի Կոստանդին Պայլի վաղեմի կապերն ու բարեկամությունը:

Հարցը քննելիս ավելորդ չէ նկատել, որ Երզնկայի ճակատամարտի ժամանակ թեև Կիլիկիայի թագավորը Հեթում Ա-ն էր, սակայն իրականում երկիրը ղեկավարում էր նրա հայր Կոստանդին Պայլը: Այդ առնչությամբ Լևոն Տեր-Պետրոսյանը նշում է. «Սկսած 1221 թվականից, երբ Կոնստանդինն ստանձնեց Զապել թագուհու խնամակալությունը մինչև 1236 թվականը, այն է՝ Հեթում թագավորի չափահաս դառնալու ժամանակը, նա, ըստ էության, Հայոց թագավորության միահեծան տերն էր...»⁴⁷⁹:

Միաժամանակ, թեև խորեզմցիների դեմ պայքարն Այյուբյանների կողմից ղեկավարում էր ալ-Մալիք ալ-Աշրաֆը, սակայն մինչև 1231 թ. Հալեպում փաստացի ղեկավարը աթաբեկ Շիհաբ ալ-Դին Տուղրիլն էր՝ Կոստանդին Պայլի գործակիցը 1226 թ.: Բացառելի չէ, որ նա 1230 թ. ևս կարող էր որոշակի դեր խաղալ Զալալ ալ-Դինի դեմ դաշինքի մեջ կիլիկեցիներին ներգրավելու հարցում:

Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը թեև չի հիշատակում քրիստոնյաների մասնակցության մասին, սակայն Այյուբյանների գորաբանակի մասնակցության մասին գրում է. «Ճակատամարտն սկսեց Իզզ ալ-Դին Օմար իբն Ալին՝ Հալեբի զորքի գլուխն անցած: Զալալ ալ-Դինը չկարողացավ դիմադրել կամ դիմանալ,

⁴⁷⁹ Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 286:

այլ փախուստի դիմեցին ինքը և իր զորքը»⁴⁸⁰: Եթե համարենք, որ քրիստոնյաները նախահարձակ եղած Հալեպի զորքի կազմում էին, ապա Իբն ալ-Ասիրի հաղորդումը համընկնում է Կիրակոս Գանձակեցու տեղեկության հետ: Մյուս կողմից, իհարկե, վերապահությամբ պետք է ընդունել և ակնհայտ չափազանցություն համարել, հայ պատմիչի կողմից հաղթանակի դափնիներն ամբողջությամբ հայերին ու ֆրանկներին վերագրելը:

Լուսաբանման կարիք ունի նաև ֆրանկների մասնակցության մասին հիշատակությունը: Կիրակոս Գանձակեցու և Անանուն Սեբաստացու վկայությունները կասկած չեն թողնում, որ հայերն ու ֆրանկները ճակատամարտին մասնակցել են միասնական զորաջոկատով, սակայն ի՞նչ քանակական համամասնությամբ՝ պարզ չէ: Մնում է ճշտել, թե հատկապես որ խաչակիրների մասին է խոսքը: Ալեքսիս Սավվիդիսի «Կիլիկյան թագավոր Հեթում Ա-ը նույնպես ստիպված էր Կոնիային մատակարարել ֆրանկոհայկական մի զորամիավորում»⁴⁸¹ արտահայտությունն այն տպավորությունն է ստեղծում, որ «ֆրանկ» զինվորներին տրամադրել էր ոչ թե ինչ որ մի խաչակիր պետություն, այլ նրանք Կիլիկյան Հայաստանի տարածքում հաստատված խաչակիր ասպետներն էին: Այս տեսակետի օգտին է վկայում Ջուվայնիի վկայությունը, որ Ջալալ ալ-Դինի դեմ ստեղծված դաշինքում ընդգրկված են եղել Ռումի, Ասորիքի, Հայաստանի և ամբողջ տարածաշրջանի տիրակալները: Աներկբա է, որ պատմիչը Հայաստան ասելով նկատի է ունեցել Կիլիկիայի հայկական թագավորությունը՝ փոխարենը չարձանագրելով Մերձավոր Արևելքի խաչակրաց և ոչ մի պետության անուն: Այդ հանգամանքը մեկ անգամ ևս հաստատում է, որ Երզնկայի ճակատամարտին մասնակցած ֆրանկները Կիլիկիայի ասպետական միաբանությամբ

⁴⁸⁰ Իբն ալ-Ասիր, էջ 340:

⁴⁸¹ Savvides A. G., նշվ.աշխ., էջ 181:

յունների անդամներ էին: Ինչպես հայտնի է՝ 1230 թ. բոլոր երեք միաբանությունները՝ Հիվանդախնամներ, Տաճարականներ և Տևտոնականներ, արդեն իսկ հաստատված էին Կիլիկիայում: Հաշվի առնելով Տաճարականների հետ կիլիկյան իշխանությունների նախկին հակադրությունը՝ կարելի է ենթադրել, որ Երզնկայի ճակատամարտին հայերի հետ կարող էին մասնակցել Հիվանդախնամներ կամ Տևտոնականներ⁴⁸²՝ հավանաբար նկատի ունենալով այն մեծ վտանգը, որ Ջալալ ալ-Դինի հաղթանակի դեպքում կարող էր սպառնալ Արևելյան Միջերկրականի քրիստոնյա պետություններին:

XIII դ. առաջին չորս տասնամյակները համարվում են Իկոնիայի սելջուկյան սուլթանության հզորագույն շրջանը, երբ այդ պետությունն այս կամ այն չափով իր ազդեցությունն էր տարածել ամբողջ Փոքր Ասիայի վրա: Այդուամենայնիվ, այդ քառասնամյակի մեջ պետք է առանձնացնել վերջին տասներեք տարին (1230-1243), երբ Ռումի սուլթանությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Դրանք Ալա ալ-Դին Քեյ Կուբադի գահակալության (1220-1237) վերջին ու Ղիյաս ալ-Դին Քեյ Խոսրովի II-ի (1237-1246) առաջին տարիներն էին, երբ Ռումի սուլթանության ազդեցությունը տարածվեց Փոքր Ասիայի սահմաններից դուրս՝ դեպի Ասորիք⁴⁸³, Վերին Միջագետք, Մեծ Հայքի հարավ-արևմուտք և Վրաստանի արևմտյան որոշ շրջաններ, ինչը պայմանավորված էր հենց Երզնկայի հաղթանակով:

Կլոդ Կաենը գտնում է, որ խորեզմիշների արշավանքներից ու Երզնկայի ճակատամարտից հետո Իկոնիայի սելջուկների գերիշխանությունը Փոքր Ասիայում առավել ակնհայտ դարձավ: Նաև Հարավ-արևմտյան Հայաստանի և Ջազիրայի Այյուբյան

⁴⁸² Տե՛ս **Շևալիե Մ.-Ա.**, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, էջ 66-67:

⁴⁸³ Օրինակ՝ Քեյ Խոսրով II-ը, ի շարս Ռումի և այլ երկրների, իրեն համարում է նաև «Սիրիայի սուլթան» (տե՛ս **Гордлевский В. А.**, նշվ. աշխ., էջ 34):

տիրույթների հանդեպ նրանց բացահայտ հավակնությունները Այյուբյաններին ստիպեցին կրկին միավորվել ընդդեմ երեկվա դաշնակցի⁴⁸⁴:

Փաստորեն՝ Ջալալ ալ-Դինի ավերիչ արշավանքները ճանապարհ էին բացել Իկոնիայի սելջուկների ծավալապաշտության համար, որոնք առանց այդ էլ բավականաչափ հզոր էին ու մշտական ճնշման տակ էին պահում իրենց սահմանակից պետություններին: 1232-1233 թթ. նրանք վերջապես գրավեցին Խլաթը, որը շուրջ երկուսուկես տասնամյակ պատկանում էր Այյուբյանների Ջազիրայի ճյուղին: Վրաստանից նվաճեցին բազմաթիվ սահմանամերձ բերդեր: Փաստորեն՝ այդ պահից մինչև մոնղոլական նվաճումը Մեծ Հայքի մի զգալի հատված հայտնվել էր Իկոնիայի սուլթանության տիրապետության տակ:

Պատահական չէր նաև, որ Հեթում Ա-ի հատած երկլեզվյան՝ հայ-սելջուկյան դրամները վերաբերում են հենց այդ շրջանին: Հեթումը նման դրամներ է հատել իր և Ռումի երկու սուլթանների՝ Քեյ Կուբադ I-ի (1220-1237) և նրա որդու՝ Քեյ Խոսրով II-ի (1237-1246) անունով: Քեյ Կուբադի օրոք հատված դրամներում թվականը նշված չէ, սակայն կարելի է մեծ հավանականությամբ նշել, որ դրանք վերաբերում են Քեյ Կուբադի վերջին տարիներին՝ 1233-1237 (ամեն պարագայում 1230 թ. հետո), իսկ Քեյ Խոսրովի հետ համատեղ դրամներն ընդգրկում են վերջինիս գահակալության ամբողջ շրջանը (1237-1246)⁴⁸⁵:

Ակնհայտ է, որ Երզնկայի ճակատամարտը դրական նշանակություն ուներ նաև Կիլիկիայի համար, քանի որ Ջալալ ալ-Դինի հրոսակների ներխուժումն իսկական աղետ կլիներ իր ծաղկուն շրջանն ապրող Հայոց թագավորության համար: Մյուս կողմից պարզ էր, որ խորեզմցիների ահարկու բանակի ջախջա-

⁴⁸⁴ Տե՛ս **Cahen Cl.**, *La Syrie du Nord*, էջ 645:

⁴⁸⁵ Տե՛ս **Nercessian Y.T.**, *Armenian coins and their values*, Los Angeles, 1995, էջ 126-127:

խումից հետո, չունենալով լուրջ մրցակից, Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը փորձելու էր իր գերիշխանությունը տարածել դեպի արևելք ու հարավ: Ստեղծված իրավիճակում Հեթում Ա-ը չէր կարող բացահայտ առճակատման գնալ, և պետք է ողջամիտ համարել նրա կողմից Իկոնիայի գերիշխանության ժամանակավոր ընդունումը, սակայն ակնհայտ է, որ առաջին իսկ հարմար առիթի դեպքում կիլիկեցիները փորձելու էին թոթափել Իկոնիայից ունեցած ստորակայական կախվածությունը. մի բան, որ մեծապես պայմանավորեց Հայոց թագավորության դիրքորոշումը մոնղոլների և սելջուկների միջև Չմանկատուկի՝ 1243 թ. ճակատամարտում և դրան հաջորդած եռանդուն դիվանագիտական քայլերը հայ-մոնղոլական դաշինք հաստատելու ուղղությամբ:

Երզնկայի՝ 1230 թ. ճակատամարտին հայերի և խաչակիրների մասնակցությունը հաստատող այլ աղբյուրներ (բացի Կիրակոս Գանձակեցու, Սամվել Անեցու Շարունակողի և Անանուն Սեբաստացու գործերից) առայժմ հայտնի չեն, բայց Հայոց թագավորության նախորդ տարիների (1216-1230) արտաքին քաղաքականության ուսումնասիրումն ու տարածաշրջանում ձևավորված ուժերի հարաբերակցության վերլուծությունը հաստատում է հայ պատմիչների՝ վերոհիշյալ հաղորդումների արժանահավատությունը:

Կիլիկյան Հայաստանի համար Երզնկայի ճակատամարտի նշանակությունն ու Զալալ ալ-Դինի բանակի վերջնական ջախջախմանը հայ զինվորների մասնակցության բացահայտումը կարևոր նշանակություն ունեն Հայոց թագավորության արտաքին հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից՝ առավել ևս, որ Հեթում Ա-ի երկարատև գահակալման առաջին շրջանի (1226-1243) վերաբերյալ տեղեկությունները սակավ են, ինչը հետազոտողին ստիպում է, եղած աղբյուրներից առավելագույնը քաղելով, լույս սփռել Կիլիկիայի հայկական թագավորու-

յան՝ ավելի քան մեկուկես տասնամյակի արտաքին քաղաքականության վրա:

1216-1230 թվականները կարելի է կոչել Սիս-Հալեպ համագործակցության շրջան, երբ այս երկու պետությունները տարածաշրջանում ստեղծված քաղաքական իրավիճակի թելադրանքով դարձել էին բախտակիցներ ու բնական դաշնակիցներ: Այդ մասին են վկայում 1219 թ. Լևոն Ա-ի բարեկամական քայլը հոգուտ Այյուբյանների, 1226-ին Հալեպի Այյուբյանների զինական աջակցությունը Կոստանդին Պալին Իկոնիայի սելջուկների և Անտիոք-Տրիպոլիսի խաչակիրների դեմ պայքարում, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի և Այյուբյանների համատեղ մասնակցությունը 1230 թ. Երզնկայի (Յասի Չիմեն) ճակատամարտին՝ ընդդեմ Ջալալ ալ-Դինի:

ԳԼՈՒԽ Զ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ԱՍՈՐԻՔԻ ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1230-1260)

ա) Կիլիկիայի հայկական թագավորությունն ու Այյուբյան պետությունները 1230-1243 թթ.

Երզնկայի՝ 1230 թ. ճակատամարտից հետո, որը տարածաշրջանի պետությունները միավորել էր ընդդեմ ընդհանուր թշնամու՝ Ջալալ ալ-Դինի, հարևան պետությունների հանդեպ Իկոնիայի սուլթանության քաղաքականությունը դարձավ խիստ ագրեսիվ: Այն արտահայտվեց ոչ միայն Կիլիկյան Հայաստանի, այլև սելջուկներին հավատակից պետությունների՝ այդ թվում Հալեպի Այյուբյան սուլթանության հանդեպ: 1236 թ. ալ-Մալիք ալ-Ազիզի մահից անմիջապես հետո Իկոնիայի սուլթան Քեյ Կուբադը Հյուսիսային Ասորիքն իրեն ենթարկելու քայլեր ձեռնարկեց⁴⁸⁶: Ինդիրն այն է, որ Ալ-Մալիք ալ-Ազիզին հաջորդել էր որդին՝ ալ-Մալիք ալ-Նասիր Յուսուֆը (1236-1260), որն այդ պահին ընդամենը յոթ տարեկան էր: Վերջինիս գահակալության առաջին ութ տարիների ընթացքում Հալեպի սուլթանի խնամակալն էր իր տատը՝ Դայֆա Խաթունը՝ ալ-Մալիք ալ-Ջահիրի այրին:

Երկու տարի անց՝ 1238-ին Իկոնիայի և Հալեպի սուլթանական ընտանիքների միջև խնամիական կապեր հաստատվեցին: Ամուսնական զույգ պայմանագրերի համաձայն՝ Հալեպի տիրակալ ալ-Նասիրը և Քեյ Խոսրով II-ն (1237-1246) ամուսնանալու էին միմյանց քույրերի հետ⁴⁸⁷:

Այդուհանդերձ, նման քայլն անհավասար ուժերի մերձեցում էր, ինչի ազդեցությամբ Հալեպի վրա Իկոնիայի ճնշումը չա-

⁴⁸⁶ Տե՛ս **Eddé A.-M.**, *La Principauté Ayyoubide d'Alep*, էջ 112:

⁴⁸⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 115:

փագանց մեծացավ, նույնիսկ այն աստիճան որ 1238 թ. Քեյ Խոսրովի անունը տրվեց Հալեպում խուտբայի ժամանակ. այլ կերպ ասած՝ ալ-Նասիրն ընդունեց Իկոնիայի գերիշխանությունը: Սելջուկների ճնշմամբ Քեյ Խոսրովի և ալ-Նասիրի անուններով⁴⁸⁸ դիրհեմներ (արծաթեդրամներ) հատվեցին Հալեպում (հմմտ. հայ-սելջուկյանի հետ): Փաստորեն՝ թե՛ Հյուսիսային Ասորիքը, թե՛ Ջագիրան գտնվում էին Իկոնիայի գերիշխանության ներքո⁴⁸⁹:

Այս շրջանում Կիլիկիայի հայկական թագավորության և Այյուբյանների (հատկապես Հալեպի) հարաբերությունները կարելի է համարել չեզոք: Համենայնդեպս, նրանց միջև ոչ թշնամական գործողությունների և ոչ էլ համագործակցության դրվագներ աղբյուրներում արձանագրված չեն:

Սամվել Անեցու Շարունակողի՝ 1237 թվակիր մի հաղորդման մեջ նշված է. «Ջարքն Հալպա կոտորեցին զԴամբլցիք ի Դարպասակն»⁴⁹⁰: Քաղվածքում հիշատակված «Դամբլցիք» Տաճարական ասպետներն էին: Ուստի՝ նշված իրադարձությունը ոչ թե Կիլիկյան Հայաստանի, այլ այդ միաբանության դեմ ուղղված հարձակում էր՝ առավել ևս, որ Դարպասակը 1206 թ. հաշտությամբ անցել էր Այյուբյան սուլթանությանը:

Այլ աղբյուրներից հայտնի է, որ այդ թվականին Տաճարական ասպետներն արշավել են Այյուբյան հողերի վրա և ջարդի ու թալանի ենթարկել Ամկում (Ումկ) իջևանած թուրքմենական ցեղերին: Այնուհետև նրանք շարժվել են Դարպասակի վրա և փորձել այն հետ խլել մուսուլմաններից, բայց անհաջողության են մատն-

⁴⁸⁸ Մի երևույթ, որը շատ չանցած տեսնում ենք նաև Իկոնիա-Սիս հարաբերություններում:

⁴⁸⁹ Տե՛ս **Eddé A.-M.**, *La Principauté Ayyoubide d'Alep*, էջ 117:

⁴⁹⁰ **Սամուել Անեցի եւ Շարունակողներ**, էջ 245:

վել ու ջախջախվել՝ կորցնելով մոտ 100 ասպետ և 300 աղեղնավոր⁴⁹¹:

Նույնիսկ Երզնկայի ճակատամարտից ու Ջալալ ալ-Դինի սպանությունից հետո մոտ մեկ տասնամյակ խորեզմցի ռազմիկ տարրը շարունակում էր ասպատակություններ կատարել Ասորիքում, Ջազիրայում և Փոքր Ասիայում:

Ջազիրայի տարածքում հաստատված խորեզմցի ամիրների հետ պայմանագիր կնքելով և Իկոնիայի տարածքում հողեր տրամադրելով՝ Քեյ Խոսրով II սուլթանը նրանց 12000-անոց զորքն օգտագործեց մոնղոլների դեմ սպասվող պայքարում:

Այնուհետև ինչպես Իկոնիայի սելջուկները, այնպես էլ Ասորիքի և Ջազիրայի տարբեր տիրակալներ նրանց օգտագործում էին իրենց ներքին պայքարներում⁴⁹²:

Այս նույն խորեզմցիները հետագայում հաստատվեցին Եփրատի ափերին՝ Կալաթ Ջաբարի շրջանում՝ անհանգստություն պատճառելով Հալեպի իշխանություններին: Նրանք 1240 թ. մի ճակատամարտում նույնիսկ պարտության մատնեցին Այյուբյան զորքերին: Խորեզմցիները հաստատվեցին Հալեպի հյուսիսում, իսկ Այյուբյանները նրանց ոչնչացնելու բավարար ուժ չունեին:

Ի վերջո, Հոմսի և Դամասկոսի ամիրներից օգնություն ստանալով՝ Հալեպի բանակն անցավ հակահարձակման և Եդեսիայի արվարձաններում 1241 թ. ապրիլի 5-ին տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեց խորեզմցիներին:

Այս հաղթանակի առթիվ Հալեպում մեծ տոնախմբություն եղավ: Հալեպի Այյուբյաններն իրենց իշխանությունը վերականգ-

⁴⁹¹ Դարպասկում ֆրանկների կրած պարտության մասին տե՛ս **Ibn Wāsil**, *Mufarrig al-kurūb*, v. 5, էջ 131-133; **Abū al-Fidā'**, *al-Muḥtaṣar*, v. 3, էջ 159, ինչպես նաև **Cahen Cl.**, *La Syrie du Nord*, էջ 650-651; **Riley-Smith**, *The Templars*, էջ 110:

⁴⁹² Տե՛ս **Eddé A.-M.**, *La Principauté Ayyoubide d'Alep*, էջ 121:

նեցին բավական մեծ մի տարածքի վրա, որը ներառում էր Խառ-
ռանը, Սարուջը, Եդեսիան, Ռաս ալ-Այնը, Ռաքքան և այլն⁴⁹³:

Անտիոք-Տրիպոլիսի խաչակիրների հետ Կիլիկյան Հայաս-
տանի հարաբերությունները XIII դ. 30-40-ական թթ. շարունա-
կում էին լարված մնալ, սակայն 1225-1226 թթ. հետո նոր բա-
խումներ տեղի չունեցան: Այդ ժամանակ Կոստանդին Պայլի
գլխավոր մտահոգությունն Իկոնիայի սուլթանությունն էր, որն ա-
մեն պատեհ առիթով պատրաստ էր հարձակում գործել Հայոց
թագավորության վրա:

բ) Կիլիկիայի հայկական թագավորությունն ու Ասորիքի Այլության սուլթանությունը մոնղոլներին դեմ հանդիման

1243 թ. տեղի ունեցավ Չմանկատուկի նշանավոր ճակա-
տամարտը, որը նախանշեց տարածաշրջանի ճակատագիրը
հաջորդ մի քանի տասնամյակների ընթացքում: Իր հզորության
գագաթնակետին գտնվող Իկոնիայի սելջուկյան սուլթանությու-
նը, մոնղոլներից ջախջախիչ պարտություն կրելով, բռնեց թու-
լացման ու քայքայման ուղին: Ինչպես նշել է Ֆրանսիացի արևե-
լագետ Կլոդ Կանենը՝ սելջուկյան ամբողջ հզորությունը, փաստո-
րեն, մեկ օրում ջախջախվեց⁴⁹⁴: Այդ ճակատամարտը վճեց նաև
Հարավ-արևմտյան Հայաստանի ճակատագիրը⁴⁹⁵: Կիլիկյան
Հայաստանի համար ևս այն ունեցավ բախտորոշ նշանակույթ-

⁴⁹³ Խորեզմցիների և Այլությանների հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս **Cahen Cl.**, *La Syrie du Nord*, էջ 644-650, ինչպես նաև **Eddé A.-M.**, *La Principauté Ayyoubide d'Alep*, էջ 122-127:

⁴⁹⁴ Տե՛ս **Cahen Cl.**, *La Syrie du Nord*, էջ 695:

⁴⁹⁵ Հետաքրքիր է, որ Խլաթը գրավելուց հետո մոնղոլներն այդ քաղաքն ու շրջակա հողերը հանձնեցին Իվանե աթաբեկի դուստր Թամթային, որը եղել էր ալ-Մալիք ալ-Աշրաֆ Այլությանի կինը (տե՛ս **Հայոց պատմություն**, հ. II, Գիրք երկրորդ, էջ 281):

յուն, քանի որ հնարավորություն տվեց ազատվելու Իկոնիայի սուլթանությունից ունեցած կախվածությունից⁴⁹⁶:

Մինչ կիլիկյան իշխանությունները եռանդուն ջանքեր էին գործադրում հայ-մոնղոլական դաշինք հաստատելու և այն ամրապնդելու ուղղությամբ Չմանկատուկի ճակատամարտին հաջորդած մեկուկես տասնամյակի ընթացքում (1243-1258 թթ.), Ասորիքի Այյուբյանները սկզբում՝ ավելի քան մեկ տասնամյակ նույնպիսի քայլեր ձեռնարկելով, իսկ հետագայում՝ հատկապես 1256-1260 թթ. հապաղեցին ու հակասական գործողություններով, ի վերջո, ձախողեցին մոնղոլների հետ դաշինքը:

Չմանկատուկի ճակատամարտից մեկ տարի անց՝ 1244 թ. վաղ ամռանը մոնղոլական մի զորաբանակ զորավար Յասսաուրի գլխավորությամբ մոտեցավ Հալեպի մատույցներին⁴⁹⁷: Մոնղոլները Հալեպի, Դամասկոսի և Հոմսի իշխանություններից պահանջեցին հպատակվել իրենց: Վերջիններս մեծ զումարով կաշառեցին մոնղոլներին, և արդեն օգոստոսին նրանք հեռացան դեպի հյուսիս-արևելք ու ճամբար խփեցին Մուշում⁴⁹⁸:

Մոնղոլական մի զորաբանակ 1244 թ. վերջին Վանա լճի կողմերից արշավեց դեպի Մայյաֆարիկին: Ընդ որում, թե՛ այս, թե՛ նախորդ հարձակումներն Ասորիք և Զազիրա մեկուսի դեպ-

⁴⁹⁶ Կիլիկիա չներխուժելու դիմաց Հեթում Ա-ը մոնղոլների պահանջով նրանց հանձնեց սուլթանի ընտանիքը, որը ճակատամարտից առաջ ապաստանել էր Կիլիկյան Հայաստանում: Փաստորեն, մոնղոլների տարած հաղթանակը (հայ-վրացական զինուժի ակտիվ մասնակցությամբ) Կիլիկիային փրկում էր գրեթե երեսնամյա ստորակայությունից: Ճիշտ է, սելջուկները, չներելով իրենց նախկին դաշնակցի կողմից սուլթանի ընտանիքի հանձնումը մոնղոլներին, հետագայում մի շարք պատժիչ արշավանքներ կատարեցին Կիլիկիա, բայց, միևնույն է, նոր իրավիճակում կշեռքի նժարն արդեն թեքվել էր Հայոց թագավորության կողմը:

⁴⁹⁷ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 334:

⁴⁹⁸ Տե՛ս **Jackson P.**, *The Crusaders of 1239-1241 and their aftermath*, էջ 244, in: **Muslims, Mongols and Crusaders**, an Anthology of Articles published in The Bulletin of the School of Oriental and African Studies, compiled and introduced by G.R. Hawting, London & New York, 2005, **Ibn al-Ibri**, *Tarikh Mukhtasar ad-Duwal*, Beirut, 1890, էջ 446:

քեր էին, որոնք հաջորդ ութ տարիների ընթացքում չկրկնվեցին: Թեև մոնղոլներն արդեն վերահսկում էին Մեծ Հայքն ու Արևելյան Փոքր Ասիան, սակայն նրանք Այյուբյան «տերությունը» գրավելու հստակ որոշում չէին ընդունել⁴⁹⁹:

Չմանկատուկի ճակատամարտից ու տարածաշրջանում մոնղոլական գերիշխանության հաստատումից հետո Հեթում Ա-ը գործնական քայլեր ձեռնարկեց հայ-մոնղոլական դաշինք հաստատելու ուղղությամբ: Մոնղոլական ավանդույթը պահանջում էր, որ դաշինքի ձգտողն անձամբ ներկայանար Խանի մոտ: Հեթում Ա-ը դաշինքի կնքումը նախապատրաստելու համար Մոնղոլիա ուղարկեց եղբորը՝ սպարապետ Սմբատին, որը ներկայացավ Գույուք խանին (1246-1248): Նա Սամարղանդից մի նամակ ուղարկեց իր երկու փեսաներին՝ Կիպրոսի թագավոր Հենրի I Լուսինյանին և Յաֆֆայի կոմս Ժան Իբելինցուն: Այդ նամակում նա նկարագրում էր մուսուլմանական երկրներում մոնղոլների գործած ավերածությունները՝ կարծես արդարացնելով Կիլիկիայի վերնախավի ընտրած դիրքորոշումը⁵⁰⁰: Ըստ էության, Սմբատի դեսպանագնացությունն է ակնարկված Ջուվայնիի մի հաղորդման մեջ, որում Գույուկի թագադրությանը ներկա գտնված հյուրերի մասին պատմիչը գրում է. «Ռումից եկավ սուլթան Ռուքն ալ-Դինը, և եկավ *Թաքավորի սուլթանը* (այսպես է բնագրում), Վրաստանից՝ երկու Դավիթները, Հալեպից՝ Հալեպի տիրոջ եղբայրը»⁵⁰¹: Արևելագետ Գագիկ Դանիելյանը, պարսիկ հեղինակի այս հաղորդումը զուգադրելով Բար Հեբրեոսի «Ժամանակագրության»՝ արաբական խմբագրության համապատասխան վկայության հետ, հանգել է այն եզրակացությանը, որ *Թա-*

⁴⁹⁹ Տե՛ս **Humphreys S.**, նշվ.աշխ., էջ 334:

⁵⁰⁰ Տե՛ս **Mutafian Cl.**, La diplomatie armenienne au Levant a l'epoque des croisades XII – XIV siecle, էջ 86-87 և հատկապես **Richard J.**, La lettre du Connétable Smbat et les rapports entre chrétiens et Mongols au Milieu du XIIIème siècle, “Armenian studies in memoriam Haïg Berbérien”, Lisbon, 1986, էջ 683-696:

⁵⁰¹ **Ġuwaynī**, Tārīḥ Ġahān-Ġuṣā, v. I, էջ 205:

քավորի՝ սուլթան հորջորջումը Ջուվայնիի սխալն է, և որ խոսքն այստեղ իրականում Սմբատ Սպարապետի մասին է, ում ինքը՝ Բար Հեբրեոսը, «գունդստաբլ՝ թաքֆուր Հեթումի եղբայր» է անվանում. «Իսկ Ռումից եկավ սուլթան Ռուքն ալ-Դինը, հայերից՝ Գունդստաբլը՝ թաքֆուր Հեթումի եղբայրը, Վրաստանից՝ Մեծ և Փոքր Դավիթները, իսկ Ասորիքից՝ Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիրի եղբայրը»⁵⁰²:

Հարկ է նշել, որ Ջուվայնիի և Բար Հեբրեոսի հաղորդումները երկիցս կարևոր են. դրանք փաստում են նաև, որ ինչպես Հեթումը, այնպես էլ Այյուբյան ալ-Մալիք ալ-Նասիրն իր եղբորն էր ուղարկել Կարակորում՝ մոնղոլ մեծ խանից իր իշխանության համար յառլիկ (յառլախ) ստանալու: «Եվ յառլիկներ ու հավաստագրեր գրեց Թաքֆուրի և Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիրի համար», -շարունակում է Բար Հեբրեոսը⁵⁰³: Ինչպես Հայոց թագավորության դեպքում, Հալեպի Այյուբյանների համար նույնպես նման քայլը մոնղոլների գերիշխանությունն ընդունելու առաջին փորձը չէր: Աղբյուրները հավաստում են, որ դեռ 1243/1244 թ. ալ-Նասիրը (թնագրում՝ Շամի և Հալեպի սուլթանը) դեսպան է ուղարկել Թավրիզ՝ Արղուն Աղայի մոտ և, ճանաչելով մոնղոլների գերագահությունը, հարկատու դարձել նրանց⁵⁰⁴:

Նույն այդ տարիներին Հեթում Ա-ը ուշադրության կենտրոնում էր պահում նաև եվրոպական երկրների և հարևան լատին պետությունների հետ Կիլիկյան Հայաստանի հարաբերությունները: 1248 թ. Հեթումը պատվիրակներ ուղարկեց Խաչակրաց յոթերորդ արշավանքը գլխավորող Լյուդովիկոս IX-ի մոտ, որն

⁵⁰² Հմմտ. **Ibn al-'Ibrī**, *Tārīḥ Muḥtaṣar al-duwal*, Bayrūt, 1994, էջ 448: Մանրամասն քննարկումը տե՛ս **Դանիելյան Գ.**, «Թագավոր/թաքֆուր» տիտղոսը միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ, «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», էջ 181-189:

⁵⁰³ Տե՛ս **Ibn al-'Ibrī**, *Muḥtaṣar*, էջ 450 և հմմտ. **Ġuwaynī**, *Tārīḥ Ġahān-Ġuṣā*, v. I, էջ 212:

⁵⁰⁴ Տե՛ս նույն տեղում, v. 2, էջ 244, ինչպես նաև **Amitai**, *Mongols*, էջ 20:

այդ ժամանակ Կիպրոսում էր: Մերձավոր Արևելքում քրիստոնյաների դիրքերն ամրապնդելու նպատակով Ֆրանսիայի թագավորը փորձեց կարգավորել Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի հարաբերությունները, որոնք մինչ այդ բավական լարված էին: Լյուդովիկոս IX-ի դիվանագիտական ձեռնարկումների շնորհիվ Հեթում Ա-ն ու Բոհեմունդ V-ը հաշտվեցին: Վերջինս կնության առավ Հեթումի դուստր Սիրիլին:

Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի հետագա հարաբերությունները հուշում են, որ այս հաշտությամբ Բոհեմունդ V-ն ընդունել էր Հեթում Ա-ի գերագահությունը՝ պարտավորվելով հետևել ու համերաշխել հայ-մոնղոլական զինակցությանը⁵⁰⁵: Փաստորեն՝ Արևելյան Միջերկրականի երկրներում դեռևս պահպանված երկու լատին պետություններից մեկը դառնում էր Հայոց թագավորության ստորական: Այս հանգամանքը, անկասկած, բարձրացնում էր Կիլիկյան Հայաստանի դերն ու նշանակությունը մոնղոլների ծավալապաշտական ծրագրերում: Կիլիկիայի հայկական թագավորությունից Անտիոքի ստորակայական կախվածությունը շարունակվեց մինչև 1266 թ.՝ այսինքն Հեթում Ա-ի հզորագույն շրջանը, որը հաջորդեց հայ-մոնղոլական դաշինքի կնքմանը և նախորդեց Եգիպտոսի սուլթան Բայբարս I-ի (1260-1277 թթ.) աղետաբեր արշավանքին: Այլ կերպ ասած՝ ինչը Լևոն Մեծագործին չէր հաջողվել զենքով, Հեթում Ա-ն իրականացրեց դիվանագիտական միջոցներով:

XIII դ. 40-ական թթ. երկրորդ կեսին Հալեպի Այյուբյանները շարունակում էին պարբերաբար հարաբերվել մոնղոլների հետ՝ անշուշտ վերջիններիս գերիշխանությունն ընդունելով: Ալ-Մալիք ալ-Նասիրը ամեն տարի մոնղոլ զորավար Բաչուին հարկ և թանկարժեք նվերներ էր մատուցում: 1250 թ. ալ-Նասիրը ևս

⁵⁰⁵ Տե՛ս **Mutafian Cl.**, *La diplomatie arménienne au Levant a l'époque des croisades XII – XIV siècle*, էջ 88-89:

մի դեսպանություն ուղարկեց Կարակորում՝ իր հպատակությունը հայտնելու արդեն Մանգու (Մոնգլե) խանին (մանրամասն տես ստորև)⁵⁰⁶:

Նույն՝ 1250 թ. Սմբատ Սպարապետը Կարակորումից վերադարձավ հայրենիք: Ենթադրելի է, որ նա Հեթում Ա-ին փոխանցեց մեծ խանի հրավերը՝ անձամբ ներկայանալու իր արքունիք: Հայոց թագավորն անմիջապես ճանապարհ չընկավ: Ըստ Գագիկ Հարությունյանի՝ Սմբատի վերադառնալուց մի քանի տարի անց միայն Հեթումի Կարակորում մեկնելը պատահական չէր՝ Հայոց արքան փորձում էր ժամանակ շահել առավել կշռադատված որոշում ընդունելու համար⁵⁰⁷: Հավանաբար, այցը ձգձգվեց նաև Զաբել թագուհու վատառոջության, ապա մահվան պատճառով, որից հետո միայն՝ 1253 թ. սկզբին Հեթում Ա-ը ճանապարհ ընկավ: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ նա ծայտյալ անցավ սելջուկների փոքրասիական տիրույթներով, ապա մեկնեց Ոսկե Հորդա, որտեղ հանդիպեց Բաթու խանին, այնուհետև ժամանեց Կարակորում, որտեղ 1254 թ. աշնանը ներկայացավ Մանգու խանին:

Վերադարձի ճանապարհին՝ Թալասում (Կենտրոնական Ասիա) Հեթումը հանդիպեց մեծ խանի եղբայր Հուլաղուին, որը շուտով պետք է հիմնադրեր Իրանի մոնղոլական պետությունը: Վերջապես, 1256 թ. Հեթումը վերադարձավ Կիլիկիա:

Ի տարբերություն Կիլիկյան իշխանությունների՝ ալ-Նասիրը չչտապեց անձամբ մեծ խանին ներկայանալ: Ավելին, ըստ արաբ պատմիչ Իբն ալ-Ամիդի՝ երբ Հուլաղուն 1256 թ. հաղթականորեն ժամանեց Իրան, նա նրա մոտ ո՛չ դեսպաններ ուղարկեց,

⁵⁰⁶ Տե՛ս **Ibn al-ʿAmīd**, *Aḥbār al-ʿAyyubiyyīn*, էջ 41; Рашид ад-Дин, Сборник летописей, т. III, перевод с персидского А. К. Арендса, под редакцией А. А. Ромаскевича, Е. Э. Бертельса, и А. Ю. Якубовского, Москва-Ленинград, 1946, էջ 49, ինչպես նաև **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 334-335 և **Amitai**, *Mongols*, էջ 21:

⁵⁰⁷ Տե՛ս **Հայոց պատմություն**, հ. II, Գիրք երկրորդ, էջ 363:

ո՛չ ընծաներ մատուցեց: Հուլաղուն այդ վերաբերմունքը վիրավորանք համարեց, քանզի ալ-Նասիրը նվերներ էր մատուցում արդեն իր ենթակա Բաջուին, իսկ իրեն ողջունելու համար անգամ մի դեսպան չէր ուղարկել⁵⁰⁸: Պարզվում է, որ Հալեայի Այյուբյանները որոշել էին հետ կանգնել մոնղոլներին հնազանդվելու քաղաքականությունից, ինչի համար շատ շուտով պիտի զոջային: Բաղդադի՝ 1258 թ. գրավումից հետո ալ-Մալիք ալ-Նասիրին վերջնականապես պարզ դարձավ, որ մոնղոլների ծավալապատական ծրագրերում անխուսափելիորեն ներառված էր նաև Ասորիքի նվաճումը: Հուլաղուի հետ նամակագրությունը և բանակցությունների նստելու նրա փորձերն անպտուղ մնացին: Հալեայի Այյուբյաններին ոչինչ չէր մնում, քան սպասել մոնղոլների վերահաս հարձակմանը⁵⁰⁹: Այս հարցերին ավելի մանրամասն կանդորադառնանք ստորև: Այստեղ արձանագրենք միայն, որ ի տարբերություն ալ-Մալիք ալ-Նասիրի՝ Հայոց արքա Հեթումն անհամեմատ ավելի հեռատես գտնվեց՝ իր թագավորությունը զերծ պահելով մոնղոլական ներխուժման վտանգից:

Ինչ վերաբերում է Այյուբյաններին, ապա խաչակրաց հերթական արշավանքի մասնակիցների դեմ նրանց տարած հաղթանակը միաժամանակ նշանավորելու էր Եգիպտոսի Այյուբյանների վերջը: Այյուբյանների՝ Հալեայի ճյուղը, որը մոտ կես դար գոյատևել էր գրեթե նույն սահմանների մեջ, շուտով ընդարձակվելու հնարավորություն պիտի ստանար:

Հալեայի սուլթանությունն ալ-Նասիր Յուսուֆի գլխավորությամբ 1242-1260 թթ. աստիճանաբար տիրացավ ամբողջ Ասորիքին: Հալեայի տիրույթների կտրուկ ընդարձակումը (ընդգրկում էր Դամասկոսն ու այլ քաղաքներ) անմիջականորեն կապված էր Եգիպտոսում Այյուբյանների ձախողման և մամլուք-

⁵⁰⁸ Տե՛ս **Ibn al-ʿAmīd**, *Aḥbār al-Ayyubiyyīn*, էջ 41:

⁵⁰⁹ Այս մասին մանրամասն տե՛ս **Amitai**, *Mongols*, էջ 21-24:

ների (կամ ռազմիկ ստրուկների) կողմից Կահիրեում իշխանության գրավման հետ:

Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Սալիհ Նաջմ ալ-Դին Այյուբի (1240-1249) այրին՝ Շաջարաթ ալ-Դուռոզը («Մարգարտածառ»)՝⁵¹⁰, կարևոր դեր խաղաց մամլուքների իշխանության բերելու հարցում: Այյուբյանների բանակում ծառայող մամլուքները, որոնք հիմնականում թյուրքական կամ կովկասյան (ղփչաղյան) ծագում ունեին, աստիճանաբար ծանրակշիռ դիրք գրավեցին Այյուբյան բանակում: Նրանց առաջխաղացմանը նպաստել էր նաև այն կարևոր դերը, որ նրանք խաղացել էին հաջակրաց յոթերորդ արշավանքի մասնակիցներին Եգիպտոսից դուրս մղելու հարցում: Ալ-Սալիհ Այյուբի մահից հետո (1249 թ.)՝ 1250 թ. գահ բարձրացավ նրա որդի Մուազզամ Թուրանշահը: Նա փորձեց իշխանության լծակներն իր ձեռքը վերցնել, բայց զոհ գնաց մամլուքների կազմակերպած դավադրությանը: Սպանվածի մայրը՝ Շաջարաթ ալ-Դուռոզը, ինքը նստեց սուլթանական գահին, ինչը բացառիկ երևույթ էր իսլամական աշխարհում: Մոտ երեք ամիս միահեծան կառավարելով Եգիպտոսը⁵¹¹՝ նա, ի վերջո, ամուսնացավ մամլուք հրամանատար Այբաքի հետ, որը շուտով հռչակվեց սուլթան (1250-1257)⁵¹²: Այսպես սկիզբ դրվեց Մամլուքյան սուլթանությանը, որն իր գոյության առաջին տասնամյակում դեռևս

⁵¹⁰ Սա եղել էր ստրկուհի, սակայն սուլթանից զավակ ունենալով, ազատվել էր ստրկությունից ու դարձել նրա կինը: Որոշ արաբ պատմիչներ Շաջարաթ ալ-Դուռոզին վերագրում են կամ թյուրքական կամ հայկական ծագում: Տե՛ս օրինակ, **Abū al-Fidā'**, al-Muḥtaṣar, v. III, էջ 192 և **al-Maqrīzī**, Kitāb al-sulūk, v. 1.2, էջ 361-362:

⁵¹¹ Այդ ընթացքում նրա անունն էր տրվում խուտբայի ժամանակ և դրամ էր հատվում:

⁵¹² Տե՛ս **Hitti Ph.**, History of the Arabs, London, 1958, էջ 671-672; **Դանիելյան Գ.**, Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2015, թիվ 1, էջ 142-143:

գտնվում էր անկայուն վիճակում, իսկ սուլթանի իշխանությունը չէր տարածվում Եգիպտոսից դուրս⁵¹³:

Ասորիքի տիրակալ ալ-Նասիր Յուսուֆը ոչ միայն իր տիրոջնեթին միացրեց Հարավային Ասորիքն ու Պաղեստինը, այլև փորձեց ներխուժել Եգիպտոս որպես Այյուբյան ամբողջ սուլթանության օրինական ժառանգ, սակայն չհաջողեց: Ինչևէ, ալ-Նասիրն առավել ամրապնդեց իր իշխանությունն Ասորիքում, իսկ Հալեպը, փաստորեն, 1250-1260 թթ. դարձավ Ասորիքի Այյուբյան սուլթանության մայրաքաղաք: Այդ տասը տարվա ընթացքում ոչ Այյուբյանները կարողացան իրենց իշխանությունը վերականգնել Եգիպտոսում, ոչ մամլուքները հաջողեցին լրջորեն սպառնալ Ասորիքին:

Չնայած մոնղոլների՝ խիստ հակամուսուլմանական դիրքորոշմանը՝ Ասորիքի Այյուբյանները XIII դ. սկզբից մինչև 50-ական թթ. կեսերը դեռևս հնարավորություն ունեին իրենց պետությունը փրկելու վերահաս աղետից: Մոնղոլներից սպառնացող վտանգն Այյուբյաններին ստիպում էր որոշակի *modus vivendi* գտնել նրանց հետ: Այդ մտայնությամբ ալ-Նասիր Յուսուֆը Դամասկոսը գրավելուց ու իր պետությանը միացնելուց շատ չանցած՝ Ջայն ալ-Դին ալ-Հաֆիզի գլխավորությամբ մի դեսպանություն ուղարկեց Կարակորում: Նորընծա մեծ խան Մանգուն բավականաչափ պատրաստակամությամբ ընդունեց հպատակվելու մասին Հալեպի սուլթանի խնդրագիրը և 1251 թ. վերջին Ջայն ալ-Դինը խանական տոհմական նշաններով վերադարձավ Դամասկոս: Դրանք խորհրդանշում էին ալ-Նասիրի և նրա երկրի (ամբողջ Ասորիքի) մոնղոլական հովանավորության տակ անցնելը: Ընդ

⁵¹³ Մամլուքյան պատմության հետազոտող Ռ. Իրվինն այս շրջանը դիպուկ կերպով անվանում է «փոթորկուն/անհանգիստ տասնամյակ» (*The turbulent decade*) (տե՛ս **Irwin R.**, *The Middle East in the Middle Ages: The Early Mamluk sultanate 1250- 1382*, Southern Illinois University Press, Carbondale and Edwardsville, 1986, էջ 26-36):

որում, Հալեպի սուլթանը պարտավորվում էր ամեն տարի նվերներ ուղարկել զորավար Բաչուին⁵¹⁴: Չնայած Այյուբյանների հպատակվելուն՝ Բաչուն 1252 թ. մայիս-հունիս ամիսներին պաշարեց Մայյաֆարիկինը, իսկ զորքի մի մասն ուղարկեց Սարուջ և Ռաս ալ-Այն:

Մայյաֆարիկինի կառավարիչ ալ-Քամիլ Մուհամմադը մինչև մոնղոլների հասնելն ընտանիքով փախել էր Հիսն Քայֆա, որտեղից օգնության խնդրանքով դիմեց Ոսկե Հորդայի տիրակալ Բաթու խանին: Վերջինիս միջնորդությամբ Բաչուն վերացրեց պաշարումը՝ պայմանով, որ Մայյաֆարիկինի տերն անձամբ գնա Կարակորում և իր հպատակությունը հայտնի մոնղոլներին: Ալ-Քամիլը ևս կատարեց իր խոստումն ու 1253 թ. փետրվարին ժամանեց Կարակորում⁵¹⁵: Փաստորեն՝ այդ ժամանակ Մանգուն Ասորիքի և Ջազիրայի բոլոր մեծ ու փոքր կառավարիչների ընդհանուր տիրակալն էր⁵¹⁶:

Թվում էր, թե Այյուբյանները, որոնք արդեն կորցրել էին Եգիպտոսը, ստեղծված իրավիճակում առնվազն Ասորիքն ու Ջազիրան փրկելու քաղաքական ճկունություն հանդես կբերեն, սակայն 1254-1257 թթ. դեպքերը նրանց օգտին չծավալվեցին:

Ակնհայտ էր, որ Մանգուն չէր բավարարվելու անվանական իշխանությամբ: Նա ծրագրել էր վերջնականապես գրավել Մերձավոր Արևելքի երկրները՝ մինչև Նեղոս գետը: Այդ մեծ արշավանքը գլխավորելու էր Մանգուի եղբայր Հուլադուն, որը մինչ այդ պետք է արշավեր Չինաստան, Կենտրոնական Ասիա, Իրան, ապա Բաղդադ՝ Աբբասյան խալիֆային հպատակեցնելու: Այդ ամենից հետո միայն մոնղոլները կհայտնվեին Այյուբյան տերության սահմաններին: Այլ խոսքով՝ Ասորիքի Այյուբյան տիրակալ ալ-Նասիր Յուսուֆը և Բաղդադի Աբբասյան խալիֆա ալ-

⁵¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 334-335:

⁵¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 335:

⁵¹⁶ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 335:

Մուստասիմը (1242-1258) առնվազն 2-3 տարի հստակ կողմնորոշվելու ժամանակ ունեին:

Ս. Հեմֆրիզը գրում է, որ ալ-Նասիր Յուսուֆն անվճռական դիրք էր գրավել և հակասական քայլեր էր անում: Նա պետք է անվերապահ հնազանդվեր մոնղոլներին կամ ջանադրաբար նախապատրաստվեր պաշտպանության՝ հնարավորինս շատ դաշնակիցներ ձեռք բերելով: Ուսումնասիրողը գտնում է, որ ալ-Նասիր Յուսուֆը կարող էր դեսպանություն ուղարկել Հուլաղուի մոտ՝ հավաստելով իր ստորակայական կախվածությունը, ինչը չարեց: Հալեպի սուլթանը ոչ միայն նոր դաշինքներ չկնքեց, այլև չհամագործակցեց մոնղոլներին դիմադրելու պատրաստ հարևան ամիրների հետ⁵¹⁷:

Հուլաղուն Իրանի Համադան քաղաքից 1257 թ. սեպտեմբերին շարժվեց Իրաք՝ նախապես հպատակության պահանջով Խալիֆայի մոտ դեսպանություն ուղարկելով: Այնուհետև երկու միապետերի միջև սկսվեց դիվանագիտական նամակագրություն՝ լի արհամարհանքով ու սպառնալիքներով: Ակնհայտ էր, որ Խալիֆայի դիրքերը չափազանց թույլ էին: Գիտակցելով, որ Աբբասյանների՝ 500-ամյա պատմության ընթացքում Խալիֆայությունը հայտնվել է ամենամեծ վտանգի առջև՝ ալ-Մուստասիմը հանկարծ հիշեց ալ-Նասիր Յուսուֆի հին խնդրանքը սուլթանի տիտղոս շնորհելու մասին: Բնականաբար, Խալիֆան հույս ուներ հավատարիմ պաշտպան ձեռք բերել՝ ի դեմս Ասորիքի տիրակալի, սակայն ալ-Մուստասիմից սուլթանի տիտղոս ստացած ալ-Նասիր Յուսուֆի վճռականությունը չավելացավ⁵¹⁸:

Հուլաղուն 1257 թ. հոկտեմբեր-նոյեմբերին կրկին պաշարեց Բաղդադը՝ այդ անգամ արդեն այն գրավելու նպատակով: Ալ-Մուստասիմը շտապեց դիմել ալ-Նասիր Յուսուֆի օգնության:

⁵¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 336-337:

⁵¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 338:

նը: Նորընծա սուլթանը, իհարկե, չէր կարող մերժել խալիֆային, բայց նրա օգնական զորքն իրեն հատուկ դանդաղկոտությամբ ու անվճռականությամբ այնքան ուշացավ, որ շատ չանցած՝ հասավ Բաղդադի անկման լուրը⁵¹⁹:

Մոնղոլների հաղթանակներից ահաբեկված Ալ-Նասիր Յուսուֆը, անշուշտ, քաջ գիտակցում էր, որ հաջորդն ինքն է լինելու, բայց նա ժամանակ չուներ և պետք է ընտրություն կատարեր ենթարկվելու կամ անհույս դիմադրելու միջև: Ի վերջո, նա ընտրեց առաջինը, սակայն մինչ նրա բանագնացները կհասնեին Բաղդադ, Հուլաղուն արդեն Համադանի ճանապարհին էր:

Ալ-Նասիր Յուսուֆը 1258 թ. երկրորդ կեսին նոր պատվիրակություն ուղարկեց Հուլաղուի մոտ՝ այդ անգամ ավելի բարձր պաշտոնյաների՝ հարազատ որդու ու ժառանգորդի՝ ալ-Ազիզ Մուհամմադի, Ջայն ալ-Դին ալ-Հաֆիզի և հաջիբ Ալամ ալ-Դին Կայսար ալ-Ջահիրիի գլխավորությամբ: Պատվիրակությանն ընդունելով հանդերձ՝ Հուլաղուն դժգոհություն հայտնեց, որ ալ-Նասիրը հապաղել էր դեսպանություն ուղարկել մինչև Բաղդադի գրավումը, իսկ տվյալ դեսպան անձամբ չէր ներկայացել իր մոտ՝ Մարաղա: Բանագնացները սուլթանի հապաղումը պատճառաբանեցին խաչակիրների կողմից շրջապատված լինելու հանգամանքով: Ինչևէ, Հուլաղուն ձևացրեց, թե ընդունում է բացատրությունը, բայց դա նրան չհամոզեց: Հիշարժան է, որ իլխանի կինը՝ Դոքուզ Խաթունը, և զորավար Քիթբուղան նեստորական քրիստոնյաներ էին՝ հակամուսուլմանական դիրքորոշում ունեցող: Իլխանության արքունիքն այդ ժամանակ փորձում էր դաշինք կնքել պապության հետ: Ավելին, շշուկներ կային, որ ալ-Նասիրի պատվիրակության անդամ Ջայն ալ-Դին ալ-Հաֆիզին, շահելով մոնղոլների վստահությունը, քաջալերել է նրանց լայնածավալ հարձակում սկսել ընդդեմ Ասորիքի: Ալ-Նասիր Յուսուֆը

⁵¹⁹ Տե՛ս նույն տեղում:

ոչ միայն տեղյակ չէր այդ ամենից, այլև համոզված էր, որ Հուլաղուն, ընդունելով պատվիրակներին ու թանկարժեք ընծաները, բարյացակամ է տրամադրված իր հանդեպ⁵²⁰:

գ) Հալեպի ու Դամասկոսի գրավումը: Ասորիքի Այյուբյան սուլթանության վախճանը

Հեթում Ա-ը, զբաղված լինելով Իկոնիայի սուլթանության դեմ պատերազմով, չմասնակցեց մոնղոլների՝ 1258 թ. արշավանքին, որն ավարտվեց Բաղդադի գրավումով և Աբբասյան խալիֆայության տապալումով: Ջազիրայում մոնղոլները հանդիպեցին լուրջ դիմադրության: Հուլաղուի հրամանատարությամբ նրանք (նաև հայկական ջոկատը իշխան Պոռոշի գլխավորությամբ) միայն երկու տարվա պաշարումից հետո կարողացան գրավել Մայյաֆարիկինը (Նփրկերտ)⁵²¹:

Այդ նույն տարում՝ 1258-ին Հեթում Ա-ն սկսեց Հայոց թագավորության համար մի շատ կարևոր ծրագրի իրագործումը: Ըստ երևույթին, դեռևս 1254 թ.՝ Մանգու խանի հետ իր հանդիպման ժամանակ նա համաձայնություն էր ստացել՝ Իկոնիայի սելջուկների ու Հալեպի Այյուբյանների տիրապետության տակ գտնվող հայաբնակ բնակավայրերը միացնելու իր պետությանը: Այդ համաձայնության արտահայտությունը 1258 թ. Մարաշի գրավումն էր:

Ըստ Իբն ալ-Շիհնայի՝ հիջրայի 656 թ. (1258 թ.) Մարաշը գտնվում էր Իմադ ալ-Դին անունով մի կառավարչի ձեռքում, որի ընտանիքը քաղաքին տիրում էր արդեն 50 տարուց ավելի: Պատմիչը շարունակում է, որ «Իմադ ալ-Դինը աղաջիրների (ա-

⁵²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 339-340:

⁵²¹ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 384-387, ինչպես նաև **Микаелян Г. Г.**, նշվ. աշխ., էջ 320-321; **Mutafian Cl.**, L'Arménie du Levant, էջ 145-146, **Bayarsaikhan D.**, The Mongols and the Armenians (1220-1335), Leiden-Boston, 2011, էջ 127-135:

ղաչ-էրի)⁵²² և հայերի հարձակումների հաճախացման պատճառով այլևս անկարող էր պահել այն: Նա նամակ գրեց Ռումի տեր Իզզ ալ-Դին Քեյ-Քաուսին՝ բերողը նրան հանձնելու մտադրությամբ, բայց վերջինս հրաժարվեց: Գրեց նաև Ասորիքի տեր ալ-Մալիք ալ-Նասիր Սալահ ալ-Դինին, բայց վերջինս նույնպես հրաժարվեց ընդունել բերողը: Եվ երբ նրա վիճակը բարդացավ, [հարկադրված] թողեց այն և հեռացավ, որից հետո նրան տիրեցին հայերը»⁵²³: Փաստորեն՝ հիշյալ անցքերը Հեթում Ա-ի օրոք Կիլիկյան Հայաստանի հողերի ընդարձակման առաջին փուլն էին: Հայոց թագավորն այդ փուլը եզրափակեց սեփական ուժերով:

Հուլաղուն 1259 թ. սեպտեմբեր 12-ին սկսեց իր՝ վաղուց ծրագրած արշավանքն Ասորիք: Նա իր որդի Յոշնութի գլխավորությամբ մի զորախումբ ուղարկեց նախապես Ասորպատականից դեպի Ջազիրա ճանապարհն անվտանգ դարձնելու և, առաջին հերթին, Մայյաֆարիկինը գրավելու համար: Քաղաքն ամբողջ տարվա ընթացքում կատաղի դիմադրեց մոնղոլներին և պաշարումը որևէ արդյունք չտվեց⁵²⁴:

Մայյաֆարիկինի անհաջող պաշարումը Հուլաղուին ստիպեց փոխել իր արշավանքի ուղղությունը: Նա նախ գրավեց Խաբուրի հովտի բոլոր խոշոր քաղաքները՝ բացառյալ Դիար

⁵²² Բնագրում՝ ‘ağāğiriyya (բառացի՝ «անտառի մարդիկ», «ձառերի մարդիկ»): Աղաչ-էրիները թյուրք-օղուզական ցեղախմբեր էին, որ սովորություն ունեին անտառներում բնակվել (Տե՛ս **Рашид-ад-Дин**, Сборник летописей, том I, книга I, пер. с персидского Л. А. Хетагурова, ред. и примечания А.А. Семенова, изд. АН СССР, Москва-Ленинград, 1952, էջ 85):

⁵²³ Տե՛ս **Ibn al-Šihna**, Al-Durr al-muntaḥab, էջ 192: Իբն Բիբին նույնպես գրում է Մարաշի վրա աղաչ-էրիների հաճախակի հարձակումների մասին, որոնք ըստ նրա «ճանապարհներ և քարավաններ էին կտրում, հրոսում Ռումի երկրի, Ասորիքի և հայերի վրա»: Տե՛ս **Ibn-Bībī**, էջ 284: Հմմտ. **Cahen Cl.**, La Turquie, էջ 240-241:

⁵²⁴ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 341-344:

Մուդարի բնակավայրերի, որոնց հաջողվեց տիրել միայն 1259 թ. վերջին:

Այնուհետև Հուլադուն, նախքան Այյուբյան սուլթանության վրա վճռական հարձակումը, մի կարճատև դադար վերցրեց: Մոնղոլական զորքերին միացել էին հայկական, վրացական և Իկոնիայի սելջուկների զինված ուժերը: Այս հսկա բանակը շուտով մոտեցավ Եփրատին:

Ալ-Նասիր Յուսուֆը Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմին (նշանավոր պատմիչ) ստիպված իբրև պատվիրակ ուղարկեց Կահիրե՝ իր ռիսերիմ թշնամիների՝ մամլուքների հետ դաշինք կնքելու:

Քամալ ալ-Դինը հազիվ էր հասել Կահիրե, երբ այնտեղ հեղաշրջում տեղի ունեցավ: Իշխանությունը ձևականորեն գտնվում էր 17-ամյա ալ-Մանսուր Ալիի ձեռքում, որից դժգոհ էր ամիր Սայֆ ալ-Դին Կուտուզը: Վերջինս, օգտագործելով պատեհ առիթը, 1259 թ. նոյեմբերի 16-ին ձերբակալեց երիտասարդ միապետին ու բանտ նետեց: Կուտուզը կարողացավ դաշնակիցներ ձեռք բերել ու նրանց միջոցով ճնշել նաև ալ-Մանսուրի անձնական թիկնազորի ընդվզման փորձը և, ի վերջո, իր ձեռքը վերցնել իշխանությունը: Միայն այդ ամենից հետո նա անդրադարձավ Քամալ ալ-Դինի պատվիրակությանը՝ դրականորեն պատասխանելով Ասորիքի Այյուբյանների դիմումին, բայց արդեն ուշ էր⁵²⁵:

1259 թվականը նոր փուլ նշանավորեց ինչպես հայ-մոնղոլական, այնպես էլ Կիլիկյան Հայաստան - Ասորիքի Այյուբյան սուլթանություն հարաբերություններում: Թեև մինչ այդ էլ հայ-մոնղոլական դաշինքն արդեն լիարժեք գործում էր, սակայն Կիլիկիայի զինված ուժերը դեռ չէին մասնակցել մոնղոլների ռազմարշավներին (այդ թվում Իրաքի՝ կամ Ջազիրայի քաղաքների դեմ): Այդուամենայնիվ, այդ անգամ Հերթում Ա-ը, արձագանքելով

⁵²⁵ Տե՛ս նույն տեղում:

Հուլաղուի դիմումին, իր զորքով միացավ Ասորիքի դեմ մոնղոլների առաջին մեծ արշավանքին⁵²⁶:

Այսպիսով՝ Կիլիկիայի հայկական թագավորության և Ասորիքի Այյուբյան սուլթանության փոխհարաբերությունների չեզոք շրջափուլն ավարտվեց: Նախկինում Իկոնիայի սուլթանության, Տրիպոլիսի կոմսության կամ Ջալալ ալ-Դինի դեմ համատեղ պայքարող այս երկու պետություններն այժմ հայտնվել էին թշնամական ճամբարներում: Նրանց բանակները 1259-1260 թթ., թեկուզ մասամբ հարկադրաբար, պետք է մարտնչեին միմյանց դեմ:

1259 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Հուլաղուն իր որդի Յոշմուփին հետ կանչեց Մայյաֆարիկինից ու 8000-անոց զորքով, որով արդեն նվաճվել էին Բալիսը, Մանբիջը, Թել Բաշիրը, նա վերադարձավ Եդեսիա:

Ի կատարումն Հուլաղուի պահանջի՝ Հեթում Ա-ը Եդեսիա քաղաքի մոտ զորքով միացավ մոնղոլներին. «Եւ եկեալ եհաս [Հուլաղու խանը] ի վերայ Հալպայ, և պատեաց գնա շուրջանակի, յղեաց և առ թագաւորն Հեթում գնալ առ ինքն, և նա վաղվաղակի եհաս առ խանն զօրօք իւրովք և խանն ուրախութեամբ ընկալաւ գնա»⁵²⁷: Վարդան վարդապետը հատուկ նշում է Հայոց կաթողիկոսի՝ Հուլաղուին ընդառաջ գնալը. «Եկն առ նա պատրիարզն Հայոց, կաթուղիկոսն, օրհնեաց գնա և սիրեցաւ ի նմանէ. ընդ նմա էր ի յառնուլն զամենայն աշխարհն Շամայ՝ և մեր պսակաւորն Հեթում, ազատելով ի մահուանէ զքրիստոնեայնսն գեկեղեցականս և զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով»⁵²⁸:

⁵²⁶ Տե՛ս **Bayarsaikhan D.**, նշվ. աշխ., էջ 121-137:

⁵²⁷ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 235:

⁵²⁸ **Վարդան վարդապետ**, էջ 151:

Ըստ Գրիգոր Միքայելյանի ենթադրության՝ հայկական ուժերը կազմում էին մոտ 10 հազար զինվոր⁵²⁹: Նա նշում է, որ արժանահավատ աղբյուրների տվյալներով չեն հաստատվում Ղևոնդ Ալիշանի, Ֆրանսուա Տուրնըբիզի և ուրիշների պնդումներն առ այն, որ հայկական զորքի թիվը հասել է 60-70 հազարի, որ Հուլադուն Հալեպի վրա հարձակվել է Հեթում Ա-ի խորհրդով⁵³⁰, և որ մոնղոլ խանն Ասորիքի այդ մեծ քաղաքը գրավելուց հետո այն հանձնել է հայերին: Արամ Հովհաննիսյանը հավանական է համարում, որ Հեթում Ա-ը մոնղոլներին օգնում էր նաև սննդամթերքով, ձիերով ու հագուստով⁵³¹:

Մոնղոլական զորքերի՝ վերոհիշյալ ռազմերթը խուճապի մատնեց Այյուբյաններին: Ալ-Նասիր Յուսուֆի զորահրամանատարների մի մասը պահանջում էր հարձակվել Եդեսիայում տեղավորված մոնղոլական զորքի վրա և վճռականորեն կանխել նրանց առաջխաղացումը: Զինվորականության մյուս մասը, նկատի առնելով մոնղոլների մեծաքանակությունը, կոչ էր անում զգուշավորություն ցուցաբերել: Ինչպես նախորդ անգամ, այդ դեպքում ևս ալ-Նասիրը, անվճռական գտնվելով, որևէ քայլ չձեռնարկեց⁵³²:

Սուլթանի անգործությունից դժգոհ զինվորները 1260 թ. սկզբին լքեցին զորքի հիմնական ուժերը: Ժամանակակիցները նույնիսկ ենթադրում են, որ նրանք նախատեսում էին սպանել սուլթանին և մեկ ուրիշի գահ բարձրացնել:

⁵²⁹ Տե՛ս **Микаелян Г.**, նշվ. աշխ., էջ 322:

⁵³⁰ Այս տեղեկության հիմնական աղբյուրը Հեթում պատմիչ Կոռիկոսցին է (տե՛ս **Hayton**, *La Flor des estoires de la Terre d'Orient*, “Recueil des historiens des Croisades”. Documents arméniens, t. II, Documents latins et français relatives a l'Arménie, éd. **Ch. Kholer**, Paris, 1906, էջ 170):

⁵³¹ Տե՛ս Հովհաննիսյան Ա., Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ., Երևան, 2008, էջ 41:

⁵³² Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 346:

Մինչ Ասորիքի Այյուբյանների բանակը տարբեր էթնիկ գորախմբերի ներքին հակասություններից ու ղեկավարության անգործունեությունից քայքայվում էր 1259 թ. վերջին և 1260-ի սկզբին, մոնղոլներն անցան վճռական գործողությունների: Հուլիսին 1259 թ. վերջին օրերին իր բանակն առաջնորդեց ալ-Բիրա: Այն լավ պաշտպանված էր և ուժեղ դիմադրեց, բայց ուժերը խիստ անհավասար էին, և երկու-երեք շաբաթում ամրոցը գրավվեց: Ալ-Բիրայի գրավումով ճանապարհը դեպի Հալեպ բաց էր:

Հալեպի կառավարիչ ալ-Մուազզամ Թուրանշահը հույս ուներ մոնղոլներին կանգնեցնել՝ նախքան նրանք կհասնեին քաղաքի պարիսպներին: Այդուհանդերձ, բավական էր հայացք նետել մոնղոլների անհատնում բանակի մեծությանը, որպեսզի հալեպցիները շտապեին իրենց նետել պարիսպներից ներս: Այնուհետև Հուլիսին հանձնվելու առաջարկով պաշտոնապես դիմեց ալ-Մուազզամին՝ դնելով հետևյալ պահանջները՝ մոնղոլները նշանակում էին 2 կառավարիչ՝ քաղաքի և միջնաբերդի, որոնց պետք է փոխանցվեր ամբողջ կառավարումը, հալեպցիների կյանքն ու գույքը պահպանվելու էին, իսկ Հուլիսին իր մնացած զորքերով պետք է շարժվեր Դամասկոս՝ ալ-Նասիրի դեմ: Քաջ գիտակցելով, որ Հալեպն Այյուբյան տերության գլխավոր պատնեշն է՝ զորավար ալ-Մուազզամը մերժեց իլխանի պահանջը⁵³³:

Մոնղոլների պատասխանը կորստաբեր էր: Յոթօրյա պաշարումից հետո մոնղոլները 1260 թ. հունվարի 25-ին «Բաբ ալ-Իրաք» դարպասից ներխուժեցին Հալեպ և վեց օր անխնա կոտորեցին ու կողոպտեցին բնակչությանը: Իբն ալ-Ադիմը պատմում է, որ մոնղոլները կոտորեցին Հալեպի բնակչության մեծ մասին, և «նույնիսկ ասում էին, որ Բաղդադում և Պարսկաստանի և ոչ մի քաղաքում այդքան մարդ չէին կոտորել, ինչքան որ Հալեպում: Ճանապարհներն ու շուկաները դիակներով լցվեցին,

⁵³³ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 348:

և թաթարների զորքերը ստիպված էին իրենց ձիերով նրանց վրայով անցնել, քանզի չէր գտնվում մի ազատ տեղ, որտեղ դիակ չլիներ»⁵³⁴: Քաղաքի տառապանքներին ավելացավ նաև ստորացումը, երբ Հեթում Ա-ը կրակի տվեց մեծ մզկիթը⁵³⁵: Իզզ ալ-Դին իբն Շադդադն այս մասին գրում է. «Երբ անիծյալ թաթարները 658թ. սաֆար ամսի 11-ին գրավեցին Հալեպ քաղաքը, Սսի տերը մտավ [Հալեպի] մզկիթ և մեծ թվով մարդկանց սրի քաշեց: Նա հրկիզեց նրա առջևի պատը, և կրակը տարածվեց դեպի արևմուտք ու հարավ՝ դեպի ալ-Հալաբիյյա դպրոցը, ապա հրկիզվեց նաև կտորավաճառների շուկան: Երբ [Հալեպի կառավարիչ] Իմադ ալ-Դին ալ-Կազվիհին Հուլաղուփին հայտնեց, թե ինչեր են արել ստեցիները՝ մասնավորապես մզկիթն այրելու և քրիստոնյաների եկեղեցիներին ձեռք չտալու մասին, վերջինս հրամայեց վերջ տալ դրան և մարել կրակը: Նա սպանել տվեց մի խումբ ստեցիների: Եվ չնայած կրակը մարել չհաջողվեց, Ալլահը տեղատարափ անձրև ուղարկեց և հանգրեց այն»⁵³⁶:

Հալեպի միջնաբերդը դիմացավ ևս մեկ ամիս (մինչև 1260 թ. փետրվար 25-ը)⁵³⁷, բայց, ի վերջո, ալ-Մուազզամը տեսնելով, որ դիմադրելն ապարդյուն է՝ որոշեց հանձնվել:

Քանդված ու կիսով չափ ամայացած Հալեպն այս աղետից հետո մի ամբողջ դար ուշքի չեկավ: Իբն Քասիր պատմիչի բնորոշմամբ՝ մոնղոլների արշավանքից հետո «Հալեպը, ասես, վերածվեց մի բորոտ ավանակի»⁵³⁸: Նախքան Հալեպի միջնաբեր-

⁵³⁴ **Դանիելյան Գ.**, Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները, Վէմ համահայկական հանդես, 2015, թիվ 1, էջ 148, տե՛ս նաև **Ibn al-'Amīd**, *Aḥbār al-Ayyubiyyīn*, էջ 50:

⁵³⁵ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 349:

⁵³⁶ **Դանիելյան Գ.**, Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները, Վէմ համահայկական հանդես, 2015, թիվ 1, էջ 149, **ʿIzz al-Dīn Ibn Šaddād**, *al-Aʿlāq al-ḥaṭīra*, ց. 1.1, էջ 116:

⁵³⁷ Տե՛ս **Al-Maqrīzī**, *Kitāb al-Sulūk*, h. 1.2, էջ 422:

⁵³⁸ **Ibn Kaṭīr**, *al-Bidāya wa-l-nihāya*, v. XVII, էջ 396:

դի անկումը մոնղոլները, գրավելով Հարիմն ու Հյուսիսային Ասորիքի ամրոցները, իրենց ենթարկեցրին նաև Համան և Հոմար:

Մոնղոլների հաջորդ թիրախը Դամասկոսն էր, որի դեմ արշավանքին մասնակցում էին Հեթում Ա թագավորը, Անտիոք-Տրիպոլիսի կոմս Բոհեմունդ VI-ը և Բանիասի տեր ալ-Սաիդ Հասանը: Մոնղոլ զորավար Քիթբուղան առանց դիմադրության հանդիպելու 1260 մարտ 2-ին հաղթականորեն մտավ Դամասկոս, որի միջնաբերդը կարճատև դիմադրություն ցուցաբերեց: Ի վերջո, Դամասկոսի պաշտպանները նույնպես հանձնվեցին, և քաղաքը ենթարկվեց կոտորածի ու կողոպտի: Աղբյուրները Հեթում Ա-ին և Բոհեմունդ VI-ին վերագրում են թե՛ Հալեպում, թե՛ Դամասկոսում մզկիթներ քանդելու, մուսուլմաններին անարգելու արարքներ⁵³⁹, որոնք տարբեր ուսումնասիրողների կարծիքով՝ մեծ մասամբ չափազանցված են⁵⁴⁰:

Դամասկոսի գրավումից մի քանի օր անց մոնղոլներն սկսեցին շրջակա բնակավայրերի հպատակեցումը: Ընդ որում, այս բոլոր նվաճումները նրանք կատարեցին իրենց բանակի՝ միայն մի փոքր մասի՝ մոտ 10 հազարանոց զորքի միջոցով⁵⁴¹:

Աղբյուրները վկայում են, որ մոնղոլներն ասորիքյան՝ այս արշավանքի ժամանակ մեծաքանակ (100 հազարից ավելի) գերիներ վերցրին, որոնց մեծ մասին վաճառեցին Կիլիկիայում և խաչակիր պետություններում⁵⁴²:

⁵³⁹ Տե՛ս **Les gestes des Chiprois**, էջ 161-162:

⁵⁴⁰ Տե՛ս **Amitai**, *Mongols*, էջ 31; **Jackson P.P.**, *The Crisis in the Holy Land in 1260*, “*The English Historical Review*”, vol. 95, № 376, 1980, էջ 486:

⁵⁴¹ Տե՛ս **Jackson P.P.**, *The Crisis in the Holy Land in 1260*, “*The English Historical Review*”, vol. 95, № 376, 1980, էջ 352-355:

⁵⁴² Տե՛ս **Ibn al-Amīd**, *Aḥbār al-Ayyūbiyyin*, էջ 49; **Baybars al-Mansuri**, *Zubdat al-Fikra*, Beirut, 1998, էջ 48; **Դանիելյան Գ.**, Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հսկամարտության ակունքները, ՎԷԻ համահայկական հանդես, 2015, թիվ 1, էջ 149:

Այդուամենայնիվ, մոնղոլներին չհաջողվեց ավարտին հասցնել Ասորիքի նվաճումը: Պատճառն այն էր, որ Հուլաղուն, տեղեկանալով իր եղբոր՝ մեծ խան Մանգուի մահվան մասին, զորքի մի մասը թողեց իր զորավար Քիթթուղայի հրամանատարության տակ, իսկ մյուսով շտապեց Կարակորում՝ ներկա գտնվելու մեծ խանի ընտրությանը⁵⁴³: Հիշարժան է, որ նա Թավրիզ հասնելով և իր եղբոր՝ Խուբիլայի՝ արդեն իսկ մեծ խան ընտրված լինելու մասին լուրն առնելով՝ կեսճանապարհից վերադարձավ Ասորիք: Այնտեղ նրա բացակայության ընթացքում Քիթթուղայի զորքը պարտություն էր կրել Եգիպտոսի մամլուք հրամանատար Կուտուզի բանակից: Խոսքն Այն Ջալուտի նշանավոր ճակատամարտի մասին է, որ տեղի ունեցավ 1260 թ. սեպտեմբերի 3-ին:

Մինչ այդ՝ նույն ամռանը, գիտակցելով վիճակի անհեռանկարությունը, ալ-Նասիր Յուսուֆը մի քանի այլ իշխանների հետ հանձնվել էր մոնղոլներին: Քիթթուղան նրանց ուղարկել էր Թավրիզ, որտեղ պատվով էին ընդունվել Հուլաղուի կողմից: Իլ-խանը նույնիսկ խոստացել էր, որ Եգիպտոսի նվաճումից հետո ալ-Նասիր Յուսուֆին կվերադարձնի Այյուբյանների նախկին տիրոյթները⁵⁴⁴:

Հակառակ Հուլաղու խանի՝ ակտիվ գործողություններից ձեռնպահ մնալու հանձնարարականների՝ նրա զորավար Քիթթուղան փորձեց շարունակել մոնղոլների հաղթարշավը դեպի հարավ՝ Պաղեստին:

Մամլուքները 10 տարիների ընթացքում արդեն հաղթահարել էին իրենց ներքին խնդիրները և ձևավորվել իբրև միա-

⁵⁴³ Ըստ Սմբատ Սպարապետի՝ Քիթթուղայի զորքի մեջ էին նաև 500 կիլիկեցիներ. «Քիթթուղա... ժողովեաց զօրս, և յերկրէն կիլիկեցոց արս եճ (500) յղեալ էառ ի թագաւորէն, և դէմ եղեալ գնայր մտանել յԵգիպտոս» (**Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 236):

⁵⁴⁴ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 357:

ծույլ պետություն: Մոնղոլների մուտքը Եգիպտոս կանխելու նպատակով մամլուքյան զորքը Կուտուզի գլխավորությամբ 1260 թ. սեպտեմբեր 3-ին Պաղեստինի հյուսիսում՝ Բիսան և Նաբլուս քաղաքների միջև գտնվող Այն Ջալուտ (Գողիաթի աղբյուր) կոչված վայրում նրանց ճակատամարտ տվեց⁵⁴⁵: Մոնղոլները ջախջախիչ պարտություն կրեցին, իսկ զորավար Քիթբուղան գերվեց ու սպանվեց: Այն Ջալուտը մոնղոլների առաջին լուրջ պարտությունն էր⁵⁴⁶: Գագիկ Դանիելյանը գրում է. «Եթե հաշվի առնենք Սմբատի վկայությունը Այն Ջալուտի ճակատամարտին Հեթումի ուղարկած 500 ռազմիկների մասնակցության մասին, ապա կարող ենք ընդունել, որ այն նաև հայ-մամլուքյան առաջին անմիջական բախումն էր»⁵⁴⁷: Չնայած տարած հաղթանակին՝ Կուտուզը ևս երկար չվայելեց դրա պտուղները, քանի որ շուտով դավադրության զոհ դարձավ: Եգիպտոսում իշխանության անցավ սուլթան Բայբարս I-ը (1260-1277), որը դառնալու էր այդ պետության իրական հիմնադիրն ու հզորության կերտողը:

Այն Ջալուտի հաղթանակի լուրը 1260 թ. սեպտեմբեր 5-ին հասավ Դամասկոս: Երկու օր Դամասկոսում կողոպտեցին ու կոտորեցին քրիստոնյաներին ու հրեաներին: Մինչ այդ, երբ Քիթբուղան մտել էր Դամասկոս, Օմայան մզկիթը վերածվել էր եկեղեցու: Ըստ «Գործք կիպրացվոց» երկի՝ Հայոց արքա Հեթումը և Անտիոքի իշխան Բոհեմունդը Դամասկոսում ևս մզկիթներ էին ավերել ու դրանք ախոռներ դարձրել⁵⁴⁸: Այժմ հերթը կրկին մու-

⁵⁴⁵ Ճակատամարտի մասին մանրամասն տե՛ս **Smith, J. M.**, *Ayn Jalut: Mamluk Success or Mongol Failure?*, *Harvard Journal of Asiatic Studies*, vol. 44, № 2, 1984, էջ 307-345; **Amitai**, *Mongols*, էջ 39-48:

⁵⁴⁶ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 358:

⁵⁴⁷ **Դանիելյան Գ.**, Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները, ՎԷՄ համահայկական հանդես, 2015, թիվ 1, էջ 153:

⁵⁴⁸ Տե՛ս **Les gestes des Chiprois**, էջ 161-162; **Bayarsaikhan D.**, նշվ. աշխ., էջ 138-139; **Դանիելյան Գ.**, Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի

սուլմաններին էր, որոնք հրի մատնեցին ս. Մարիամ եկեղեցին (գտնվում է Բաբ Թումայի և Բաբ ալ-Շարկի միջև), ապա տարերայնորեն սկսեցին կողոպտել քրիստոնյաների տները: Շատ եկեղեցիներ վնասվեցին այդ ընթացքում: Հաջորդ օրը եկավ հրեաների հերթը: Հաշվեհարդար տեսան նաև մոնղոլների հետ գործակցած մուսուլմանների հետ, որոնք մահապատժի ենթարկվեցին⁵⁴⁹:

Այն Զալուտի աղետի լուրն ստացած Հուլաղուն իր բարկությունը պարպեց ալ-Նասիր Յուսուֆի վրա: Վերջինս փորձեց ապացուցել, որ մամլուքյան Եգիպտոսի զորքերն իր հետ կապ չունեն, բայց իզուր: Հուլաղուն նրան գետին նետելով՝ իր իսկ ձեռքի նիզակով սպանեց: Այդպիսով Ասորիքում Այյուբյանների վերականգնման հույսերը վերացան⁵⁵⁰:

Այնուհետև Հուլաղուն գրավված բնակավայրերից իր դաշնակից Հեթում Ա-ին զիջեց Բուրջ ալ-Ռասասը, Մարզպանը (Մարզուբան), Ռաբանը և Դարպասկը: Հայոց արքան 1261 թ. գրավեց նաև Բեհեսնին:

Որ Հուլաղուի՝ ասորիքյան արշավանքի արդյունքում Հեթումը տիրացել է Բեհեսնային կամ Բեհեսնիին, հաղորդում են արաբագիր հեղինակները. միայն թե նրանք դեպքն իրարից դուրզն-ինչ տարբերվող պատումներով են ներկայացնում: Ըստ Իզզ ալ-Դին իբն Շադդադի՝ մինչև մոնղոլների արշավանքը Բեհեսնին Հալեպի սուլթան ալ-Նասիր Յուսուֆի տիրույթներից էր: Եվ երբ գրոհել էին Ասորիքը, փորձել են գրավել այն, բայց տեսնելով, որ պաշարումը երկարում է՝ թողել են այն և առաջ ընթացել Հալեպի ուղղությամբ: Հալեպի առումից հետո մոնղոլները կրկին վերադարձել և վերսկսել են պաշարումն առավել մեծ

հակամարտության ակունքները, Վեմ համահայկական հանդես, 2015, թիվ 1, էջ 150:

⁵⁴⁹ Տե՛ս **Humphreys S.**, նշվ. աշխ., էջ 359:

⁵⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 358:

ուժերով և, ի վերջո, գրավել, բայց բնակչությունը հրաժարվել է լինել «Սսի տիրոջ» հպատակության տակ, ուստի այնտեղ մուսուլման կառավարիչ է նշանակվել: Այդուհանդերձ, որոշ ժամանակ անց բերդի բնակիչները, իրենց անվտանգ չզգալով, ստիպված են եղել բերդը հանձնել հայերին⁵⁵¹:

Իբն Շադդադի պատումին հակառակ՝ ալ-Ջազարի պատմիչը հիջրայի 692 թ. (1293 թ.) իրադարձությունների շարադրանքում, երբ խոսում է Սսի երկրի հետ կնքված հաշտության արդյունքում մամլուքներին հանձնված բերդերի (Բեհեսնի, Մարաշ, Թիլ Համդուն) մասին, գրում է. «[Բեհեսնան] Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիր Սալահ ալ-Դին Յուսուֆի ժամանակներում որպես իր երկրի տիրույթներից մեկը գտնվում էր նրա կառավարիչների ձեռքում: Երբ թաթարները Հալեպ եկան և տիրացան նրան, այնտեղի (Բեհեսնայի) կառավարիչն էր ամիր Սայֆ ալ-Դին ալ-Ակրաբը, որը վաճառեց այն Սսի տիրոջը հարյուր հազար դիրհամի դիմաց: Վերջինս նրան տվեց վաթսուն հազար դիրհամ և վերցրեց բերդը, որ ցայժմ նրանց ձեռքին է և մեծ տառապանք է պատճառում մուսուլմաններին»⁵⁵²: Այս պատմությունը վերապատմում է նաև ալ-Ջահաբին. միայն թե նա գրում է, որ բերդը 100 հզ. դիրհամով «Սսի տիրոջ» համար գնել է Հուլադուն, որից հետո Հեթումն իր հնազանդությունն է հայտնել նրան⁵⁵³:

⁵⁵¹ Տե՛ս **‘Izz al-Din ibn Šaddād**, *Al-A‘lāq al-ḥaṭira*, v. 1.2, էջ 118-119:

⁵⁵² **Al-Ġazari**, *Ḥawādiṯ al-Zamān*, v. 1, էջ 149: **Mufaḍḍal ibn Abi al-Fadā’il**, *al-Nahğ as-sadiḍ wa-durr al-farid fimā ba‘da tāriḥ ibn al-‘Amid*, էջ 558 [p. 394]; **al-Nuwayri**, *Nihāyat al-arab*, v. XXXI, էջ 157; **Ibn al-Dawādāri**, *Kanz al-durar*, v. VIII, էջ 341; **Ibn al-Furāt**, *Tāriḥ al-duwal wa-l-mulūk*, v. VIII, bi-taḥqīq Qusṭanṭīn Zurayq wa-‘Izz al-Dīn Nağla, Bayrūt, 1939, էջ 155-156: Տե՛ս նաև **Գ. Դանիելյան**, Ալ-Մակրիզիի *Kitāb al-sulūk* երկը, էջ 95:

⁵⁵³ Տե՛ս **al-Ḍahabi**, *Tāriḥ al-Islām wa-wafayāt al-mašāhir wa-l-a‘lām*, v. 52, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūri, *Dār al-kitāb al-‘arabi*, Bayrūt, էջ 22, ինչպես նաև **նոյնի**՝ *Duwal al-Islām*, v. II, bi-taḥqīq Ḥasan Ismā‘il Marwa, *Dār Šādir*,

Բերդին տիրելու մյուս պատմիչներից տարբերվող մեկ այլ պատմություն է տալիս ալ-Այնին: Նա, մասնավորապես, գրում է. «Այն [նախկինում] Հալեպի տարածքների մաս էր, պատկանում էր մուսուլմաններին, և նրա վրա իշխողը Հալեպի տեր ալ-Մալիք ալ-Նասիրն էր: Այդպես էր, քանի դեռ Հուլավուն չէր մտել Հալեպ և գրավել բոլոր երկրները: Երբ թաքֆուրը՝ Սսի տերը, իմացավ, որ Հուլավուն այն [նույնպես] գրավել է, նրա մոտ գնաց և նվերներով շողջորթեց, գումար տարավ նրան՝ խնդրելով, որ Բեհեսան իրենը լինի, և նա էլ հանձնեց նրան»⁵⁵⁴:

Ըստ արաբ պատմիչների (Իբն Շադդադ, ալ-Ջազարի, ալ-Ջահաբի, ալ-Նուվայրի, ալ-Այնի և այլն)՝ Ամանուսյան լեռների և Եփրատացվոց աշխարհի մի ամբողջ շարք ամրոցներ Հեթումի իշխանության տակ անցան՝ մինչև կաթողիկոսանիստ Հռոմկլա ընկած երկրամասերը⁵⁵⁵: Փաստորեն՝ Հռոմկլան որոշ ժամանակով դադարեց *անկլավ* լինելուց և միացավ Հայոց թագավորությանը:

Այսպիսով՝ Հեթում Ա-ը Կիլիկիային միացրեց ամբողջ Եփրատացիքը: Թեկուզ կարճ ժամանակով, բայց Հայոց թագավորությունն աննախադեպ ընդարձակ տիրույթներ ձեռք բերեց՝ հնարավորություն ստանալով մուտք գործելու Անտիոքի դաշտ ու Հալեպի նահանգ⁵⁵⁶:

1262 թ. Թորոս Ռուսլինի ձեռքով գրված մի ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Հեթումը մի շարք բերդեր է

Bayrūt, 1999, էջ 218: Հմմտ. **Ibn Tagrī Birdī**, Al-Manhal al-Šāfi, v. V., bi-tahqīq Muḥammad Muḥammad ‘Amīn, al-Hay’a al-Miṣriyya al-‘Āmma li-l-Kitāb, al-Qāhira, էջ 275:

⁵⁵⁴ **Al-‘Aynī**, ‘Iqd al-ḡumān fi tāriḫ ahl al-zamān, v. III, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Hay’a al-miṣriyya al-‘āma li-l-kitāb, al-Qāhira, էջ 151-152:

⁵⁵⁵ Տե՛ս **Դանիելյան Գ.**, Մամուլքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները, էջ 151-152:

⁵⁵⁶ Տե՛ս **Cahen Cl.**, La Syrie du Nord, էջ 705:

խել նաև Ռումի սուլթանությունից: «Այլև բարեպաշտութեամբն իրով յԱստուած զորացեալ հէրքեր զհոյս հաքարածին ծննդոցն և անարինաց սեռիցն, բազում անգամ յաղթեալ սուլտանին Հոռոմոց, և առեալ զամուրս նորա՝ զանմատչելին Մունտաս, և զՄանհիանն, զըՍիկի և զայլս բազում զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ: Որ և յայսմ ամի առ նա և զամուր դղեակն զհոյակապ և զյգանաւորն Պեհեսնի, որ ար Ի և Ե (25) էր ամսէանն հոգտեմբերի»⁵⁵⁷: Ստացվում է՝ Բեհեսնին գրավվել է 1262 թ. հոկտեմբերի 25-ին:

Մարաշից և Բեհեսնիից բացի, հայոց թագավորությանն են անցել նաև Ռաբանը, Քեսունը, Դարպասկը, Մարզուբանը (Մարզաբան), Շիհ ալ-Հադիդը⁵⁵⁸: Ըստ Իզզ ալ-Դին իբն Շադդադի՝ ևս մեկ բերդ՝ Բուրջ ալ-Ռասասաը, մինչև թաթարների արշավանքը գտնվում էր «Նասիրյան պետության» (իմա՝ Հալեպի սուլթան ալ-Նասիր Յուսուֆի) կազմում: Ասորիքի գրավման ժամանակ այն ավերվել է, իսկ հարակից մի շարք գյուղեր անցել են հայերի ձեռքը⁵⁵⁹:

Հեթումը չբավարարվեց հիշյալ տարածքային ձեռքբերումներով և փորձեց առավելագույնս օգուտ քաղել ստեղծված պատեհ քաղաքական իրավիճակից: Նա 1262-1264 թթ. ընթացքում մի քանի արշավանքներ ձեռնարկեց Հյուսիսային Ասորիքի բնա-

⁵⁵⁷ **Հայերեն Ձեռագրերի Հիշատակարաններ**, ԺԳ դար, էջ 317: Հմմտ. **Սմբատ Սպարապետ** Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 234-235 (պատմում է Մունդաս բերդի գրավման հանգամանքների մասին); **Մանր ժամանակագրություններ** XIII-XVIII դդ., հ. I, էջ 82, հ. II, էջ 71 և Կ. Մաթևոսյան, **Հեթում Պատմիչ Կոռիկոսցին** և նրա ժամանակագրությունը, էջ 53, ինչպես նաև **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, ժամանակագրութիւն, էջ 251:

⁵⁵⁸ Տե՛ս **Դիզ ալ-Դին իբն Տաճաճ**, *Al-Aʿlāq al-ḥaṭīra*, v. 1.2, էջ 115, 421, 434 և հմմտ. **Իբն ալ-Տիհնա**, *Al-Durr al-muntaḥab*, էջ 171, 223, 226:

⁵⁵⁹ Տե՛ս **Դիզ ալ-Դին իբն Տաճաճ**, *Al-Aʿlāq al-ḥaṭīra*, v. 1.2, էջ 103: Այս մասին մանրամասն տե՛ս **Գ. Դանիելյան**, Ալ-Մակրիզիի *Kitāb al-sulūk* երկը, էջ 120-127:

կավայրերի դեմ (Մաարրաթ Միսրին, ալ-Ֆուա, Սարմին, Ջաբալ Լայլուն, Այնթաբ և այլն), բայց հաջողության չհասավ:

Մամլուքյան իշխանությունների պատասխանը շատ չուշացավ: Արդեն 1266 թ. սուլթան Բայբարս ալ-Բունդուկտարին առաջին լուրջ հարվածը հասցրեց Կիլիկյան Հայաստանին: Այդ արշավանքն աղետալի հետևանքներ ունեցավ Հայոց թագավորության համար՝ երկրի համատարած ավերածությունից բացի, պատճառ դառնալով նաև հայոց գահաժառանգ Լևոնի և մի շարք այլ ազնվականների գերեվարության համար: Որդուն ցանկացած գնով գերությունից ազատելու՝ Հեթումի դիվանագիտական ջանքերը որոշ պտուղներ տվեցին: Ի վերջո, 1268 թ. Անտիոքում կնքված հաշտության պայմանագրով Հեթում Ա-ը պարտավորվեց որպես փրկագին սուլթան Բայբարսին հանձնել վերջինիս շատ մտերիմ մի մամլուքի՝ Սունկուր ալ-Աշկար անունով, որին մեծ դժվարությամբ ազատել էր մոնղոլական գերությունից, ինչպես նաև զիջել բոլոր այն բերդերը, որոնց 1260-1262 թվականների ընթացքում տիրացել էր մոնղոլների օգնությամբ⁵⁶⁰:

Այսպիսով՝ մոնղոլների շնորհիվ 1260-1262 թթ. ձեռք բերված տարածքային նվաճումների մեծ մասը ժամանակավոր բնույթ ունեցան. 1268 թ. գրավված տարածքները տրվեցին այդ անգամ արդեն մամլուքներին: Հատկանշական է, որ նշված զիջումներով հայոց կաթողիկոսների նստավայր Հռոմկլան կրկին հայտնվեց Կիլիկյան Հայաստանից մեկուսացված վիճակում:

⁵⁶⁰ Հեթումին, այնուամենայնիվ, հաջողվել է պահպանել Բեհեսնին: Մամլուքյան պատմիչների հաղորդմամբ՝ մինչև Սունկուր ալ-Աշկարին Բայբարսի մոտ ուղարկելը հայոց արքան խնդրել էր նրան Կահիրե հասնելուն պես համոզել սուլթանին, որ Բեհեսնին թողնի Կիլիկյան Հայաստանին: Սունկուր ալ-Աշկարը հավատարիմ է մնացել իր խոստմանը, իսկ սուլթան Բայբարսը վերջինիս խնդրանքը չի մերժել: Վերոհիշյալ դեպքերի մասին մանրամասն տե՛ս **Գ. Դանիելյան**, Ալ-Մակրիզիի Kitāb al-sulṭik երկը Կիլիկյան Հայաստանի 1250-1310 թթ. Պատմության սկզբնաղբյուր (աղբյուրագիտական քննություն), թեկնածուական ատենախոսություն (անտիպ), Երևան, 2015, էջ 118-149:

Կարելի է համարել, որ Այյուբյանները 1260 թ. հեռացան պատմական թատերաբեմից, քանի որ Եգիպտոսից հետո նրանք կորցրին նաև Ասորիքը՝ իրենց տեղն ամբողջովին զիջելով Մամլուքյան սուլթանությանը, սակայն Այյուբյանների որոշ կրտսեր ճյուղեր, անշուշտ ենթակա վիճակում, իրենց գոյությունը շարունակեցին Ասորիքի և Ջազիրայի մի շարք կենտրոններում: Մասնավորապես, Համա քաղաքի Այյուբյանները, շնորհիվ ճկուն ու զգուշավոր քաղաքականության, իրենց տիրույթը պահպանեցին մինչև 1342 թ., իսկ Հիսն Քայֆայի Այյուբյանները, դիմակայելով մոնղոլական տիրապետությանն ու անգամ Լենկ Թեմուրի արշավանքներին, շարունակեցին այնտեղ տիրել մինչև XV դ., երբ այդ տոհմի վերջին ճյուղը ոչնչացվեց թուրքմենական Ակ-Կոյունլու ցեղերի կողմից⁵⁶¹:

Այն Ջալուտի ճակատամարտը վճռեց նաև Ասորիքի ճակատագիրը, որը շուտով նվաճվեց մամլուքների կողմից, և Եգիպտոսի նորաստեղծ սուլթանությունը դարձավ խաչակրաց պետական կազմավորումների ու Կիլիկյան Հայաստանի անմիջական հարևանը: Հենց Մամլուքյան սուլթանությունն էր, որ ժամանակի ընթացքում մեկը մյուսի հետևից վերացրեց խաչակրաց վերջին տիրույթներն Արևելքում, ապա մաս առ մաս նվաճելով՝ կործանեց Հայոց վերջին թագավորությունը:

Կիլիկյան Հայաստանի և Այյուբյանների հարաբերությունները վերջին երեսնամյակում կարելի է բաժանել երեք փուլի: 1230 թ. Երզնկայի ճակատամարտից մինչև 1243 թ. Չմանկատուկի ճակատամարտ ընկած ժամանակահատվածում թե՛ Կիլիկյան Հայաստանը, թե՛ Հալեպի Այյուբյանները հայտնվում են Իկոնիայի սուլթանության հանդեպ նույնպիսի ստորակայական վիճակում: Միմյանց միջև նրանց հարաբերությունները կարելի է բնորոշել իբրև չեզոք: Այնուհետև՝ արդեն մոնղոլական գերիշխա-

⁵⁶¹ Տե՛ս **Босворт К.Э.**, նշվ. աշխ., էջ 96-98:

նության հաստատումից հետո, երբ թե՛ Կիլիկիան, թե՛ Ասորիքն ազատվում են Իկոնիայի գերիշխանությունից, սկսվում է մոնղոլների հետ փոխհարաբերությունների մի զուգահեռ գործընթաց, որը տևում է մոտ մեկուկես տասնամյակ (1243-1259): Ընդ որում, այդ տարիների ընթացքում Կիլիկյան Հայաստանի քաղաքական ղեկավարները գործում են ավելի վճռական ու հետևողական, քան Այյուբյանները, որոնք թեև որոշակի քայլեր կատարում են, բայց իրենց հակասական ու անվճռական գործողություններով, ի վերջո, ձախողում են մոնղոլների հետ հնարավոր դաշինքը: Անշուշտ, այդ ձախողմանը նպաստում է նաև մոնղոլների՝ որոշակի կանխակալ դիրքորոշումը մուսուլմանների հանդեպ: Վերջապես, երրորդ փուլը 1259-1260 թվականներն են: Կիլիկյան Հայաստանը թեև դեռ 1244 թ. համարվում էր մոնղոլների դաշնակիցը, բայց միայն մեկուկես տասնամյակ անց մասնակցեց նրանց ռազմարշավներին: Նույն ժամանակ Ասորիքի Այյուբյանները որոշ տատանումներից հետո որոշում են դիմադրել մոնղոլներին, որը կործանարար հետևանքներ է ունենում: Հեթում Ա-ի գլխավորությամբ հայկական զինված ուժերը մասնակցում են մոնղոլների առաջին ասորիքյան արշավանքին: Կիլիկյան Հայաստանի համար այդ արշավանքի ամենադրական արդյունքը Եփրատացվոց աշխարհի միացումն էր Հայոց թագավորությանը: Նախկինում Այյուբյաններին ենթակա այդ տարածքները 1260-1262 թթ. ընթացքում անցան Հայոց թագավորությանը: Մի շարք կարևոր բնակավայրեր ու բերդեր 1258-1262 թթ. Հեթում Ա-ը գրավեց նաև Իկոնիայի սուլթանությունից: Այսպիսով՝ 1260-1268 թթ. Կիլիկիայի հայկական պետության տարածքն իր ամբողջ՝ 300-ամյա պատմության մեջ հասավ ամենաընդարձակ չափերին:

ՎԵՐՋԱԲԱՆ

Գրեթե մի ամբողջ հարյուրամյակ Մերձավոր Արևելքում տիրապետող դիրքեր հաստատած Այյուբյան սուլթանությունը կամ այդ տոհմից սերող սուլթանների ու ամիրների ստեղծած «համադաշնությունը» տիրում էր մի մեծ տարածքի, որի մեջ մտնում էին Եգիպտոսը, Հիջազը, Եմենը, Պաղեստինը, Ասորիքը, Ջազիրան, մի կարճ շրջան՝ նաև հարավարևմտյան Հայաստանը: Այդ ողջ ընթացքում (1171-1260) Այյուբյանների հետ տարաբնույթ հարաբերությունների մեջ մտավ նաև Կիլիկյան Հայաստանը Ռուբեն Գ-ի, Լևոն Մեծագործի, Կոստանդին պայլի և Հեթում Ա-ի օրոք:

Սալահ ալ-Դինը, Եգիպտոսում հիմնելով մի նոր պետություն, Ասորիքում հայտնվեց XII դ. 70-ական թթ. կեսերին: 1176 թ. նա տարածաշրջանի մի շարք պետությունների հետ հաշտություն էր կնքել, սակայն մինչև 1180 թ. Ռուբինյանների և Այյուբյանների միջև անմիջական շփումներ չկային: 1177 թ. Սալահ ալ-Դինն ունեցավ ժամանակավոր դժվարություններ, բայց շուտով կրկին վերադարձավ Հյուսիսային Ասորիք: Այդ ընթացքում Ռուբեն Գ-ը մասնակցեց խաչակիրների միացյալ բանակի հարձակմանը Հարիմ ամրոցի վրա (1177-1178): Սալահ ալ-Դինը 1180 թ. աշնանը պատժիչ-հետախուզական բնույթի հարձակում գործեց Կիլիկյան Հայաստանի սահմանամերձ մի ամրոցի վրա: Ռուբեն Գ-ը, ոսկի տալով ու գերեվարված մուսուլմաններին ազատ արձակելով, հաշտություն կնքեց Սալահ ալ-Դինի հետ: Ռուբինյանների հետ հաշտությունը Այյուբյանները հիմնականում պահպանեցին մինչև սուլթանի մահը (1193 թ.), ինչը փաստվում է նաև 1185-1186 թթ. Կիլիկյան Հայաստանից Եգիպտոս ուղարկված պատվիրակությանը Սալահ ալ-Դինի փոխանցած բարեխոսական ուղերձով: Սալահ ալ-Դինի վերջին 13 տարիների (1180-

1193) հարաբերությունները Ռուբինյան իշխանապետության հետ կարելի է համարել հիմնականում չեզոք: Բացառություն են կազմում 1187/1188 թ. ասորիքյան մի գորաջոկատի՝ Անտիոքից Կիլիկիա մտնելու փորձը և 1193-ին ընդհատված արշավանքը, որի մասին հաղորդում է միայն Սմբատ Սպարապետ պատմիչը:

Մինչդեռ Սալահ ալ-Դինի հաջորդների՝ մասնավորապես նրա որդու՝ Հալեպի սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրի օրոք սուր մրցակցություն ծավալվեց հարևան պետությունների միջև:

Լևոն Մեծագործի օրոք Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական ու տնտեսական հզորացումը, թագավորության հռչակումը և տարածքային ընդարձակումը խիստ անհանգստացրել էին հարևան պետություններին, իսկ Անտիոքը Կիլիկիային միացնելու հեռանկարը Հայոց թագավորությունը խիստ վտանգավոր էր դարձրել տարածաշրջանի երկրների համար՝ հատկապես 1201-1216 թթ.: Շուտով ձևավորվեց (1201-1203) Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան դաշինքը, որի մեջ Այյուբյանները կարևոր դեր ունեին: Կիլիկյան Հայաստանի վրա մեծ էր ճնշումը հատկապես 1203-1208 թթ., երբ Հայոց թագավորության և Այյուբյանների միջև բռնկվեց եռամյա մի պատերազմ (1203-1206), որը չնայած հայկական կողմի համար հաջող ընթացքին՝ ավարտվեց հաշտությամբ (պահպանվեց երկու տարի) ալ-Մալիք ալ-Ջահիրի առաջարկած պայմաններով, քանի որ մեծ էր Կիլիկիայի՝ բոլոր կողմերից հարձակման ենթարկվելու վտանգը:

Թշնամական օղակումից դուրս գալու և, ի վերջո, Ռայմոնդ-Ռուբենին Անտիոքի գահին բազմեցնելու նպատակով Լևոն Ա-ը եռանդուն կերպով պայքարում էր թե՛ զենքով, թե՛ դիվանագիտությամբ: 1208/1209-ին ի պատասխան Լևոն Մեծագործի դիմումի՝ «Անտիոքյան հարցին» միջամտեց Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլը, որի արդյունքում Հալեպի և Իկոնիայի սուլթանները հաշտություն կնքեցին Հայոց թագավորության հետ: 1216 թ.՝ Անտիոքի գրավումից հետո Լևոն Ա-ն ավելի

ակտիվացրեց արտաքին քաղաքականությունը՝ այն դարձնելով բազմաբևեռ. արտահայտությունը Եգիպտոսի ու Ասորիքի Այյուբյանների (ալ-Մալիք ալ-Ադիլ և ալ-Մալիք ալ-Ջահիր), Հոսնի պապերի, գերմանական կայսրերի և տարածաշրջանի այլ պետությունների հետ ընթացող աշխույժ նամակագրությունն ու դիվանագիտական աշխատանքն էր, որը շուտով տվեց իր դրական արդյունքները: Եգիպտոսի սուլթանի ճնշման տակ Հալեպի Այյուբյանները ձեռնպահ մնացին Կիլիկյան Հայաստանի դեմ թշնամական գործողություններից, և հակակիլիկյան եռակողմ դաշինքը խզվեց:

1208-1216 թթ. Այյուբյան տիրակալների հետ Լևոն Ա-ի վարած ակտիվ դիվանագիտական աշխատանքն առաջին անգամ է ենթարկվում մանրամասն վերլուծության: Հայոց թագավորի՝ արաբական աղբյուրներում հիշատակվող 1216 թ, ուղերձը Հալեպի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրին նույնպես առաջին անգամ է դրվում շրջանառության մեջ:

Տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում 1216 թ. տեղի ունեցան լուրջ փոփոխություններ, որոնց հետևանքով նոր փուլ սկսվեց նաև Կիլիկիայի հայկական պետություն – Այյուբյան «համադաշնություն» փոխհարաբերություններում: Այդ տարիներն (1216-1230) անվանել ենք «Սիս-Հալեպ» գործակցության փուլ: Նախկինում թշնամի պետություններն իրավիճակի թելադրանքով դարձան բնական դաշնակիցներ: Կիլիկյան Հայաստանն ու Հալեպի Այյուբյան սուլթանությունը երկու առիթով (1219, 1226 թթ.) միմյանց տարբեր կերպ աջակցեցին, իսկ 1228-1230-ին միացան հակաջալալեդդինյան դաշինքին ու մասնակցեցին 1230-ի Երզնկայի ճակատամարտին:

Կիլիկյան Հայաստան – Հալեպի Այյուբյան սուլթանություն դաշնակցային հարաբերությունների շրջանին (1216-1230) հաջորդում է չեզոք հարաբերությունների փուլը (1230-1259), որը, իր հերթին, բաժանվում է երկու մասի՝ 1230-1243 թթ., երբ թե՛ Կի-

լիկյան Հայաստանը, թե՛ Հալեպի սուլթանությունը, իրենց անկախությունը պահպանելով հանդերձ, հավասարապես ենթարկվում են հզորության գազաթնակետին հասած Իկոնիայի սելջուկյան սուլթանության ուժեղ ճնշմանը՝ երբեմն որոշ զիջումներ կատարելով նրան: Այս փուլն ավարտվում է 1243-ի՝ բախտորոշ Չմանկատուկի ճակատամարտով, որը վերջ է դնում տարածաշրջանում սելջուկների գերիշխանությանը: Հաջորդ փուլում՝ 1243-1259 թթ. թե՛ Հեթում Ա-ը, թե՛ Այյուբյան տիրակալները փորձում են հարաբերություններ մշակել մոնղոլների հետ: Մի բան, որ Կիլիկիայի դեպքում ավարտվում է հայ-մոնղոլական ամուր դաշինքով, իսկ Այյուբյանների պարագայում ձախողվում է: Նախ, Եգիպտոսն անցնում է մամլուքներին: Մյուս կողմից՝ Ասորիքում իրենց դիրքերը պահպանած Այյուբյանները, հակասական քաղաքականություն վարելով, անհաջողության են մատնվում Հուլադուփի հետ հաշտության եզրեր գտնելու հարցում՝ հայտնվելով մոնղոլական նվաճմանը դեմ հանդիման:

Վերջապես, 1259-1260 թվականները կարելի է բնորոշել որպես թշնամական: Կիլիկյան Հայաստանի զինված ուժերը, որ 1216 թվականից ռազմական բախումներ չէին ունեցել Այյուբյանների հետ, 1259 թ. միացան Հուլադուփի զորքերին՝ մասնակցելով մոնղոլների առաջին ասորիքյան արշավանքին, որով վերջ դրվեց Այյուբյանների իշխանությանը:

Հեթում Ա-ի օրոք՝ 1259-1260 թթ. Կիլիկյան Հայաստանի զինված ուժերի մասնակցությունը Ասորիքի Այյուբյանների դեմ արշավանքին բացի մոնղոլների հանդեպ դաշնակցային պարտավորությունից, ուներ նաև մի այլ՝ շատ կարևոր նշանակություն՝ Այյուբյաններին ենթակա հայաբնակ Եփրատացվոց աշխարհի միացումը Հայոց թագավորությանը: Այսպիսով՝ 1260-1268 թվականներին Կիլիկիայի հայկական պետությունն իր՝ 300-ամյա գոյության ընթացքում հասավ ամենաձավալուն չափերին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՅՅՈՒԲՅԱՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՈՒՐ»-ՈՒՄ

Այյուբյանների հետ Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի (այդ թվում Եգիպտոսի, Ասորիքի, Պաղեստինի ու Վերին Միջագետքի) հայերը 90-100 տարի գտնվեցին տարաբնույթ առնչությունների մեջ: Ավելի կարճ մի ժամանակահատված (1207-1232) Մեծ Հայքի հարավ-արևմտյան մասը՝ առավել ստույգ՝ Վանա լճի ավազանը Խլաթ կենտրոնով անմիջականորեն ենթարկվեց Այյուբյաններին⁵⁶²: Այս բոլոր փոխհարաբերություններն իրենց հետքն են թողել նաև ժողովրդական ստեղծագործության՝ այդ թվում «Սասնա Ծուր» դյուցազնավեպի վրա: Ազգային էպոսի գլխավոր կերպարներից մեկի՝ Մսրա Մելիքի պատմական հենքի փնտրտուքներում ուսումնասիրողները տարբեր եզրակացությունների են հանգել: Օրինակ՝ Հովսեփ Օրբելին «Սասունցի Դավթի» համահավաք տեքստի հրատարակության նախաբանում այն կարծիքն է հայտնում, որ ի դեմս Մսրա Մելիքի՝ պետք չէ փնտրել ինչ-որ եգիպտացու (մըսըրցու), քանի որ հայերի և Եգիպտոսի տիրակալների ընդհարումները վերաբերում են միայն մամլուքների դարաշրջանին:

Հովսեփ Օրբելին նաև գրում է. «Իրականում Մըսըր անվան տակ այստեղ պետք է հասկանալ Մոսուլը: Եվ այն ժամանակ հասկանալի են դառնում էպոսի մի շարք մոմենտներ, մասնավորապես այն, որ երբ Դավիթը Սասնա մոտակայքում սպանում է բազմաթիվ ռազմիկների, գետը նետում վերջիններիս դիակները, Մըսըրում ապրող նրանց հարազատները տեսնում են ջրի հետ եկած մարմինները: Հենց այդ գետն այն գետն է, որը

⁵⁶² Խլաթը գրավելու առաջին փորձը կատարել էր Սալահ ալ-Դինը դեռևս 1185 թ.:

Սասունը կապում է Մոսուլի հետ և պատկանում է Եփրատ գետի սիստեմին»⁵⁶³:

Վերջին փաստարկը, իհարկե, հաշվի չառնել չի կարելի, սակայն պնդումն առ այն, որ մինչև մամլուքները հայերը Եգիպտոսի հետ չեն առնչվել, լուրջ կռվան չէ: Նախ, Այյուբյանները, մի քանի տասնամյակ լինելով Կիլիկյան Հայաստանի հարևանները, հայկական միջավայրում ծանոթ են եղել դեռ XII դ. 70-80-ական թթ., որի վկայությունն է հայ պատմիչների (Սմբատ Սպարապետ, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ) քաջատեղակությունը նրանց մասին:

Ավելին, մամլուքները թեև կործանեցին Հայոց թագավորությունն ու տիրացան Կիլիկյան Հայաստանին, բայց երբևէ ոտք չդրեցին Մեծ Հայքի որևէ գավառ. մինչդեռ, թեկուզ ընդամենը երեք տասնամյակ, այնուամենայնիվ Այյուբյանները տիրել են Հայաստանի հենց այն մասերին, որտեղ դարերի ընթացքում ձևավորվել է դյուցազնավեպը: Այնինչ Մոսուլը կամ Մոսուլ կենտրոնով որևէ պետություն երբևէ հայկական նահանգներին չի տիրել:

«Սասնա Ծռեր»-ի համահավաքի լույս ընծայումից տասնամյակներ անց, երբ հրատարակվեց էպոսի՝ ռուսերեն նոր թարգմանությունը, կազմողը՝ Լևոն Մկրտչյանը, գրքի առաջաբանում կարծիք հայտնեց, որ Մսրա Մելիքի պատմական նախատիպը ծագում է Եգիպտոսի Այյուբյաններից, որ այստեղ Մըսըր բառը պետք է հենց «Եգիպտոս» հասկանալ. «...երբ XII դարում և XIII դարի սկզբին Այյուբյան տոհմի եգիպտական տիրակալները Հայաստանի և մասնավորապես Սասունի հանդեպ վարում էին թշնամական, նվաճողական քաղաքականություն, ժողովրդական երգիչները, «օրախնդիր» հարցերին արձագանքելով,

⁵⁶³ **Սասունցի Դավիթ**, հայկական ժողովրդական էպոս, նախաբանը՝ ակադ. Հ. Օրբելու, Երևան, 1961, էջ XI (ծանոթագր.):

հայոց հողի թշնամիների՝ VIII-IX դարերի արաբ խալիֆաների հավաքական կերպարը տարածում էին նաև եգիպտական տիրակալների վրա, Դավթին հակադրվող հերոսին անվանելով Մսրա Մելիք, այսինքն Մսրրի, Եգիպտոսի մելիք»⁵⁶⁴:

Այս ենթադրությունը շատ ավելի տրամաբանական է նաև հետևյալ պատճառով: Հայտնի է, որ թեև «մելիք» (մալիք) բառն արաբերեն նշանակում է «թագավոր», սակայն էպոսում այն ընկալվում է որպես անուն: Այսպես՝ Այյուբյան սուլթանները (ոչ թագավորներ)՝ Սալահ ալ-Դինից⁵⁶⁵ մինչև վերջին տիրակալը, կրել են «Մալիք» վերադիր անունը. օրինակ՝ ալ-Մալիք ալ-Ադիլ, Ալ-Մալիք ալ-Ջահիր, ալ-Մալիք ալ-Քամիլ, ալ-Մալիք ալ-Աշրաֆ, ալ-Մալիք ալ-Աուհադ⁵⁶⁶ և այլն:

Հետաքրքրական է, որ էպոսի պարագայում նույնպես Դավթի հակառակորդ Մսրա Մելիքի հոր անունը ևս Մսրա Մելիք էր:

Ճիշտ է՝ Վանա լճի ավազանը նվաճած Այյուբյաններն այդ տոհմի՝ Ջազիրայի ճյուղից էին, բայց ամեն դեպքում նրանք ընդունում էին Եգիպտոսի սուլթանի գերագահությունը (թեկուզ ձևականորեն): Ստույգ է, որ Սասունն անմիջականորեն չի մտել Այյուբյանների տիրույթների մեջ, բայց ինչպես հայտնի է, Սասնա Ծոեր էպոսի ձևավորման համար այդ գավառին կամ Տարոն-Տուրուբերանին հավասար նշանակություն է ունեցել նաև Վասպուրականը, որն արդեն գտնվում էր Այյուբյանների անմիջական տիրապետության տակ: Հետևաբար՝ Այյուբյանների՝ թեկուզ կարճատև տիրապետությունը Վասպուրականում կարող էր իր հետքը թողնել հայկական ժողովրդական վեպի վրա:

⁵⁶⁴ **Давид Сасунский, Армянский народный эпос**, вступительная статья, примечания Л.М. Мкртчяна, Ленинград, 1982, էջ 10:

⁵⁶⁵ Սալահ ալ-Դինը ստացել էր «ալ-Մալիք ալ-Նասիր» պատվանունը, որը սակայն այդքան կիրառելի չէր, որքան նրա որդիների ու թոռների պատվանունները:

⁵⁶⁶ Հարավ-արևմտյան Հայաստանի նվաճողը:

Կարծում ենք, որ «Սասնա ծռեր»-ի պատմական հենքի փնտրտուքներում շատ դեպքերում հասկանալի պատճառներով ծանրության կենտրոնն առավելապես դրվել է Հայաստանում արաբական տիրապետության շրջանի՝ VIII-IX դդ. վրա՝ հաջորդներին կարևորություն չտալով: Մինչդեռ, օրինակ, «Բապը Ֆրենկ»-ը, որն անկասկած Հռոմի պապերի հավաքական կերպարն է, չէր կարող XII-XIII դարերից վաղ ստեղծված լինել: Ինդիորը նույնն է նաև Մսրա Մելիք-Հոր և Մսրա Մելիք-Որդու կերպարների պարագայում:

Հասկանալի է, որ դյուցազնավեպի ցանկացած հերոս հավաքական կերպար է, որի ծագումը դժվար է մեկ պատմական անձից բխեցնել: Միաժամանակ ակնհայտ է, որ Այյուբյանների ժամանակաշրջանն այլ պատմափուլերի հետ մեկտեղ իր դրոշմն է դրել հայ ժողովրդական դյուցազնավեպի՝ «Սասնա ծռեր»-ի վրա:

SUMMARY

VAHAN TER-GHEVONDIAN

CILICIAN ARMENIA AND THE AYYUBID STATES (1171-1260)

The Ayyubid sultanate, or the “confederation” led by the sultans and amirs descending from that very family occupied predominant positions in the Middle East and ruled over a vast territory including Egypt, Hijaz, Yemen, Palestine, Syria, Djazira and for a short period of time the Southwestern Armenia. Throughout the period of 1171-1260 Cilician Armenia under Ruben III, Levon the Magnificent, Constantine the Regent and Hethum I had various types of relations with Ayyubid states.

A special investigation was made to find out the significance of the terms “Ibn Levon” and “Bilad Ibn Levon” which were extensively used in Arab historiography, especially in the Ayyubid period. The conclusion is that the term “Ibn Levon” is a dynasty name – Levonids, which corresponds to Rubenids, and “Bilad Ibn Levon” means “The country of Levonids (Rubenids)” or simply “Cilician Armenia”. The Arab historical sources consider Levon I (1129-1137) founder of the dynasty. The mentioned terms were used from the end of the XI c. up to the 20ees of the XIII c. and signified not only the territory of Cilicia but also the region of Euphratisia.

After founding a new state in Egypt (1171) Salah al-Din appeared in Syria in the mid 70ees of the XII c. In 1176 he signed peace treaties with several states in the region, but until 1180 there were no direct relations between Rubenids and Ayyubids. In 1177

Salah al-Din had temporary problems, but soon returned to Northern Syria. Meanwhile Ruben III took part in a joint expedition together with the crusaders against the fortress of Harim (1177-1178) owned by Muslims.

In autumn 1180 Salah al-Din initiated a punitive-predatory campaign against Cilician Armenia capturing a frontier fortress. Ruben III gave gold as ransom, freed the Muslim captives and signed a peace treaty. The Ayyubids were generally faithful to that treaty up to the death of the Sultan (1193). This is confirmed by the endorsing message of Salah al-Din for the Armenians of Egypt sent by a delegation from Cilician Armenia to Egypt. Salah al-Din's attitude towards the Cilician Armenia can be defined as neutral during his last 13 years (1180-1193). There can be only two exceptions – the attempt of a Syrian detachment in 1187/1188 to enter Cilicia and the interrupted campaign of 1193 on the eve of the death of Salah al-Din reported by one source only. During the successors of Salah al-Din, especially one of his sons al-Malik al-Zahir a bitter rivalry started between the Armenian kingdom and the Sultanate of Aleppo.

During the reign of Levon the Magnificent all the neighboring states were very much preoccupied by the political, military and economic strengthening of Cilician Armenia, its proclamation as a kingdom and territorial widening. Moreover the perspective of uniting Antioch with Cilicia in 1201-1216 made the Armenian kingdom extremely dangerous from the point of view of neighboring countries.

Very soon (1201-1203) an anti-Cilician Tripoli-Aleppo-Iconium alliance was formed, in which the Ayyubids had an important role. The pressure on Cilician Armenia was tremendous in 1203-1208. Meanwhile a three year war (1203-1206) burst between the Armenian kingdom and the Ayyubids of Aleppo. Though the military

operations were mostly in favor of the Armenian army, but the peace treaty was signed according to the conditions of al-Malik al-Zahir. The reason of that was the danger for Cilician Armenia to be attacked by 3 hostile states simultaneously. While after signing the agreement at least one of them stayed away from the anti-Cilician alliance for 2 years.

With the aim of getting out of the hostile circle king Levon I was making both military and diplomatic efforts. In 1208/1209 in response to king Levon's appeal, the sultan of Egypt al-Malik al-Adil intervened in the "Antioch" conflict forcing the Aleppo and Iconium sultanates to sign a peaceful agreement with the Armenian kingdom.

In 1216 after seizing Antioch Levon I activated his diplomacy making it many sided. Such kind of foreign policy was manifested by active correspondence and diplomatic activities with Ayyubids of Egypt and Syria (al-Malik al-Adil and al-Malik al-Zahir), as well as with the Pope of Rome, German emperors and other state leaders. Under the pressure of the Egyptian sultan the Ayyubids of Aleppo abstained from hostile activities against Cilician Armenia and the anti-Cilician alliance was broken.

In this dissertation the active diplomatic work done by Levon I in 1208-1216 with Ayyubid sovereigns is analyzed in details for the first time. Also the letter of Levon I to the sultan of Aleppo al-Malik al-Zahir (1216) was used for the first time in a research work.

The year 1216 was a decisive one for a number of countries in the region. As a result of important changes occurred both in Cilician Armenia and in Ayyubid "confederation" a new phase started in their relations. We have entitled this phase (1216-1230) "Sis-Aleppo cooperation period". Under new circumstances former enemy states became natural allies. Cilician Armenia and the Ayyubid Sultanate of Aleppo assisted each other twice (1219,

1225/1226), and in 1228-1230 both countries joined the alliance against Jalal al-Din and participated in the battle of Yezinka in 1230.

The friendly stage (1216-1230) between Cilician Armenia and the Ayyubid Sultanate of Aleppo is followed by a neutral phase (1230-1259) which in its turn can be divided into two stages: 1230-1243 when both states preserving their independence meanwhile were under strong pressure of powerful Seljuk Sultanate of Iconium, and 1243-1259 which starts with the battle of Chmankatuk (Kösedagh) putting an end to Seljuk domination in the region.

During those years both Hethum I and Ayyubid sovereigns tried to establish relationship with Mongols. In case of Cilicia the result was a firm alliance with Mongols. In the case of Ayyubids the process was much more complicated. At first the Ayyubids of Syria made successful steps in that direction, then the Ayyubids lost Egypt (1250), which passed under Mamluk control. Then in 1256-1258 the Ayyubids of Syria started a contradictory policy towards Mongols which led to a failure in the issue of a peaceful treaty with Hulaghu. The Ayyubid state of Syria found itself against the inevitable invasion of Mongols.

The relations of Cilician Armenia and the Ayyubid Sultanate of Syria in 1259-1260 can be defined as hostile once more. From 1216 the Cilician army had no confrontations with Ayyubids. Now it joined the Hulaghu army participating in the first Mongol campaign against Syria which put an end to the Ayyubids.

The participation of the Cilician army in that campaign led by king Hethum I was not only a commitment of an ally, but it had another important meaning as well. It gave the chance to Armenian kingdom to increase its territory at the expense of Sultanate of Iconium and especially the Ayyubids of Syria by taking the Armenian-populated region of Euphratisia. Due to that in 1260-1268

the Armenian state of Cilicia reached its most extensive sizes for its 300 years long history.

The representatives of the Ayyubid dynasty and states founded by them had continuous contacts with Armenians living in Major Armenia, Middle Eastern countries, Cilician Armenia and especially in Southwestern Armenia. As a result of these long-term relationship in XII-XIII cc. the Ayyubid period left its mark on the Armenian folk epic “Daredevils of Sasun”.

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

Ա. ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐ

Հայկական

1. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1961:
2. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1984:
3. Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, ս. Ղազար, Վենետիկ, 1862:
4. Մաթևոսյան Կ., Հեթում պատմիչ Կողիկոսցին և նրա «Ժամանակագրությունը», Մուղնի հրատ., Երևան, 2011:
5. Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ. հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1951, հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1956:
6. Մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861:
7. Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Նաիրի հրատ., Երևան, 2014:
8. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, աշխատասիրութեամբ Հ. Սերովբէ Ազըլեանի, Ս. Ղազար, Վենետիկ, 1956:
9. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859:
10. Վահրամայ Րաբունոյ Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Փարիզ, 1859:

Արաբական

11. Աբուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորէից Ե-գիպտոսի, Վենետիկ, Ս. Ղազար, 1933:
12. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համալի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շահդադ, կազմեց Հակոբ Նալբանդյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1965:
13. Իբն ալ-Ասիր, թարգմ., առաջաբան և ծանոթագր. Արամ Տեր-Ղևոնդյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981:
14. Իբն Բատուտա, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Պետական համալսարանի հրատ., Երևան, 1940:
15. Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, пер. с арабск. З.М. Буниятова, Баку, 1973:
16. Abū al-Šāma Tarāğim al-riğāl al-qarnayn al-sādīs wa-l-sābi’(Dayl ‘alā al-rawḡatayn), Dār al-Ğīl, Bayrūt, 1974:
17. Abū al-Šāma, ‘Uyūn al-Rawḡatayn fī aḥbār al-dawlatayn, vol. I, Dimašq, 1991:
18. Abū Šāma, Kitāb al-Rawḡatayn fī aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Šalāḥiyya, vol. IV, Bayrūt, 2002:
19. Al-‘Aynī, ‘Iqd al-ğumān fī tāriḥ ahl al-zamān, vol. III, bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Ḥay’a al-miṣriyya al-‘āma li-l-kitāb, al-Qāhira.
20. Al-Ḍahabī, Kitāb duwal al-Islām, vol. I-II, Beirut, 1979:
21. Al-Ḍahabī, Tāriḥ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-a‘lām, խմբ. ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, v. 42, 43, Bayrūt, 1997:
22. Al-Ğazarī, Ḥawādīṭ al-Zamān wa anba’uḥu wa wafayāt al-akābir wa al-a‘yān min abnā’ihi, vol. I, Bayrūt, 1998:
23. Al-Malik al-Manšūr, Miḡmār al-ḥaqa’iq wa sirr al-ḥalāiq, Ālam al-kutub, al-Qāhira, 1968:

24. Al-Maqrizī, Kitāb al-sulūk li-maʿrifat duwal al-mulūk, vol. 1.2, al-Qāhira, 1957:
25. Al-Nuwayrī, Nihāyat al-arab fi funūn al-adab, v. XXXI, bi-taḥqīq Nağīb Muştafā Fawwāz, Hikmat Kişli Fawwāz, İbrāhīm Şams al-Dīn (u ujjng), Dār al-Kutub al-ʿİlmiyya, Bayrūt, 2004:
26. Baybars al-Manşūrī (վերազրված), Muḥtār al-Aḥbār, al-Qāhira, 1993:
27. Baybars al-Manşūrī, Zubdat al-fikra fi tāriḥ al-ḥiğra, bi-taḥqīq Dunāld Rītşārdz, Bayrūt, 1998:
28. Ibn ʿAbd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir fi sīrat al-Mālik al-Zāhir, juḍp. ʿAbd al-ʿAzīz al-Ḥuwayṭir, al-Riyāḍ, 1976
29. Ibn al-Adīm, Kamāl al-Dīn, Zubdat al-ḥalab fi tāriḥ Ḥalab, Institut Français de Damas, t. I, Damas, 1951, t. II, Damas, 1954, t. III, Damas, 1968:
30. Ibn al-ʿAmīd, Aḥbār al-Ayyūbiyyīn (al-Mağmūʿ al-mubāarak), Maktabat al-ṭaqāfa al-dīniyya, Būr Saʿīd (սոսւոց տարեթւոյի):
31. Ibn al-Aṭīr, Al-Kāmil fi-l-tāriḥ, vol. X, juḍp. Muḥammad Yūsuf al-Daqqāq, Bayrūt, 2003:
32. Ibn al-Dawādārī, Kanz al-durar wa-ğāmiʿ al-ğurar, vol. VIII, al-Qāhira, 1971:
33. Ibn al-Furāt, Tarīkh al-Duwal wa l-Mulūk, vol. 4.1, juḍp. Ḥasan Muḥammad Şammāʿ, Başra, 1967:
34. Ibn al-ʿİbrī, Tāriḥ muḥtaşar al-duwal, juḍp. Anṭūn Şāliḥānī al-Yasūʿī, Dār al-Rāʿid al-Lubnānī, Bayrūt, 1994:
35. Ibn al-Qalānisī, Dail tariḥ Dimaşq, juḍp. H. F. Amedroz, Dimaşq, 1908:
36. Ibn al-Şiḥna, Al-Durr al-muntaḥab fi tāriḥ mamlakat Ḥalab, bi-taḥqīq ʿAbd Allāh Muḥammad Darwīş, Dār al-kitāb al-ʿarabī, Dimaşq, 1984:
37. Ibn Ḥallikān, Wafāyat al-aʿyān wa-anbāʿ abnāʿ al-zamān, vol. VII, juḍp. İḥşān ʿAbbās, Dār Şāḍir, Bayrūt, 1972:
38. Ibn Kaṭīr, al-Bidāya wa-l-nihāya, v. XVII, al-Qāhira, 1998:

39. Ibn Khallikan, Biographical Dictionary, tr. by William MacGuckin de Slane, vol. III, IV, Oriental Translation Fund of Great Britain and Ireland, London, 1871:
40. Ibn Nazīf al-Ḥamawī, al-Tārīḫ al-Manṣūrī, ḥuṣp. Abū al-ʿĪd al-Dūdū, 1981:
41. Ibn Šaddād, Bahā' al-Dīn, Kitāb al-Nawādir al-sultāniyya wa-mahasin al-Yūsufiyya, Dimašq, 1979:
42. Ibn Šaddād, ʿIzz al-Dīn, Al-Aʿlāq al-Ḥaṭīra fi ḍikr umarā' al-Šām wa-l-Ġazīra, vol. 1.1, 1.2, 3.1, ḥuṣp. Yaḥyā Zakaryā ʿAbbāra, Dimašq, 1978-1991:
43. Ibn Taġrī Birdī, Al-Manhal al-Šāfi wa-l-Mustawfi baʿda al-Wāfi, vol. V, bi-taḥqīq Muḥammad Muḥammad ʿAmīn, al-Hay'a al-Miṣriyya al-ʿĀmma li-l-Kitāb, al-Qāhira:
44. Ibn Wāṣil, Mufarriġ al-kurūb fi aḥbār banī Ayyūb, v. II, v. III, ḥuṣp. Ḡamāl al-Dīn al-Šayyāl, al-Qāhira, 1957:
45. Imād al-Dīn al-Iṣfahānī, al-Barq al-Šāmī, al-Bundarī, Sanā al-barq al-Šāmī, bi-taḥqīq Fathīyya al-Nabrawī, al-Qāhira, 1979:
46. ʿImād al-Dīn al-Iṣfahānī, Kitāb al-Faṭḥ al-Qussī fi al-faṭḥ al-Qudsī (ʿImād ed-dīn el-kātib el-iṣfahānī, Conquête de la Syrie et de La Palestine par Šalāḥ ed-dīn, publié par le comte Carlo de Landbeerg, E. J. Brill, Leide, 1888):
47. Mufaḍḍal ibn Abī al-Fadāʾil, al-Nahġ as-sadīd wa-durr al-farīd fīmā baʿda tārīḫ ibn al-ʿAmīd (Moufazzal ibn Abil-Fazaīl, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet, Patrologia Orientalis, t. XIV, Paris, 1920:
48. Sibṭ ibn al-Gawzī, Mirāt al-zamān fi tārīḫ al-aʿyān, v. VIII, (ed. with introduction by J. R. Jewett, The University of Chicago Press, Chicago, 1907):
49. Tārīḫ Abū al-Makārīm (Tārīḫ al-kanāʾis wa-l-adyura), vol. II, ḥuṣp. Al-anbā' Šamūʾil, al-Qāhira, 1984:
50. The Churches and Monasteries and Some Neighbouring Countries attributed to Abū Šāliḫ The Armenian, tr. from Arabic by B.T.A. Evetts, Clarendon Press, Oxford, 1895:

51. Yāqūt al-Ḥamawī, Muʿgam al-buldān, vol. II, Dār Ṣādir, Bayrūt, 1977:

Ասորական

52. Անանուն Եղեւացի, Ժամանակագրություն (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12), թարգմ. Լ. Տեր-Պետրոսյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982:
53. Ժամանակագրություն Տեառն Միխայելի Ասորաց պատրիարքի հանեալի հնագոյն գրչագրէ, Յերուսաղէմ, 1871:
54. Տեառն Միխայելի պատրիարքի ասորաց Ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1870:
55. Chronique de Michel le Syrien, ed.et tr. par J.-B. Chabot, t.III, Bruxelles, 1963:
56. The Chronography of Bar Hebraeus Gregory Abu-l-Faraj, translated by E. Budge, Amsterdam, 1976:

Լատիներեն և հին ֆրանսերեն

57. Acta Innocentii PP. III (1198-1216), E. registris Vaticanis aliisque Eruit, introductione auxit, notisque illustravit P. Theodosius Haluščynskyj hieromonachus ordinis Basiliani S. Iosaphat E pontificia commissione ad redigendum C.I.C.O., Fontes series III, vol. II, Vaticanis, 1944:
58. Brocardus, Directorium ad Passagium Faciendum, in: Recueil des Historiens des Croisades, Documents latins et français relatives a l'Arménie, t. II, Paris:
59. Chronique d'Ernoult et de Bernard le Trésorier, par M.L. de Mas Latrie, Paris, 1871:
60. Chroniques d'Amadi et de Strambaldi, publiées par René de Mas Latrie, Première partie, Imprimerie Nationale, 1891:
61. Denys Pringle, Pilgrimage to Jerusalem and the Holy Land 1187-1291 (Crusader texts in translation), Ashgate, Farnham, 2012:
62. Hayton, La Flor des estoires de la Terre d'Orient, "Recueil des historiens des Croisades". Documents arméniens, t. 2, Documents latins et français relatives a l'Arménie, éd. Ch. Kholer, Paris, 1906:
63. Les gestes des Chiprois, ed. G. Raynaud (Publications de la Société de l'Orient Latin. Série historique 5), Geneva, 1887:

64. Marino Sanudo Torsello, *The Book of the Secrets of the Faithful of the Cross (Liber Secretorum Fidelium Crucis)*, tr. by Peter Lock, Ashgate, 2011:
65. Wilbrand of Oldenburg, *Journey in the Holy Land (1211-1212)* in: Denys Pringle, *Pilgrimage to Jerusalem and the Holy Land 1187-1291 (Crusader texts in translation)*, Ashgate, Farnham, 2012:
66. Wilbrandi de Oldenborg, *Peregrinatio*, in: Laurent, *Peregrinatores medii aevi quatuor*, Lipsiae, 1863:
67. William of Tyre, *A History of deeds done beyond the Sea*, v. II, translated and annotated by E.A. Babcock and A.C. Krey, New York, 1943:

Բյուզանդական

68. Franca Fusco, *Il Panegirico di Michele Italico per Giovanni Comneno*, Athens, 1969-1970. Ἐπετηρίς τῆς Ἐταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν, h.n. 37, Athens, էջեր 146-169:

Պարսկագիր

69. Ğuwaynī, *Kitāb Tārīḥ-e Ğahān-Guṣā, taṣḥīḥ-e Muḥammad Qazwīnī*, v. II, Barīl, Laydan, 1916:
70. *Recueil de Textes Relatifs à L'Histoire Des Seldjoucides* par M. Th. Houtsma, vol. III, *Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjournāmeḥ d'Ibn-Bībī*, Brill, Leide, 1902:
71. Рашид-ад-Дин, *Сборник летописей, том III, пер. А. К. Арендса, под ред. А. А. Ромаскевича, изд. Академии Наук СССР, Москва-Ленинград, 1946:*
72. Рашид-ад-Дин, *Сборник летописей, том I, книга I, пер. с персидского Л. А. Хетагурова, ред. и примечания А.А. Семенова, изд. Академии Наук СССР, Москва-Ленинград, 1952.*

Վրացական

73. Картлис Цховреба. История Грузии, под. ред. Р. Метревели, изд. «Артануджи», Тбилиси, 2008:

Գերմանական

74. Friedrich Heinrich von der Hagen (Hg.), Des Landgrafen Ludwig's des Frommen Kreuzfahrt: Heldengedicht der Belagerung von Akkon am Ende des zwölften Jahrhunderts, Leipzig, 1854:

Բ.1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ալիշան Ղ., Սիսուան. Համագրություն Հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ, Վենետիկ, ս.Ղազար, 1885:
2. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, «ՓՐԻՆԹԻՆՖՈ», 2007:
3. Բոզոյան Ա.Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988:
4. Դանիելյան Գ., Ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկը Կիլիկյան Հայաստանի 1250-1310 թթ. պատմության սկզբնաղբյուր (աղբյուրագիտական քննություն), թեկնածուականատենախոսություն (անտիպ), Երևան, 2015:
5. Հայոց պատմություն, հ. II, Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), Գիրք Երկրորդ (IX դարի կես – XVII դարի առաջին կես), Զանգակ հրատ., Երևան, 2014:
6. Հովհաննիսյան Ա., Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ., Աճեմյան մատենաշար, Երևան, 2008:
7. Մըսրիլեան Գ., Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ (Արաբական գրաւումէն մինչեւ Զէրքէզ Մէմլուքներու իշխանութեան միջին շրջանը, 640-1441), Գահիրէ, տպարան Սահակ-Մեսրոպ, 1947:

8. Շևալիե Մարի-Աննա, Կիլիկյան Հայաստանի և հոգևորապետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, ֆրանսերենից թարգմանեց Վ. Պողոսյանը, Երևան, 2007:
9. Չամչեանց Մ., Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն. 1784, հ. Գ, Վենետիկ, 1786:
10. Սասունցի Դավիթ, հայկական ժողովրդական էպոս, նախաբանը՝ ակադ. Հ. Օրբելու, Երևան, Հայպետհրատ, 1961:
11. Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965:
12. Տեր-Ղևոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թթ., Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1994:
13. Տեր-Մովսիսեան Ա., Պատմութիւն հայոց սկիզբէն մինչեւ մեր օրերը, Վենետիկ, 1922:
14. Քասունի Ե. Հ., Ռուբէն Գ. իշխանապետ (1175-1187 թթ.) եւ իր կտակը, Պէյրութ, 1987:
15. Օրմանեան Մ., Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմաւծ, հ. Ա, ս. էջմիածին, 2001, սյունակ IV+1-1870:
16. “Давид Сасунский” Армянский народный эпос, вступительная статья, примечания Л.М. Мкртчяна, Ленинград, “Советский писатель”, 1982.
17. Босворт К.Э., Мусульманские династии. Справочник по хронологии и генеалогии. Пер. с англ. П.А. Грязневича. Ответственный редактор И.П. Петрушевский. Москва, 1971.
18. Гордлевский В.А., Государство сельджукидов Малой Азии, Москва-Ленинград, 1941.
19. Заборов М.А., Введение в историографию крестовых походов, латинская хронография XI-XII вв., Москва, 1966.
20. Заборов М. А., Крестовые походы, Москва, 1956.
21. Заборов М.А., Крестоносцы на Востоке, Москва, 1980.
22. Микаелян Г.Г., История Киликийского армянского государства, Ереван, изд. АН Арм. ССР, 1952.
23. Amitai-Preiss R., Mongols and Mamluks: The Mamluk-İlkhānid war, 1260-1281, Cambridge, Cambridge University Press, 1995.

24. Bayarsaikhan D., *The Mongols and the Armenians (1220-1335)*, E. J. Brill, Leiden- Boston, 2011.
25. Boase T. (editor), *The Cilician Kingdom of Armenia*, Edinburg, London, 1978.
26. Burns R., *Damascus: A History*, Routledge, London & New York, 2005.
27. Cahen Cl., *La Syrie du Nord et la principaute franque d'Antioche*, Institut Francais de Damas, Geuthner, Paris, 1940.
28. Cahen Cl., *La Turquie pré-ottomane*, Istanbul-Paris, 1988.
29. Dadoyean S. B., *The Fatimid Armenians: Cultural and Political Interaction in the Near East*, Brill, Leiden, 1997.
30. Eddé Anne-Marie, *La Principauté Ayyoubide d'Alep (579/1183 – 658/1260)*, Stuttgart, Franz Steiner Verlag, 1999.
31. Eddé Anne-Marie, *Saladin*, translated by Jane Marie Todd, The Belknap Press of Harvard University Press, Cambridge, Massachusetts, and London, England, 2014.
32. Elisseff N., *Nūr ad-Dīn, Un grand prince musulman de Syrie au temps des croisades (511-69H./1118-1174)*, tome II, Institut Français de Damas, 1967.
33. Gibb H., *The Life of Saladin (from the works of Imād ad-Dīn and Bahā' ad-Dīn)*, Clarendon Press, Oxford, 1973.
34. Grousset R., *Histoire des Croisades et du royaume franc de Jerusalem*, ed. Perrin, Paris, t. I, 1095-1130, *L'anarchie musulmane*, 1934, t.II, 1131-1187, *L'équilibre*, 1935, t.III, 1188-1291, *L'anarchie franque*, 1936.
35. Halfter P., *Das Papsttum und die Armenier im Frühen und Hohen Mittelalter: Von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198*, Böhlau, Verlag, Köln, Wien, Weimar, 1996.
36. Hitti Ph.K., *History of the Arabs*, London, Macmillan & co., 1958.
37. Humphreys S., *From Saladin to the Mongols, The Ayyubids of Damascus, 1193-1260*, New York, 1977.
38. Irwin R., *The Middle East in the Middle Ages: The Early Mamluk sultanate 1250- 1382*, Southern Illinois University Press, Carbondale and Edwardsville, 1986.
39. Lane-Poole S., *A History of Egypt in the Middle Ages*, London, 1901.
40. Mutafian C., *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, tome I, Les Belles Lettres, Paris, 2012.
41. Mutafian C., *La Cilicie au carrefour des empires*, t. I-II, Les Belles Lettres, Paris, 1988.

42. Mutafian C., La diplomatie armenienne au Levant a l'epoque des croisades XII-XIV siècle. Thèse de doctorat, Université Paris I, Pantheon-Sorbonne, Juin, 2002.
43. Nercessian Y.T., Armenian coins and their values, Los Angeles, 1995.
44. Powell J. M., Anatomy of a Crusade, 1213-1221, University of Pennsylvania Press, Philadelphia, 1986.
45. Praver J., The Crusaders' Kingdom: European Colonialism in the Middle Ages, London, 2001.
46. Rüdtt-Collenberg W.H., The Rupenids, Hethumides and Lusignans, The structure of the Armeno-Cilician dynasties, Calouste Gulbenkian Foundation Armenian Library, Paris, 1963.
47. Runciman S., A History of the Crusades, vol. II (The Kingdom of Jerusalem), Cambridge University Press, 1951.
48. Savvides, Alexis G.C., Byzantium in the Near East: Its relations with the Seljuk sultanate of Rum in Asia Minor, the Armenians of Cilicia and the Mongols A.D. c.1192-1237, Thesalonics, 1981.
49. Tournebize F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.

Բ.2. ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Բարթիկյան Հ., Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծայքերը, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Երևան, 2002, էջ 642-652:
2. Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական նոթեր, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա., Աճեմյան մատենաշար Գ/1, Երևան, 2002, էջ 47-56:
3. Բարթիկյան Հ., Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը, Պատմա-քանասիրական հանդես, 1984, թիվ 4, էջ 216-229:
4. Բոզոյան Ա., Կիլիկիայի հայկական պետությունը Բյուզանդիայի կայսերական և պատրիարքական վավերագրերում (ընդհանուր ակնարկ), «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, էջ 51-84:

5. Դանիելյան Գ., «Թագավոր/թաքֆուր» տիտղոսը միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, էջ 163-198:
6. Դանիելյան Գ., Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները, «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», Երևան, 2016, էջ 200-287:
7. Դանիելյան Գ., Մամուլայի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները, ՎԷՄ համահայկական հանդես, № 1 (49), հունվար-մարտ, 2015, էջ 141-154:
8. Ջէքիյան Պ.Լ., 14-րդ դարի կրոնական վեճերը: Նախաքայլեր Հայոց եկեղեցու հետագա բաժանումների և եկեղեցաբանական կարգավիճակի, «Էջմիածին», 2000, թիվ Ա, էջ 106-125:
9. Թորոսյան Վ., Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Մեծագործի թագադրման խնդրի շուրջ, «Էջմիածին», 2016, թիվ Է, էջ 65-83:
10. Հովհաննիսյան Ա., Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության միջև 1218 թ. կնքված հաշտության պայմանագրի հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2010 թ., էջ 71-78:
11. Մարգարյան Հ., Ջալալ ադ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքի պատմության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1981, № 4, էջ 125-139:
12. Շահնագարյան Ա., Ջաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, Հայոց պատմության հարցեր, № 6, Երևան, 2005, էջ 132-147:
13. Շահնագարյան Ա., Ջաքարյանների ազատամարտերի երկրորդ փուլը, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, № 3, էջ 32-51:
14. Պապիկեան Ս., Հայերը եւ խաչակիրները, Հանդես Ամսօրեա, 1965, հուլիս-սեպտեմբեր, թիւ 7-9:
15. Քյուրդեան Հ., Գրիգոր Տղա եւ Սալահ էդ-Տին, «Բազմավէպ», 1975, թիւ 1-2, էջ 160-180:

16. Шукуров Р. А., Образ Киликийской Армении в анатолийских мусульманских источниках (XIII в. – начало XIV в.), «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, էջ 85-120:
17. Baldwin Marshall W., The decline and fall of Jerusalem, A History of the Crusades, gen. ed. M. Setton, vol. 1 (The First Hundred Years), The University of Wisconsin Press, London, 1969, էջ 606-621:
18. Canard M., al-Awasim, The Encyclopaedia of Islam, v.I, Leiden & New York, 1986, էջ 761-762:
19. Canard M., Un Vizir Chretien a l'époque Fatimide, "Miscellanea Orientalia", Pt. VI, Variorum, London, 1973, էջ 84-113:
20. Edwards R. W., Bağras and Armenian Cilicia: A reassessment, "Revue des Etudes Armeniennes", t. 17, 1983, էջ 415-455:
21. Gibb H.A.R., The Arabic Sources for the Life of Saladin, Speculum, vol. 25, № 1, 1950, էջ 58-72:
22. Hacken C. T., The description of Antioch in Abū al-Makārim's History of the Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring countries, East and West in the medieval eastern Mediterranean. I. Antioch from the Byzantine reconquest until the end of the crusader principality, ed. by K. Ciggaar and M. Metcalf, Leuven, 2006, էջ 185-216:
23. Heijer J. D., Pilette P., History of the Churches and the Monasteries of Egypt, Christian-Muslim relations, A Bibliographical History, vol. 4 (1200-1350), ed. by D. Thomas and A. Malett, E.J, Brill, Leiden-Boston, 2012, էջ 983-988:
24. Holt P. M., Saladin and His Admirers: A Biographical Reassessment, BSOAS, vol. 46, № 2, 1983, էջ 235-239:
25. Humpreys R. S., The Emergence of the Mamluk Army, "Studia Islamica", № 45, 1977, էջ 67-99:
26. Jackson P., The Crusaders of 1239-1241 and their aftermath, in: Muslims, Mongols and Crusaders, an Anthology of Articles published in The Bulletin of the School of Oriental and African Studies, compiled and introduced by G.R. Hawting, London & New York 2005, էջ 217-247:
27. Jackson P.P., The Crisis in the Holy Land in 1260, "The English Historical Review", vol. 95, № 376, 1980, էջ 481-513:

28. Lawrence A.W., Castle of Baghras, "The Cilician Kingdom of Armenia", ed. by T.S.R. Boase, Scottish Academic Press, Edinburgh & London, 1978, էջ 34-83:
29. Minorsky V., New Light on the Shaddadids of Ganja, "Studies in Caucasian History", London, Taylor's Foreign Press, 1953, էջ 1-77:
30. Minorsky V., Prehistory of Saladin, "Studies in Caucasian History", London, 1953, էջ 107-157:
31. Painter S., The Third Crusade: Richard the Lionhearted and Philip Augustus, A History of the Crusades, vol II (The Later Crusades, 1189-1311), University of Wisconsin Press, 1969, էջ. 45-85:
32. Richard J., La lettre du Connétable Smbat et les rapports entre chrétiens et Mongols au Milieu du XII^{ème} siècle, "Armenian studies in memoriam Haïg Berbérian", Lisbon, 1986, էջ 683-696:
33. Richards D. S., A consideration of two sources for the life of Saladin, Journal of Semitic Studies, vol. 25, № 1, 1980, էջ 46-65:
34. Riley-Smith J. S. C., The Templars and the Teutonic knights in Cilician Armenia in: The Cilician Kingdom of Armenia, ed. by Boase T. S. R., էջ 92-117:
35. Rosenthal F., Ibn al-Athir, Encyclopaedia of Islam (Second Edition), vol. III, 1986, էջ 723-725.
36. Samir Khalil Samir, The Role of Christians in the Fatimid Government Services of Egypt to the Reign of Al-Hāfiz, "Medieval Encounters", vol. 2.3, 1996, էջ 177-192:
37. Smith, J. M., Ayn Jālūt: Mamlūk Success or Mongol Failure?, Harvard Journal of Asiatic Studies, vol. 44, № 2, 1984, էջ 307-345:
38. Thomas C. Van Cleve, The Fifth Crusade, A History of the Crusades, vol. II, pp. 377-428, Christian Society and the Crusades 1198-1219 (Sources in Translation including the Capture of Damietta by Oliver of Paderborn), ed. by Edward Peters, University of Pennsylvania Press, Philadelphia, 1971, էջ 48-145:

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՅՅՈՒԲՅԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1171-1260)**

VAHAN TER-GHEVONDIAN

**CILICIAN ARMENIA AND THE AYYUBID STATES
(1171-1260)**

Խմբագիր՝ Ա. Շահնազարյան, պ. գ. թ.
Հրատ. խմբագիր՝ Վ. Ղարախանյան, պ. գ. թ.
Գրախոսներ՝ Վ. Թորոսյան, պ. գ. թ.,
Զ. Գևորգյան, պ. գ. թ.

Տպագրության եղանակը՝ օֆսեթ
Չափսը՝ 60X84/16
Թուղթը՝ օֆսեթ, 70 գ/մ²
Ծավալը՝ 17 պայմ. տպ. մամուլ
Տպաքանակը՝ 200

«Տիր» հրատարակչություն
Հասցեն՝ Երևան, 0070, Հ. Քաջազնունու փող., 14 /10
Հեռ.՝ (+374 10) 55-48-84, (55) 16-51-00, (99) 16-51-01
Էլ. փոստ՝ tirpublishinghouse@gmail.com
Կայքէջ՝ www.tirpublishing.com

Տպագրվել է «Տիր» հրատարակչության տպագրատանը
Հասցեն՝ Տավուշի մարզ, գյուղ Կողբ, 4-րդ փող., տուն 10
Հեռ.՝ (+374 266) 5-26-39